

THE NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE RA

H. ACHARIAN INSTITUTE OF LANGUAGE

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА

ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА

# NEW WORDS

Volume 6

# НОВЫЕ СЛОВА

Выпуск 6

Yerevan – 2021 – Ереван

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ՆՈՐ ԲԱՌԵՐ

Զ պրակ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2021

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.51
Ն 930

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Խմբագիր՝ բ. գ. դ. Վ. Լ. Կատվալյան
Գրախոս՝ բ. գ. թ., դոցենտ Լ. Գ. Թելյան

Ն 930 Նոր բառեր / Կազմողներ՝ Ա. Ս.Գալստյան, Ս. Ա. Գալստյան, Ֆ. Ա. Հակոբյան, Գ. Կ. Հովսեփյան, Ն. Մ. Սարգսյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2021. Զ պրակ.- 221 էջ:

«Նոր բառեր» մատենաշարի հերթական պրակում ներկայացվում են մամուլում, գեղարվեստական և գիտական գրականության մեջ հանդպած բառեր, որոնք վկայված չեն արդի հայերենի բացատրական և նորաբանությունների բառարաններում: Աշխատանքը կարող է օգտակար լինել հայոց լեզվի բառապաշարով հետաքրքրվող մասնագետներին, ուսուցիչներին, բանասիրական ֆակուլտետների ուսանողներին, լրագրողներին, հրատարակիչներին, թարգմանիչներին:

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.51

ISBN 978-9939-9235-9-8
© ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2021

# ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Նոր բառեր. Զ պրակը» պարունակում է շուրջ 2000 բառամիավոր, որոնք գրանցված չեն պրակի վերջին էջում թվարկված բառարաններում: Գլխաբառից հետո նշվում են խոսքիմասային պատկանելությունը, բառի բացատրությունը, բնագրային օրինակը, աղբյուրը: Տրվում են բառագիտական և ոճական նշումներ: Բառի բացատրությունը տրվում է ըստ տվյալ տեքստում ունեցած նշանակության:

Բառարանը կազմել են Ա. Ս. Գալստյանը, Ս. Ա. Գալստյանը, Ֆ. Ա. Հակոբյանը, Գ. Կ.Հովսեփյանը, Ն. Մ. Սարգսյանը:

# ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ած.- ածական
անհնձնր. - անհանձնարարելի
բ. - բայ
բժշկ. - բժշկական
բնստ. – բանաստեղծական
բրբ. - բարբառային
գ. – գոյական
գղտնտ. – գյուղատնտեսական
գրկն. – գրականագիտական
դրձվ. - դարձվածք
դիպվ. –դիպվածային
երժշտ. – երաժշտական
ժրգ. - ժարգոնային
իմ.նորբ. – իմաստային նորաբանություն
իրավ. – իրավաբանական
լեզվբ. –լեզվաբանական
կենս. –կենսաբանական
կր. և չբ. – կրավորական և չեզոք բայ
հեզն. – հեգնական
հեռ. - հեռուստատեսություն
հզվդ. – հազվադեպ
հմց – համացանց
հոգբ. - հոգեբանական
հպվ – հապավում
հրկտր դ. – հարակատար դերբայ
մարզ. – մարզական
մկբ. – մակբայ
մսնգ. - մասնագիտական
նբ. – ներգործական բայ
նվազփղքշ. - նվազափաղաքշական

շին. – շինարարական
պատմ. - պատմական
ռազմ. – ռազմական
սնոտ. - սնոտիապաշտական
տեխ. - տեխնիկական
տնտգ. – տնտեսագիտական
փխբ. – փոխաբերական
քղք. - քաղաքական

# Ա

ԱԳՌԱՎԱԿՌԻՆՉ, գ. **Ագռավի կռնչոց, ագռավի հանած ձայնը:** Այդ **ագռավակռինչը** իմ գլխավերևում որքա՜ն է հնչել հայ շուրթերով, երբ անցել եմ գյուղից գյուղ *(ԳԹ, 15.11.2013):*

ԱԴԱԹԱՍԵՐ, գ., ած. (խսկց.): **Ադաթները՝ ազգի սովորությունները սիրող**: **Ադաթասեր** ժողովուրդ ենք .... *(Հրաչօ, էջ 204):*

ԱԴԱՄԱՆԴԱԶԵՐԾ, ած. Այստեղ՝ (փխբ.*)* **անփայլ**: .... Ջինջ, **ադամանդազերծ** աչքերով զննեց դաշտավայրը *(Ռուշդի, էջ 8):*

ԱԶԴՐԱԿՈՂՄՅԱՆ, ած. **Ազդրի կողմում գտնվող**: .... Նամակը վերցրեց և դանդաղ մտցրեց ֆրենչի **ազդրակողմյան** գրպանը *(ԱՏ, էջ 162):*

ԱԹԱՐԱՇԱՏ, ած. **Որտեղ շատ աթար կա**: Նեղ, ծուռումուռ, **աթարաշատ** փողոցներ …. *(Իր., 20.12.2019):*

ԱԼԵՀԱՐԴԱՐ, ած. **Ալիքաձև հարդարված**: **Ալեհարդար** փայլուն մազեր էին ծածկել նրա կուրծքը *(ՄԲ, էջ 30):*

ԱԾԽԱԲՈՒՐԳ, գ. **Ածուխների բուրգ, բրգաձև թափված ածուխ**: .... Հասան սև **ածխաբուրգին** *(Սթոուն, էջ 77):*

ԱԾԽԱԾԱԿ, գ. **Ածուխ լցնելու ծակ**: Ուզել էր .... այծի կաթով ամանը դնել **ածխածակին** *(ՎԲ, էջ 22):*

ԱԾԽԱՄԱՏԻՏ, գ. **Ածխե՝ սև միջուկով մատիտ**: .... Գուցե և **ածխամատիտ** կառնի .... *(Սթոուն, էջ 122):*

ԱԾԽԱՄԱՐԻՉ, գ. **Ածուխների այրվելը դադարեցնող՝ մարող գործիք՝ հարմարանք**: .... Կողքը՝ .... գոգաթիակն ու **ածխամարիչը** .... *(ՎԲ, էջ 238):*

ԱԾԽԱՊԱՐ, գ. **Ածուխի ապար՝ հանքատեսակ**: .... **Ածխապարը** հարկավոր էր վերցնել բուռը .... *(Սթոուն, էջ 78):*

ԱԿԱՆՋԵԱԿԱՆՋ, մկբ. (փխբ.): **Լսածը մեկից մյուսին անցնելով:** Բոթն ու բամբասանքն անթիվ-անհամար ձեռք ու աչքեր ունեն և բերնեբերան, **ականջեականջ** տեղաշարժվում են *(ԱրմՄ., էջ 214):*

ԱԿՆԱՊԱՐԿ, գ. **Ակնախոռոչ, ակնաբույն**: Հենց վեր թռավ, նորից իմ պապն էր՝ նույն կնճռապատ դեմքը, խամրած **ակնապարկերը,** հոգնած ու տանջահար հայացքը *(ՎԻ, էջ 92):*

ԱԿՆԱՍՊԻՏԱԿՈՒՑ, գ. **Աչքի սպիտակուց**: .... Նույնքան կեղտոտ ու փայլին տվող են նրանց դեմքերը, նեգրերի նման խիստ ցայտուն **ակնասպիտակուցները** .... *(Բունին, էջ 216)*:

ԱԿՆԱՏԱԿ, գ. **Աչք(եր)ի ներքևի մասը**: .... Ծերունին զգաց, որ տարօրինակ բան է կատարվում իր հետ՝ ճակատի, **ակնատակերի,** երեսի կնճիռները հարթվում-վերանում են .... *(ԱրմՄ., էջ 91):*

ԱՀԱՏԱԳՆԱՊ, ած. (բնստ.): **Ահով և տագնապած**: Չարությունը թե ոռնում է **ահատագնապ**-// Ուրեմն նա պիտի մեռնի .... *(ԼԴ 1, էջ 362):*

ԱՂԱԳՈՐՇԱԳՈՒՅՆ, ած. **Աղի գույնի նման գորշագույն**: .... Շուրջբոլորն ամեն ինչ հավաք էր .... կավը կրակավի և ժայռային ապարների ու ոստերի՝ գորշ դեղնավուն՝ կարմրաաղյուսագույնի, **աղագորշագույնի**, ածխասևի հետ մեկտեղ *(Հանդկե, էջ 453)*:

ԱՂԲԱԲԱՀ, ած. **Աղբը հավաքելու բահ. գոգաթիակ**: Հայտրնվել էր հավաքարարը, ավելն ու **աղբաբահը** ձեռքերի մեջ *(Նայբ.3, էջ 7)*:

ԱՂԲԱԴՈՒՅԼ, գ. **Աղբը մեջը լցնելու դույլ**: .... Թերթը գտան **աղբադույլում**՝ մի քանի տեղից պատռված .... *(ՆԱղ., էջ 6):*

ԱՂԲԱԽՈՂՈՎԱԿ, գ. **Աղբամուղ**: .... Ուզեց փրթիկները **աղբախողովակը** նետել .... *(ՆԱղ., էջ 6):*

ԱՂԲԱՀԱՎԱՔՈՒՄ, գ. **Աղբի հավաքում**: .... Գերմանական KFW զարգացման բանկը .... պատրաստակամություն հայտնեց ֆինանսական լուրջ ներդրում ունենալ Վանաձորի, Դիլիջանի և շրջակա մի շարք բնակավայրերի **աղբահավաքման,** տեղափոխման, վերամշակման .... հարցում *(ՀՀ, 23.01.2020):*

ԱՂԻԱՎՈՒՆ, ած. **Թեթևակի աղի**: .... Սուրեն քեռին ամեն օր մեզ մթերք էր բերում. դեղին, **աղիավուն** թանի կաթիլներով թեթևակի շղարշված տնական կարագ, մածուն .... *(ՆԱբ., էջ 89):*

ԱՂՅՈՒՍԱԿԱՐՄՐԱԳՈՒՅՆ, ած. **Աղյուսի գույնի կարմիր**: Գնացքը, բաղկացած շարժական դռներով **աղյուսակարմրագույն ապրանքատար** վագոններից, շարժվեց .... *(Կերտես, էջ 58)*:

ԱՂՅՈՒՍԱԿԱՐՄՐԱՎՈՒՆ, ած. **Աղյուսի գույնի նման կարմիր**: Ծանրամարմին, սպիտակահեր մի մարդ վաճառասեղանի կողմը դարձրեց **աղյուսակարմրավուն** դեմքը *(ԱՏ, էջ 71):*

ԱՂՈԹԱԺԱՄ, գ. **Աղոթքի, աղոթք անելու ժամ**: Ցայգի **աղոթաժամ** .... *(Էկո, էջ 15):*

ԱՂՈԹԱԺՈՂՈՎ, գ. **Հավատացյալների հավաք՝ ժողով, որի ժամանակ աղոթում են**: .... **Աղոթաժողովի** համար հարկավոր էր մի մշտական տեղ գտնել .... *(Սթռուն, էջ 76):*

ԱՂՈՏԱՆՇՄԱՐ, ած. **Աղոտ նշմարվող**: Դոնը մատնացույց էր անում հեծանվադողերի **աղոտանշմար** հետքերը .... *(Ֆոլք., էջ 123)*:

ԱՂՎԵՍԱՄՈՐԹԵ, ած. **Աղվեսի մորթուց պատրաստված՝ կարված**: .... Կինը ... օգնեց հանել սևագորշ **աղվեսամորթե** ծանր մուշտակը .... *(ՄԲ, էջ 164):*

ԱՂՎԵՍԱՄՈՐԹԻ, գ. 1. **Աղվեսի մորթի**: 2. **Աղվեսի մորթուց պատրաստված իր (վերարկուի օձիք ևն)**: Տանտերը ներս էր մտնում սևուգորշ **աղվեսամորթիով ....** *(ՄԲ, էջ 190):*

ԱՂՏԵՂԱԽԱՌԸ, ած. **Աղտի հետ խառնված**: .... Նա *փուլ-փա* բառը թարգմանում է որպես **աղտեղախառը** փոթորիկ .... *(Վոն., էջ 215):*

ԱՃՈՒԿԱՄԱՍ, գ. **Աճուկի մաս**: Առանց պարկը ձեռքից բաց թողնելու կռացավ և մորթոտված շալվարի **աճուկամասերից** հոտ քաշեց *(ՆԱղ., էջ 8):*

ԱՄԱՌԱՆՈՑԱՎԱՆ, գ. **Ամառանոցային ավան**: Ջուր կա, բայց այն **ամառանոցավան** հասցնելը կապված է ֆինանսական լուրջ ծախսերի հետ *(Իր., 18.10.2019):*

ԱՄԵՆԱԳՈՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Ամենագո, ամենուրեք գոյություն ունեցող՝ եղող, առկա վիճակ**: .... Երկնքից անդադար ու առատ ձյուն էր տեղում և ասես իր ամբողջ փափուկ **ամենագոյությամբ** կլանել էր բնապատկերն ու խեղդել ամեն տեսակի կյանք ու շշուկ *(Ջեկթ., էջ 6):*

ԱՄԵՆՏԵՂԱՑԻ, ած. (դիպվ.): **Ամեն տեղի բնակիչ**: - Սատանա ախպեր, դու որտեղացի՞ ես: - Սատանաները լինում են **ամենտեղացի** *(Հրաչօ, էջ 123):*

ԱՄԵՐԻԿԱՉԻՆԱԿԱՆ, ած. Այստեղ՝ **միաժամանակ Ամերիկային (ԱՄՆ-ին) և Չինաստանին պատկանող, նրանց կողմից հովանավորվող**: Ես սովորել եմ **ամերիկաչինական** դպրոցում …. *(Պոզներ, էջ 231):*

ԱՄՈՒՍՆԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Ամուսնազանց լինելը**: .... Պատշաճ նրբանկատությունը, սիրալիրությունը, հոգատարությունը ծայր առած կասկածի մեջ պիտի մեկնաբանվեին իբրև **ամուսնազանցության** հատկանշական մանրամասներ *(Նայր 2, էջ 30)*:

ԱՄՐԱԳՐՈՒՄ, գ. **Նախապես պատվիրված ինչ-որ բանի գրավոր կամ բանավոր հավաստում**: Արդեն ցանկացողները կարող են **ամրագրումներ** անել *(ՀՀ, 17.12.2019):*

ԱՄՐԱԿԱՇԻ, գ. **Ամուր կաշի:** Ջուրջը հագավ-կապեց զենք ու զրահ, ինքը մկանուտ ու հաղթաբազուկ, սրանք պողովատիկ, վրան՝ չոր **ամրակաշի** …. *(ԱրմՄ., էջ 226):*

ԱՅԳԱՃԱՌԱԳ, ած. (բնստ.): **Այգի նման ճառագող:** Ամեն մի պահ՝ **այգաճառագ** արեգակ են վարսերը քո *(ԼԴ 1, էջ 85):*

ԱՅԳԱՑՈՒՐՏ, գ. **Այգի՝ լուսաբացի ցուրտ**: .... Սառած ձնաշերտն էր զրնգում բակից դուրս և կծկծան, թարմ **այգացուրտը** *(ՎԲ, էջ 153):*

ԱՅՐՈՒՔԱՀՈՏ, գ. **Վառվող՝ այրվող վառելիքի հոտ**: .... Ինքնաշարժ կռունկների սոլյարկայի **այրուքահոտ** *(Արեն ,էջ 236):*

ԱՆԱԳԱՓԱՅԼ, ած. **Անագի փայլ ունեցող:** Լևանտը աչքի պոչով նայեց Նարիմանովին, բայց վերջինս .... **անագափայլ** աչքերով շամպայնի պղպջակներ էր զննում *(ԱՏ, էջ 84):*

ԱՆԱՆՈՒԽԱԿԱՆԱՉԱՎՈՒՆ, ած. **Անանուխի գույնի նման կանաչ**: Սաղափամոխրագույն ու **անանուխականաչավուն** կոկտեյլը՝ պղպեղի ու ծխածածկույթի թույլ զուգահամությամբ *(Վիան, էջ 184):*

ԱՆԱՆՈՒԽԱՇԱՔԱՐ, գ. **Անանուխից պատրաստված, անանուխի համ ունեցող շաքար:** .... Բազեն նրան երկու-երեք **անանուխաշաքար** էր տալիս .... *(Ֆոլք., էջ 32):*

ԱՆԴՐԳՈՅԱԿԱՆ, ած. **Գոյություն ունեցողից՝ իրականից այնկողմնային:** Թող որ նրա ստեղծումները վերերկրային չեն, **անդրգոյական** չեն …. *(ԳԽ2, էջ 67):*

ԱՆԴՐԻՐԱԿԱՆ, ած. **Իրականությունից հեռու, ոչ իրական:** Ձայնը հալվում էր նրա հոգում և ծնվում էր **անդրիրական,** այն կողմնային երջանկության ծաղիկը *(ՆԱդ., էջ 93):*

ԱՆԴՐՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ, ած. **Անդրմայրցամաքին՝ մայրցամաքից այն կողմ գտնվողին վերաբերող:** .... Ֆիլմը պատմում է *1861-1869* թվականներին Միսսուրիից մինչև Կալիֆոռնիա **անդրմայրցամաքային** երկաթուղու շինարարության մասին *(Հանդկե, էջ 104):*

ԱՆԵԿԴՈՏԱՆՄԱՆ, ած. **Անեկդոտի նման, անեկդոտ հիշեցնող:** … **Անեկդոտանման** բաներ էին պատմում *(ՁԲ, էջ 524):*

ԱՆԺԱՆԳԱԿԱԼ, ած. **Առանց ժանգով պատվելու, առանց ժանգակալության:** .... Արտասովոր ելևէջում է, խնկահոտ ծխում, փայլում **անժանգակալ** *(ԱրմՄ., էջ 159):*

ԱՆԽՐԱԽՈՒՍԱԲԱՐ, մկբ. **Հավանություն չտալով, չխրախուսելով:** .... Իմ նոր վանդակավոր փեշը քամուց ուռչում էր և ամեն անգամ, երբ բարձրանում էր, տների ճակատի կարմիր, ճերմակ, կապույտ դրոշակները ձգվում էին ու **անխրախուսաբար** ծպպացնում *(Ֆից., էջ 90):*

ԱՆՁԱՎԱԿԵՐՏ, ած. **Անձավներից կառուցված, կերտված:** …. [Խնձորեսկը] այն ժամանակ հիմնականում **անձավակերտ** էր …. *(ՀՀ, 05.10.2019):*

ԱՆՁԱՎԱՆԿԱՐ, գ. **Անձավի նկար:** Այնտեղ իսպանական **անձավանկարներ** էին .... *(Բոռգեն, էջ 281):*

ԱՆՁԵՌՈՑԻԿԱՆՄԱՆ, ած. **Անձեռոցիկի նմանություն՝ տեսք ունեցող:** Սկզբում բացեցի փաթեթավորման թուղթը, հետո՝ փափուկ **անձեռոցիկանման** թուղթը .... *(Մոյես, էջ 187):*

ԱՆՁՐԵՎԱԼԻՃ, գ. **Անձրևից գոյացած լիճ**: …. Ճանապարհը՝ ծուռումուռ ու դարուփոս, վրան՝ մեկ-երկու շաբաթվա չչորացած ցեխ ու **անձրևալիճ** *(ԱրմՄ., էջ 20):*

ԱՆՁՐԵՎԱՄԱՇ, մկբ. (բնստ.): **Անձրևից մաշված: Անձրևամաշ** ծերացել էր կյանքը գութի-//Գիշերն ամբողջ աստղի թաղում, սուգ էր եղել *(ԼԴ 1, էջ 135):*

ԱՆՁՐԵՎԱՇՂԱՐՇ, գ. **Անձրև գալու պատճառով առաջացած շղարշ, անձրևամշուշ**: Անդաստակի մոտ՝ **անձրևաշղարշի** մեջ, իրար հետևից շարվել էին շքեղ կառքերը *(Սթոուն, էջ 36):*

ԱՆՄԱՀԱՊԱՏԻՎ, մկբ. (բնստ.): **Անմահներին վայել պատվով:** Իմաստուններ, թե հոգևորական,// Արարչավայել նպատակն իրենց// **Անմահապատիվ** գրառում էին…. *(ԼԴ 1, էջ 370):*

ԱՆՄԱՀԱՎԱՅՐ, գ. (բնստ.): **Անմահության, անմահանալու վայր**: Հո՛ղ, քո կոչումի դերը սրբազան// **Անմահավայրն** է դառնում այն քաջի…. *(ԼԴ 1, էջ 337):*

ԱՆՆԵՐԵԼԻՈՐԵՆ, մկբ. **Աններելի կերպով, աններելիաբար**: **Աններելիորեն** դանդաղ է կառուցվում *(Հրաչօ, էջ 201):*

ԱՆՈՐՍ, ած. **Որսալը անհնար, այստեղ՝ անհրագործելի**: **Անորս** հույսի պես մի սփոփանք կար միայն .... *(ՆԱղ., էջ 80):*

ԱՆՎԱԾԱԾԿՈՑ, գ. **Անիվի ծածկոց**: Մեքենայի թևատարած **անվածածկոցների** լույսի տակ մենք անցանք Աստորիայի կեսը .... *(Ֆից., էջ 82):*

ԱՆՎԱԾԻՐ, գ. **Անիվի թողած հետքը**: Մարլեզոնը լուռ քայլում էր ճանապարհի դեղին **անվածիրով** ու մտածում, որ իր տիրոջ շատախոսությունն այսօր բռնել է *(ՆԱ, էջ 159):*

ԱՆՎԱՆԱՆՇԱՆ, գ. **Ծառայողական տարբերանշան**: Այդպես էր ասում կրծքին փակցված **անվանանշանը** *(ԱՄ, էջ 250):*

ԱՆՎԱՍԱՅԼԱԿԱՎՈՐ, գ. **Անվասայլակից օգտվող, այն վարող հաշմանդամ**: .... Փարիզը երկրագնդի վրա ամենաանբարյացակամ քաղաքն է **անվասայլակավորների** համար *(Մոյես, էջ 223):*

ԱՆՎԵՐԱՀՍԿԵԼԻՈՐԵՆ, մկբ. **Վերահսկելը անհնար կերպով**։ .... Ուղևորության ավարտին ամբողջ մարմինս **անվերահսկելիորեն** ցնցվում էր .... *(Այգ., էջ 209)։*

ԱՆՏԱՌԱԳՈՂ, գ. **Անտառից գողություն անող**։ Տաշիրի անտառատնտեսության աշխատակիցները հայտնաբերել են **անտառագողերի** *(Հմց, aravot.am)։*

ԱՆՏԱՌԱԳՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Գողություն անտառից**։ Պետք է իրականացնել խիստ և կտրուկ պայքարի միջոցներ՝ կանխարգելելու ապօրինի ծառահատումները և պայքարելու **անտառագողության** դեմ *(Հմց, aravot.am)։*

ԱՆՏԱՌԱԼԵՌՆԱՅԻՆ, ած. **Անտառապատ և լեռնային**։ Հիմնականում դաշտավայրերում որոշակի հաջողությունների հասնելուց հետ թշնամու զինված ուժերը փորձում են զարգացում ապահովել նաև **անտառալեռնային** տեղանքում *(Հմց, aravot.am)։*

ԱՆՏԱՌԱԾԱԾԿՈՒՅԹ, գ. **Տարածքը ծածկող անտառային զանգված**։ Ուսումնասիրվել է .... **անտառածածկույթի** հատմամբ հասցված վնասի հատուցման .... պարտավորությունների կատարման վիճակը *(Հմց, aravot.am)։*

ԱՆՏԱՌԱՀՅՈՒՍ, ած., մկբ. **Անտառին հյուսվելով, անտառի մեջ ձգվելով**։ .... Դա հար և նման էր Բաղաբերդից Տաթև տանող ճանապարհին, ծունկ էր տալիս, **անտառահյուս** ոլորվում էր *(ԱրմՄ., էջ 34)։*

ԱՆՏԱՌԱՃԵՑՈՒՄ, գ. **Անտառի աճեցում**։ Այս պայմաններում մեծ տեղ է հատկացվում արհեստական **անտառաճեցմանը**, որը մեծ դեր ունի *(Հմց, aravot.am)։*

ԱՆՏԱՌԱՇԻՆԱԿԱՆ, ած. **Անտառաստեղծմանը, անտառատնկմանը վերաբերող**։ Եթե մենք **անտառաշինական** ճիշտ աշխատանք չկատարենք, ապագայում տարեկան կորցնելու ենք տասնյակ հազար հեկտարներ՝ արդեն հրդեհների պատճառով *(Հմց, aravot.am)։*

ԱՆՏԱՌԱՍՊԱՆԴ, գ. **Անտառի ոչնչացում:** Գյուղացիների հետ զրույցում նրանք ասել են, որ հուլիսից է սկսվել **անտառասպանդը** *(Հմց, aravot.am):*

ԱՆՏԱՌՄԱՔՐՈՒՄ, գ. Այստեղ՝ **տարածքը անտառից, ծառերից մաքրելը, ազատելը**: 2020թ. ավելանալու են լճի շրջակայքում ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում **անտառմաքրման** աշխատանքների իրականացման տարածքներն ու դրա համար հատկացվելիք չափը *(ՀՀ, 04.02.2020):*

ԱՆՏԱՐԲԵՐԵԼԻ, մկբ.,ած. **Տարբերելը՝ տարբերակելը անհնար**: Լաց էր լինում, լռում, գոռգոռում **անտարբերելի** .... *(ԳԽ1, էջ 70):*

ԱՆՏԵՐԱՆՈՑ, գ. (խսկց.): **Անտեր, տեր՝ հետևող, խնամող չունեցող, անտեր մնացած տեղ**: .... Ինձ տարավ էդ լիակատար **անտերանոցը** *(Այգ., էջ 52):*

ԱՆՐԱՓՈՍԻԿ, գ. **Անրակափոսիկ**: .... Ճերմակ **անրափոսիկները** շշուկով զրուցում էին բացված հագուստի իրենց պես գզգավորված ծալք ու փոնթերի հետ *(ԱրմՄ., էջ 106):*

ԱՆՑՔՕՂԱԿ, գ. **Օղակաձև անցք. անցք, որը օղակի տեսք ունի**: .... Հագին մետաղյա **անցքօղակներով** ճտքավոր կոշիկ էր .... *(ՀԼ, էջ 142):*

ԱՆՈՒՇԱԲԼԻԹԵ,ած. (փխբ.): **Անուշաբլիթի՝ անուշահացի տեսք ունեցող**: .... Ինձ սպասում էր սպիտակ ջնարակի հաստ շերտով պատված **անուշաբլիթե** դղյակս *(Մոյես, էջ 76):*

ԱՆՓՈԽՀԱՏՈՒՑԵԼԻ,ած. **Փոխհատուցման ոչ ենթակա, ձրի**: Բայց հետո Apple-ից նրան օդանավի **անփոխհատուցելի** տոմս ուղարկեցին .... *(Այգ., էջ 106):*

ԱՇԱԿԵՐՏԱՀԱՃՈ,ած. **Աշակերտի համար ընդունելի՝ հաճելի:** Ընդունվում են նաև **աշակերտահաճո** որոշումներ *(Հմց, Tert. am):*

ԱՇԱԿԵՐՏԱՑՈՒ, գ., ած. **Աշակերտի՝ աշակերտության թեկնածու**: - Գուցե ուզում եմ իր աշակերտը դառնալ: - **Աշակերտացուի** նման չես *(ԳԽ1, էջ 9):*

ԱՇԽԱՏԱԽՑԻԿ, գ. **Փոքրիկ աշխատանքային խցիկ՝ սենյակ**: .... Մի քանի օր անց Ջոբսը հայտնվեց .... երիտասարդ ինժեների **աշխատախցիկում** .... *(Այզ., էջ 128):*

ԱՇԽԱՏԱԿԱՅԱՆ, գ. **Աշխատանքային կայան, աշխատատեղի**: .... Եթե ղեկավարությունը հավաներ, կիրառելու էին իրենց որոշ **աշխատակայաններում** *(Այզ., էջ 260):*

ԱՇԽԱՐՀԱՉՈՒ, ած. **Աշխարհով մեկ թափառող**: .... Ոստանը ծուխ է դարձել ու աշխարհաշեն վանեցին՝ **աշխարհաչու** պանդուխտ *(ԳԹ, 12.07.2019):*

ԱՇՆԱՆԱՎԱՐԻ, մկբ. **Աշնան նման, ինչպես աշնանը:** Սպիտակ զանգակատունը հստակորեն առանձնանում էր մեղմ, **աշնանավարի** խոնարհ երկնքի վրա *(ՎԲ, էջ 395):*

ԱՉՔԱՏԵՂ, գ. (փխբ.): **Անզեն աչքով դիտելու, նայելու հնարավորություն տվող դիտանցք**: Բութ մատի եղունգով մի **աչքատեղ** բացեց պատուհանի ապակու վրա և աչքը մոտեցրեց *(ՎԻ, էջ 344):*

ԱՊԱԳԱՅԱԳԵՏ, գ. **Ապագան կանխատեսող**: .... Մասնագետ զինական **ապագայագետները** .... կանխատեսում էին, երբ վեճ ու կռիվ կսկսվի .... Ռուսաստանի և Ուկրաինայի միջև *(ՁԲ, էջ 505):*

ԱՊԱԳԱՅԱՑՈՒՅՑ, ած. **Ապագան ցուցանող՝ նկատող, տեսնող:** Թումանյանի ամեն մի խոսքը մեզ համար պատվիրան էր ու պատգամ, **ապագայացույց** լուսարձակ *(ԹԺՀ, էջ 856):*

ԱՊԱԽՏԱՑՈՒՄ, գ. **Ապախտանալը, նոսրացում**: .... Նույն սուրբ պլազմայի մսային խտացումն է, հետո կլինի **ապախտացում** – լորձ – փրփուր, վերստին՝ խտացում, հեղուկացում, գերխտացում .... *(ԳԽ2, էջ 13):*

ԱՊԱԿԵԳՄԲԵԹ, ած. **Ապակե գմբեթ ունեցող**: ... Ցուցադրվելու է քարակերտ տները ծածկող անհեթեթ վեր խոյացող **ապակեգմբեթ** առևտրի կենտրոնը …. *(ՆԱ, էջ 61):*

ԱՊԱԿԵՍՐԱՀ, գ. **Ապակիներով պատած սրահ:** Գրետան որոշեց գնալ, սենյակից բերել …. գիրքը ու **ապակեսրահում** կարդալ *(ԱՄ, էջ 21):*

ԱՊԱՄԵԿՈՒՍԱՑՆԵԼ, նբ. **Մեկուսացած վիճակից հանել**: Այդ խաժաղուժներին կմեկուսացնենք իրենց սեփական զրահապատ ավտոմեքենաների մեջ: .... – Իսկ ինչպե՞ս **ապամեկուսացնենք** .... *(Արեն, էջ 124):*

ԱՊԱՆՁՆԱՎՈՐԵԼ, բ. **Անձնական տվյալների գաղտնիություն պահպանել**: Կանոնը հետևյալն է՝ հնարավորինս **ապանձնավորել** այդ տվյալները .... *(ՀՀ, 23.11.2019):*

ԱՊԱՆՁՆԱՎՈՐՈՒՄ, գ. **Անձի մասին տվյալներ հայտնելու գաղտնիությունը: Ապանձնավորման** կանոնները շրջանցել կարելի է բացառիկ դեպքերում, եթե, օրինակ, երեխան կորել է *(ՀՀ, 29.11.2019):*

ԱՊԱՍՏԱԼԻՆԱՑՈՒՄ, գ. (պատմ.): **Ստալինյան գաղափարախոսության և դրա հանցագործ հետևանքների վերացում**: Կարելի է բազմաթիվ տեսություններ կառուցել **«ապաստալինացման»** խրուշչովյան իսկական նպատակի վերաբերյալ .... *(Պոզներ, էջ 473):*

ԱՊԱՍՏԱԼԻՆՅԱՆ, ած. (պատմ.): **Ստալինի գերիշխանությանը հաջորդած**: Ես լրագրության մեջ եմ մտել, երբ **ապաստալինյան** գործընթացը հասել էր իր գագաթնակետին *(Պոզներ, էջ 369):*

ԱՊԱՍՐԲԱԶՆԱՑՈՒՄ, գ. **Իբրև սրբություն ընդունված իրողության սրբազերծումը, ապասրբացումը:** Վերջին հարյուրամյակում Նախիջևանի լիակատար հայաթափության արդյունքում սկսվեց նախկին սրբազան տարածքի **ապասրբազնացումը** (դեսակրալիզացիան) *(ՊԲՀ, 2020,1, էջ 256):*

ԱՊԱՐԱԲՈՒՐԳ, գ. **Ապարի բուրգ, բուրգի ձև ունեցող կիտված հանքատեսակ**: Քայլում էր նա .... դաշտի միջով դեպի սև ծխնելույզներն ու **ապարաբուրգերը** .... *(Սթոուն, էջ 82):*

ԱՊԱՐԱԽԱՌՆ, ած. **Ապարների՝ այլևայլ հանքատեսակների հետ խառն**: Վինսենթն արդեն մի քանի ժամ էր, որ քրտինք էր թափում **ապարախառն** ածխի լեռան վրա .... *(Սթոուն, էջ 99):*

ԱՊՐԱՆՔԱԳԻԾ, գ. **Ապրանքների՝ ապրանքային գիծ**: .... Սարքային ու ծրագրային ապահովման **ապրանքագծերը** անկում էին ապրում .... *(Այզ., էջ 277):*

ԱՊՐԱՆՔԱԽԱԲԵՈՒԹՅՈՒՆ, գ. **Խաբեությամբ ապրանքների վաճառք՝ փոխանակություն**: Հետո տեղի ունեցավ **ապրանքախաբեություն** *(ՄԲ, էջ 363):*

ԱՊՐԱՆՔԱՍԱՅԼԱԿ, գ. **Գնումների համար նախատեսված սայլակ:** Այնտեղ նա **ապրանքասայլակի** մեջ դրեց «Դարնիցկու» աղյուսիկը .... *(ՆԱ, էջ 186):*

ԱՌԱԳԱՍՏԱՎԱՐԵԼ, նբ. **Առագաստավոր ջրային փոխադրամիջոց վարել**: .... Ամբողջ առավոտս անցկացրի **առագաստավարելով** և կայակով թիավարելով .... *(Մոյես, էջ 315):*

ԱՌԱՋՆՈՒՀԻ, գ. **Արվեստի տվյալ ճյուղում առաջնակարգ դիրք զբաղեցնող կին կամ աղջիկ:** Իսկ ո՞վ էր Թինան, որ ձեռնոց էր նետել եվրոպական բեմերի **առաջնուհիներին** *(ՊԲՀ, 2020, 1, էջ 85):*

ԱՌԱՍՊԵԼԱԴԻՑԱԲԱՆԱԿԱՆ, ած. **Առասպելական և դիցաբանական:** .... Նախաքրիստոնեական անցյալի հավատքային, **առասպելադիցաբանական** և ծիսաարարողական համակարգի տարաբնույթ բաղադրիչներ շարունակել են գոյատևել քրիստոնյա միջնադարում ու նոր շրջանում .... *(ՊԲՀ, 2020, 1, էջ 167):*

ԱՌԱՍՏԱՂԱՄՈՒՏ, ած. **Ավտոմեքենայի առաստաղի՝ տանիքի բացվածք**: Ֆոլկսվագենը ուներ **առաստաղամուտ** .... *(Քինգ, էջ 131):*

ԱՌԵՎՏՐԱՅՆԱՑՈՒՄ, գ. **Առևտրի ենթակա ապրանքի կարգավիճակ ստանալը, առևտրային դառնալը**: Դրա հետ միասին ԶԼՄ-ների ամբողջ **առևտրայնացումը,** տպաքանակի և վարկանիշի ճնշումը արտահայտվում են ամենակործանարար ձևով *(Պոզներ, էջ 403):*

ԱՌՈՒՅԳԱԲՈՐԲ, ած. (բնստ.): **Առույգ և կրակոտ:** Վարսերդ խարույկաբոց// Ինձ վրա դու փռեցիր,// Ես դարձա **առույգաբորբ**,//Ես դարձա արեգնածին*(ԼԴ 1, էջ 194):*

ԱՍՈՑԱՑՆԵԼ, նբ. (անհնձն.)։ **Կապել, առնչել**։ Հորս հետ ինձ **ասոցացնելը** քաղաքականություն մտնելու առիթ չէր տվել երբեք *(Տրյուդո, էջ 220)։*

ԱՍՏՂԱԳԱՀ, ած. (բնստ., փխբ.)։ **Աստղերի նման բարձր, վեհ։** Նրանց կանչողն Աստծո տունն էր **աստղագահ**,// Լցված էին երանության երկունքով *(ԼԴ 1, էջ 122)։*

ԱՍՏՂԱԿԱՏԱՐ, ած. (բնստ., փխբ.)։ **Գագաթին՝ կատարին աստղ ունեցող։** Ինձ գինի հարկավոր չէ, .... // Ինձ կրծքիդ գմբեթների վառքը տուր **աստղակատար** … *(ԼԴ 1, էջ 82)։*

ԱՍՏՂԱԿՈԻԼ, ած. (բնստ., փխբ.)։ **Աստղեր կլանող։** Ես չգիտեմ, այս **աստղակուլ** բախտը մութ// Արդյոք ինչքա՞ն և ու՞ր պիտի ինձ տանի*(ԼԴ 1, էջ 138)։*

ԱՍՏՂԱՇԱՂՈՏ, ած. (բնստ.)։ **Աստղային և շաղոտ։** Ինձ ամեն օր տանում են վեր// Տեսիլքները **աստղաշաղոտ** *(ԼԴ 1, էջ 114)։*

ԱՍՏՂԱՏԱՐԱԾՔ, գ. (բնստ., փխբ.)։ **Աստղերի տարածքը՝ տիեզերքը։** Դու ամենուր, դու ամեն տեղ իրական,// Քեզանով է **աստղատարածքը** հևում *(ԼԴ 1, էջ 173)։*

ԱՍՏՎԱԾԱԲՈԻՅԼ, գ. **Աստվածների բույլ՝ խումբ՝ համաստեղություն**։ Կնոջ համար երկրի վրա միմյանց տապալում էին հզոր դյուցազունները, իսկ երկնքի անմատչելի գահին՝ Աստվածները, Օլիմպոսում՝ Զևսն իր **աստվածաբույլով**, հայոց երկրնքում՝ Արամազդը *(ԾԲ, էջ 109)։*

ԱՎԱԳԱՆԻԱԿԱՆ, գ. Այստեղ՝ **ավագանու անդամ**։ .... Ենքան լավացա ու լավ զգացի **ավագանիականների** գալուց, որ երեք օր հետո նրանց հետ գնացի Աշտարակ *(Հրաչօ, էջ 227)։*

ԱՎԱԶԱԾԵՓ, ած. **Ավազով ծեփված։** Միակ կողմնակի փողոցի վրա գտա այն տունը, որը երևի նրան էր պատկանում. **ավազածեփ** երեսով, դիմացի դռան վերևում՝ դրսադիր պատուհան ….*(ԱՄ, էջ 49)։*

ԱՎԱԶԱՀԱՐԹԱԿ, գ. **Ավազապատ հարթակ**։ .... Երբ մի անգամ Պալո Ալտոյում **ավազահարթակում** նստած էին եղել, Սմիթը հարցրել էր՝ ինչ է կատարվում *(Այզ., էջ 301)։*

ԱՎԱԶԱՆԱՍԵՆՅԱԿ, գ. **Ավազան(ներ)ի սենյակ**: .... Դիտեցինք զարդասենյակները, **ավազանասենյակները,** հատակում տեղադրված տաշտակներով լոգարանները *(Ֆիգ., էջ 108):*

ԱՎԱՆԴԱԾԵՍ, գ. **Ավանդական ծես:** Սատանան .... հազարամյակներով կրկնում է իր **ավանդածեսերը** *(Էկո, էջ 88)*:

ԱՎԱՐՏԱՄԱՍ, գ. **Ավարտվելու՝ վերջանալու մաս՝ հատված**: Հասնելով եզրակացության **ավարտամասին**՝ պատժի ձևակերպմանը, Մանեի ձեռքը դողաց .... *(ՆԱղ., էջ 183):*

ԱՎՇԱՀՅՈՒԹ, գ. **Ավշի հյութ**: .... Հավի ձվի **ավշահյութի** վրա ճառագայթը նույն ազդեցությունը կգործի .... *(ՄԲ, էջ 115):*

ԱՎՏՈԱՐՇԱՎ, գ. **Ավտոմեքենաների արշավ**: .... Որում սովորական ձանձրալի դիազրամաների փոխարեն **ավտոարշավի** մեքենաներ ու խաղանիշներ էին *(Այգ., էջ 90):*

ԱՎՏՈԱՐՏԱԴՐՈՂ, գ. **Ավտոմեքենաներ արտադրող (ձեռնարկատեր ևն)**: .... Հանդես էին գալիս դիզայներ-ճարտարապետ Մարիո Բելինին, .... **ավտոարտադրող** Սերջո Պինինֆարինան .... *(Այգ., էջ 142):*

ԱՎՏՈԳԱԶԱԼՑԱՎՈՐՈՒՄ, գ. **Մեքենան գազով լիցքավորելը**: Ստուգումներ **ավտոգազալցավորման** կայաններում *(ՀՀ, 19.04.2019):*

ԱՎՏՈԼՎԱՑԱԿԱՅԱՆ, գ. **Ավտոլվացման կայան:** Ահա ավան մտնող **ավտոլվացակայանի** լապտերը ևս վառվեց *(Հանդկե, էջ 10)*:

ԱՎՏՈՀԱՎԱՔԱՏԵՂԻ, գ. **Ավտոմեքենաների հավաքման տեղ՝ վայր:** Ջիմը կռացավ, քար վերցրեց և հրճվանքով դեպի **ավտոհավաքատեղին** շպրտեց *(ՀԼ, էջ 148)*:

ԱՏԵԼԱՊԱՇՏ, ած. **Ատելություն պաշտող:** Շատ կարևոր է, որ թույլ չտան .... **ատելապաշտ** իշխանություն հաստատվի *(Հմց, Tert.am):*

ԱՏԼԱՍԱՓԱՅԼ, ած. **Ատլասի փայլ ունեցող**: Հաղորդավարի հագին կապտազոլավոր վերնաշապիկ և պողպատագույն **ատլասափայլ** փողկապ էր *(Պոլ., էջ 39):*

ԱՐԱՔՍԱՄԵՐՁ, ած. **Արաքսին մոտ գտնվող**: Շուտով շըր-ջանի հարավային **արաքսամերձ** հովիտներում կսկսվի գարու բերքահավաքը *(ՀՀ, 05.05.2020):*

ԱՐԵՎԱԳԱՆԳՈՒՐ, ած. (բնստ., փխբ.): **Արևի պես շեկ, գանգուր և պայծառ մազերով:** Բայց կատարվեց հանկարծ մի ուրիշ հրաշք,// Երեխաներ եկան **արևագանգուր**…. *(ԼԴ 1, էջ 162):*

ԱՐԵՎԱԶԵՐԾԵԼ, բ. (բնստ., փխբ.): **Բովանդակազրկել, փո-խել, խունացնել:** Բայց մեր հավատը// **Արևազերծել** չկարողացան .... *(ԼԴ 1, էջ 276):*

ԱՐԵՎԱՀՈՍՔ, գ. (բնստ., փխբ.): **Ջերմություն:** Թո՛ղ համբու-րեմ, որ զորանա// **Արևահոսքն** իմ կարոտի *(ԼԴ 1, էջ 88):*

ԱՐԵՎԱՃԱՌ, գ. **Արևին նվիրված ճառ**: .... Ընդհանրապես ճառերը լինում են երկու տեսակ. լուսնաճառ և **արևաճառ** ... *(Ամիր., էջ 26):*

ԱՐԵՎԱՏԱԿ, ած. **Արևի տակ մնացած, արևահար եղած**: **Արևատակ** փշատերևի հոտ էր գալիս *(ՎԲ, էջ 16):*

ԱՐԵՎՈՂՈՂ, ած. **Արևի ճառագայթներով ողողված**: .... Բզե-զիկները տագնապած վազվզեցին **արևողող** հրապարակում *(ՄԲ, էջ 54):*

ԱՐԻՍՏՈԿՐԱՏԱՎԱՅԵԼ, ած., մկբ. **Արիստոկրատին վայել, ինչպես վայել է արիստոկրատին**: .... Դրա տակից երևում էր նոր շալվարը: Մեկ ծալքանի, **արիստոկրատավայել** արդուկած .... *(ՄԲ, էջ 296):*

ԱՐԾԱԹԱԿԱՐՄՐԱՎՈՒՆ, ած. **Արծաթագույնին տվող կար-միր**: Արշալույսին, թե մայրամուտին, **արծաթակարմրավուն** եղյամի մեջ պայծառ բյուրեղներ էին փայլատակում .... *(Լըմնյե, էջ 77)*:

ԱՐԾԱԹԱՍՆԴԻԿԱԳՈՒՅՆ, ած. **Արծաթի և սնդիկի գույն ու-նեցող:** Միայն աչքերն են նույնը. աշխույժ ու սրաթափանց՝ **արծա-թասնդիկագույն** ելևէջներով *(ՆԱ, էջ 295):*

ԱՐԾՎԱԲՌՆԻՉ, ած. **Արծիվ բռնող՝ բռնած**: .... Գովում ու գո-վում են **արծվաբռնիչ** թագավորին .... *(Հրաչօ, էջ 105):*

ԱՐԾՎԱՁՈՐ, ած. (բնստ.): **Արծվի նման զորեղ:** Ինձ էլ ձեր գիրկն առեք// Իմ **արծվազոր** քաջեր *(ԼԴ 1, էջ 100):*

ԱՐԾՎԱԽԻՍՏ, ած. **Արծվի նման խիստ. արծվի խստություն ունեցող**: Նրա դիմաց նստած էր .... **արծվախիստ** դեմքով .... Միխայիլ Ալեքսանդրովիչ Ստախովիչը *(ԱՏ, էջ 20):*

ԱՐԾՎՈՐԵՆ, մկբ. **Արծվի նման, ինչպես արծիվը, արծվաբար**: Հիանում էին՝ էս երկնքի տակ դեռ ոչ մեկը էսպես **արծվորեն** չի թռել ու չի սլացել արծվի պես *(Հրաչօ, էջ 106):*

ԱՐԿԱՆԱՀԱՐ, գ. **Արկանով՝ օղապարանով կռվող, արկան նետող, արկանարկու**: Եվ իսկույն յոթ ժայռագնաց-մագլցող հայտնվեց **արկանահարի** կողքին .... *(ԱրմՄ., էջ 52):*

ԱՐՁԱԿԱԹՈՒՂԹ, գ. **Արձակման թուղթ՝ գրավոր թույլտվություն**: .... Չի՞ կարելի թատրոնի փոխարեն կրկես գնալու **արձակաթուղթ** տաք *(ՄԲ, էջ 273):*

ԱՐՁԱՆԱԳՐԱՌԵԼ, նբ. **Արձանագրելով գրի առնել, գրավոր հաստատել**: Անկաշառ հանձնաժողովը իրավունք չուներ **արձանագրառել** այն մասին .... *(Հրաչօ, էջ 80):*

ԱՐՅՈՒՆԵՓ, ած. **Արյունով եփված**: .... Կարելի էր դրանից **արյունեփ** երշիկ պատրաստել *(Էկո, էջ 104):*

ԱՐՆԱԽԱՉ, գ. **Արյունով արված խաչ**: .... Տղայի ճակատին **արնախաչ** դրոշմեց .... *(Սար., էջ 122):*

ԱՐՆԱԿԱՐՄԻՐ, ած. **Արյան գույնի նման կարմիր**: .... **Արնակարմիր** ջրերը խառնվում են մի լճակի մեջ .... *(Բրաուն, էջ 52):*

ԱՐՆԱՊԱՏ, ած. **Արյունով պատված**: .... Բարձի վրա հայտնըվեց, **արնապատ** ֆոնի վրա, Շարիկի անկենդան, մարած մռութը .... *(ՄԲ, էջ 203):*

ԱՐՎԱՐՁԱՆԱԲՆԱԿ, գ., ած. **Արվարձանում բնակվող: Արվարձանաբնակներից** ով կարողանում էր, սովորաբար իր հետ բերում էր կտրված հողված .... *(ՀԼ, էջ 359):*

ԱՐՎԵՍՏԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ, գ. **Արվեստամոլ՝ արվեստասեր լինելը**: .... Պարզապես իր անզուսպ **արվեստամոլությանը** ենթարկվելով՝ ներկայացրեց այդ թատերախաղը .... *(Դարյան, էջ 79):*

ԱՐՏԱԴՐԱԶԳԵՍՏ, գ. **Արտադրության մեջ հագնելու զգեստ**: Թատերական քննադատները դա անվանում են **արտադրազգեստ:** Գործարան կուղարկեի դրանց … կիմանային, թե արտադրահագուստն ինչ ասել է *(ՄԲ, էջ 305):*

ԱՐՏԱԴՐԱՀԱԳՈՒՍՏ, գ. **Արտադրության մեջ հագնելու հագուստ, արտադրազգեստ**: Տե՛ս ԱՐՏԱԴՐԱԶԳԵՍՏ-ի օրինակը:

ԱՐՏԱԴՐԱՀԱՄԱԿԱՐԳ, գ. **Արտադրական համակարգ**: Ստեղծվեց .... «համակարգչային անիմացիայի **արտադրահամակարգ»** անվանումով հատուկ ծրագրային և սարքային ապահովման փաթեթը *(Այգ., էջ 271):*

ԱՐՏԱՍՎԱԿԱԼ, ած. **Արցունքով լցված:** Ես այնքան երկար լացեցի, որ աչքերս վերածվել էին կարմրատակած կոպերով **արտասվակալ** նեղ դիտաճեղքի *(ՆԱ, էջ 17):*

ԱՐՑՈՒՆՔԱՊԱՏ, ած. **Արցունքով պատված**: .... Ինչ-որ մեկի **արցունքապատ** դեմքը ցոլաց-անցավ Կորոտկովի առջևով *(ՄԲ, էջ 46):*

ԱՐՔԱՅԱԿԱՌՈՒՅՑ, ած. **Արքայի(ների) կողմից կառուցված**: .... Անին առհասարակ .... արքայանիստ քաղաք է և, ուրեմն, **արքայակառույց** *(ԱրմՄ., էջ 68):*

ԱՈՒԴԻՈՆՅՈՒԹ, գ. **Լսելու նյութ**: Հետո ցույց տվեց համակարգիչն ինչպես կարող է .... էլեկտրոնային փոստ ուղարկել՝ կցված **աուդիոնյութերով** *(Այգ., էջ 262):*

ԱՈՒԴԻՈՍԱՐՔԱՎՈՐՈՒՄ, գ. (տեխն.): **Ձայնը հաղորդող և ընկալող սարքավորում**: Սակայն փոխեց գրելաձևը, որպեսզի խնդիրներ չառաջանան **աուդիոսարքավորումներ** արտադրող Mcintosh Laboratory-ի անվան հետ *(Այգ., էջ 123):*

ԱՔԼՈՐԱՎԱՐԻ, մկբ. (խսկց.): **Աքլոր(ներ)ի նման, ինչպես աքլոր(ներ)ը**: Ծակծկող ձյան քուլաներն **աքլորավարի** միմյանց էին զարկվում ու փլվում .... *(ՎԲ, էջ 245):*

ԱՖՐՈԱՄԵՐԻԿԱՑԻ, գ. **Ամերիկայի սևամորթներին տրվող անվանումը**: .... Երբեմն բարձրաձայն երգում էր սպիրիչուելս, .... **աֆրոամերիկացիների** հոգևոր երգ *(Պոզներ, էջ 108):*

## Բ

ԲԱԴԱՕՐՈՐ, մկբ., ած. **Բադի նման օրորվելով**: Գուցե նրան հաջողվեց խաբել ծնողներիս ու Ջամիլային՝ ձեռքերը լայն բացած, **բադաօրոր** վազելով դեպի մեզ .... *(Ռուշդի, էջ 355):*

ԲԱԶԵԱՆՄԱՆ, ած. **Բազեի նմանվող**: .... **Բազեանման** ռունգերը փքվել էին *(ՄԲ, էջ 187):*

ԲԱԶԿԱՊՈՒՐ, գ. **Բազուկով ապուր**: .... Պատվիրեց սառույցով **բազկապուր** .... *(Բունին, էջ 205):*

ԲԱԶՄԱԲԱՐԴՎԵԼ, բ. **Բազմակի անգամ բարդվել:** Մի քանի տարում այդ արտասանությունը **բազմաբարդվելով** ու քարանալով գրանիտե դոգմայի էր վերածվել *(ՌԲ, էջ 106):*

ԲԱԶՄԱԳԻՏԱԿՈՒԹՅՈՒՆ, գ. **Բազմագիտակ՝ շատ գիտելիքներ ունեցող լինելը**: Նա չուներ Լենինի **բազմագիտակությունն** ու խելքը …. *(Պոզներ, էջ 417):*

ԲԱԶՄԱԿԱՑԱՐԱՆ, գ. **Հանրակացարան, շատ կացարաններ ունեցող շինություն**: ՀՀ կառավարությունը նախորդ տարեվերջին որոշում կայացրեց Գուգարք համայնքի .... հրդեհված **բազմակացարանի** յոթ ընտանիքի բնակարանային խնդիրը բնակարանի գնման վկայագրերի (ԲԳՎ) տրամադրման միջոցով լուծելու մասին *(ՀՀ, 23.01.2020):*

ԲԱԶՄԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Շատ կուսակցությունների համաժամանակյա գործունեություն**: .... Ովքեր դատապարտվեցին տասը տարվա ճամբարային ռեժիմին՝ ընդհատակյա լրագրի հրատարակության և **բազմակուսակցականության** կոչերի համար *(Պոզներ, էջ 475):*

ԲԱՂԱԳՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. (խսկց.): **Գողություն այգուց**: Աշխարհում սիրուն շա՜տ բաներ կան, բայց ոչ մի սիրուն բան **բաղագողությանը** չի հասնի *(Հրաչօ, էջ 16):*

ԲԱՄԲԱՎՈՒՆ, ած., մկբ. **Փոքր-ինչ բամբ**: - Դե-դե՜, Անրի, - գոչեց .... իր **բամբավուն,** տպավորիչ ձայնով *(Սթոուն, էջ 429):*

ԲԱՄԲՈՒԿԱԹՂԹԱՅԻՆ, ած. **Բամբուկաթղթից պատրաստված**: .... Բծախնդրորեն կառուցված, չափից ավելի գունեղ **բամբու-**

**կաթղթային** ճակատի հրակնատների և օժանդակ ամրությունների հետևում մյուս հյուղակների պես հասարակ, թիթեղաստվարաթղթային տնակ էր թաքնված *(Ռուշդի, էջ 463)։*

ԲԱՍԱՀԱՐ, գ. **Բաս նվագող**։ **Բասահար** Չակ Իսրաելը .... համոզիչ է, ճշգրիտ .... *(ԳԽ2, էջ 69)։*

ԲԱՍԱՆՄԱՆ, ած. **Բասի՝ տղամարդկանց ամենացածր ու թավ ձայնի նման**։ Ինձ տեսնելով Պրիմակովը **բասանման** և միաժամանակ խռպոտ ձայնով հարցրեց …. *(Պոզներ, էջ 123)։*

ԲԱՐԴԱՁՈՂ, գ. **Չորացրած խոտի դեզի՝ բարդի ձող**։ Բարձր **բարդաձողի** վրա կռռաց ագռավը *(ՎԲ, էջ 270)։*

ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Բարեկամական լինելը՝ բարեկամական վերաբերմունք**։ Նա այդ օրվա Ջոբսի **բարեկամականությանը** հետադարձ հայացք էր ձգել .... *(Այզ., էջ 337)։*

ԲԱՐԵՀՈՒԶՈՒԹՅՈՒՆ, գ. **Բարեհոժարություն**։ .... Կրպակի մոտ մեր ժամանակի վկաները փրփուր են փչում գարեջրի վրայից ու ցրված ժպտում գավաթի միջով, ժպիտի տակ՝ **բարեհուզություն,** ներողամտություն .... *(ԳԽ2, էջ 12-13)։*

ԲԱՐԵՎԱՆՄԱՆ, ած. **Թեթևակի բարևելու նման, ինչպես թեթևորեն բարևելիս**։ .... Երբեք չանցա **բարևանման** գրկախառնությունից այն կողմ .... *(ՆԱդ., էջ 75)։*

ԲԱՐՁԻԿԱՊԱՏ, ած. **Բարձիկով պատված**։ Պառավն անմիջապես սև շրջազգեստի մեջ պարուրված իր պարարտ մարմինը խցկեց դրամարկղի մեքենայի ու **բարձիկապատ** բազկաթոռի արանքը *(Վերտես, էջ 13)*։

ԲԱՐՈՒԲԱՐԱԿ, ած. (բրբ.)։ **Արտակարգ՝ շատ բարակ**։ Ամռան բարակ, **բարուբարակ** առու էր .... *(Հրաչօ, էջ 103)։*

ԲԱՑԱՏՐԱԳԻՐՔ, գ. **Որևէ խնդրի վերաբերյալ բացատրություններ պարունակող գիրք**։ Մինչև թողարկվելու շրջանը Next-ը պիտի ներառեր նաև բառարան, **բացատրագիրք** ու «Օքսֆորդի մեջբերումների բառարան» .... *(Այզ., էջ 252)։*

ԲԱՑԱՏՐԱՆՔ, գ. **Բացատրություն**։ Պանդոկապանի **բացատրանքն** այնքան էլ հստակ չէր …. *(ԳԽ1, էջ 7)։*

ԲԱՑՇԻՇ, ած. **Բացված՝ խցանը հանված շշով:** Սեղանին **բացշիշ** կոնյակ կար և մեկ նարինջ *(ԳԽ1, էջ 225):*

ԲԵՄԱԽԱՂ, գ. **Բեմադրություն, բեմական ներկայացում**: Մոտերքում .... շողացնելով կնոջ մսամերկ մարմինը, բեմահարթակի կանաչների մեջ .... ներկայացվում էր .... **բեմախաղը** *(ՄԲ, էջ 98):*

ԲԵՄԱԿԱՐԳ, գ. **Բեմական խաղի կարգ:** [Վարդան Աճեմյանը] հրաժարվել էր գրոտեսկային **բեմակարգից** ու խաղաոճից՝ խորացնելով իր ժամանակի աշխատավոր մարդու պայքարի ճանապարհը *(ՀՀ, 07.05.2020):*

ԲԵՅՍԲՈԼԱՅԻՆ, ած. **Բեյսբոլին հատուկ**: Ջառերի ամեն նետում, նրանց յուրաքանչյուր համադրություն նշանակում էր **բեյսբոլային** գործողության ինչ-որ մի պահ *(Պոզներ, էջ 77):*

ԲԵՌՆԱՄԱՍ, գ. **Փոխադրամիջոցի բեռների ուղեմաս, որտեղ տեղավորվում են տանելիք բեռները**: Ի վերջո համաձայնեցին, որ ճիշտ կլիներ վիրավորին .... կապել դիզելային մեքենայի **բեռնամասում** ու տանել հիվանդանոց *(Ջեեթ., էջ 45):*

ԲԵՐԿՐԱՀԱՐՈՒՅՑ, ած. **Բերկրանք հարուցող՝ առաջացնող**: .... Նրա փորի վրա **բերկրահարույց** և աղոտ շողաց ոսկյա շղթան *(ՄԲ, էջ 164):*

ԲՁԵՁԻԿ, գ. **Մանրիկ բզեզ**: Տե՛ս ԱՐԵՎՈՂՈՂ-ի օրինակը:

ԲԼՐԱՆԻՍՏ, ած. **Բլրի վրա գտնվող:** .... Եվ նա կգա **բլրանիստ** տաճարի սնքար աստվածության մոտ զոհաբերվելու .... *(Ռուշդի, էջ 9):*

ԲՅՈՒՋԵՏԱԳՈՂ, գ. (դիպվ.): **Բյուջեից գողացող անձ**: **Բյուջետագողերին** պետք է պատժել օրենքի ողջ խստությամբ *(Հմց):*

ԲՅՈՒՐԵՂԱԲԱԺԱԿ, գ. **Բյուրեղյա բաժակ**: .... Բոլորն իրեն ըմպեցին նուրբ ու շողշողուն **բյուրեղաբաժակում** լցված քաղցր շամպայնի նման .... *(ՆԱդ., էջ 79):*

ԲՆԱԳԻՏԱՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ, ած. **Բնագիտական և ճանաչողական:** Դա անաղարտ կպահպանի հնավայրը, դրա՝ հետազոտման և **բնագիտաճանաչողական** ու զբոսաշրջության նպատակներով օգտագործումը *(Հմց, aravot.am):*

ԲՆԱԿԱՊԱՀՈՎՈՒՄ, գ. (հպվ.)։ **Բնակարաններով ապահովելը**։ **Բնակապահովման** խնդիրն ամբողջությամբ կլուծվի *(ՀՀ, 06.06.2020)։*

ԲՆՈՐՈՇԱԿԱՆ, ած. **Բնորոշ, յուրահատուկ**։ Եվ **բնորոշական** ուսանողի դեմքով այդ մարդը ժամեր շարունակ նստում էր դպրոցում .... *(ՄԲ, էջ 321)։*

ԲՈՐԲԱՆԱԼ, չբ. **Բորբ՝ տաք, բորբոքուն դառնալ**։ .... Քիչ հեռվում **բորբացող** հնոցների շառագույնն էր՝ աղոտ ու վարդագույն, հրաձերմակ .... *(Հերբերթ, էջ 190)։*

ԲՈՐԲՈՔԱՇՈՒՆՉ, ած. **Բորբոքուն շնչով**։ Ուրախությունը հզոր ու խոր հույզ է, ամբողջ գիտակցությամբ ապրվող **բորբոքաշունչ** լիության մի զգացում .... *(Ուելբեք, էջ 11)։*

ԲՌՆԱԿԱԼԱՎԱՐԻ, մկբ. **Բռնակալաբար, բռնակալի նման, ինչպես բռնակալը**։ Բայց սա հենց էնպես եմ ասում՝ **բռնակալավարի**, լուծման կարոտ հարցեր եմ շոշափում *(ՆԱբ., էջ 210)։*

ԲՌՆԱՀԱՆԵԼ, բ. **Բռնի տեղահանել**։ .... Ինչու՞ Խորհրդային Միությունում ժողովուրդը .... հանկարծ պիտի **բռնահանվի** ծննդավայրից կամ սպանվի միայն նրա համար, որ ծնվել է հայ *(ՀՀ, 26.02.2020)։*

ԲՌՆԱՀԱՆՈՒՄ, գ. **Բռնի տեղահանելը**։ Լրացավ սումգայիթյան հայկական ջարդերի և հայերի **բռնահանման** 38 տարին *(ՀՀ, 26.02.2020)։*

ԲՐԴԱԹԱՓՈՒԹՅՈՒՆ, գ. **Բուրդը՝ բրդի թափվելը**։ Հանկարծակի նկատվեց **բրդաթափություն** ճակատին և իրանի կողերին *(ՄԲ, էջ 206)։*

ԲՐԴԱԾԱԾԿ, ած. **Բրդով ծածկված, բրդոտ**։ .... Ինձ նույնիսկ թվում էր, թե նա **բրդածածկ** է, պոզերով ու պոչով .... *(ԳԽ1, էջ 47)։*

ԲՐԵԺՆԵՎՅԱՆ, ած. (պատմ.)։ **Բրեժնևի ղեկավար եղած ժամանակվա**։ Հենց այդպիսի իրադրություն էր ձևավորվել **բրեժնևյան** Խորհրդային Միությունում *(Պոզներ, էջ 314)։*

ԲՈՒԺԶՆՆՈՒՄ, գ. (հպվ.)։ **Բժշկական քննություն՝ զննում**։ Այս կազմակերպության կամավորները տեղի բնակիչներին

սնունդ են բաժանում, օգնում **բուժզննում** անցնել .... *(Տրյուղո, էջ 262):*

ԲՈՒԺԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. (հպվ.): **Բուժական՝ բժշկական ծառայություն: Բուժծառայության** պետը շուտով հայտնեց հերոսի անունը .... *(ՁԲ, էջ 464):*

ԲՈՒՌՈՒԿԵՍ, ած. (խսկց.): **Արտակարգ փոքրաթիվ**: **Բուռուկես** ժողովուրդ ենք, բայց հո զոռ՛վ չէ՝ հողը տեղ չի անում *(Հրաչո, էջ 92):*

ԲՈՒՍԱԾԱԾԿԵԼ, նբ. **Բուսականությամբ ծածկել՝ պատել**: .... Իսկ հողը տարին տարվա վրա վերականգնվեց՝ **բուսածածկելով** պատերազմական խոցերը *(Պոզներ, էջ 3):*

ԲՈՒՏԵՐԲՐՈԴԱՎԱՃԱՌ, գ. (դիպվ.): **Բուտերբրոդ վաճառող**: .... Անցնում դառնում էին թերմոսակիր սրճավաճառները, **բուտերբրոդավաճառները**, սեմուշկավաճառները, սիգարետավաճառները *(ԳԽ1, էջ 194):*

## Գ

ԳԱԶԱԱԶԴԱՆՇԱՆԱՅԻՆ, ած. **Գազի արտահոսքը ազդանըշող:** Գազի վառարանը գտնվել է միացված, իսկ **գազաազդանշանային** անվտանգության համակարգը՝ հոսանքից անջատված վիճակում *(Հմց, aravot.am):*

ԳԱԶԱԳԻԾ, գ. **Գազամատակարարման խողովակաշար:** Նա միակ նախագահն էր, որի օրոք այդքան շինարարություն է արվել՝ ջրագծեր, **գազագծեր**, էլեկտրական գծեր, ճանապարհներ *(Հմց, aravot.am):*

ԳԱԶԱԼԱՄՊ, գ. **Գազով վառվող լամպ**: - Արի ես լուցկին չրխկացնեմ ու մոտեցնեմ **գազալամպին,** իսկ դու կափույրը կբացես .... *(ՆԱբ., էջ 27):*

ԳԱԶԱՆԱՄԱՐՄԻՆ, ած. **Գազանի մարմնով, գազանի նման մարմին ունեցող:** .... Թեև արդեն ժամանել և  ի ցույց ամենի զբոս-

այգիներում շրջում էին **գազանամարմին** Գրեպերը և Նուարը .... *(Գրին, էջ 7):*

ԳԱԼԱՐԱՏԱՇԵՂ, գ. **Փայտը հղկելուց առաջացող գալարաձև տաշեղ**: Նազենին շարունակեց ավլել՝ անշնորհք կերպով ավելի կոթին կոթներով՝ չորսուների տակից փայտի **գալարատաշեղներն** ավլելով *(ՆԱ, էջ 77):*

ԳԱՂԱՓԱՐԱԽՐԱՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Գաղափարաբանություն և խրատաբանություն**: Այսպիսի Հիսուսն իսկապես սիրելի է՝ .... ո՛չ միֆաստվածային, ոչ խորհրդանիշների, **գաղափարախրատաբանության** ետևում թոռած-չորացրած, այլ կենդանի, արկածներ որոնող .... Իսկական մարդ, Մարդու որդի *(ԳԽ2, էջ 65):*

ԳԱՂԱՓԱՐԱՀԱՐ, ած. **Գաղափարների հարվածներին ենթարկված, գաղափարներով տարված**: .... Որքան էլ **գաղափարահար,** որքան էլ ռոմանտիկ, Հիսուսը չէր կարող այդ աստիճան շփոթել թզի հասունացման ժամանակը *(ԳԽ2, էջ 63):*

ԳԱՂՏՆԱՇԵՐՏ, գ. **Գաղտնի շերտ**: Այդ ժամանակների մեջ, թերևս, պարզ դառնա Դուրյան անհատականության հնարավորությունների ու օժտվածության մի **գաղտնաշերտ** ևս .... *(Մահտես., էջ 10):*

ԳԱՂՏՆԵԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ, գ. Այստեղ՝ **գաղտնիք պահելը**: Խոսելիս իրար դիմում էին անուններով: Մի խոսքով, ոչ մի **գաղտնեգործունեություն** *(Արեն,էջ 174):*

ԳԱՅԼԱՀԱՄ, գ. Այստեղ՝ **գայլի հոտ**: Մարդկանցից գայլային համեր է առնում: Ում վրայից **գայլահամ** չէր գալիս, խեղճ-խեղճ նայում էր. .... խեղճ ու անճարակ մարդ, մեջդ իսկի գայլ չկա, ո՞նց ես ապրելու .... *(Հրաչօ, էջ 139):*

ԳԱՅԼԱՀՄԱ, ած. (սնոտ.): **Գայլերին հմայող**: .... Ժպիտի տակ ... **գայլահմա** քուրմն ու հմայված գայլեր …. *(ԳԽ2, էջ 13):*

ԳԱՆԳՐԱՀՈՒՐ, ած. (բնստ., փխբ.): **Գանգուր և հրագույն, հրի նման:** Քո մազերը, որ **գանգրահուր**// Ծուխն են ամռան առավոտի …*(ԼԴ 1, էջ 88):*

ԳԱՆԳՐԵԶՐ, ած. **Գանգուր եզր(եր) ունեցող**: .... Կապույտ հեռաստաններում դուրս լողաց առաջին **գանգրեզր** ամպը .... *(ՎԲ, էջ 281):*

ԳԱՆՁԱՐՎԵՍՏ, գ. (բնստ.): **Արվեստը ներկայացնող գանձերը:** Պատմությունը մեր, **գանձարվեստն** ամբողջ// Այդ ձևով էին փրկում, պահպանում .... *(ԼԴ 1, էջ 369):*

ԳԱՍՏՐՈԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Սննդի և մթերքների արտադրությամբ զբաղվող տնտեսության ճյուղ**: Տեղում քննարկվել է գաստրոզբոսաշրջությանն առնչվող մեծամասշտաբ միջոցառում իրականացնելու հնարավորությունը, որը կհամախմբի **գաստրոարդյունաբերության** ոլորտում ծառայություն մատուցող ընկերություններին .... *(ՀՀ, 11.05.2019):*

ԳԱՍՏՐՈԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ, գ. **Սննդի հետ կապված ծառայություններ ընդգրկող զբոսաշրջություն**: Տե՛ս ԳԱՍՏՐՈԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ-ի օրինակը:

ԳԱՐԵՋՐԱՇԻՇ, գ. **Գարեջրի շիշ**: Փոքր-ինչ տատանվելուց հետո նա տեղավորեց թռչնակի դիակը պոլիէթիլենե տոպրակի մեջ, ծանրաբեռնեց մի **գարեջրաշշով** և այդ ամենը նետեց աղբատարի մեջ *(Ուելբեք, էջ 12):*

ԳԵԼԱՊԱՏ, ած. **Գելով պատված:** Հանկարծ ներս մտավ նրանցից մեկը՝ բարձրահասակ, ամբողջովին **գելապատ** ու ցցված մազերով Քևինը *(Բորգեն, էջ 43):*

ԳԵՂԱՄՇԱԿԵԼ, նբ. **Գեղեցիկ մշակել**: .... Նա տեսավ .... **գեղամշակված** ու սնգույրով գծաներկված բարձրաղեղ ունքերը .... *(Հ1, էջ 59):*

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ, ած. **Գեղարվեստական և արդյունաբերական**: Բրոնզե կիսանդրու հեղինակն է Սանկտ Պետերբուրգի Շտիգլիցի անվան **գեղարվեստաարդյունաբերական** ակադեմիայի հուշարձանային և դեկորատիվ քանդակի ֆակուլտետի հայազգի պրոֆեսոր Լևոն Բեյբությանը *(ՀՀ, 13.05.2020):*

ԳԵՂԱՐՎԵՍՏԱՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ, ած. **Գեղարվեստական և վավերագրական**: **Գեղարվեստավավերագրական** լեզվատիրույթի պարունակներում զգալի են պատմողական խոսքի բաղադրիչները *(ԱշԳ, էջ 95):*

ԳԵՂԵՑԿԱՌԱՏ, ած. **Առատ և գեղեցիկ**: Գրկելով ինձ…. մտցրեց իր համերաշխ ընտանիքի հարմարավետ գիրկը և դարձավ **գեղեցկառատ** սեղանի զվարթ ու հյուրընկալ տերը *(ԹԺՀ, էջ 873):*

ԳԵՂՋԿԱՏԵՍՔ, ած. **Գեղջուկի տեսք ունեցող**: Կինը՝ Կոնստանսը, կարմրաթուշ, **գեղջկատեսք** աղջիկ էր .... *(Հերբերթ, էջ 28):*

ԳԵՇՈՒՄԵՇ, ած. **Շատ գեշ, արտակարգ վատ**: Իսկ ես նրբավար մարդ եմ, **գեշումեշ** բաների սովոր չեմ *(ՄԲ, էջ 313):*

ԳԵՐԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Ծայրահեղ, արտակարգ բարձր արտոնություն**: Նա ունեցել է էլի շատ պաշտոններ և **գերարտոնություններ** …. *(Պոզներ, էջ 422):*

ԳԵՐԲԱՐԵՍԻՐՏ, ած. **Բնականոնից արտակարգ բարեսիրտ**: Տեր, Գերիզոր, Գերնրբանկատ, **Գերբարեսիրտ**, Գերներող Տեր, ներիր նվաստիս .... *(ԳԽ1, էջ 110):*

ԳԵՐԲՆԱԿԱՆԱՆԱԼ, չբ. **Գերբնական դառնալ, գերբնական հատկություններ ստանալ**: .... Մոգական կառույցը **գերբնականանում** էր արարողական ու անասնական մի կյանքով, ապոկալիպսյան և հեթանոս մրջնավխտումով .... *(Լըմոնյե, էջ 77):*

ԳԵՐԳԱՂՏՆԻԱՑՎԵԼ, չբ. **Արտակարգ գաղտնի դարձնել**: Եթե այս սկզբունքը կիրառվի, մենք մեր ցանցով կարող ենք մտնել **գերգաղտնիացված** գրեթե բոլոր օբյեկտները *(Աղաբ., էջ 102):*

ԳԵՐԳԻՏՆԱԿԱՆ, գ. **Արտակարգ գիտուն գիտնական**: Շատ հնարավոր է, որ **գերգիտնական** մարդը դա տեսավ *(ՄԲ, էջ 242):*

ԳԵՐԴԱՏԱՐԿՈՒԹՅՈՒՆ, գ. **Գերդատարկ լինելը**: Ակիմը **գերդատարկություն** զգաց *(Միկ., էջ 21)*:

ԳԵՐԵՌԱՆԴՈՒՆ, ած. **Արտակարգ եռանդուն:** .... Սկսվեց **գերեռանդուն** կոմերիտականների …. դարաշրջանը *(ՋԲ, էջ 323):*

ԳԵՐԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ, գ. **Արտակարգ, չափազանց մեծ՝ հզոր լաբորատորիա**: Ստեղծվում էր Լոս Ալամոսի **գերլաբորատորիան** *(Աղաբ., էջ 329):*

ԳԵՐԼԻՑՔԱՎՈՐԵԼ, նբ. **Չափից շատ լիցքավորել**: Նրանց միջև օդային տարածքը **գերլիցքավորվել** էր *(Բրաուն, էջ 65):*

ԳԵՐԼՈՒՐՋ,ած. **Արտակարգ՝ չափից դուրս լուրջ**: Նա հափշտակված ու **գերլուրջ** է դիզայնի հարցում .... *(Այզ., էջ 144):*

ԳԵՐԽՈՆԱՎԱԿԼԱՆ,ած. **Խոնավությունը արտակարգ կլանող, արտակարգ չխոնավացող**: .... Պարծենում էին իրենց արտասովոր և թանկարժեք սպորտային արտահագուստով, որոնք առանձնանում էին իրենց **«գերխոնավակլան»** .... հատկանիշներով *(Մոյես, էջ 57):*

ԳԵՐԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, գ. **Արտակարգ, չափազանց կողմնակալ լինելը**: **Գերկողմնակալության** և կարճ հոլովակների դար *(Տրյուդո, էջ 288):*

ԳԵՐՀԱՃԵԼԻ,ած. **Չափից շատ հաճելի**: Հոգևորն այն է, որ **գերհաճելի** ջերմություն ես զգում առանց երկրային շփումի *(Նալբ.1, էջ 81):*

ԳԵՐՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Արտակարգ կարևոր, նշանակալից հայտնագործություն**: Միայն եթե ինչ-որ **գերհայտնագործություն** լինի .... *(Մոյես, էջ 306):*

ԳԵՐՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ, ած. **Արտակարգ, չափից դուրս հայրենասեր**: .... Հանդիսատեսին տալիս էին **գերհայրենասիրական,** …. առանց վրիպելու բոլոր թշնամիների հետ պայքարող մարտիկներ …. *(Պոզներ, էջ 311):*

ԳԵՐՀԵՏԱՔՐՔԻՐ, ած. **Չափից ավելի հետաքրք**իր: Այսօր մենք կխոսենք **գերհետաքրքիր** մի թեմայի, այլ բառերով՝ դեռահասների սեռահասունության մասին *(Բորզեն, էջ 254):*

ԳԵՐՆԵՐՈՂ,ած. **Արտակարգ՝ բնականոնից առավել շատ ներող**: Տե՛ս ԳԵՐԲԱՐԵՍԻՐՏ-ի օրինակը:

ԳԵՐՆՐԲԱՆԿԱՏ, ած. **Բնականոնից առավել շատ նրբանկատ**: Տե՛ս ԳԵՐԲԱՐԵՍԻՐՏ-ի օրինակը:

ԳԵՐՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ, ած. գ. **Ծայրահեղ պահպանողական**: Այդ ժամանակ Մոսկվայում գտնվող **գերպահպանողական** մեկնաբան Ջորջ Ուիլը զանգեց Սպիտակ տուն .... *(Պոզներ, էջ 517):*

ԳԵՐՊԱՐԶՈՒՆԱԿ, ած. **Արտակարգ՝ չափազանց պարզունակ**: Նա պատրաստի, կոնսերվատիվ պատասխան էր առաջարկում, որը պարզվեց՝ **գերպարզունակ** էր *(Այգ., էջ 58):*

ԳԵՐՋՂԱՅԻՆ, ած. **Չափից ավելի ջղային**: .... Արդյոք հանցագործությունը կատարված է աֆեկտի՞, այսինքն **գերջղային** վիճակում .... *(Բունին, էջ 165):*

ԳԵՐՌԱԶՄԱԿԱՆԱՑՎԱԾ, ած. **Ծայրահեղ ռազմականացված**: Հայաստանն ու Ադրբեջանը շարունակում են **գերռազմականացված** մնալ.... *(Հմց, epress.am):*

ԳԵՐՍԹԱՓ, ած. **Չափից ավելի սթափ**: Մեկը գալիքի ճիվաղներից, որոնց հոգու փոխարեն **գերսթափ** կամք է, սառը ողջամտություն *(Հերբերթ, էջ 219):*

ԳԵՐՎՏԱՆԳԱՎՈՐ, ած. **Արտակարգ՝ չափազանց վտանգավոր:** Մի բան է, որ ռումբն ընկնի դատարկ տաճարի վրա ու վնաս պատճառի, բոլորովին այլ բան՝ երբ եկեղեցին լցոնված է **գերվտանգավոր** միջուկով *(ՋԲ, էջ 154):*

ԳԻՆԵԿԻՑ, գ. **Գինու՝ բաժակի ընկեր, բաժակակից**: **Գինեկից** բարեկամս ցույց տվեց մոտակա շքամուտքը *(ԳԽ1, էջ 184):*

ԳԻՇԵՐԱՄԵՋ, գ. **Կեսգիշեր:** .... **Գիշերամեջին** նրան ձերբակալեցին *(ԹԺՀ, էջ 65):*

ԳԻՇԵՐԱՎԱՅՐ, գ. **Գիշերելու վայր, գիշերաօթևան**: .... Նրան տարան իր **գիշերավայրը**՝ անհրապույր խուցը *(ՖԲ, էջ 53):*

ԳԻՇԵՐԱՎԱՐՏԻՔ, գ. **Գիշերը՝ անկողնում հագնելու վարտիք**: -Այդ ի՞նչ է Ձեր հագին: - **Գիշերավարտիք** .... *(Ջենթ., էջ 109):*

ԳԻՊՍԱԿԱՐՏՈՆԵ, ած. **Գիպսակարտոնից սարքված**: Նա հին ու երկար գործասեղան էր տեղադրել, համակարգչի սխեման կախել իր բարձրացրած նոր **գիպսակարտոնե** պատի վրա .... *(Այգ., էջ 77):*

ԳԻՏԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ, ած. **Գիտական և արդյունաբերական:** Կենսունակ պետություն նշանակում է ունենալ **գիտաարդյունաբերական** զարգացած համալիր *(Հմց, aravot.am):*

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ, ած. **Գիտական և գործնական:** Շահագործման է հանձնվել դատաբժշկական **գիտագործնական** կենտրոնի հիմնանորոգված դիահերձարանը *(Հմց, aravot.am):*

ԳԻՏԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ, ած. **Գիտական և դասախոսական:** ԵՊԲՀ-ն իր **գիտադասախոսական** անձնակազմով պատրաստ է պայքարել համաճարակի դեմ *(Հմց, aravot.am):*

ԳԻՏԱԴԱՐԱՆ, գ. **Գիտելիքների շտեմարան՝ դարան:** Երրորդ գիրքը «**Գիտադարանն**» է, որը հրաշալի հանրագիտարան է մանուկների համար *(Հմց, aravot.am):*

ԳԻՏԱԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ, ած. **Գիտական և լուսավորչական:** Այդպես է կարծում «Զվարթնոց» պատմամշակութային արգելոց-թանգարանի **գիտալուսավորչական** բաժնի վարիչը *(Հմց, aravot.am):*

ԳԻՏԱԽՆԴԻՐ, գ. **Գիտական խնդիր:** Հենց դա է ընկած շատ **գիտախնդիրների** հիմքում *(Հմց, aravot.am):*

ԳԻՏԱԽՈՀԱՆՈՑԱՅԻՆ, ած. **Գիտական և խոհանոցային:** Եվ Երկրագունդը պերաշկիի վերածվելու հնարքներ էր որոնում՝ **գիտախոհանոցային** ասպարեզում *(Նայք.3, էջ 4)*:

ԳԻՏԱՃԱՄԲԱՐ, գ. **Գիտական ճամբար:** Թվայնացված աստղադիտակ, **գիտաճամբար**. նվերներ Բյուրականի աստղադիտարանին *(Հմց, aravot.am):*

ԳԻՏԱՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ, ած. **Գիտական և ճանաչողական:** Թանգարան-ինստիտուտը հանդես կգա **գիտաճանաչողական**, կրթադաստիարակչական առաքելությամբ *(Հմց, aravot.am):*

ԳԻՏԱՃՅՈՒՂԱՅԻՆ, ած. **Գիտաճյուղին վերաբերող:** Նախկինում եղել է Հայկական ազգային հանրագիտարանի ֆիզկուլտուրայի և սպորտի **գիտաճյուղային** խորհրդի նախագահը *(Հմց, aravot.am):*

ԳԻՏԱՊԱՇՏՈՆԱԿԱՆ, ած. **Գիտական և պաշտոնական:** Մինչ մեր **գիտապաշտոնական** այրերը որոշում են՝ ինչպես տնօրինել խորհրդային տարիներից ժառանգություն մնացած տիեզերագիտության գիտական և ինժեներական պոտենցիալը, ուրիշները լուրջ գործով են զբաղված *(Հմց, aravot.am):*

ԳԻՏԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ, ած. **Գիտական և պաշտպանական:** Սահմանում բազմաթիվ երիտասարդներ են զոհվում ժամանակակից տարրական **գիտապաշտպանական** համակարգերի բացակայության պատճառով *(Հմց, aravot.am):*

ԳԻՏԱՊԱՏՄԱԿԱՆ, ած. **Գիտական և պատմական:** Հեղինակ է մի շարք գիտական և **գիտապատմական** հոդվածների, որոնք տպագրվել են տարբեր ամսագրերում *(Հմց, aravot.am):*

ԳԻՏԱՊԵՏԱԿԱՆ, ած. **Գիտական և պետական: Գիտապետական** համակարգում նա գործ ունի օրենքի հետ, որը ինքը չի հաստատում *(Հմց, aravot.am):*

ԳԻՏԱՍԻՐՈՂԱԿԱՆ, ած. **Գիտական և սիրողական:** Արդիականացման արդյունքները կնպաստեն **գիտասիրողական** էքսկուրսիաների զարգացմանը *(Հմց, aravot.am):*

ԳԻՏԱՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ած. **Գիտական և ուսումնական:** Այն պետք է լիովին մերժել և ստեղծել նորը՝ հայոց պատմությամբ զբաղվող **գիտաուսումնական** հաստատությունների երաշխավորած մասնագետների մասնակցությամբ *(Հմց, aravot.am):*

ԳԼԱՄՈՒՐԱՅԻՆ, ած. (անհնձն.): **Գրավիչ, հմայիչ**: «Բարի գալուստ կանադական քաղաքականության **գլամուրային** աշխարհ» *(Տրյուդո, էջ 233):*

ԳԼԽԱԳՈՒՆԴ, գ. **Գնդաձև՝ կլոր գլուխ**: .... **Գլխագնդի** ճակատային հատվածից հալածյալ մազափունջը .... ստիպված կանգ առավ ծանոթ վայրում .... *(Հրաչօ, էջ 126):*

ԳԼԽԱՐԿԱԲՈԼՈՐՔ, գ. **Գլխարկի կլոր եզրամասը**: Փոքրիկ գյուղացին րոպեն մեկ ճակատին ուղղում էր **գլխարկաբոլորքն** ու կոխում ականջների հետևը *(ՆԱբ., էջ 77):*

ԳԼԽԱՐԿԱԿԱԼ, գ. **Հարմարանք, որից կախում են կամ որի վրա դնում են գլխարկը**: .... Հին գետնահան վառարան էր, որի վերևում **գլխարկակալի** հայելին որսացել էր լուսինն ու փայլում էր խորհրդավոր *(ՀԼ, էջ 80):*

ԳԼԽԱՔԱՆԴԱԿ, գ. **Գլուխը պատկերող քանդակ**: .... Վերջին մի քանի տարիների ընթացքում նա իր ուժերն է փորձում նաև քանդակագործության բնագավառում՝ ստեղծելով ինքնատիպ դիմաքանդակներ ու **գլխաքանդակներ** *(ՀՀ, 11.12.2019):*

ԳԾԱՊԱՏԿԵՐԵԼ, բ. **Գծագրելով պատկերել**: .... Թևերի բացվածքը հմտությամբ կարելի էր **գծապատկերել** *(ՌԲ, էջ 57):*

ԳՅՈՒՂԱՆՊԱՍՏ, ած. **Գյուղին՝ գյուղատնտեսությանը նպաստող**: Մինչդեռ հեղինակներն այնքան մոտ էին տարիներ ի վեր շրջանառության մեջ դրվող **գյուղանպաստ** վաղեմի այդ գաղափարի իրականացմանը *(ՀՀ, 12.02.2020):*

ԳՅՈՒՂԱՑԻԱՎԱՐԻ, մկբ. **Գյուղացու նման, գյուղացուն բնորոշ ձևով**: .... Անունն արտասանում է կմկմալով, **գյուղացիավարի** .... *(Բունին, էջ 28):*

ԳՅՈՒՂԽԱՆՈՒԹ, գ. **Գյուղական խանութ**: .... Մեր սելմագ**գյուղխանութում** ստացված չորս միատեսակ, նույնագին պահարաններից ամենալավը .... *(Հրաչօ, էջ 31):*

ԳՆԱՀԱՏԱՆԻՇ, գ. **Գնահատման նիշ**: **Գնահատանիշն** ավելի շատ կարևորում են ծնողները *(Հմց, Tert. am):*

ԳՆԱՑՔՈՒՂԻ, գ. **Գնացքի ուղի, երկաթուղի**: .... Հուշանվերների խանութը սկսում է **գնացքուղու** մանրակերտի մեկ այլ պատկերով բաժակի տակդիրներ վաճառել *(Մոյես, էջ 99):*

ԳՈԼԱՎՈՒՆ ած. **Փոքր-ինչ գոլ**: Կովերը փուշը թողած, **գոլավուն** ջուր էին խմում ու նայում հեռուները *(Հրաչօ, էջ 32):*

ԳՈԼՖԱՍԵՐ, ած. **Գոլֆ սիրող**: .... Կարծես նրան վիճակված էր **գոլֆասեր** իրավաբան դառնալ *(Բորգեն, էջ 63):*

ԳՈՂԱՀԱՉ, գ. **Շան՝ գողի հայտնվելը ահազանգող հաչոցը**: Ո՞ր ձայնով կանչի՝ ոռնոցո՞վ, .... **գողահաչո՞վ**, լուսնահաչո՞վ .... *(Հրաչօ, էջ 142):*

ԳՈՏԿԱՀԱՍ, մկբ., ած. **Մինչև գոտին (հասնելով)**: Լավ ձաղկված, նրանք **գոտկահաս** խոնարհվեցին *(ՄԲ, էջ 365):*

ԳՈՐԲԱՉՈՎՅԱՆ, ած. (պատմ.): **Գորբաչովի իշխանության տարիների, նրա հռչակած**: .... Այս ամենը գրվել է **գորբաչովյան** հրապարակայնության և ելցինյան ամենաթողության ժամանակ …. *(Պոզներ, էջ 11):*

ԳՈՐԾԱԽԱՓԱՆ ԱՆԵԼ, (բրբ.) **Գործը խափանել՝ ձախողել**: [Աղջիկը] Թումանյան տալը դա գյուղի գործն է, մենք գոհ կլինենք, եթե մեզ նալնահան, **գործախափան** չանեն, միանգամից հա ասեն ու պրծնենք .... *(Հրաչօ, էջ 47):*

ԳՈՐԾԱԿԵՐՊ, գ. **Գործելակերպ**: Վեպում Ջոն Հանիսյանի մայրը՝ Ցողիկը, որդու հոգևոր նեցուկն է ու խիղճը, որով լույսի պես պայծառացնում է **գործակերպի** վերածված կենսակերպը թե՛ ուրախության, թե՛ տխրության մեջ …. *(ԳԹ, 05.04.2019):*

ԳՈՐՇԱԲԵՂ, ած. **Գորշ բեղեր ունեցող:** Բեմահարթակում երկու հոգի էին կանգնած. թիկնեղ, **գորշաբեղ** մի տղամարդ և անբարետես մի զինվոր .... *(ԱՏ, էջ 255):*

ԳՈՐՇԱԴԱՐՉՆԱԳՈՒՅՆ, ած. **Գորշագույնին տվող դարչնագույն**: Վտիտ, պստլիկ ճուտիկը **գորշադարչնագույն** էր՝ մուգ պուտերով .... *(Հերբերթ, էջ 183)*:

ԳՈՐՇԱՄՈԽՐԱԳՈՒՅՆ, ած. **Գորշին տվող մոխրագույն**: Ու հանկարծ այդ **գորշամոխրագույն** սարդը դուրս է թռչում ճեղքից .... *(Բունին, էջ 28)*:

ԳՈՐՇԱՓԵՏՈՒՐ, ած. **Գորշ փետուրներով:** Այդ պահից ճայերն իրենց **գորշափետուր** թիկունքները դարձրին Ջոնաթանին *(ՌԲ, էջ 76):*

ԳՐԱԵԶԵՐՔ, գ. **Գրվածի եզրային հատվածը:** .... Մատաղ տարիքի պատճառով միայն **գրաեզերքն** էր ծաղկում *(Էկո, էջ 113)*:

ԳՐԱՆՅՈՒԹ, գ. **Գրական նյութ**: …. Դրանք [Ժ. Քալանթարյանի հրապարակումները] նույնպես չեն հավակնում ընդգրկել **գրանյութն** ամբողջությամբ *(ԳԹ, 17.05.2019):*

ԳՐԵԼԱԲԱՆԱՁԵՎ, գ. **Գրելու բանաձև՝ կերպ**: Գտել է ճիշտ **գրելաբանաձև** ամեն մեկի համար՝ հարազատ մնալով Մեծերի հյութեղ և հզոր էությանը *(ԳԹ, 17.05.2019):*

ԳՐՉԱԽԱՂ, գ. **Գրական փորձ:** Երբեք սուր դիտողություններ չէր անում այս մանկական **գրչախաղերի** նկատմամբ *(ԹԺՀ, էջ 859):*

ԳՐՊԱՆԱՀԱՏԵԼ, նբ. Այստեղ՝ **թալանել:** Հասարակությունը հաճելին ու հրամայականը հաճախ տարանջատում է նրանց վերջնական նպատակից՝ **գրպանահատելով** միամիտ բնությունը *(Նայր.1, էջ 76):*

ԳՈՒՆԱՇԵՐՏԵԼ, չբ. **Գույներով շերտավորել, տարբեր գույների շերտերով պատել**: Արդեն նոսրացել, ավելի թափանցիկ էին դարձել մեռնող սաղարթով **գունաշերտված** անտառները *(ՎԲ, էջ 380):*

## Դ

ԴԱԼԿԱԳՈՒՅՆ,ած. **Դալուկ գույն ունեցող:** Եվ հիմա տղան տեսավ չորուձիգ ոտքի հետքերը դրանդուն ու տեսավ՝ ինչպես էին դրանք հայտնվում **դալկագույն** ոտնագորգին .... *(Ֆոլք., էջ 11):*

ԴԱՀՃԱՄՈԼ,ած. **Դահճի մոլուցք ունեցող:** Բայց առաջին ճիչը, կյանքի ճիչը մանկան// Լսել է ու ապշել մի **դահճամոլ** ասկյար …. *(ԼԴ 1, էջ 168):*

ԴԱՂՁԱԲՈՒՐՄՈՒՆՔ,ած. (բնստ.): **Դաղձի բուրմունք ունեցող:** Ես ծնվեցի որպես անվե՛րջ երեխա …// Մորս կաթը **դաղձաբուրմունք** էր ավիշ *(ԼԴ 1, էջ 208):*

ԴԱՂՁԱԹԱՎԻՇ, ած. (բնստ.): **Դաղձի թավշի նմանվող:** Տարօրինակ մի բանաստեղծ ես եղա…// **Դաղձաթավիշ** էին աչքերը իմ մոր *(ԼԴ 1, էջ 208):*

ԴԱՆԴԱՂԱԾՈՐ, ած. **Դանդաղ ծորացող: Դանդաղածոր** երաժշտություն նվագելիս ռեգիստրների հատուկ համակարգ է գործի դրվում .... *(Վիան, էջ 30):*

ԴԱՆԻԱՀԱՅ, գ. **Դանիայում բնակվող հայ**: Այո, ես միշտ ինձ անվանում եմ Բանգկոկում ապրող **դանիահայ** նկարիչ *(Ազգ, 08.02.2019):*

ԴԱՎԱԴՐԱՊԱՇՏ, ած. **Դավադրություն պաշտող:** Մի՞թե մենք նման ենք **դավադրապաշտների** *(Հմց):*

ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ գ. **Դատապարտված լինելը, դատապարտված վիճակ**: .... Դիմացն Արծվիկն է, թեկուզ նույն **դատապարտվածությամբ,** Արծվիկն էլ չի հասնում՝ գրկի, շոյի մազերը, երկա՜ր, շատ երկար համբուրի *(ԱրմՄ., էջ 258):*

ԴԱՐԱԽՈՐՀՈՒՐԴ, ած. **Դարերի խորհուրդ ունեցող**: Մեր չքնաղ, **դարախորհուրդ**, հին վանքերի կամ մատուռների տարածքում հաճախ տեսնում ենք թաշկինակներով զարդարված ծառեր *(Իր., 02.07.2019):*

ԴԱՐԱԿԱԼ, ած. **Մի ամբողջ դար բռնող**: Պալյանների տոհմի Հայաստան հասած ճյուղը երիցս իմաստավորում ու լուսավորում էր իր մեծ տոհմի **դարակալ** ու փառամեծ ճանապարհը *(Հրաչօ, էջ 225):*

ԴԱՐՁՈՒԴԱՐՁ ԱՆԵԼ, չբ. (փխբ.): **Ծանր ու թեթև անել, հանգամանորեն կշռադատել**: Մանեի մտքում, ինչպես վիճակախաղի թմբուկում, սկսեցին արագորեն, **դարձուդարձ անել** Բենի երկու տարբերակները *(ՆԱղ., էջ 155):*

ԴԱՐՉՆԱԴԵՂԻՆ, ած. **Դարչնագույնի երանգով դեղին**: Լենգդոնը սկսեց ուսումնասիրել խամրած **դարչնադեղին** ձեռագիր տառերի շարանը *(Բրաուն, էջ 273):*

ԴԴՄԱՐՎԵՍՏ, գ. **Դդումից տարբեր իրեր (դդմաշիշ, դդմանոթ, դդմասրվակ և այլն) ստեղծելու արվեստը, դդմագործություն**: Մենք որոշեցինք դդմագործությունը անվանել **դդմարվեստ** *(Հեռ., Շանթ, 15.07.2020):*

ԴԵՂԱՏԵՍԱԿ, գ. **Դեղի տեսակ**: Դասախոսը հանգամանալից անդրադարձավ յուրաքանչյուր հիվանդությանը, …. անհրաժեշտ **դեղատեսակներին** *(ՀՀ, 06.09.2020):*

ԴԵՂՁԱՆՄԱՆ, ած. **Դեղձի նման՝ տեսք ունեցող**: - Ես կին եմ, - խոստովանեց կաշվե բաճկոնով **դեղձանման** դեռահասը .... *(ՄԲ, էջ 174):*

ԴԵՂՆԱԵՂՈՒՆԳ, ած. **Դեղին եղունգ ունեցող:** Նրա կոպիտ թաթերն ու **դեղնաեղունգ** ոտքերը դանդաղ տրորում էին խոտը .... *(Ստայնբեք, էջ 20):*

ԴԵՂՆԱԺԱՆԻՔ, ած. **Դեղին ժանիքներ ունեցող՝ ժանիքներով, ժանիքները դեղին**: .... Ծեր ալիգատորն է ...., ո՛նց է քաղցած, երեք օր հաց (միս) չի դրել **դեղնաժանիք** երախը *(ԳԽ2, էջ 8):*

ԴԵՂՆԱԿԱՊՈՒՅՏ, ած. **Դեղինին տվող կապույտ:** .... Նըստածների **դեղնակապույտ** համազգեստները կանթեղների աներկրային լույսի տակ զաֆրանագույն են ու կանաչ *(Ռուշդի, էջ 131):*

ԴԵՂՆԱԿԻՏՐՈՆԱԳՈՒՅՆ, ած. **Դեղինի երանգով կիտրոնագույն**: .... Մշտապես այրող արևը կղմինդրի վրա բոլոր երանգների օտարոտի բծեր էր խարանել **դեղնակիտրոնագույնից** ու բաց վարդագույնից սկսած, թունամանիշակագույնով և հողաթուխով վերջացրած *(Սթոուն, էջ 595):*

ԴԵՂՆԱՃԵՐՄԱԿԱՎՈՒՆ, ած. **Դեղինին տվող ճերմակ:** Նրա կոշիկներն էլ **դեղնաճերմակավուն** էին .... *(Վիան, էջ 38):*

ԴԵՂՆԱՄԱՌԱԽԼԱՊԱՏ, ած. **Դեղին և մառախլապատ**: Զորքերը .... նայում էր ներքև՝ **դեղնամառախլապատ** հարթավայրին .... *(Հանդկե, էջ 366):*

ԴԵՂՆԱՄՊ, գ. **Դեղին ամպ**: Մարմնից անկախ՝ անկենդան աշխարհում թևածում էին թափառող **դեղնամպերը** *(Միկ., էջ 8):*

ԴԵՂՆԱՇԱԳԱՆԱԿԱԳՈՒՆԵԼ, չբ. **Դեղինին տվող շագանակագույն դառնալ**: .... Հինգ րոպե առաջ վերջին գնացքը **դեղնաշագանակագունեց** հարավ .... *(Ռուշդի, էջ 512):*

ԴԵՂՆԱՏԱՌ, ած. **Դեղին տառերով**: .... Հետևի զագաթին կապույտ եզրագծերով **դեղնատառ** մակագրությունն էր ճչում .... *(Ռուշդի, էջ 29):*

ԴԺՈԽԱԵՌ, ած. **Դաժան, դժնի:** Հայտնվել էր մի օձ, որ տեսել էր, նայել// Դաժան ու խև վարքը **դժոխաեռ** թուրքի .... *(ԼԴ1, էջ 168):*

ԴԺՎԱՐԱԹԱՓԱՆՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Դժվարաթափանց լինելը**: Այն խորքային ու տարածական շարժունակ ընդգրկում ունի և .... երբեմն պարուրվում է այլոց համար **դժվարաթափանցության** խորհրդով *(Մահտես., էջ 7):*

ԴԻԱՍԵՆՅԱԿ, գ. **Սենյակ, որտեղ դրված է, գտնվում է դիակը**: Նեխահոտն արագ տարածվեց ամբողջ տանը, դրսում թանձրացել էր ամառը, և տոթը բոլոր ճեղքերով թափանցում էր **դիասենյակ** *(Ջեքթ., էջ 20):*

ԴԻՄԱՄԱՇԿ, գ. **Դեմքի մաշկ**: Նրա թույլ ոսկեգույն **դիմամաշկը** հղկված էր .... *(Մոյես, էջ 258):*

ԴԻՄԱՍՐԱՀ, գ. Այստեղ՝ **դեմքերի՝ անձերի հավաքական ամբողջություն**: Անցյալի մեր մտավորականների, գիտնականների, արվեստագետների **դիմասրահում** բազում են հարուստ, իմաստալից, գունագեղ կյանքի ուղի անցածները …. *(Ազգ, 06.12.2019):*

ԴԻՄԱՔՍՈՒՔ, գ. **Դեմքի համար նախատեսված քսուք**: Կանանցից մի քանիսը .... սկսեցին **դիմաքսուք** օգտագործել .... *(Մանրո, էջ 51):*

ԴԻՄՈՒՄՆԱՁԵՎ, գ. **Դիմելու ձև՝ եղանակ**: Զգացի, նա իմ այդ մտերմիկ **դիմումնաձևից** հուզվեց *(ՆԱդ., էջ 206):*

ԴԻՏԱՆՑՈՒՄ, գ. **Դիտարկելու համար շրջայց**: **Դիտանցումներ** են իրականացվել ավելի քան 90 դեղատներում *(ՀՀ, 03.03.2020):*

ԴԻՏԱՏՆԱԿ, գ. **Դիտելու՝ դիտորդական տնակ**: …. Նայեց գնացքի երկայնքով ու վազեց վեր՝ **դիտատնակ** *(ՎԲ, էջ 101):*

ԴՅՈՒՐԱՐՏԱԲԵՐԵԼԻ, ած. **Դյուրին՝ հեշտ արտաբերելի**: Նրա շուրթերին դա նրբահունչ էր ու **դյուրարտաբերելի** *(Վոն., էջ 222):*

ԴՅՈՒՐԽՈՑԵԼԻ, ած. **Դյուրին՝ հեշտ խոցելի**: Նա անվերջ է պտտվում դստեր առանցքի շուրջ .... անհանգստանալով **դյուրխոցելի** գործիքի վրա մայրական ազդեցության վրա *(Ելինեկ, էջ 46):*

ԴՈՂԱՀՈՒՅԶ, ած., մկբ. (բնստ.): **Հույզերից դողացող, դողալով**: Թո՛ղ համբուրեմ, որ **դողահույզ**// Շողե նվագ իջնի սրտիս *(ԼԴ 1, էջ 88):*

ԴՈՆԴՈՂԱՓԱՓՈՒԿ, ած. **Դոնդողի փափկություն ունեցող**: .... [Քլիֆորդը] նմանվել էր .... խեցեմորթների դասի անողնաշարավորի՝ հաստոցակերպ պողպատյա պատյանով ու **դոնդողափափուկ** մարմնով .... *(Հերբերթ, էջ 178):*

ԴՈՓԱԶԱՐԿ, գ. **Դոփապարի ժամանակ ոտքերը գետնին՝ հատակին զարկելը**: .... Հարմոնը չէր հասցնում Սենկայի մաշված կրունկների մանրիկ **դոփազարկին** .... *(ՎԲ, էջ 20):*

ԴՐԱՄԱՀԱՎԱՔԱՅԻՆ, ած. **Դրամահավաքների դեպքում կիրառվող**: .... Ոմանք մատնացույց էին անում կազմակերպական և **դրամահավաքային** ազրեսիվ մոտեցումները *(Տրյուդո, էջ 302):*

ԴՐԱՄԱՊԱՅՈՒՍԱԿ, գ. **Դրամի պայուսակ, դրամապանակ:** Երկու օր շարունակ մոխրագույն **դրամապայուսակը** իբր թաքցրած էր նրանց մահճակալի տակ՝ ամուսնու կողմում *(Ռուշդի, էջ 90):*

ԴՐԱՍԱՆԳԱԶԱՐԴ, գ. **Դրասանգի՝ ծաղկաշղթայի ձև ունեցող զարդ**: Կանաչ թղթե **դրասանգազարդ**, որ տարիների ընթացքում գունատվել ու պաստելային երանգ էր ստացել *(Քինգ, էջ 324):*

ԴՐՍԱԴԻՐ, ած. **Դրսի կողմից դրված:** Տե՛ս ԱՎԱԶԱԾԵՓ-ի օրինակը:

ԴՐՈՒՅՔԱՎՃԱՐ, գ. **Վճար ըստ դրույքի՝ գրաված հաստիքային միավորի՝ պաշտոնի նն**: Սակայն լրագրողների մեծամասնությանը չէր թույլատրվում հոնորարներով, այսինքն լրագրողական աշխատանքով վաստակել ավելի շատ գումար, քան **դրույքավճարն է** *(Պոզներ, էջ 400):*

## Ե

ԵԶԱՉՎԻ, ած. **Եզակն, եզաչյա. եզան աչք(եր)ի պես խոշոր աչքեր ունեցող**: .... Տախսկան մարմնեղ էր, **եզաչվի** *(ՎԲ, էջ 19):*

ԵԶՐԱՀԱՏՎԱԾ, գ. **Եզրի հատված**: Առաջին **եզրահատվածի** շառավիղը պիտի ավելի մեծ լինի .... *(Այզ., էջ 145):*

ԵԼՑԻՆՅԱՆ, ած. (պատմ.)։ **Ելցինի իշխանության տարիների**։ Տե՛ս ԳՈՐԲԱՉՈՎՅԱՆ-ի օրինակը։

ԵԿԵՂԵՑԱՎԱՐՉԱԿԱՆ, ած. **Եկեղեցական և վարչական։** Եկեղեցական համայնքները պետք է համախմբվեն, որպեսզի **եկեղեցավարչական** գործունեության առավել արդյունավոր կազմակերպմամբ առավելագույնս հոգացվեն հոգևոր կարիքները *(Հմց, aravot.am)։*

ԵԿԵՂԵՑԻԱՎՈՐ, ած. **Եկեղեցի ունեցող**։ Էս փոքրիկ տունը բեղավոր ու **եկեղեցիավոր** Շուշի է ազատագրել *(Հրաչօ, էջ 185)։*

ԵՂԵԳՆԱԵՐԻԶ, ած. **Եղեգներով երիզված**։ …. Մեզ ուղեկցող թուրք Չեթինը ցույց կտա գետի **եղեգնաերիզ** զալարը …. *(Իր., 20.12.2019)։*

ԵՂՅԱՄԱԿԱԹԻԼ, գ. **Եղյամի կաթիլ**։ Ու երգը սկսում է հնչել պատուհանի վրայի // **եղյամակաթիլի** շարժումով .... *(ԳԹ, 14.06.2020)։*

ԵՂՆՁԵ, ած. **Եղնչից, եղնչի թփերից պատրաստված**։ .... Վրա պրծան՝ որը փայտով, որը **եղնչե** մտրակով, որը քարով ձաղկեցին …. *(ԱրմՄ., էջ 173)։*

ԵՂՋԵՐԱՄՈՐԹԵ, ած. **Եղջերամորթուց պատրաստված**։ Մոր գրասեղանի աթոռին ընկած էր ոսկեգույն դրոշմազարդերով պատված **եղջերամորթե** կոնակապայուսակը՝ ցած կախված կաշեփոկերով *(Բորզեն, էջ 28)*։

ԵՂՈՒՆԳԱՐՄԱՏ, գ. **Եղունգի արմատը**։ .... Վիրաբույժը կարում է կտրված տեղը և հրաշագործությամբ փոխպատվաստում է **եղունգարմատները** .... *(Ռուշդի, էջ 269)։*

ԵՆԹԱԳԻՏԱԿՑԱՅԻՆ, ած. **Ենթագիտակցական, ենթագիտակցությանը հատուկ, ոչ գիտակցական, բնազդական**։ .... Նրանք գիտակցաբար թե ենթագիտակցորեն .... թելադրում են իրենց ճիշտ-սխալ **ենթագիտակցային** կամքը .... *(ՆԱդ., էջ 197)։*

ԵՆԹԱԳԻՐ, գ., (իմ. նորբ.)։ **Կինոֆիլմի էկրանին գրանցվող հերոսների խոսակցությունները ևն՝ դիտողին մատչելի լեզվով։**

Նրա հավատը չէր գալիս, որ ես երբևէ **ենթագրերով** ֆիլմ չէի դիտել *(Մոյես, էջ 68):*

ԵՆԹԱՈՒՂԵԾՐԱՅԻՆ, ած. Տիեզերանավով **ենթաուղեծրային** թռիչք կատարելու հնարավորությունը վաճառվել է *(Հմց, news.am):*

ԵՌԱՆԿՅՈՒՆԱՎՈՐ, ած. **Երեք անկյուն ունեցող**: Այդ բժիշկներից մեկի՝ ոչ բարձրահասակ, ալեհեր, փոքր-ինչ գիշատիչ թռչնի նման կեռաքիթ, նույնպես՝ առանց տառանշման կարմիր **եռանկյունավոր** .... ես ավելի մոտիկից ծանոթացա .... *(Կերտես, էջ 171):*

ԵՌԱՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ, ած. **Երեք տարածաշրջանները միավորող**: Եվրոպան Ասիային, նաև Աֆրիկային (Արաբական թերակղզով Եգիպտոս) կապող այս հսկա խաչմերուկը իրականում **եռատարածաշրջան** է: Այս համաշխարհային նշանակության խաչմերուկը կազմված է երեք տարածաշրջաններից՝ Մերձավոր Արևելք, Հայկական լեռնաշխարհ և Կովկաս *(ՀՀ, 19.12.2019):*

ԵՎՐԱԸՆՏԱՆԻՔ, գ. **Եվրոպական ընտանիք՝ Եվրամիություն**: Մեծ Բրիտանիան լքեց **Եվրաընտանիքը** *(Հեռ., Նոր Հայաստան, Իրական լուրեր):*

ԵՎՐՈԴԱԳԱՂ, գ. **Առնտրական որոշ խավերի ըմբռնմամբ՝ բարձրորակ դագաղ**: - Անցած օրը մի ցուցանակ տեսա՝ «**Եվրոդագաղ»**: - Այսինքն՝ ի՞նչ .... Այսինքն՝ հարմարավետ, քաղաքակիրթ դագաղ *(ՎԻ, էջ 65):*

ԵՏԱՄՊՐՈՊԱՅԻՆ, ած. **Ամպրոպին հաջորդող**: .... **Ետամպրոպային** պայծառ հոգնություն *(ՎԲ,էջ 19):*

ԵՏԱՌԱՋՓՈԽԱՆՑՈՒՄ, գ. (դիպվ.): **Ետ ու առաջ՝ մեկ հետ, մեկ առաջ փոխանցելը**: Իսկ այսպես երկար կարելի է ունենալ այն՝ շրթունքներով սեղմած, կանխավայելքի զգացումի **ետառաջփոխանցումով**՝ շրթունք-ուղեղ, ուղեղ-շրթունք *(ԳԽ2, էջ 17):*

ԵՏՄԱՅՐԱՄՈՒՏԱՅԻՆ, ած. **Մայրամուտին հաջորդող**: .... Պտտվում էին մագնոլիայի չորացած ծաղկաթերթիկները, որոնք առաջին **ետմայրամուտային** քամին պոկել էր թփերից .... *(Հանդկե, էջ 143):*

ԵՐԱԶԱՁԱՅՆ, մկբ., ած. (բնստ.)։ **Երազային ձայնով։** Կարկաչում ես **երազաձայն,** լեզուդ՝ աղբյուր, սիրտդ՝ ակունք *(ԼԴ 1, էջ 84)։*

ԵՐԱԺՇՏԱՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ած. **Երաժշտական և հասարակական**։ Հաստատվելով Թիֆլիսում՝ Թ. Հարտմանն ամենաակտիվ մասնակցությունն է ունենում քաղաքի **երաժշտահասարակական** կյանքին *(ԴԲՀ, 3, 2019)։*

ԵՐԱԺՇՏԱՁԱՅՆ, ած., մկբ. **Երաժշտական ձայնի նման**։ Նա փակի բանալին զնգացրեց **երաժշտաձայն** .... *(ՄԲ, էջ 44)։*

ԵՐԱԺՇՏԱՔՆՆԱԴԱՏ, գ. **Երաժշտական քննադատ**։ Հայրը եղել է չափազանց կիրթ ու խոհուն, մասնագիտությամբ՝ իրավաբան, **երաժշտաքննադատ***(ՀՀ, 26.06.2020)։*

ԵՐԱԽՏԱԳԻՏԵԼ, չբ. **Երախտիքը ճանաչել՝ ընդունել**։ .... Արցունքների միջից ժպտացող շնորհակալությամբ **երախտագիտեց**՝ այո, առհավետ, առհավետ եղբայր ջան *(Հրաչօ, էջ 155)։*

ԵՐԱՆԱՀՈՒՅԶ, ած., մկբ. (բնստ.)։ **Երանավետ հույզերով լի։** .... Որ **երանահույզ** դառնալով ծնող-// Արարմամբ երկնի նորը մարդկային*(ԼԴ 1, էջ 174)։*

ԵՐԱՆԱՃԻՉ, ած. (բնստ.)։ **Երանությամբ ճչացող։** Խաչ-խաչ թռչում էին հավքեր **երանաճիչ** *(ԼԴ 1, էջ 112)։*

ԵՐԳԱԶԱՆԳ, ած. (բնստ., փխբ.)։ **Երգող, զանգի նման հնչող։** Եվ հայոց հոգու երկնքում դու դարձար արև **երգազանգ** .... *(ԼԴ 1, էջ 166)։*

ԵՐԳԱՐՇԱՎ, ած. (բնստ., փխբ.)։ **Երգով ազդող, գրավող**։ Տառապում են ու բարձրացնում գեղեցկության գինը անվերջ,// Որ **երգարշավ** հմայությամբ անմահանա կինը անվերջ *(ԼԴ 1, էջ 78)։*

ԵՐԵԿՈՅԱՎԱՅԵԼ, գ. **Երեկոյին (երեկոյին նախատեսված արարողությանը) վայել**։ Ճաշասենյակում կատարելապես **երեկոյավայել** էր բալագույն լուսամփոփի շնորհիվ *(ՄԲ, էջ 215)։*

ԵՐԵՍԱԿԱՐ, ած. **Երեսը կարած**։ Հազիս .... **երեսակար** սապոզներ էին .... *(ՎԲ, էջ 143)։*

ԵՐԵՐԱՔԱՅԼԵԼ, չբ. **Երերալով քայլել**։ Այն երկիրը .... դանդաղ, բայց անխուսափելիորեն **երերաքայլում** էր .... *(Ունելբեք, էջ 3)։*

ԵՐԵՔԱՄՍՅԱԿ, գ. **Երեք ամսվա ժամանակաշրջան**: …. Ուղիղ տասնհինգ օրից, դարձյալ գիշերը, կբոլորի իմ հոբելյանական **երեքամսյակը** …. *(ՆԱդ., էջ 110):*

ԵՐԵՔԿԱՅՄԱՆՈՑ, ած. **Երեք կայմ ունեցող՝ կայմով**: Նա կարողացավ հասնել նրան, որպեսզի Հուդզոն գետի ափի բնակիչները լծվեն «Քլիրուոթեր» **երեքկայմանոց** նավի շինարարությանը …. *(Պոզներ, էջ 112):*

ԵՐԻԶԱԹԵԼ, գ. **Երիզից՝ ժապավենաձև կտորից թել**: Տեսադաշտում են հայտնվում լողազգեստի **երիզաթելերը***(Ելինեկ, էջ 54):*

ԵՐԿԱԹԱԳՈՐՇ, ած. **Երկաթագույնի նման գորշ**: Ճերմակաթույր խոշոր ձյան փաթիլներից ձյունամրրիկը մոտեցավ **երկաթագորշ** անհայտությունից *(Մոյես, էջ 76):*

ԵՐԿԱՐԱՀՆՉՅՈՒՆ, մկբ., ած. **Տևական հնչումով**: …. Ծաղիկը ղողանջեց Տաթևի զանգից ուժգին ու **երկարահնչյուն** *(ԱրմՄ., էջ 237):*

ԵՐԿԲՆԱԿԱՐԱՆ, ած. **Երկու բնակարան ունեցող՝ բնակարանով**: Մեր տունն արդեն երևում էր. 4 ննջասենյակով **երկբնակարան** առանձնատուն …. *(Մոյես, էջ 9):*

ԵՐԿՃԱՆԱՊԱՐՀ, ած. **Երկշարք՝ երկկողմանի երթևեկությամբ**: **Երկճանապարհ** մայրուղու լայնությամբ Վիտոլոնեն եզրագծում էին չորս հարյուր տարվա պատմություն ունեցող սլացիկ նոճիները *(Բրաուն, էջ 133):*

ԵՐԿՆԱՍԱՐ, գ. **Երկինք հասնող՝ բարձրաբերձ սար**: Մեր գյուղը՝ իր **երկնասարերով,** .... թախծոտ-խռովկան-ձնհան ձորականջներով, .... բարբառով, ամեն-ամեն ինչով իմ արմատակալ հարազատն է .... *(Հրաչօ, էջ 28):*

ԵՐԿՇՔԱՄՈՒՏՔ, ած. **Երկու շքամուտք ունեցող, երկու շքամուտքով**: Կարմիր աղյուսից **երկշքամուտք** տուն էր *(Մոյես, էջ 24):*

ԵՐԿՐԱՑԻԱԿԱՆ, ած. Այստեղ՝ **համերկրացի լինելու**: Էստեղ միջնորդություններ չկան, չկան կաշառք, **երկրացիական** խաղ չկա *(Հրաչօ, էջ 106):*

ԵՐԿՔՂԱՆՑՔ, ած. **Երկու քղանցք ունեցող՝ քղանցքով**: .... **Երկքղանցք** բաճկոնը ձգում էր երկու կողմից *(Մոյես, էջ 23):*

ԵՐԿՕՂԱԿ, ած. **Երկու օղակ ունեցող**: .... Disnay-ի **երկօղակ** ավանդույթներով *(Այզ., էջ 323):*

ԵՐՆՋԱԿԱՇՎԵ, ած. **Երնջի կաշվից պատրաստված**: .... **Երընջակաշվե** սապոգների մեջ ոտքերը քրտնել էին .... *(ՎԲ, էջ 352):*

ԵՐՓՆԱՁԱՅՆ, ած. (բնստ.): **Գունազեղ ձայն ունեցող:** Քո ձառերը վանք են կանաչ,// Զանգ-պտուղով **երփնաձայն** *(ԼԴ 1, էջ 160):*

## Զ

ԶԱՆԳԵՐԳԵԼ, բ. (բնստ., փխբ.): **Հնչել**: **Զանգերգում էր** արդեն իմ մեջ աղոթքաձայն սրբության ձես *(ԼԴ 1, էջ 85):*

ԶԱՐԿԱՀՈՍ, ած. **Զարկերակով հոսող:** .... Կեռ դանակով գտավ ծակեց զարկերակները՝ դուրս թողնելով **զարկահոս** արյունը *(Ստայնբեք, էջ 111):*

ԶԱՖՐԱՆԱԿԱՆԱՉ, ած. **Զաֆրանի՝ քրքումի գույնի կանաչ, դեղնականաչ**: .... Աշխատում են անձնական նեռնային աստվածուհու **զաֆրանականաչ** ակնաթարթումի ներքո *(Ռուշդի, էջ 40):*

ԶԲՈՍԱՔԱՅԼ, գ. **Զբոսանքի, զբոսնելու քա**յլ: Կտրուկ պոկումներով, մերթ արագացնելով քայլքը, մերթ էլ մի կերպ ստիպելով **զբոսաքայլի** անցնել, նրանք դուրս եկան թաղից .... *(Ռուշդի, էջ 82)*:

ԶԳԱՑՄՈՒՆՔԱԽԵՂԴ, ած., մկբ. **Զգացմունքներից խեղդվելով**: .... **Զգացմունքախեղդ** թփթփացրեց պահապանի ուսին *(ՄԲ, էջ 123):*

ԶԳԵՍՏԱՃԱՄՊՐՈՒԿ, գ. **Զգեստների ճամպր**ուկ: Ինձ համար ամոթալի կլիներ տեսնել, թե ինչպես է կինը զբոսնում իմ ազգանունով պիտակը կրծքին, վրան էլ տան հասցեն և երկաթուղային կայարանի անվանումը տպված, ասես **զգեստաճամպրուկ** *(Հերբերթ, էջ 69):*

ԶԳՈՂԵՔ, գ. (խսկց.)։ **Կրակի բորբոքում առաջացնող տաք օդը վեր քաշելը**։ …. Խողովակը հանեց ու դադարեցրեց կրակի **զգողեքը** *(ՎԲ, էջ 149):*

ԶԻԼՁԱՅՆ, ած. (խսկց.)։ **Զիլ՝ ուժգին ձայնով՝ ձայն ունեցող**։ …. Դեռևս **զիլձայն** ծիծեռնակները օդն էին թրատում…. *(ՎԲ, էջ 287):*

ԶԻՆԱԱԿՈՒՄԲ, գ. **Զինվորականների ակումբ:** Պարբերականը նշել է, որ նախագահի որդին այս մասին հայտարարել է քաղաքի էլիտար **զինաակումբի** անդամների հետ զրույցում *(Հմց, news.am):*

ԶԻՆԱԲԱԶԱ, գ. **Զինամթերքի բազա**։ Եգիպտոսի օդուժը հարվածներ է հասցրել **զինաբազաներին** *(Հմց, news.am):*

ԶԻՆՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ, ած. (հպվ.)։ **Զինվորական հրամանատարներ պատրաստող**։ Հայրն իր մտորումները կիսում է որդու՝ …. հեռավորարևելյան ընդհանուր **զինհրամանատարական** բարձրագույն ուսումնարանի շրջանավարտ սպայի հետ *(ԶԲ, էջ 295)*։

ԶՂՋԱԽՈՍ, ած. **Զղջումի խոսքերով:** Բայց **զղջախոս**՝ ես քեզ պաշտել եմ կրկին *(ԼԴ 1, էջ 150):*

ԶՆՆԱԽՈՒՅԶ, ած. **Զննելով ինչ-որ բան պարզել**։ .... Պրոֆեսոր Մըք Գո Նազալի հայացքը մի պահ կանգնեց Նևիլի պարեգոտի վրա .... հետո **զննախույզ** անցավ Ռոնի քթի սև բծի վրայով *(Ռոուլ., էջ 95):*

ԶՍՊԱՆԱԿԱԶԵՐԾ, ած. 1. **Առանց զսպանակի, զսպանակ չունեցող:** 2. (փխբ.)։ **Առանց ներքին մղման, ծուլորեն**։ Սա ալարկոտ ելավ տեղից և կարծես **զսպանակազերծ** քարշ եկավ աշխատասենյակ *(ՄԲ, էջ 89):*

ԶՎԱՐԹՆՈՑԱՆՄԱՆ, ած. **Զվարթնոցի տաճարի նման**։ .... Անի քաղաքում ի՞նչն է շատ .... եկեղեցին, Սուրբ Գրիգոր Լուսավորչի **զվարթնոցանման** տաճարը կմտնեն .... *(ԱրմՄ., էջ 45):*

ԶՎԱՐՃԸՆԹԱՑ, ած. **Զվարճալի ընթացող**։ Երբ վեր էր կենում, ուրիշ զգեստ էր հագնում՝՝ կարծես ակնկալելով ավելի **զվարճընթաց** երեկո …. *(ԱՄ, էջ 280):*

ԶՐԱՀԱԳԼԽԱՐԿ, գ. **Ջրահապատ գլխարկ**: Ծակծկված **ջրահագլխարկներ** *(ՎԻ, էջ 354):*

ԶՐՈՒՅԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ, գ. (բժշկ.): **Ջրույցը որպես բուժական միջոց օգտագործելը**: Ջոքսի համար սա [գոռալը] կարծես **ջրուցաբուժությունից** նախապատվելի էր .... *(Այգ., էջ 97):*

ԶՈՒԳԱՀԱՄՈՒԹՅՈՒՆ, գ. Զուգահեռ զգացվող համեր: Տե՛ս ԱՆԱՆՈՒԽԱԿԱՆԱԶԱՎՈՒՆ-ի օրինակը:

ԶՈՒԼԱԼԱՀՈՍ, ած. (բնստ.): **Վճիտ, զուլալ հոսող:** Լիներ նպատակ միշտ **զուլալահոս** *(ԼԴ 1, էջ 296)*:

# Է

ԷԼԵԿՏՐԱԶԱՆԳ, գ. **Էլեկտրական զանգ**: **Էլեկտրազանգը** դեռևս չէին սարքավորել *(Նայք2, էջ 4):*

ԷԼԵԿՏՐԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ, գ. **Կառավարում էլեկտրականությամբ**: .... Վարելով իր սայլակը՝ օժտված շատ հարմարանքներով. **էլեկտրակառավարում,** համակարգիչ .... *(Արեն, էջ 298):*

ԷԼԵԿՏՐԱՄԱՅՐՈՒՂԻ, գ. **Էլեկտրական մայրուղի**: .... Որքան ավելի երկար են **էլեկտրամայրուղիները,** .... այնքան ավելի շատ են կորուստները *(Արեն,էջ 55):*

ԷԼՓՈՍՏ, գ. (հպվ.): **Էլեկտրոնային փոստ**: .... **Էլփոստով** ախմախ-ախմախ բաներ են գրում իրար *(ԳԽ2, էջ 57):*

ԷԿՈԱՂԲԱՄԱՆ, գ. **Գոյապահպանական չափանիշներին համապատասխանող աղբաման:** ՄԱԿ-ի զարգացման գրասենյակի նախաձեռնությամբ նոր **էկոաղբամաններ** են տեղադրվել *(Հմց, aravot.am):*

ԷԿՈԱՂԲԱՐԿՂ, գ. **Գոյապահպանական չափանիշներին համապատասխանող աղբարկղ:** Առավել բանուկ փողոցներում տեղադրվել են **էկոաղբարկղեր** *(Հմց, aravot.am):*

ԷԿՈԱՂԵՏ, գ. **Գոյապահպանական աղետ: Էկոաղետի** առաջ կկանգնենք, եթե շարունակվեն անտառահատումները *(Հմց, aravot.am):*

ԷԿՈԱՆԿՅՈՒՆ, գ. **Գոյապահպանական չափանիշներին համապատասխանող անկյուն:** Այս տարի նույնպես հանրային լողափերում գործելու են …. շարժական լողավազաններ, փոքր թենիսի սեղան, նորաբաց **էկոանկյուն** *(Հմց, aravot.am):*

ԷԿՈԱՐԳԵԼՈՑ, գ. **Գոյապահպանական արգելոց:** Միայն այդ **էկոարգելոցներով** անհնարին է պահպանել ընձառյուծներին և նրանց որս հանդիսացող կենդանատեսակներին *(Հմց, aravot.am):*

ԷԿՈԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ, ած. **Գոյապահպանական տեսակետից արդյունավետ:** Կարևորվում է **էկոարդյունավետ** սարքավորումների օգտագործումը *(Հմց, aravot.am):*

ԷԿՈԱՐՇԱՎ, գ. **Արշավ գոյապահպանական առումով հետաքրքրություն ներկայացնող վայրերով:** Առավել հիշարժանը եռօրյա հետազոտական **էկոարշավն** էր *(Հմց, aravot.am):*

ԷԿՈԱՐՏԱԴՐԱՆՔ, գ. **Գոյապահպանական չափանիշներին համապատասխանող արտադրանք:** Այն արտադրանքի ինքնարժեքը բարձրացնում է, բայց փոխարենը ստանում ենք բնական **էկոարտադրանք** *(Հմց, aravot.am):*

ԷԿՈԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Գոյապահպանական բազմազանություն:** Պարտադիր ենք համարում մեր քաղաքի ավագանիում ներգրավել **էկոբազմազանության** և բնապահպանության ոլորտների ներկայացուցիչներին *(Հմց, aravot.am):*

ԷԿՈԲՐԻԿԵՏ, գ. (հպվ.)։ **Աղյուսի ձև ունեցող վառելանյութ՝ գոյաբանական չափանիշներին համապատասխանող**։ ...Կոտայքի մարզում ծղոտից **էկոբրիկետների** արտադրություն է հիմնվել *(ՀՀ, 27.07.2019):*

ԷԿՈԳԻՆԻ, գ. **Գոյապահպանական չափանիշներին համապատասխանող գինի:** Աղավնաձորում **էկոգինի** է արտադրվում *(Հմց, aravot.am):*

ԷԿՈԳԻՏԱԿԻՑ, ած. **Գոյապահպանական խնդիրները գիտակցող, դրանցով մտահոգվող:** Մյուս բանախոսը արդյունքի հասնելու համար կարևորում է **էկոգիտակից** բնակիչ ունենալու փաստը,

քանի որ այդ դեպքում նա կկարողանա իր գործողություններով չվնասել բնությանը *(Հմց, aravot.am):*

ԷԿՈԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Գոյապահպանական գիտակցություն:** Ցանկալի է, որ երկրում իրական փոփոխություններ լինեն, և այդ փոփոխությունները հանգեցնեն **էկոգիտակցության** փոփոխության *(Հմց, aravot.am):*

ԷԿՈԳԻՏԵԼԻՔ, գ. **Գոյապահպանական գիտելիք:** Աշակերտները միջոցառման էին եկել **էկոգիտելիքով** զինված. Նախաձեռնության շրջանակում դպրոցներում անցկացվել են պլաստիկի ձևավորման և կյանքի ցիկլերը ներկայացնող էկոլոգիական ինտերակտիվ դասընթացներ *(Հմց, aravot.am):*

ԷԿՈԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, գ. **Գոյապահպանական չափանիշներին համապատասխանող գյուղատնտեսություն: Էկոգյուղատնտեսությամբ** զբաղվողները բացառում են թունաքիմիկատների օգտագործումը և բույսերը մշակում են միայն օճառաջրով *(Հմց, aravot.am):*

ԷԿՈԳՈՐԳ, գ. **Գոյապահպանական չափանիշներին համապատասխանող գորգ:** Օտարերկրյա զբոսաշրջիկները շատ հետաքրքրված են ընկերության արտադրած **էկոգորգերով** *(Հմց, aravot.am):*

ԷԿՈԴԱՇԻՆՔ, գ. **Գոյապահպանության հարցերով դաշինք: Էկոդաշինքի** անդամն ասաց, որ վերջերս տարբեր տեղեկություններ է ստանում Սևանի ավազանի բնակիչներից *(Հմց, aravot.am):*

ԷԿՈԴԱՍԱՍԵՆՅԱԿ, գ. **Գոյապահպանության չափանիշներին համապատասխանող դասասենյակ:** Նախատեսվում է **էկոդասասենյակին** տրամադրել էկոկրթության ծրագրեր *(Հմց, aravot.am):*

ԷԿՈԴԱՍԸՆԹԱՑ, գ. **Գոյապահպանությանը վերաբերող դասընթաց: Էկոդասընթաց** «Խոր Վիրապ» պետական արգելավայրի մասին *(Հմց, aravot.am):*

ԷԿՈԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ, գ. **Գոյապահպանական ըսկըզբունքներով իրականացվող դաստիարակություն:** Նա ասաց, որ

մարդկանց պետք է **էկոդաստիարակություն** տալ կամ որ ավելի գեղեցիկ բառ է՝ էկոխիղճ մտցնել մարդու մեջ *(Հմց, aravot.am):*

ԷԿՈԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ, ած. **Գոյապահպանական դաստիարակությանը վերաբերող:** Իրականացվել են գիտաճանաչողական, **էկոդաստիարակչական**, էկոկրթական միջոցառումներ *(Հմց, aravot.am):*

ԷԿՈԵՐԿԻՐ, գ. **Գոյապահպանության կատարյալ վիճակի մեջ գտնվող երկիր:** Նա հույս ունի, որ Հայաստանը կդառնա **էկոերկիր** *(Հմց, aravot.am):*

ԷԿՈԶԲՈՍԱՇՐՋԻԿ, գ. **Գոյապահպանությամբ հետաքրքրվող զբոսաշրջիկ:** Այդ բնակավայրը Հայաստան այցելող **էկոզբոսաշրջիկների** սիրելի վայրերից մեկն է *(Հմց, aravot.am):*

ԷԿՈԷՔՍԿՈՒՐՍԱՎԱՐ, գ. **Գոյապահպանական ուղղվածությամբ էքսկուրսիա վարող:** Անդրադարձան նաև գերազանց օտար լեզուների տիրապետող **էկոէքսկուրսավարներ** պատրաստելու խնդրին *(Հմց, aravot.am):*

ԷԿՈԹԱՂԱՄԱՍ, գ. **Գոյապահպանական չափանիշներին համապատասխանող թաղամաս:** Յուրաքանչյուր կայարանում կլինեն հանգստի կամ առևտրային գոտիներ, նույնիսկ կկառուցվի նոր բնակելի **էկոթաղամաս**, սպորտային համալիր, ինժեներական նորարարական կենտրոն *(Հմց, aravot.am):*

ԷԿՈԻՐԱԶԵԿՈՒՄ, գ. **Գոյապահպանական հարցերի տեղեկացում, իրազեկում:** Այդ ամենի պատճառը բնակչության էկոգիտակցության և **էկոիրազեկման** ցածր մակարդակն է *(Հմց, aravot.am):*

ԷԿՈԻՐԱՎԻՃԱԿ, գ. **Գոյապահպանական իրավիճակ:** Չնայած Հայաստանում **էկոիրավիճակն** այդչափ աղետալի չէ, սակայն բնապահպանները մտահոգ են *(Հմց, aravot.am):*

ԷԿՈԼՈԳԻԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ած. **Բնապահպանական և մշակութային**: .... «Խազեր» **էկոլոգիամշակութային** հիմնադրամի ներկայացուցիչ …. *(ՀՀ, 26.02.2020):*

ԷԿՈԽԻՂՃ, գ. **Գոյապահպանական գիտակցություն:** Տե՛ս ԷԿՈԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ-ի օրինակը:

ԷԿՈԽՆԴԻՐ, գ. **Գոյապահպանական խնդիր:** Ըստ ծրագրի՝ աշակերտները ծանոթանում են մարզի ընդհանուր բնապահպանական վիճակին, բարձրաձայնում իրենց համայնքներում առկա **էկոխնդիրների** մասին *(Հմց, aravot.am):*

ԷԿՈԽՈՐՀՐԴԱՏՈՒ, գ. **Գոյապահպանական հարցերի խորհրդատու:** Միության **էկոխորհրդատուն** ասաց, որ նախագիծը ներառում է արվեստը և ուսուցումը *(Հմց, aravot.am):*

ԷԿՈՀԱՐԹԱԿ, գ. **Գոյապահպանական հարցերին նվիրված հեռուստահաղորդաշարի վերնագիր: Էկոհարթակ**. Էկոտուրիզմի զարգացում *(Հմց, aravot.am):*

ԷԿՈՃԱՄԲԱՐ, գ. **Գոյապահպանական չափանիշներին համապատասխանող ճամբար:** Անցկացվեց հեծանվային **էկոճամբար** *(Հմց, aravot.am):*

ԷԿՈՄԻՋԱՆՑՔ, գ. **Գոյապահպանական չափանիշներին համապատասխանող միջանկյալ տարածք:** Առաջիկայում ավելի շատ տարածքներում են արգելվելու որսը, և ուժեղացվելու է հսկողությունը, որպեսզի **էկոմիջանցքները** և դրանց հարակից տարածքները վայրի կենդանիների համար ավելի անվտանգ դառնան *(Հմց, aravot.am):*

ԷԿՈՄԻՋԱՎԱՅՐ, գ. **Գոյապահպանական միջավայր:** Ջրուցակիցները մտքեր են փոխանակել Հայաստանում տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների զարգացման հեռանկարների, ստարտափների **էկոմիջավայրի** ձևավորման և կայացման հարցերի շուրջ *(Հմց, aravot.am):*

ԷԿՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ած. **Գոյապահպանական և մշակութային:** Միջազգային փառատոնին մասնակցում է **էկոմշակութային** հասարակական կազմակերպությունը *(Հմց, aravot.am):*

ԷԿՈՄՇԱԿՈՒՅԹ, գ. **Գոյապահպանական մշակույթ, վարվելակարգ:** Հուշագիր է ստորագրվել Հայաստանի նկարիչների միու-

թյան հետ կերպարվեստի միջոցով **էկոմշակույթի** ձևավորմանն աջակցելու նպատակով *(Հմց, aravot.am):*

ԷԿՈՊԱՅՈՒՍԱԿ, գ. **Գոյապահպանական չափանիշներին համապատասխանող պայուսակ:** Արցախցի կանայք կտորե **էկո-պայուսակներ** են կարում *(Հմց, aravot.am):*

ԷԿՈՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹ, գ. **Գոյապահպանական չափանիշ-ներին համապատասխանող պարարտանյութ:** Առաջին անգամ կիրառվել է հայկական **էկոպարարտանյութ** *(Հեռ., Հ1, Լուրեր, 06.03.2021):*

ԷԿՈՏՐԱՆՍՊՈՐՏ, գ. **Գոյապահպանական չափանիշներին համապատասխանող տրանսպորտ:** Պետք է Երևանը դարձնել ան-վտանգ **էկոտրանսպորտի** համար *(Հմց, aravot.am):*

ԷԿՐԱՆԱՊԱՏՃԵՆԱՀԱՆՈՒՄ, գ. **Էկրանից պատճենահա-նումը: Էկրանապատճենահանումները**՝ Ս. Սաֆարյանի ֆեյսբուք-յան էջից *(Հմց, Hay Good Media):*

ԷՆԵՐԳԱՍՊԱՌՈՒՄ, գ. **Էներգիայի սպառում**: Հանրային և բիզնեսի ոլորտը միասին կազմում են **էներգասպառման** մոտ 10 տոկոսը *(ՀՀ, 14.02.2020):*

ԷՇԱՆՈՑ, գ. **Էշերի գոմ**: Պապը .... զգաց, որ ատում է նրանց, ովքեր իբր մխիթարում են, ասելով՝ էշի եղածն ինչ է, աշխարհս հրես **էշանոց** է դարձել .... *(Հրաչօ, էջ 112):*

ԷՇԱՑԱՎ, գ. (փխբ.): Այստեղ՝ **էշ գնելու փնտրտունքի հե-տևանքով առաջացած տառապանք**: .... Նախ փորձեց մեղմել **էշա-ցավով** տառապող գեղջուկ տղային տանջող ցավերը՝ չկարողա-ցավ *(Հրաչօ, էջ 117):*

ԷՍՍԵԱՆՄԱՆ ած. **Էսսեի նմանվող**: .... Քաղել եմ նրա «Ըն-կեր մանկության տաժարից» դեռևս անտիպ **էսսեանման** պատ-մությունից *(ՀՀ, 31.03.2020):*

ԷՐԳՐԱՍՏԵՂԾ, ած. **Էրգրի տեսլականը կերտող**: .... Գալշո-յանին որպես գրող և .... ոգեկոչ և **էրգրաստեղծ** երևույթ գնահատող հանրությունը պարզապես զարմացած էր .... *(Գրաշխարհ, թիվ 7-9, 2015):*

## Ը

ԸՄԲՈՇԽԱՍԵՐ, ած. **Ըմբոշխնելու սեր ունեցող**: Իրականում դրանք իրենց ուսուցչապետի՝ մարկիզ դը Սադի նման բացարձակ նյութապաշտներ էին՝ մի տեսակ **ըմբոշխասերներ** .... *(Ուելբեք, էջ 238)*:

ԸՆԴԵՐՔՇԱՀԱԳՈՐԾՈՂ, ած. **Ընդերքը շահագործող**: Ի դեպ, կառույցը 2019 թ. ստուգումներ է արել արտադրական, ճանապարհաշինարարական, **ընդերքշահագործող** և այլ ձեռնարկություններում *(ՀՀ, 12.02.2020):*

ԸՆԹԱՑԱԺԱՄԱՆԱԿ, գ. **Ժամանակի հատված, փուլ**: Միեբությունը բառիս բուն իմաստով ապազգային երևույթ է, հետեվաբար արդի **ընթացաժամանակում** հակահեղափոխական լուրջ դրսևորում ունի *(ԳԹ, 06.03.2020):*

ԸՆԹԱՑԱՓՈՒԼ, գ. **Ընթացքը կազմող փուլ, հատված**: .... [Այն] ժողովրդական տոնացույցում ներկայանում է որպես տոնածիսական շրջան՝ ավանդական տոներին բնորոշ **ընթացափուլերով** (նախատոնական, բուն տոնական, հետտոնական) ու բաղադրիչներով …. *(ԴԲՀ, 3, 2019):*

ԸՆԿՈՒԶԱԴԱՐՉՆԱԳՈՒՅՆ, ած. **Ընկույզի գույնի երանգով դարչնագույն**: .... **Ընկուզադարչնագույն** աչքերում՝ ինչ-որ վշտի, նույնիսկ վհատության անփոփոխ արտահայտություն *(Կերտես, էջ 144):*

## Թ

ԹԱԲԼԱՀԱՐ, գ. **Թաբլ նվագող**: … Ընդամենը նվագակցում է **թաբլահարին** *(ԳԽ2, էջ 74):*

ԹԱԳԱՎՈՐԱԲԱԺԻՆ, ած. **Թագավորի բաժին եղող**: Չին որոնում էր **թագավորաբաժին** թե-երն ու եթե-ները *(Հրաչօ, էջ 109):*

ԹԱԳԱՎՈՐԱԽՈՒՄԲ, գ. Այստեղ՝ **թագավորի սպասավորների ամբողջությունը**: Սպասարկող ձիախումբը և **թագավորախումբը** զբաղվում էր իր ձիապաշտությամբ ու թագավորամեծարմամբ *(Հրաչօ, էջ 109):*

ԹԱԳԱՎՈՐԱՁԻԱՄԱՐԶԻՉ, գ. (դիպվ.)։ **Թագավորի ձիու մարզիչ**։ .... **Թագավորաձիամարզիչին** թվում էր, թե թագավորը շոյում է իրեն լուռ ու անաղմուկ .... *(Հրաչօ, էջ 107)։*

ԹԱԳԱՎՈՐԱՄԵԾԱՐՈՒՄ, գ. (դիպվ.)։ **Թագավորին մեծարելը**։ Տե՛ս ԹԱԳԱՎՈՐԱԽՈՒՄԲ-ի օրինակը։

ԹԱԳԱՎՈՐԱՓՐԿՉԱՅԻՆ, ած. (դիպվ.)։ **Թագավորական և փրկչային, թագավորին և փրկչին առնչվող**։ .... Թույլ է տվել իր ուղեղում բուն դնի այդ ամեն աղբը, որ խառնվել է այս **թագավորափրկչային** անցուդարձին *(ԳԽ1, էջ 41)։*

ԹԱԹՆԱՀԵՏՔ, գ. **Թաթ(եր)ի հետք**։ Հոտը շարունակվում է **թաթնահետքերով**՝ շեմքին, աստիճաններին .... *(ԳԽ2, էջ 23)։*

ԹԱԻԼԱՆԴԱԲՆԱԿ, ած. **Թաիլանդում բնակվող**։ Հարցազրույց **թաիլանդաբնակ** դանիահայ նկարչուհու հետ *(Ազգ, 08.02.2019)։*

ԹԱԽՏԱՇՈՐ, գ. **Թախտի վրա գցելու շոր**։ Աջ կեսում մութ, .... նեղվածք, **թախտաշորեր** *(ՄԲ, էջ 326)։*

ԹԱՅՈՒՀԻ, գ. **Թաիլանդի բնակիչ կամ ծագումով այնտեղացի կին՝ աղջիկ**։ Նրանց կողքով սահեց, ինչպես կարող են սահել միայն ֆիլիպինուհիներն ու **թայուհիները,** հերթապահ աղախինը *(Արեն, էջ 134)։*

ԹԱՆԱՔԱՍԵՎ, ած. **Թանաքագույնի երանգով սև**։ Բալի մեծության **թանաքասև** հատապտուղները տառացիորեն պայթում էին քաղցրությունից .... *(Քերվուդ, էջ 95)։*

ԹԱՆԿԱԿՅԱՑ, ած. **Թանկ, հարուստ, ճոխ կյանքով ապրող**։ .... Գլխովին կորած է ինքնահավան **թանկակյացների** ու կոտած խոզերի աշխարհում *(Հերբերթ, էջ 388)։*

ԹԱՆՁՐԱՀԵՂՈՒԿ, ած. 1. **Թանձր հեղուկով**։ .... Թափանցիկ պատերի ներսում կարծես դանդաղորեն պղտոր **թանձրահեղուկ** ամպ էր պտտվում .... *(Բրաուն, էջ 52)։*

2. գ. **Թանձր հեղուկ**։ .... Գլուխներիս ինչ-որ մուգ կապույտ **թանձրահեղուկ** էր քսած *(ՆԱբ., էջ 38)։*

ԹԱՆՁՐԱՔՍՈՒՔ, գ. **Թանձր քուք**: Դանակի սուր շեղբով քանդում էր հին ապակիները պահող, չորացած **թանձրաքսուքը** .... *(Նայբ.2, էջ 39)*:

ԹԱՆՁՐՈՒԿԱԽԱՌՆ, ած. **Թանձրուկի հետ խառնված**: Այսուհանդերձ, նա երազում տեսավ սուրճի զտիչներով, **թանձրուկախառն** մանթերով ու կտրված սեռական անդամներով լեփ-լեցուն վիթխարի աղբարկղեր *(Ուելբեք, էջ 12):*

ԹԱՎԱԹԻԱԿ, գ. **Թավայանման թիակ**: .... Ինչ-որ բանով **թավաթիակ** էր հիշեցնում *(ՎԲ, էջ 112):*

ԹԱՎՇԱՏԻՊ, ած. **Թավշի նմանվող**: .... Ես նստեցի .... դարավանդի վրա, որ պատած էր **թավշատիպ** բուսականությամբ .... *(Գրին, էջ 208):*

ԹԱՎՇԱՔԱՅԼ, ած., մկբ. **Մեղմաքայլ, նրբաքայլ**: Վերածվելով ֆոսֆորե աչքերով սև կատվի՝ ... **թավշաքայլ** հատեց հարթակը .... *(ՄԲ, էջ 40):*

ԹԱՏԵՐԱՅՆՈՐԵՆ, մկբ. **Արհեստական, շինծու տեսք տալով, թատերականի նմանեցնելով**: Նա երբեմն թեկնածուներին բերում էր սրահ, .... **թատերայնորեն** բարձրացնում էր ծածկը ու հետևում *(Այզ., էջ 129):*

ԹԱՑՈՒԹՈՌ, ած. **Անձրևային, թացութոն**: .... Եղանակները **թացութոռ** են *(ՎԲ, էջ 90):*

ԹԱՓԱՌԱՏԱՆՋ, ած. (բնստ.): **Թափառումներից տանջված:** Ես, **թափառատանջ**, գտա եղեգն այդ-// Եղեգների մեջ հազար, հազար *(ԼԴ 1, էջ 224):*

ԹԱՓՈՆԱԿՈՒՏԱԿՈՒՄ, գ. **Թափոնների կուտակում:** Հանդիպման ընթացքում քննարկվեցին նաև աղբավայրի **թափոնակուտակման** կառավարման ծրագրի հետ կապված հարցեր *(Հմց, aravot.am):*

ԹԱՓՈՆԱՄԱՆ, գ. **Թափոնների համար նախատեսված աղբաման:** Թափոնների տեսակավորման վարչության աշխատակիցները բնակիչներին կներկայացնեն **թափոնամաններից** օգտվելու կանոնները *(Հմց, aravot.am):*

ԹԱՓՈՆԱՏԵՂԻ, գ. **Թափոններ լցնելու տեղ, վայր:** .... [Դա] պայմանավորված է լանդշաֆտը ծածկող խոշոր **թափոնատեղի-ներով** ու հանքաքարի մշակման տարածքներով *(Հմց, aravot.am):*

ԹԱՓՈՆԱՑՎԵԼ, բ. **Թափոնների վերածվել:** Հացահատիկա-յին մշակաբույսերի վերամշակման գործընթացում **թափոնացվում** են բջջանյութն ու այլ սննդարար նյութեր *(Հմց, aravot.am):*

ԹԵԹԵՎԱԼԻՔ, ած. (փխբ.): **Թեթևորեն ալիքվող**: Նա դեռ իր **թեթևալիք** ու ծածանվող վարանմունքի մեջ էր .... *(ԱՄ, էջ 158):*

ԹԵԹԵՎԱՇՈՂ, ած. **Թեթևորեն շողացող, փայլող:** Նրա գեղեց-կությունը միշտ նրբենի է եղել, շիկահեր կնոջ **թեթևաշող** արտա-քին .... *(ԱՄ, էջ 164):*

ԹԵՅԱՄՈԼ, գ. **Թեյ շատ սիրող՝ խմող:** Ես, որպես **թեյամոլ** մարդ, իմ հյուրերին հաճախ թեյ էի առաջարկում *(ԹԺՀ, էջ 461):*

ԹԵՎԱԲԱԽՈՑ, գ. **Թևերի բախոց**: Ցնծագին դայլայլներով ու **թևաբախոցներով** հավքերը խաղում են իրար հետ .... *(Դարյան, էջ 297):*

ԹԵՎԱԹԱՓԱՀԱՐՈՒՄ, գ. **Թևերը թափահարելը**: Վայրէջքի գալով ափում՝ նա **թևաթափահարումներով** կանգ առավ.... *(ՌԲ, էջ 42):*

ԹԵՎԱՉԱՓ, ած. **Թևի երկարությամբ տարածություն**: .... Ձյու-նահյուսերի հյուսիսային ճյուղը .... ճամբար էր հասել և ի վերջո կանգ առել Թոմաս Մաթլի հին վաննայից մի **թևաչափ** հեռավո-րության վրա *(Ջեեթ., էջ 60):*

ԹԵՎԱՉԱՓԵԼ, նբ. **Թևի երկարության հարաբերությամբ չա-փել**: Մի իմաստուն հասավ, **թևաչափեց**՝ չհավատաց, աչքաչափեց՝ չհավատաց .... *(Հրաչօ, էջ 104):*

ԹԵՎԿԱՊԱՎՈՐ, ած. **Թևկապ ունեցող:** Մանավանդ .... այս-պես կոչված Հրեական խորհրդի **թևկապավոր** մարդիկ այսպես թե այնպես, կամա-ակամա, բոլորին տանելու են Գերմանիա վաղ թե ուշ .... *(Կերտես, էջ 48):*

ԹԵՎՔԱԾԱԼ, գ. **Թևքածալք, թևքի ծայրի ծալք**: Նրանք թվերի ինչ-որ նոր համակցություն խզբզեցին ցուցատախտակին և **թևքածալով** կրկին մաքրեցին այն *(Մոյես, էջ 143):*

ԹԵՐՄՈՍԱԿԻՐ, ած. **Թերմոս՝ ջերմապահ, ջերմակալ կրող**: Տե՛ս ԲՈՒՏԵՐԲՐՈԴԱՎԱՃԱՌ-ի օրինակը:

ԹԵՔԱՍԵՂԱՆ, գ. **Թեք՝ ոչ հորիզոնական մակերեսով սեղան**: Հետևի պատի մոտ .... տեղավորված էր բարձր **թեքասեղանը** տնօրենի համար *(Սթոուն, էջ 470):*

ԹԹՎԱԲՈՒՅՐ, գ. **Թթու, թթվային բույր:** .... Հոտոտում է հինավուրց օծանելիքների **թթվաբույրը** .... *(Բունին, էջ 27):*

ԹԹՎԱԾՆԱՏԱՐ, ած. 1. **Թթվածին տանող**: 2. (փխբ.): **Կյանքը ապահովող**: Թուրքերը հրաշալի գիտեին, որ բավական է կտրեն **թթվածնատար** լարը, ամբողջ Ղարաբաղը կխեղդվի *(ՋԲ, էջ 357):*

ԹԻԹԵՂԱՍՏՎԱՐԱԹՂԹԱՅԻՆ, ած. **Թիթեղաստվարաթղթին բնորոշ:** Տե՛ս ԲԱՄԲՈՒԿԱԹՂԹԱՅԻՆ-ի օրինակը:

ԹԻԿՆԱՄԱՍ, գ. **Թիկունքային մաս:** .... Բռնեց նրա վերնաշապիկի **թիկնամասից** .... *(Ֆոլք., էջ 18):*

ԹԻՖԼԻՍԱՀԱՐՄԱՐ, ած. (խսկց.): **Թբիլիսի քաղաքում հագնելու համար պատշաճ**: Ասի՝ մեր գյուղում հարմար մի երկուսը կան, որ **թիֆլիսահարմար** շոր ունեն *(Հրաչօ, էջ 152):*

ԹԽԱՀԱՐ, ած. **Արևայրուքից թխացած**: Նրա բացգույն մաշկը երբեք չէր կարմրում …., այլ հավասարապես **թխահար** էր բոլոր եղանակներին *(ԱՄ, էջ 9):*

ԹՄԲԵԶՐ, գ. **Թմբի եզր**: **Թմբեզրի** վրայից մի ... շատ ծանր արկղ վերցրեց …. *(ՎԲ, էջ 35):*

ԹՇՇՈՑԱԽԱՌԸ, ած. **Թշշոցի՝ թշշալու ձայնի հետ խառն:** Ինչ-որ չխչխկաններ էին զնգզնգում **թշշոցախառը ....** *(ՄԲ, էջ 132):*

ԹՈՆՐԱԿՈՂ, մկբ. **Թոնրի կողքի վրա**: .... Լավաշն ամենօրյա լվացքի պես կփռվի պարաններին՝ **թոնրակող** թխվելուց հետո մի ակնթարթ արևկող անելու *(ԱրմՄ., էջ 28):*

ԹՌՉՆԱՎԱԶԱՆ, գ. **Ավազան թռչունների համար:** Տան ետնաբակում **թռչնավազան** կար *(ԱՄ, էջ 166):*

ԹՌՉՆԵՐԳ, գ. **Թռչունների երգ**: .... Լռել էր բազմաձայն **թըռչ-ներգը** *(ՎԲ, էջ 380):*

ԹՐԵՆԴԱՅԻՆ,ած. **Ապրանքների, գների ցուցանիշների փո-փոխությանը վերաբերող**: .... «Արտադրված է Հայաստանում» մակնշված արտադրանքն առավել ոճային ու **թրենդային** է *(ՀՀ, 11.12.2019):*

ԹՐԹՆՋՈՒԿԱՀՈՏ, ած. **Թրթնջուկի հոտ ունեցող:** Մեր ըն-տանիքում դեռ մի դար առաջ թթու, **թրթնջուկահոտ** թթխմորով կլոր մեծ-մեծ հացեր էին թխում *(ՆԱ, էջ 240):*

ԹՐԹՌԱՅՆՈՒԹՅՈՒՆ, գ. 1. **Թրթռալու հատկանիշը:** 2. **Թըր-թռային լինելը, թրթռալը**: Ձայներն այստեղ խուլ են՝ խլորեն ուժ-գին, արտասովոր **թրթռայնությամբ** *(ԳԽ2, էջ 16):*

ԹՐՔԱՔՈՒՐԴ, գ. **Թրքացած քուրդ**: Խորհրդային տարիներին երախտամոռ **թրքաքրդերը** քերել են արձանագրությունը *(ՀՀ, 05.10.2019):*

ԹՈՒՆԱԼԵԶՈՒ, ած. **Չարություն, նենգություն արտահայտող լեզվով գրված**: Մոսկվայով մեկ թնդում էր ժուռնալիստ Կոլեչկինի **թունալեզու** ֆելիետոնը .... *(ՄԲ, էջ 101):*

ԹՈՒՆԱՄԱՆԻՇԱԿԱԳՈՒՅՆ, ած. **Ժանգի գույնին մոտ մա-նուշակագույն**: Տե՛ս ԴԵՂՆԱԿԻՏՐՈՆԱԳՈՒՅՆ-ի օրինակը:

ԹՈՒՐՔԱՀԱՃ, ած. **Թուրքիային՝ թուրքերին հաճո, թուրքա-հաճո**: ՌԴ-ն փորձում է Թուրքիային հեռացնել ԱՄՆ-ից, և թերևս սա են համարում ԱՄՆ-ի ու ՆԱՏՕ-ի **թուրքահաճ** կեցվածքի պատճառը *(ՀՀ, 15.10.2019):*

ԹՔԱԼՑՎԱԾ, ած. **Թքալի, թքալից, թքով լցված**: .... Ես եմ գրում իմ աչքերով, որ գալիս են ուղեղիս **թքալցված** գալարներից *(ԳԽ2, էջ 23):*

## Ժ

ԺԱՄԱԴԱՅԱԿ, գ. **Ժամավճարով աշխատող դայակ: .... Ժա-մադայակ** էր վարձել .... *(Տուռմ., էջ 39):*

ԺԱՄԱՆՎԱԿ, գ. **Ժամը ցույց տվող, սլաքները պտտեցնող անվակ**: Հենց այս պահին կարծես գլխումս ամեն դետալ ժամացույցի **ժամանվակների** պես իր տեղն ընկավ *(Մոյես, էջ 89):*

ԺԱՄԱՑՈՒՅՑԱՆՄԱՆ, ած. **Ժամացույցի նման:** Նա նորից լսեց չորուձիգ ոտքի հարվածներ սնամեջ անդաստանում՝ նույն փայտային ու **ժամացույցանման** անտարբերությամբ .... *(Ֆոլք., էջ 13):*

ԺԱՅՌԱՂԵՂ, ած. **Քարե աղեղի նման:** Մորապապս **ժայռաղեղ** մի խորշում անձավներ փորել տվեց *(Հմց, aravot.am):*

ԺԱՆԳԱԿԱՐՄՐԱԳՈՒՅՆ, ած. **Ժանգի՝ դեղին երանգով կարմիր**: ....Կայմերի ծայրերին ծածանվում էին **ժանգակարմրագույն** ու երկնագույն դրոշակները *(Սթոուն, էջ 291):*

ԺԱՌԱՆԳԱԼՈՒՅՍ, գ. (բնստ., փխբ.): **Ժառանգներից՝ զավակներից ճառագող լույս:** Բոլոր սերերն իմ թեև վառքով եղել են սիրուն-//**Ժառանգալույսն** իմ սակայն քո շողությամբ է աճում *(ԼԴ 1, էջ 140):*

ԺԽՏՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Ժխտողական մոտեցում**: Թ. Աքչամը ներկայացրել է Հայոց ցեղասպանության հարցում թուրքական **ժխտողականության** դրսևորումները .... *(ՀՀ, 11.12.2019):*

ԺՈՂՈՎՐԴԱԲԵՄԱԿԱՆ, գ. **Ժողովրդական և բեմական:** Նա աշխատել է «**Ժողովրդաբեմական** պար» և «Էստրադային պար» անվանակարգերի հանձնախմբերում *(Հմց, news.am):*

ԺՈՂՈՎՐԴԱԳՈՒՍԱՆԱԿԱՆ, գ. **Ժողովրդական և գուսանական:** Միջնադարյան **ժողովրդագուսանական** երգերն այսօր բարձր բանաստեղծություններ են համարվում *(Հմց, news.am):*

ԺՈՂՈՎՐԴԱՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ած. **Ժողովրդական և հասարակական**: Տերպետրոսյանական Հայաստանի մշակույթը փորձեց դասականացված դառնալ, քոչարյանականը ներառեց շոու-բիզնեսին բնորոշ տարրեր, սարգսյանականն էլ՝ **ժողովրդահասարակական** ու ակադեմիաքաղքենիական *(Հմց, news.am):*

ԺՈՂՈՎՐԴԱԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Ժողովրդական իշխանություն:** Մարտավարական տեսանկյունից անմիջական **ժողովրդա-**

**իշխանության** գործիքներն օգտագործելը արդյունավետ է *(Հմց, news.am):*

ԺՈՂՈՎՐԴԱԽԱԲԵՈՒԹՅՈՒՆ, գ. (դիպվ.): **Ժողովրդին մոլորեցնելը:** Միլիոնավորները շփոթեցին ժողովրդականությունը ժողովրդախաբեության հետ *(Հմց, news.am):*

ԺՈՂՈՎՐԴԱՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ, ած. **Ժողովրդական-հանրապետական**: Հայտարարությանը կողմ է քվեարկել քեմալիստական «**Ժողովրդահանրապետական**» կուսակցությունը *(Հմց, news.am):*

ԺՈՂՈՎՐԴԱՇԱՏ, ած. **Մարդաշատ**: Առհասարակ, նրանք վտանգ են տեսել **ժողովրդաշատ** վայրերում Շիրազի ներկայության մեջ *(ՀՀ, 24.04.2020):*

ԺՈՂՍՊԱՌՈՒՄ, գ. (հպվ.): **Ժողովրդական սպառում**: .... Առանց սննդամթերքի և **ժողսպառման** ապրանքների վիճակի սկզբունքային փոփոխության կտապալվեն բոլոր արմատական տնտեսական բարեփոխումները *(Պոզներ, էջ 332):*

ԺՊՏԱՆՄԱՆ, ած. **Ժպիտի նմանվող**: Ատելության **ժպտանման** ծամածռություն էր .... *(Նայլ.2, էջ 5):*

## Ի

ԻՆՉԱԲԱՆ, ած. (դիպվ.): **Նա, ով անընդհատ՝ ամեն առիթով տալիս է ինչ հարցը, ինչախոս**: -Էդ ո՞ր է, էդ ի՞նչ է: -Մի շատ տանջող **ինչաբան** է, է՛, ինձ քրքրում, չի թողնում ուրիշ մտածմունք ունենամ: Էդ անտեր ինչաբանացուն ինձ տանջում է *(Հրաչօ, էջ 41):*

ԻՆՉԱԲԱՆԱՑՈՒ, ած. (դիպվ.): **Անընդհատ ինչաբան ասողի՝ ինչաբանի վերածվելու թեկնածու**: Տե՛ս ԻՆՉԱԲԱՆ-ի օրինակը:

ԻՆՉԱՀԱ՞Խ, ած. (բրբ.): **Ինչի՞ փոխարեն, ինչի փոխարեն որպես փոխհատուցում**: Ես ինչու՞ իմ աման հավը կամ իմ տակի ձին քեզ տամ: **Ինչահա՞խ,** ասա տեսնեմ *(Հրաչօ, էջ 37):*

ԻՆՔՆԱԱՐՏԱՀԱՅՏՈՒՄ, գ. **Ինքը իրեն արտահայտելը՝ ներկայացնելը, ինքնարտահայտություն: .... Ինքնաարտահայտումը** արարում է .... *(Պոզներ, էջ 587):*

ԻՆՔՆԱԶԶՎԱՆՔ, գ. **Ինքն իրենից զզվելը**: .... Բայց հոգին բզկտված էր, ճզմված՝ **ինքնազզվանքից** մինչև կարծրասիրտ հաշվիչ մեքենայական անտարբերություն *(Նայր.3, էջ 38):*

ԻՆՔՆԱԹԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄ, գ. **Ինքն իրեն թերագնահատելը**: Զգտում են հարստության և իշխանության՝ հաղթահարելու համար **ինքնաթերագնահատման** բարդույթը *(Նայր.1, էջ 75):*

ԻՆՔՆԱԹԻՌԱԽՈՒՄԲ, գ. **Ինքնաթիռների խումբ**: Երեք խուց վառվեցին .... սողունների դեմ **ինքնաթիռախմբի** մղած մարտի առաջին իսկ գիշերը .... *(ՄԲ, էջ 150):*

ԻՆՔՆԱԹՄՐԵՑՈՒՄ, գ. **Ինքն իրեն թմրեցնելը**: .... Դա մի կարճատև փախուստ է սեփական եսի կեցության տառապանքներից, կյանքի անիմաստության ու ցավի հանդեպ մի կարճաժամկետ **ինքնաթմրեցում** *(Հ1, էջ 22):*

ԻՆՔՆԱԽԱԲԿԱՆՔ, գ. **Ինքն իրեն խաբելը**: .... Նրա **ինքնախաբկանքը** շուտով ցնդում-անցնում է .... *(Հ1, էջ 22):*

ԻՆՔՆԱԿԱԶԴՈՒՐՈՒՄ, գ. **Ինքը իրեն կազդուրվելը**: **Ինքնակազդուրման** դրույթը կաշխատեր, եթե գործ ունենայինք հոգևորբարոյական էակների հետ …. *(ԳԹ, 24.05.2019):*

ԻՆՔՆԱԿԾԿՈՒՄ, գ. **Ինքնակծկվելը, (փխբ.) իր հողը, երկիրը աստիճանաբար փոքրացնելը**: Ինչ ազգ է, մարդկային ցեղի որ տեսակն է .... նայես՝ ինչքա՞ն կարելի է նահանջելով ապրել .... որտե՞ղ է դարավոր նահանջի, **ինքնակծկումի** սահմանը …. *(ԱրմՄ., էջ 216):*

ԻՆՔՆԱՀԱՄՈԶՈՒՄ, գ. **Ինքը իրեն համոզելը**: .... **Ինքնահամոզման** այս գործընթացը ստիպեց ինձ մոռանալ հետդարձի հրահանգներս *(Մոյես, էջ 245):*

ԻՆՔՆԱՀՐԱՏ, գ. **Ինքը իր գրածը հրատարակելը**: Իհարկե, գրվել են շատ խոր, բովանդակալից գրքեր, բայց դրանք լույս չեն տեսել (եթե չհաշվենք «самиздат» «**ինքնահրատը**») *(Պոզներ, էջ 314):*

ԻՆՔՆԱՁԵՐԲԱԶԱՏՎԵԼ, կբ. և չբ. **Ինքն իրենից ձերբազատվել:** .... **Ինքնաձերբազատված** ու ինքնաօտարված մտքի մեջ պատրաստ լինել ընդունելու հրաշքը, սա էր նրա նպատակը *(Հ., էջ 18):*

ԻՆՔՆԱՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ, ած. **Ինքն իրեն ճանաչելուն ուղղված:** Դու ունես հանգիստ, զուսպ և **ինքնաճանաչողական** ճաշակ *(Քինգ, էջ 131):*

ԻՆՔՆԱՄԵԿՆՈՒՄ, գ. **Ինքն իրեն մեկնելը՝ բացատրելը**։ Որքան տարբերություն կար իր ներկա և *23*-ամյա Հովհաննես Խաչատուրյանի՝ Երուսաղեմի կոնսերվատորիայի սանի դիրիժորական ինքնաբացահայտումի, **ինքնամեկնման** կապերի միջև *(Մահտես., էջ 70):*

ԻՆՔՆԱՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆ, գ. **Ինքն իր համար մտահոգվելը, մտահոգ լինելը:** Անվասայլակը հայտնվեց **ինքնամտահոգության** դանդաղկոտ կարևորությամբ փնչացնելով *(Հերբերթ, էջ 277):*

ԻՆՔՆԱՆՈՂԿԱՆՔ, գ. **Նողկանք սեփական անձի նկատմամբ**: .... էդքան տառապես մեղքի ու **ինքնանողկանքի** զգացումներից *(Ռոթ, էջ 85):*

ԻՆՔՆԱՇՈՂԱՐՁԱԿՈՒՄ, գ. **Ինքն իրեն շողարձակելը:** Դարբնելը **ինքնաշողարձակումն** էր .... *(Նալբ. 1, էջ 51):*

ԻՆՔՆԱՈԳՈՐՈՒՄ, գ. **Ինքն իր դեմ ոգորելը՝ պայքարելը**։ Այդքանը բավական էր, որ .... իրենց զգալ տային **ինքնաոգորումն** ու մեղանչանքը *(Դարյան, էջ 308)*։

ԻՆՔՆԱՍՊԱՆՈՂԱԿԱՆ, ած. **Ինքն իրեն սպանելուն հատուկ**։ .... Միշան հրաժարվեց խոստովանանքի **ինքնասպանողական** տարբերակից *(Պոլ., էջ 49):*

ԻՆՔՆԱՍՊԱՆՎԵԼ, բ. Այստեղ՝ **ոչնչանալ, կործանվել**: .... Նշանակում է առնվազն ինքնասպան լինել, ինչպես որ **ինքնասպանվում** է այսօր մեր մայրենին մեր իսկ ձեռքով *(ՀՀ, 04.06.2020):*

ԻՆՔՆԱՎԱՐՁԱՏՐՎԵԼ, բ. **Ինքն իրեն վարձատրել**: .... Առաջին իսկ առիթով **ինքնավարձատրվում** եք .... *(Ազգ, 08.02.2019):*

ԻՆՔՆԻՐԱՑՈՒՄ, գ. **Իր կողմից իրացվելը**: .... Հանրակացարանային շատ ուշգիշերային զրույցներ փոխարինվում էին **ինքնիրացման** ուղիների հանդեպ հետաքրքրվածությամբ *(Այգ., էջ 39):*

ԻՆՔՆԻՐԱՑՎՈՂ, ած. **Ինքնիրեն իրացվող**: Այդ ամենից բացի, զանազան **ինքնիրացվող** շարժումներ կային .... *(Այգ., էջ 64):*

ԻՆՔՆՕՏԱՐԱՑՈՒՄ, գ. (իմ. նորբ.): **Ինքը իրեն օտարանալը՝ օտարացնելը**: .... Ծերունուն օրորեց մենակության ու **ինքնօտարացման** պարաններից հյուսված փափուկ ճոճքում .... *(ԱրմՄ., էջ 88):*

ԻՇԱԲՈՒԾԱՐԱՆ, գ. **Էշերի բուծարան**: Պարզվեց, որ գյուղն ունի նաև **իշաբուծարան** *(Հրաչօ, էջ 81):*

ԻՏԱԼԱԼԵԶՈՒ, ած. **Իտալերեն հրատարակվող**: **Իտալալեզու** թերթի հրատարակիչ *(Տրյուղր, էջ 239):*

ԻՐԱՆԱԼԵԶՈՒ, ած. **Իրանական լեզուներով խոսող՝ հաղորդակցվող**: .... Ի հաշիվ իրականում գոյություն ունեցող **իրանալեզու** թաթերի, թալիշների .... ադրբեջանցիների թվաքանակը մեծացել է գրեթե երկու անգամ *(ՉԲ, էջ 443):*

ԻՐԱՐԱՄԵՐՁ, ած. **Իրար մերձ՝ մոտիկ**: .... Հետևեցի Դեյզիին՝ անցնելով **իրարամերձ** պատշգամբների շղթայով դեպի նախագավիթ *(Ֆից., էջ 25):*

ԻՐԻԿՆԱԽԱՎԱՐ, գ. **Իրիկնային խավար: ....** Եվ մարդկանց դեմքերը լուսավոր էին **իրիկնախավարի** մեջ .... *(Ստայնբեք, էջ 145):*

## Լ

ԼԱԶՈՒՐԱՓԱՅԼ, ած. **Լազուր փայլ ունեցող**: Այստեղից նրա աչքի առաջ բացվեց լայնատարած, այդ ժամին **լազուրափայլ** Նևան *(ԱՏ, էջ 178):*

ԼԱՄԻՆԱՑՎԱԾ, ած. **Թափանցիկ պաշտպանական թաղանթով պատված**: **Լամինացված** թղթի այս կտորը հանկարծ իր մեջ ամբարեց պատասխանատվության ողջ բեռը *(Մոյես, էջ 138):*

ԼԱՅՆԱԹԱՎ, ած. **Լայն և թավ**: **Լայնաթավ** մորուքով մարդ *(ՁԲ, էջ 298):*

ԼԱՅՆԱՃԱԽՐ, ած. **Լայն բացված թևերով ճախրող:** Տարիներ հետո պարապմունքներն էլ էին փոխվել՝ թռիչքի **լայնաճախր** բանաստեղծությունից մինչև Ջոնաթանի մասին կամացուկ խոսակցությունները…. *(ՌԲ, էջ 100):*

ԼԱՍՏԱՆԱՎԵԼ, նբ. **Լաստանավ վարել**: -**Լաստանավել** խրամների մե՞ջ .... *(Մոյես, էջ 256):*

ԼԱՎԱՇԱՅԻՆ, ած. (փխբ.): **Հարթ՝ լավաշի նման**: Երբ հոգնած շարժումներով հանեց կրծկալը, **լավաշային** կրծքերը կախ ընկան համարյա մինչև գոտկատեղը *(ԳԽ1, էջ 119-120):*

ԼԱՔԱՓԱՅԼ, ած. **Լաքի փայլ ունեցող**: Ծնվեց նէպը, **լաքափայլ** կոշիկներով …. *(ՄԲ, էջ 311):*

ԼԵԶՎԱՄԵՐԱՆ, ած., գ. (փխբ.): **Լեզուն ստեղծողը**: Գյուղի բարբառն իմ **լեզվամերանն** է, ինչպես մորս սանահնաահնիձորյան զրույցի փափուկ շեշտը .... *(Հրաչօ, էջ 28):*

ԼԵԶՎԱՈՐԱԿ, գ. **Լեզվական որակ**: Պետք էր ձևավորել հայերենի մի այնպիսի **լեզվաորակ,** որն ընդունվեր բոլորի կողմից *(ՊԲՀ, 3, 2019):*

ԼԵԶՎԱՏԻՐՈՒՅԹ, գ. **Լեզվի գործառության տիրույթ, ոլորտ:** Գեղարվեստական վավերագրության **լեզվատիրույթում** նկատելի են հետևյալ վերջնաբաղադրիչներով մասնակաղապարներ .... *(ԱշԳ, էջ 224):*

ԼԵՌՆԱԼԵԶՈՒ, ած. (փխբ.): **Լեռներով խոսող**: Լեռներն իրենց հի՛ն զրույցներն ունեն: **Լեռնալեզու** երկիր ենք *(Հրաչօ, էջ 23):*

ԼԵՌՆԱՊԱՇՏ, ած. **Լեռները պաշտող:** Ես ինքս էլ սաստիկ **լեռնապաշտ** եմ…. *(ԹԺՀ, էջ 77):*

ԼԵՌՆԱՐՁԱՆ, գ. **Լեռան վրա կանգնած արձան**: Արամը կանգնել էր մի բարձր քարի վրա, ոնց որ **լեռնարձան** .... *(ՎԻ, էջ 183):*

ԼԻԱԿՈԿՈՐԴ, ած. **Լիաձայն, լիահունչ**: Սա էր Սեյդիի երգածը՝ **լիակոկորդ** ալտի աhարկու մորմոքով .... *(ԱՄ, էջ 279):*

ԼԻՔՈՏ, ած. (խսկց.): **Մի քիչ հաստ՝ գիրուկ մարմնով**: Իտալիայում էլ Ջոբսը անմիջապես չհավանեց Apple-ի տնօրենին՝ փոքր-ինչ **լիքոտ** մի մարդու .... *(Այզ., էջ 208):*

ԼԾԱԹԱՄԲ, գ. **Լծելու ժամանակ դրվող թամբ**: .... Միաչքանին նորից թաքցրել էր ուրիշի **լծաթամբը** *(ՎԲ, էջ 25):*

ԼՃԱՉԱՓ, ած. **Լճի մեծություն ունեցող**: Մեր թագավորը թռել է քանիհինգ զազ լայնությամբ մի մե՜ծ, մի խո՜ր, մի լա՜յն, մի **լճաչափ** գետ *(Հրաչօ, էջ 104):*

ԼՅՈՒՍՏՐԻՆԵ, ած. **Լյուստրինից (բրդե գործվածքի տեսակ) կարված**: .... Դուրս եկավ **լյուստրինե** զգեստով մի ծերուկ .... *(ՄԲ, էջ 25):*

ԼՈԳԱՏԱՇՏ, գ. **Լոգանքի տաշտ**: Ես նստեցի **լոգատաշտի** մեջ .... *(Հանդկե, էջ 12)*:

ԼՈՂԱԶԳԵՍՏԱՎՈՐ, ած. **Լողազգեստ հագած**: .... Կարծես թե աչքի ծայրով էլ չի տեսնում **լողազգեստավոր** կանանց *(ԳԹ, 18.10.2019):*

ԼՈՂԱԹԱԽՏ, գ. **Լողափին տեղադրված թախտ:** Հանրային լողափերի մուտքը և **լողաթախտերը** անվճար են լինելու *(Հմց, aravot.am):*

ԼՈՐՁԱԿՅԱՑ, ած. **Լորձի մեջ ապրող՝ կենող**: Տե՛ս ԼՈՐՁԱՌԱՏ-ի օրինակը:

ԼՈՐՁԱՄԱԾ, ած. **Լորձով պատված**: Տե՛ս ԼՈՐՁԱՌԱՏ-ի օրինակը:

ԼՈՐՁԱՌԱՏ, ած. **Լորձը առատ**: Սակայն ինչե՞ր են սպասում քեզ այնտեղ, ի՜նչ **լորձառատ** գիշերներ, լորձամած առավոտներ, և դու՝ լորձասուզ, լորձակյաց, երջանիկ ու պարարտացող *(ԳԽ2, էջ 10):*

ԼՈՐՁԱՍՈՒՅԶ, ած. **Լորձի մեջ սուզված**: Տե՛ս ԼՈՐՁԱՌԱՏ-ի օրինակը:

ԼՈՐՁԱՐՅՈՒՆ, ած. **Արյունը լորձի նման, լորձանման արյուն ունեցող**: **Լորձարյուն** խեղճիկ *(ԳԽ2, էջ 10):*

ԼՈՐՁՆԱԽԵՂԴ, ած., մկբ. **Լորձունքից խեղդվելով**: Շունը .... **լորձնախեղդ** խրեց ատամները կրակովյանի մեջ ու մեկ-երկու՝ խժռեց *(ՄԲ, էջ 158):*

ԼՎԱՑԱՍՐԱՀ, գ. **Լվացվելու սրահ, լվացասենյակ**: Եվ վերջապես՝ ահա մի մարդու հետ իմ հանդիպման պատմությունը, որը **լվացասրահում** պատահեց *(Վերտես, էջ 177):*

ԼՐԱԳՐԱՍԱՅԼԱԿ, գ. **Լրագր(եր)ի (վաճառքի, տեղափոխման նն) սայլակ**: **Լրագրասայլակը** ման է ածում բոլորին .... *(ՄԲ, էջ 298):*

ԼՐԱԳՐԱՔԱՂՎԱԾՔ, գ. **Քաղվածք լրագրից**: .... Դուրս թափվեցին թերթերից կտրտված **լրագրաքաղվածքներ** *(Բրաուն, էջ 45):*

ԼՐԱՀԱՏԿԱՑՈՒՄ, գ. **Լրացուցիչ հատկացում**: .... **Լրահատկացումներ** եմ անում գնդապետին .... *(Բորգեն, էջ 74):*

ԼՐԱՀԵՏԱԽՈՒԶՈՒՄ, գ. **Լրագրողական հետախուզում:** Կատարվում է **լրահետախուզում***(ՀՀ, 22.07.2020):*

ԼՐԱՏՎԱԿԵՆՏՐՈՆ, գ. **Լրատվական կենտրոն**: 1972թ. .... հիմնադրել են «DCTV»-ն՝ .... Ամերիկայի ամենամեծ և ճանաչված հասարակական **լրատվակենտրոնը** *(Հմց,, vanadzorinfotun. blogspot.com):*

ԼՐՏԵՍԱՄԱՆԻԱ, գ. (փխբ.): **Ամենուր լրտեսներ տեսնելու, բոլորին լրտես համարելու հիվանդագին զգացում**: Ստալինի անբուժելի հիվանդությունը՝ **լրտեսամանիան,** ներսից քայքայում էր երկիրը *(Աղաբ., էջ 109):*

ԼՐՏԵՍԱՈՐՍ, գ. (փխբ.): **Ազգաբնակչության մեջ ամենուր լրտեսներ տեսնելն ու «որսալը»**: Ներքաղաքական ոլորտի «մաքրման» դաժան գործընթացն ավելի ինքնաոչնչացում էր, քան՝ **լրտեսաորս** *(Աղաբ., էջ 26):*

ԼՈՒՍԱՁԱՅՆԱՅԻՆ, ած. **Լուսային և ձայնային**: .... Ջոբսն ակումբ էր ստեղծել՝ **լուսաձայնային** շոուներ բեմադրելու ու նաև օյիններ խաղալու համար *(Այզ., էջ 29):*

ԼՈՒՍԱՃԱՌԱԳԵԼ, չբ. **Լույս ճառագել**: .... Ահա՛ թե ինչու էր **լուսաճառագում** նրա դեմքը՝ սպիտակած մազերի ներքո *(Հ1, էջ 109):*

ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒՀԻ, գ. **Կին լուսանկարիչ**: Երբ ամսագրի **լուսանկարչուհին** սկսել էր լուսանկարել Ջոբսին, հեգնալի կոպտել էր նրան ու դադարեցնել տվել *(Այզ., էջ 329):*

ԼՈՒՍԱՍՏԵՂԾՎԵԼ, նբ. **Լույսից ստեղծվել:** Նրանք դուրս եկան ծամծմված բախտի բեկվածքից ու նորից **լուսաստեղծվեցին** *(Միկ., էջ 47):*

ԼՈՒՍՆԱԿԱԹ, գ. (փխբ.): **Կաթնագույն լուսնալույս**: .... Քրքջաց կինը՝ ցնցերով կրծքերը լուսամուտից իջնող **լուսնակաթի** մեջ *(ԳԽ1, էջ 8):*

ԼՈՒՍՆԱՃԱՌ, ած. **Լուսնին նվիրված ճառ**: Տե՛ս ԱՐԵՎԱՃԱՌ-ի օրինակը:

ԼՈՒՍՆԵՐԵՍԻԿ, ած. (նվազափղքշ.): **Լուսնի նման երես, դեմք ունեցող**: .... **Լուսներեսիկ** անուշ բալիկ …. *(ՎԲ, էջ 266):*

## Խ

ԽԱՂԱՀԱՄԱԿԱՐԳԻՉ, գ. **Խաղեր խաղալու համակարգիչ**: .... Այլևս չենք կարողանում մյուս օրերի պես հանկարծակի զարթնել ու հերթով նստել **խաղահամակարգչի** առջև *(Լ. Շահնուր, էջ 23):*

ԽԱՂԱՐԿՈՒՀԻ, գ. **Կին խաղարկու**: Իսկ հարճը շրջիկ **խաղարկուհի** չէ, ինչպես վարձակը, այլ պալատում ապրող «երկրորդական կին» *(ՊԲՀ, 2020, 1, էջ 84):*

ԽԱՄԱՃԻԿԱՅԻՆ, ած. 1. **Տիկնիկային** 2. (փխբ.). **Անկամ, թուլակամ:** .... Առաջարկում էի ստեղծել իշխանության այնպիսի կառուցվածք, որը **խամաճիկային** չդառնա *(ՋԲ, էջ 175):*

ԽԱՉԱԶՈՒՐԿ, ած. **Խաչ չունեցող, խաչից զրկված**: Ոչ մի խաչ չկա .... **Խաչազուրկ** տարածքն անտագնապ է կարծես *(ԳԽ2, էջ 34):*

ԽԱՎԱՁԵՐԾ, ած. **Խավից՝ աղվամազի բարակ շերտից զուրկ**: Դրանց տեղերում հիմա երկար, ջրից մզված **խավազերծ** բծեր էին .... *(Ֆոլք., էջ 13):*

ԽԱՎԱՐԱՍԵՎ, ած. **Խավար և սև**: **Խավարասև** Եգիպտոս *(Սթոուն, էջ 107):*

ԽԱՐԱԳՐԵԼ, բ. **Այրման միջոցով փայտի վրա գրել կամ նկարել, խարազծել**: Մանկական զաղութում սովորեցի փայտի վրա **խարագրել** *(ԳԹ, 21.10.2016):*

ԽԱՐՈՒՅԿԱԲՈՑ, ած. (բնստ., փխբ.): **Խարույկի բոց հիշեցնող:** Տե՛ս ԱՌՈՒՅԳԱԲՈՐԲ-ի օրինակը:

ԽԵԼԱԿԵՐՏՎԱԾՔ, գ. (փխբ.): **Խելացիության կերտվածք՝ մարմնավորում**: Նրան առավել նվազ բնորոշ էր նաև ինքնօրինակ ու խորամիտ փիլիսոփայի **խելակերտվածքը** *(Ուելբեք, էջ 352)*:

ԽԵԼԱՌԱՎԱՐԻ, մկբ. (խսկց.): Այստեղ՝ **հիմարավուն. Խելառի նման, ինչպես խելառը**: «Ես ինձ բնորոշ ձևով՝ **խելառավարի,** տարվել էի դրանով» - ասել էր նա *(Այգ., էջ 41):*

ԽԵՂԱՁԵՎԵԼ, բ. **Ձևախեղել, աղճատել**: Ամենքի համար պարզից էլ պարզ է, թե ազգային մշակութային դաշտն ովքեր և ինչպես են **խեղաձևել,** ապականել, ամայացրել, դարձրել գրպանում ծլնգացող գրոշ *(ԳԹ, 22.03.2019):*

ԽԵՆԹԱՀՈՒՅԶ, ած. (բնստ.): **Հախուռն, հույզերով լի:** Ժայթքել է սիրտը քո ըմբոստ, **խենթահույզ** քո եռքը, Չարենց *(ԼԴ 1, էջ 166):*

ԽԵՆԹԱՎԱՌՎԵԼ, բ. (բնստ., փխբ.): **Հախուռն հուզել և հուզվել:** Ա՛խ, երկու թույա, ախ, երկու կին// **Խենթավառվում** են լուսայգի մեջ *(ԼԴ 1, էջ 148):*

ԽԵՎԱԽՈՐՀՈՒՐԴ, ած. (բնստ., փխբ.): **Հակասուն խորհուրդ պարունակող:** Ժայթքել է նա **խևախորհուրդ**// Ու թե հիմա նա չի ժայթքում-// Դա մեծ թախիծն է իմ հոգու *(ԼԴ 1, էջ 144):*

ԽԼԱՎՈՒՆ, ած. **Խուլ կերպով հնչող**: Սրտի զարկերը **խլավուն** են *(ՄԲ, էջ 171):*

ԽՂՃԱՏԱՐԱԾ, ած. (բնստ.)։ **Խիղճ, զթասրտություն տարածող:** Բայց **ես խղճատարած**, ուխտյալ պատարագով// Խնդրել եմ, որ լսեն ձայնը Տիրոջ *(ԼԴ 1, էջ 161):*

ԽՃՃԱԿՈՐՈՒՅՍ, ած. **Ամբողջովին խճճված:** Զառամյալ կաղնու **խճճակորույս** ճյուղերի միջից Հարրին առջևում մի բացատ տեսավ *(Ռոուլ., էջ 213):*

ԽՆԱՄԻԱՍԵՐ, ած. **Խնամի՝ խնամիներին սիրող**: Գե՞լ ենք, գազա՞ն ենք, մարդասե՞ր չենք, **խնամիասե՞ր** չենք։ Հաց դնել չգիտե՞նք *(Հրաչօ, էջ 59):*

ԽՆԴՄՆԴՈՑ, գ. **Խնդմնդալը**: .... Մի բան ճարել-գտնելու մեջ ու իր ուսով ու շալակով, թաքուն **խնդմնդոցով** իր փառահեղ էշով տուն բերող պապը .... կորցրեց .... իրենից էլ թանկ ու աշխարհից էլ թանկ էշը *(Հրաչօ, էջ 111):*

ԽՆԴՐԱԴՐԵԼ, բ. **Խնդիր առաջադրել**: Ո՞վ է ժամանակակից հայ մարդը՝ **խնդրադրում** է Նանեն .... *(ԳԹ, 06.03.2020):*

ԽՆՁՈՐԱԿԱՐԿԱՆԴԱԿ, գ. **Խնձորով՝ խնձորե միջուկով կարկանդակ**: .... Խոհանոցի սեղանին խենթացնող բույր էր արձակում **խնձորակարկանդակը** *(ՆԱբ., էջ 49):*

ԽՈԶԱԲՈՒԴ, գ. **Խոզի բուդ**: .... Նա գրկեց ինձ **խոզաբդի** չափ ձեռքերով *(Պոզներ, էջ 53)*:

ԽՈԶԱԳՐԻՊ, գ. **Գրիպի տարատեսակ**: Հիշեք, որ 2009 թ. **խոզագրիպը** տարածվածության առումով մոլորակային մասշտաբներ ստացավ …. *(Իր., 15.01.2019):*

ԽՈՆԱՎԱԶՐԿՈՒՄ, գ. **Խոնավությունից զրկելը**: .... Կարող է կտրուկ **խոնավազրկում** տեղի ունենալ .... *(Վիան, էջ 29):*

ԽՈՇՈՐԱՏԱՄ, ած. **Բանալու՝ ատամանման խոշոր ելուստ(ներ) ունեցող**: Խավարի ու ապակու հայելու մեջ նա տեսնում էր սրբացած մի դեմք, որից խլել են .... չիրկիզվող պահարանի ծանր ու **խոշորատամ** բանալին *(ՎԻ, էջ 281):*

ԽՈՇՏԱՆԳԱՐԱՆ, գ. **Խոշտանգելու տեղ**: .... Մասնավորապես հենց դա էլ բացատրելի է դարձնում, թե ինչու են նրանք տանջվել

ու տանջվում այդ երկընտրանքի **խոշտանգարանում** *(Պոզներ, էջ 438):*

ԽՈՍՔԱԲՈՒՅՐ, ած. (բնստ., փխբ.): **Խոսքի բույր՝ խորհուրդ ունեցող:** Եվ **խոսքաբույր** աղոթքների երամով// Գալիք սփռեց մեղքազերծված, սփռեց ցոլք *(ԼԴ 1, էջ 122):*

ԽՈՍՔԵՐԱՆԳ, գ. **Խոսքի երանգ:** Նրա սեփական **խոսքերանգը** ցեցակեր գործողության է նման *(Ելինեկ, էջ 87)*:

ԽՈՏՀՆՁԱՅԻՆ, ած. **Խոտհնձի ժամանակվա**: **Խոտհնձային** մանկության տարիներին տների առաջ ձողեր էին տնկած .... *(ՎԲ, էջ 61):*

ԽՈՐԱԳՐԻՉ, գ. **Խորագիրը գրող, նկարազարդող: Խորագրիչներն** ու հետազոտողները նստած էին անձնյուր սեղանի մոտ .... *(Էկո, էջ 108):*

ԽՈՐՀԱՏԱԿ, ած. **Հատակը խոր, խոր հատակով**: .... Չի՞ ասի՝ հապա մեր սերը, որն իր գաղտնիությամբ կարող է չափվել միայն **խորհատակ** ծովի հետ .... *(ՆԱդ., էջ 85):*

ԽՈՐՀՐԴԱԱՄԵՐԻԿՅԱՆ, ած. **Խորհրդային Միության և ԱՄՆ-ի միջև առկա**: Իսկ նամակում **խորհրդաամերիկյան** հարաբերություններում առանցքային դեր էր վերապահվում Հարրիին *(Աղաբ., էջ 262):*

ԽՍՏԱԼՈՒՐՋ, ած. **Խիստ և լուրջ**: Նրանք այնպես ձիգ են, սլացիկ ու **խստալուրջ** *(ՁԲ, էջ 269):*

ԽՍՏԱԿԱՐԳ, ած. **Խիստ կարգով շարված**: Պուրիտանյան զորքի **խստակարգ** տողաններ *(Սթոուն, էջ 42):*

ԽՍՏԱՃԱՇԱԿ, ած. **Խիստ ճաշակ ունեցող՝ պահանջներ ներկայացնող, բծախնդիր**: .... **Խստաճաշակ** խմբագրին հետ կանչեցի .... *(ՎԻ, էջ 285):*

ԽՍՏԱՎԱՐԺԱՆՔ, գ. **Խիստ, կյանքի դժվար պայմաններին հարմարվելուն ուղղված վարժանք:** Դու շատ արագ յուրացրիր բոլոր **խստավարժանքները** .... *(Հ1, էջ 21):*

ԽՍՏԱՎՈՒՆ, ած. **Փոքր-ինչ խիստ**: .... **Խստավուն** հայացքով ու ջրիկ-կապույտ աչքերով՝ նա թանգարանային հին դիմանկար էր հիշեցնում .... *(Կերտես, էջ 36):*

ԽՐԱՏՈՒՍՈՒՅՑ, գ. **Խրատներ ուսուցանող՝ սովորեցնող:** Դու չես կարող բառերի ու **խրատուսույցների** միջոցով հաղորդել ու արտահայտել այն, ինչը քեզ վիճակվել է .... *(Հ1, էջ 42):*

ԽՐԹԱՍԱԼԻԿ, գ. **Խրթխրթան բլիթ:** Դա պարզապես նշանակում էր բրնձի **խրթասալիկ** *(ԱՄ, էջ 21):*

ԽՐՁԱԿԻՐ, ած. **Խուրձ կրող**: .... Նորից սկսեց **խրձակիր** սևը *(ՄԲ, էջ 174):*

ԽՈՒԹԱՌԱՏ, ած. **Շատ խութերով, խութաշատ**: Ստեղծագործողի հոգով լցնելով **խութառատ** այդ ծովը …. *(Իր., 01.02.2019):*

ԽՈՒՃԱՊԱԾԻՆ, ած. **Խուճապ առաջացնող**: Ասացին՝ գրառումս **խուճապածին** է *(Հմց, Tert. am):*

ԽՈՒՃՈՒՃՄԱԶԻԿ, ած. (փխբ.): **Խուճուճ մազեր ունեցող՝ մազերով**: .... Սիրունիկ, **խուճուճմազիկ,** աչքաբաց հարսիկ *(ԳԽ2, էջ 7):*

## Ծ

ԾԱԽՍԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Արդյունավետ ծախսային գործառույթ,** այստեղ՝ **վարկերի արդյունավետ ծախսում**: Հիմնական աղբյուրներից մեկը՝ վարկային **ծախսարդյունավետություն** *(ՀՀ, 29.11.2019):*

ԾԱԾԿԱԴՈՂ, գ. **Ռետինե ավտոդող:** Ընկերությունը կազմակերպելու է նաև մի խումբ այլ ապրանքների մակնշման գործընթացը, մասնավորապես՝ նոր **ծածկադողեր** և անվադողեր *(Հմց, news.am):*

ԾԱԾԿԱՀՈՒՇ, գ. (հոգբ.): **Թաքցրած հուշ**: Երդվում եմ, սա ոչ փչոց է, ոչ էլ **ծածկահուշ** …. *(Ռոթ, էջ 94):*

ԾԱԿԻՉ, ած. (փխբ.): **Շեշտակի, սուր, ծակող**: **Ծակիչ** հայացք *(ՆԱդ., էջ 72):*

ԾԱՂԿԱՇՈՒԿԱ, գ. **Ծաղիկների շուկա. վայր, որտեղ ծաղիկներ են վաճառում**: **Ծաղկաշուկա** խաչմերուկներից մեկում Բենը կանգնեցրեց մեքենան .... *(ՆԱդ., էջ 152):*

ԾԱՂԿԱՔԱՂԵԼ, նբ. (փխբ.): **Ծաղկաքաղ անել**: **Ծաղկաքաղել,** համեմատել, դասդասել է, նաև ավելացրել իր ժամանակի վավերագրությունը .... *(ԱրմՄ., էջ 48):*

ԾԱՂՐԱԶՐՈՒՅՑ, գ. **Ծաղրական, ծաղրող զրույց**: .... Պատմեցի մի **ծաղրազրույց** .... *(Գրին, էջ 264):*

ԾԱՂՐԱՊԱՐ, գ. **Պար՝ ծաղրական շարժումներով՝ մեկին ծաղրանքով ընդօրինակելով**: Տղամարդկանցից մեկը **ծաղրապար** է տալիս *(ՎԻ, էջ 175):*

ԾԱՂՐԱՏՈՆ, գ. **Ծաղրական խոսելաձև**: Բանահյուսական կերպարները **ծաղրատոնով** խրատներ էին շշնջում Ակիմի ականջին .... *(Միկ., էջ 73):*

ԾԱՂՐԱՔԱՆԴԱԿԵԼ, նբ. **Ծաղրաքանդակ անել, որևէ երևույթ ծաղրական, ծիծաղելի ներկայացնել**: Իրավունք չունես հարևաններին **ծաղրաքանդակելու** *(ՀԼ, էջ 102):*

ԾԱՄԱԾՌՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Ծամածռված լինելը, ծամածռված վիճակը**: .... Կարևորը դեմքի **ծամածռվածությունը** համոզիչ ցույց տալն էր .... *(ՆԱբ., էջ 69):*

ԾԱՄՈՆԱԳՈՒՆԴ, գ. **Ծամոնի գունդ**: Երբ Ջինը տուն եկավ, իսկույն հարցրեց, թե **ծամոնագունդը** որտեղից եմ ձեռք գցել *(ՀԼ, էջ 52):*

ԾԱՅՐԱՏԱՏԱՆՈՒՄ, գ. **Տարբեր ծայրերի տատանումներ**: Այսպիսով՝ այդ երկու ուժերը նույն ալիքի **ծայրատատանումներն** էին .... *(ԱՏ, էջ 101):*

ԾԱՆՐԱԹՐԹԻՌ,ած. **Ծանր, դժվար թրթռացող**: .... **Ծանրաթրթիռ** կոպերը թարթելով ու ծերունական ծանրաբարո իմաստնությամբ ավելացրեց .... *(Ամիր., էջ 71):*

ԾԱՆՐԱԼՈՒՌ, մկբ. (բնստ.): **Ծանր և լուռ**: **Ծանրալուռ** են քայլում մարդիկ-//Նույնն են հոգսով և միասին *(ԼԴ 1, էջ 128):*

ԾԱՆՐԱԾԱՎԱԼ, ած. Այստեղ՝ **խոր բովանդակություն ունեցող**: .... Ես **ծանրածավալ** եմ *(Նայր.3, էջ 3):*

ԾԱՆՐԱԿԱՐՄԻՐ, ած. (բնստ., փխբ.): **Ծանր՝ մուգ՝ կարմիր:** Դուրս քաշեց հետո նա// Երկաթե երազն իր **ծանրակարմիր** ... *(ԼԴ 1, էջ 269):*

ԾԱՌԱԿՏՈՐ, գ. **Ծառի կտոր՝ հատված**: Նա **ծառակտորը** դարձրեց կոճղ .... *(Սթոուն, էջ 253):*

ԾԱՌԱՀԱՆ ԱՆԵԼ, բ. **Ծառերը հանել, ծառերից ազատել**: .... Երկու հողակտոր **ծառահան** արեց ու վարեց *(ՎԲ, էջ 223):*

ԾԱՌԱՅԱՍԵՆՅԱԿ, գ. **Ծառայությունների համար նախատեսված սենյակ, աշխատասենյակ**: .... Վիրահատել **ծառայասենյակու՞մ** *(ՄԲ, էջ 174):*

ԾԱՌԱՅԵԼԻՔ, ած. **Որը պիտի ծառայի որպես...**: Ջոքսը դողում էր ամեն ինչի վրա՝ ձնակերպումներից մինչ ֆոնային գույն **ծառայելիք** կանաչի նրբերանգը *(Այգ., էջ 261):*

ԾԱՌԱՑՈՂՈՒՆ, գ. **Ծառի ցողուն**: Ինչպես որ խոնավությունն է ներթափանցում մահացող **ծառացողունի** խորքը, այդպես էլ՝ աշխարհն ու ծուլությունը կամաց-կամաց թափանցեցին Սիդհարթայի հոգու մեջ .... *(Հ1, էջ 86):*

ԾԵՂԱՉՈՐՍՈՒ, գ. **Ծեղերից պատրաստված չորսու**: Ծիծեռնակները սվվոցով ներս էին մտնում պատուհանից՝ պոչները քսելով **ծեղաչորսուներին** .... *(ՎԲ, էջ 60):*

ԾԵՐԵԼ, չբ. (իմ. նորբ.): **Ծերանալ**: Վիզ են ծռում մինչև մի հոգի, երկու հոգի, մի ավտոբուս ժողովուրդ իջնում է: Պիտի ապրեն, պիտի **ծերեն** *(Հրաչօ, էջ 142):*

ԾԵՓԱՄԱԾԻԿ, գ. **Ծեփելու մածիկ, մածան, մածուցիկ նյութ**: Երբեմն Ուիլը գույնը միանգամից զցում էր դառնալով **ծեփամածիկի** պես դժգույն *(Մոյես, էջ 97):*

ԾԵՓԱՔԱՆԴԱԿ, ած. **Ծեփելով քանդակված**: .... Վառվում էր **ծեփաքանդակ** առաստաղի տակ .... *(ՄԲ, էջ 167):*

ԾԻԾԱՂԱԿՑԵԼ, չբ. **Մեկի հետ ծիծաղել**։ Նա ջանք թափեց՝ քաղաքավարությունից դրդված **ծիծաղակցելու** համար *(Նայր.2, էջ 173):*

ԾԻՍԱԱՐԱՐՈՂԱԿԱՆ, ած. **Ծիսակարգային-արարողական:** Տե'ս ԱՌԱՍՊԵԼԱԴԻՑԱԲԱՆԱԿԱՆ-ի օրինակը:

ԾԻՍԱՀԱՄԱԼԻՐ, գ. **Ծեսերի ամբողջությունը, համալիրը**: Միջինքի **ծիսահամալիրում** եղել են ակնկալվող բարիքը կանխատեսնելուն ուղղված ծեսեր *(ՊԲՀ, 3, 2019):*

ԾԻՍԱՇԱՐ, գ. **Ծեսերի ամբողջությունը:** Տոնի **ծիսաշարի** գաղափարական հենքը բնապաշտական պատկերացումներն ու հավատալիքներն էին …. *(ՊԲՀ, 2020, 1, էջ 168):*

ԾԻՍԱՍՈՎՈՐՈՒԹԱԿԱՐԳ, գ. **Որևէ ոլորտում ընդունված ծեսերի, ավանդույթների համակարգ:** …. Որքանով են անցյալի ավանդույթները պահպանվել տոնի ներկայիս **ծիսասովորութակարգում** *(ՊԲՀ, 2020, 1, էջ 169):*

ԾԻՐԱՆԱՈՍԿԵԳՈՒՅՆ, ած. **Ծիրանի գույնի նման ոսկեգույն**: Դրա հարթ **ծիրանաոսկեգույն** մակերեսն անհամաչափորեն արտացոլում էր լույսը …. *(Բրաուն, էջ 267):*

ԾԼԱԺԱՅԹՔ, ած. (բնստ., փխբ.): **Նոր կյանք բերող:** Դու սերնդահունդ, բույլ դու **ծլաժայթք**,// Հաստատության ուժ, հաստատության ժայռ ….*(ԼԴ 1, էջ 151):*

ԾԽԱԳՈԼՈՐՇԻ, գ. **Ծխի գոլորշի**: Այս ու այնտեղ հնամաշ կաշվի ու ձիթենու տերևների **ծխագոլորշուց** տատանվող բույրեր էին կանգնած …. *(Վիան, էջ 168):*

ԾԽԱԽԵՂԴՎԵԼ, բ. **Ծխից խեղդվել**: Այսպիսով՝ Վարսիկ մայրիկի լռելուց, միգուցե Գրիգորի **ծխախեղդվելուց** հետո, մեր շենքից տարածվեց, ու ամբողջ փողոցում մարդիկ սկսեցին *2*-րդ լեզու սովորել …. *(Լ. Շահնուր, էջ 31):*

ԾԽԱԽՈՏԱՄՈՒԽ, գ. **Ծխախոտի ծուխը**: …. **Ծխախոտամուխը** գլուլ մազեր է գծագրում ներս ճաղատին …. *(Լ. Շահնուր, էջ 193):*

ԾԽԱԽՈՏԱՓՈՇԻ, գ. **Ծխախոտի փոշի:** …. Իսկ հատակին տամկացած **ծխախոտափոշի** էր գնդվել *(Ստայնբեք, էջ 197):*

ԾԽԱԿԱՐՄԻՐ, ած. **Կարմրավուն ծուխ արձակող**: .... Խըր-ճիթներում սկսել էին երևալ **ծխակարմիր** կրակներ .... *(Բունին, էջ 371):*

ԾԽԱԿԵՐՊ, ած. **Ծխի նմանություն ունեցող, ծխանման**: .... Մետաղագույն ամպերը երկար-երկար խրձվում էին **ծխակերպ** մշուշի մեջ ... *(ՎԲ, էջ 357):*

ԾԽԱՊԱԼԱՐ, գ. **Ծխի պալար՝ պարան՝ քուլա**: Նա .... ծխա-մորճը լցրեց ու սկսեց գոհունակ տեսքով **ծխապալարներ** բաց թողնել .... *(Սթոուն, էջ 238-239):*

ԾՂՈՏԱՁՈՂ, գ. **Ծղոտի ձող**: Դեղատան երկու դեղին **ծղո-տաձողերը** նրա բերանից  իջնում էին ուղիղ դեպի շագանա-կագույն թղթե տոպրակի խորքը *(ՀԼ, էջ 235):*

ԾՄԱԿԱՀԱՄ, գ. (խսկց.): **Ծմակներին՝ անտառներին բնորոշ համի զգացում**: Ամռանը բարակում, գետ չի մնում: Ջրերից սարահամ չի գալիս, **ծմակահամ** չի գալիս *(Հրաչօ, էջ 146):*

ԾՆՆԴԱՆՇԱՆ, գ. **Ի ծնե ժառանգած հատկանիշ**: Խրուշչովը շատ թերություններ ուներ, նա հանդիսանում էր համակարգի արդյունքն ու մի մասը և այլանդակված էր նրա բոլոր **ծննդա-նշաններով** *(Պոզներ, էջ 423):*

ԾՈՌՆԱՏԵՐ, ած. **Ծոռների տեր, ծոռներ ունեցող**: - Վեց-յոթ-ութ-ինը փոր երեխա է բերել, թոռնատեր է, **ծոռնատեր** .... *(Հրաչօ, էջ 51):*

ԾՈՎԱԹԱՑ, ած. (բնստ., փխբ.): **Ծովի խոնավություն ունեցող:** Բախտավոր նոր լուսայգի// **Ծովաթաց**  մովն է վրադ *(ԼԴ 1, էջ 116):*

ԾՈՎԱԿԱՊՈՒՅՏ, ած. **Ծովին բնորոշ կապույտ:** Քալփըրնիան **ծովակապույտ** շղարշե զգեստով ու լայնեզր գլխարկով քայլում էր Ջիմի ու իմ արանքով *(ՀԼ, էջ 181):*

ԾՈՎԱՀԵՆԱՎԱՐԻ, մկբ. **Ծովահենի նման, ծովահենաբար, ծովահենորեն**: .... Գլխին ... **ծովահենավարի** կապած թաշկինակ *(ՎԲ, էջ 148):*

ԾՈՎԱՊԱՐ, գ. (բնստ., փխբ.): **Ծովի ջրերի շարժումը հիշեցնող պար:** Գետը տանում էր վարդություն վարար,// Ծալ-ծալ ծփում էր **ծովապարը** քո *(ԼԴ 1, էջ 120):*

ԾՈՎԱՓՐՓՈՒՐԵ, ած. **Ծովափրփուրից (քար է) պատրաստած:** Ծերուկ Թոմի անմազ այտոսկրերի մաշկը **ծովափրփուրե** ծխափողի պես թուխ էր .... *(Ստայնբեք, էջ 77):*

ԾՌԱՊԱՏ, ած. **Ծուռ պատերով՝ պատեր ունեցող**: .... **Ծռապատ** այդ տան մեջ .... երկու բնակիչ էր ավելացել …. *(ՎԲ, էջ 21):*

ԾՈՒՌԺՊԻՏ, ած. **Անուշ ժպիտ ունեցող՝ ժպիտով**: Մի նարինջ էլ, սակայն, դրսում էր մնացել՝ **ծուռժպիտ,** նիհար մանչուկի ձեռքին …. *(ԳԽ1, էջ 166):*

## Կ

ԿԱԴՐԱԲԱՇԽՈՒՄ, գ. **Կինոկադրերի բաշխում**: .... Զանձրալի նկարահանումը նյութը էլ ավելի դեպրեսիվ էր դարձրել, քան նախատեսվում էր **կադրաբաշխումով** *(Այգ., էջ 211):*

ԿԱԹՆԱՁՅՈՒՆԵ, ած. **Կաթին և ձյանը բնորոշ սպիտակ գույն ունեցող**: .... Բոլորն արդեն զանգրացել էին **կաթնաձյունե** սպիտակով .... *(Բունին, էջ 112):*

ԿԱԹՆԱՇԵՐՏ. գ. **Կաթնագույն (ամպի) շերտ:** Թռչում էին ասես **կաթնաշերտի** վրայով *(ՋԲ, էջ 113):*

ԿԱԹՆԱՔԱՂՑՐԱՎՈՒՆ, ած. **Կաթի քաղցրություն ունեցող:** Պնդուկը մատղաշ էր՝ **կաթնաքաղցրավուն** համով *(ՆԱբ, էջ 237):*

ԿԱԼԵՐԳ, գ. **Կալի երգ**: Հորեղբայր Մամից լսել է Լոռու հորովելները, սայլերգերն ու **կալերգերը** («Գութանի երգը», «Կալի երգը», «Գութան») *(ԳԹ, 22.03.2019):*

ԿԱԼԻՖՈՌՆԻԱԿԱՆ, ած. **Կալիֆոռնիայի**: Թիմը, Լոս-Անջելես տեղափոխվելով, մոգականությունն անհետացավ, զոլորշիացավ **կալիֆոռնիական** տաք արևի տակ …. *(Պոզներ, էջ 90):*

ԿԱԽԱԿԱՊ, գ. **Զուգագուլպաները կախված (հագնված) վիճակում կապելու՝ ամրակապելու հարմարանք**: Չեմ պատրաստ-

վում ամեն գիշեր սեղմիրան և **կախակապերով** զուգագուլպա հագնել *(Մոյես, էջ 241):*

ԿԱՂԱՄԲԱԳՈՒՅՆ, ած. **Կաղամբի գույնի**: Երբ մանկական ննջարանը վերանորոգում էին, մայրս պնդեց, որ պատերը ներկեն նուրբ **կաղամբագույն** երանգով *(ՆԱր., էջ 243):*

ԿԱՂԱՄԲԱԹՈՒՄԲ, գ. **Կաղամբի թումբ**: .... Ուժով քշեց մեզ ճռճռան **կաղամբաթմբերի** շարքերով *(ՀԼ, էջ 82):*

ԿԱՂԱՄԲԱՇԱՐՔ, գ. **Կաղամբների շարք**: Դեռ **կաղամբաշարքերի** կեսին չէինք հասել .... *(ՀԼ, էջ 82):*

ԿԱՄԱՎՈՐԵԼ, բ. **Իրականացնել կամավորության հիմունքով կազմակերպվող հատուկ աշխատանքային գործունեություն:** Սևակը 4 ամիս է, ինչ **կամավորում է** Հայաստանում *(Հեռ., Հ1, Առավոտ լուսո, 11.02.2021):*

ԿԱՄԵՆԻՑԱՀԱՅ, գ. **Կամենիցում (ներկայում՝ Կամենեց-Պոդոլսկ) բնակվող հայ: Կամենիցահայերի** կողմից շուրջ երկուսուկես դար կազմված դատական արձանագրություններից առայսօր հայտնի է 27 ձեռագիր մատյան *(ՊԲՀ, 2020, 1, էջ 149):*

ԿԱՄԵՆԻՑԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Կամենից քաղաքի հայ բնակչություն:** Քննության նյութ են դառնում նաև **կամենիցահայության** անձնանունների .... ծագումնաբանության և հարակից հարցեր .... *(ՊԲՀ, 2020, 1, էջ 150):*

ԿԱՅԾԱԿԱՇԱՏ, ած. (Ճիշտ է՝ կայծակնաշատ): **Որտեղ շատ կայծակ է լինում, կայծակնառատ**: .... Մենք, ըստ ԱԻՆ աշխատակցի, **կայծակաշատ** երկիր չենք համարվում *(ՀՀ, 01.08.2020):*

ԿԱՆԱՉԱՄՈԽՐԱՎՈՒՆ, ած. **Կանաչին տվող մոխրավուն**: .... Քամուց ձիարշավարանը կարծես հանկարծակի դարձել էր մռայլ ու ամայի՝ իր **կանաչամոխրավուն** տրիբունաների շուրջբոլորը թափված խաղադրույքների անդորրագրերով և դատարկ ու հարթ հորիզոնով *(Մոյես, էջ 149):*

ԿԱՆԱՉԱՇԱԳԱՆԱԿԱՎՈՒՆ, ած. **Կանաչ՝ շագանակագույնի երանգով**: Նոթատետրիս վերջին էջը քեզ համար է, որ նկարեմ

դեմքդ՝ յուրաքանչյուր պեպեն, **կանաչաշագանակավուն** աչքերդ ու փոսիկները այտերիդ …. *(ԳԹ, 14.06.2019):*

ԿԱՆԱՑԻԱՑՈՒՄ, գ. **Կանացի դառնալը**: -Դա Բարսեղի ֆեմինացիան չէ՝ հոգեսեռական այլափոխությամբ, **կանացիացում,** իգականացում, - մտածում էր Ռուզանը .... *(ՆԱդ., էջ 98):*

ԿԱՆԳԱՌԱՉԱՓ, ած. **Որպես որոշիչ նշված քանակի կանգառ(ներ)ի երկարությամբ**: Մնացած ընդամենը մեկ **կանգառաչափ** տարածությունը ցանկացավ ոտքով գնալ *(Աղաբ., էջ 81):*

ԿԱՆԳԱՌԱՏԵՂ, գ. **Կանգառ անելու տեղ**: **Կանգառատեղ** հանդիպեց *(Ստայնբեք, էջ 183):*

ԿԱՇԱՌԱՁԵՐԾ, ած. **Կաշառքից զերծ**: .... Հայաստանը հայտարարելով **կաշառազերծ** երկիր…. *(Ազգ, 08.02.2019):*

ԿԱՇՎԵԲԱՐՁ, ած. **Կաշվե երեսկալով՝ երեսքաղով բարձ ունեցող**: Զոլան .... փոքրիկ սեղանը **կաշվեբարձ** օթոցից հեռու քաշեց *(Սթոուն, էջ 442):*

ԿԱՊԱՐՁԱԿ, ած. **Կապերը արձակած՝ քանդած**: **Կապարձակ** կոշիկներ *(ԳԽ1, էջ 215):*

ԿԱՊՏԱԳՈՒՆԴ, գ. **Կապույտ գունդ**: Սերունդների կենսունակ արյանը քանի-քանի տարի է հարկավոր, որպեսզի քայքայի մակարդված արյան իսկայական **կապտագունդը** .... *(Հերբերթ, էջ 93):*

ԿԱՊՏԱԶՈԼԱՎՈՐ, ած. **Կապույտ զոլեր ունեցող**: Տե՛ս ԱՏԼԱՍԱՓԱՅԼ-ի օրինակը:

ԿԱՊՏԱԿԱԶՄ, ած. **Կապույտ կազմով**: .... Իր ձեռքով այրում էր **կապտակազմ** տետրը …. *(ՄԲ, էջ 265):*

ԿԱՊՏԱՀՈՒՐ, ած. (բնստ., փխբ.): **Կապույտ և այրող**: Ու բաց թողեց նա իմ սրտում **կապտահուր** մորմոք ու ցավ *(ԼԴ 1, էջ 84):*

ԿԱՊՏԱՊՈՉ, ած. **Կապույտ պոչ ունեցող**: Ամբողջ օրը **կապտապոչը** պտտվում էր շուրջս .... *(Լ. Շահնուր, էջ 100):*

ԿԱՊՏԱՎԱՐԴԱԳՈՒՅՆ, ած. **Կապույտին տվող վարդագույն**: Նա խոնարհվեց՝ քաշելու համար **կապտավարդագույն** խոլորձածաղիկը .... *(Վիան, էջ 42):*

ԿԱՏԱՐԵԼԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Կատարյալը պաշտելը**: .... Դա իր **կատարելապաշտության** դրսևորման մի եղանակ է .... *(Այզ., էջ 207):*

ԿԱՐԱՄԵԼԱԳՈՒՅՆ, ած. **Կարամելի գույնի**: Առաջինը կնոջը նկատեցի՝ երկարոտն ու շիկահեր, բաց **կարամելագույն** մաշկով *(Մոյես, էջ 51):*

ԿԱՐԳԱՍԻՐԱԲԱՐ, մկբ. **Կարգը սիրով պահպանելով**: Դրանք բոլորն էլ խիստ **կարգասիրաբար** դասավորված էին ըստ իր կյանքի ժամանակաշրջանների *(Սթոուն, էջ 621):*

ԿԱՐԳԱՎԻՃԱԿԱՅԻՆ, ած. **Կարգավիճակից (հասարակության մեջ ունեցած վարկանիշից, կոչումից, պաշտոնից ևն) բխող**: .... Նիկոլինա Գորայում ամառանոց ունենալը **կարգավիճակային** էր *(Պոզներ, էջ 374):*

ԿԱՐԾՐԱԶԱՆԳՎԱԾ, ած. **Կարծր զանգված ունեցող**: .... **Կարծրազանգված** ժայռի և դալար բարունակի առճակատումը ողբերգական վախճան է ունեցել հանապազ ... *(Դարյան, էջ 270):*

ԿԱՐԾՐԱԿԱՂԱՊԱՐ, գ. **Կարծրատիպ, ամրացած՝ քարացած կաղապար**: Դրամատուրգիայի՝ իբրև գրական սեռի ամրագրված **կարծրակաղապարներն** էին սպառել իրենց .... *(ԳԹ, 17.05.2020):*

ԿԱՐՄՐԱԱՂՅՈՒՍԱԳՈՒՅՆ, ած. **Կարմիր աղյուսի գույն ունեցող**: Տե՛ս ԱՂԱԳՈՐՇԱԳՈՒՅՆ-ի օրինակը:

ԿԱՐՄՐԱԳՈՏԻ, ած. Այստեղ՝ **իրանը ներկի գոտենման կարմիր շերտով պատված**: Անցանք Ռուզվելթ նավահանգիստը, թռուցիկ տեսանք օվկիանոսային **կարմրագոտի** նավերը .... *(Ֆից., էջ 82):*

ԿԱՐՄՐԱԵԶԵՐՔ, ած. **Կարմիր եզրեր ունեցող, եզրերը կարմիր**: Այդ պահին նա ... թուլացած նայում էր **կարմրաեզերք** աչքերով .... *(ՄԲ, էջ 92):*

ԿԱՐՄՐԱԵՐԱԽ, ած. **Կարմիր երախ(ներ)ով**: .... Հսկայական կենդանիներ ահռելի ճիրաններով, թեփուկավոր, **կարմրաերախ** ու սարսափազդու .... *(ԳԽ1, էջ 21):*

ԿԱՐՄՐԱԽԱՉ, ած. **Կարմիր խաչ ունեցող:** Ամենից ավելի անցողակի երևում էին մարդիկ՝ **կարմրախաչ** ուսադիրներով ու կրծքանշաններով.... *(ԹԺՀ, էջ 870):*

ԿԱՐՄՐԱԾԱՅՐ, ած. **Կարմիր ծայր ունեցող**: Դրանց արանքում վեր է խոյանում քթի հաղթական կամարը .... հրաշալի ձև ստանալով և արդեն **կարմրածայր**, կտրուկ շրջադարձով ոլորվում է վերին շրթունքի տակ *(Ռուշդի, էջ 12):*

ԿԱՐՄՐԱԿՈԿՈՆ, ած. **Կարմիր կոկոնների տեսք՝ նմանություն ունեցող**: Քանդեց խալաթի կոճակները և երկար նայում էր մերկ լանջին՝ **կարմրակոկոն** պտուկներ արձակած ողկույզ կրծքերով *(ՆԱդ., էջ 49):*

ԿԱՐՄՐԱՂՅՈՒՍԵ, ած. **Կարմիր աղյուսից պատրաստված**: .... Հեռվում սրածայր կտուրներով **կարմրաղյուսե** տներից անդին, մայր էր մտնում արևը .... *(Ցիպ., էջ 68):*

ԿԱՐՄՐԱՃԵՐՄԱԿ, ած. **Կարմրին տվող ճերմակ**: .... Պաղ, փոքրիկ աղբյուրը մեղմիվ դուրս էր ցայտում անբիծ, **կարմրաճերմակ** գետաքարերով երիզված գողտրիկ ակունքից *(Հերբերթ, էջ 144):*

ԿԱՐՄՐԱՎՈՐՎԵԼ, կբ. **Կարմիր դառնալ, կարմիր գույն ստանալ**: .... Մեկը կոտրվեց, բայց մյուսներն արագ **կարմրավորվեցին** *(Ռուշդի, էջ 52):*

ԿԱՐՄՐԱՓՈՐ, ած. **Կարմիր փոր ունեցող՝ փորով:** Գետակի ջրերում մի օտարոտի **կարմրափոր** ձուկ է ապրում .... *(ՎԲ, էջ 382):*

ԿԱՐՄՐԱՔԱՂՑՐ, ած. **Կարմիր և քաղցր**: Աշունը անկոչ հյուրի պես ցցվել է դռան շեմին, մի բուռ պարզում էս մի հատ մրգից, էն մի **կարմրաքաղցրից,** մյուս կպչուն-տտիպից *(ՆԱ, էջ 230):*

ԿԱՐՈՏԱՎԱՅՐ, գ. **Կարոտ ծնող վայր**: .... Արվեստն ու գրականությունը մնացին հավերժ ուղեկիցն ու սիրո առարկան, իսկ Երևանը՝ վերադարձի, հիշողության ու բաղձալի **կարոտավայր** *(ՀՀ, 12.03.20):*

ԿԱՐՈՒՍԵԼԱՁԵՎ, ած. **Կարուսելի ձևով՝ նման, կարուսելանման**: .... Օպերետան **կարուսելաձև** քառատրոփով պտույտ բռնեց Յարոնի շուրջ .... *(ՄԲ, էջ 307):*

ԿԱՑՆԱԶԱՐԿ, գ. **Կացին(ներ)ի զարկ՝ հարված**: .... Անցյալ տարվա **կացնազարկերի** վերքերը կլցնեն իրենց թանձր խեժով .... *(ՎԲ, էջ 393):*

ԿԱՑՆԱՀԱՐՎԱԾ, գ. **Հարված կացնով**: .... Մարդաբոյ փայտի մի կտոր պոկվեց արմատից ու կտրեց փայտահատ Գուստլ Գրելերերի աջ թևը, որը նա այդ պահին դժբախտաբար նորից բարձրացրել էր գլխից վերև՝ հաջորդ **կացնահարվածի** համար *(Ջեկթ., էջ 44):*

ԿԱՑՆԱՅԻՆ, ած. (փխբ.): **Կոշտ ու կոպիտ**: - Դե՞, ե՞րբ եք պատրաստվում ավարտին հասցնել ձեր այս **կացնային** աշխատանքը *(Մոյես, էջ 115):*

ԿԱՑՆԱՎՈՐՎԵԼ, չբ. **Կացինով զինվել**: .... Գնում ես Դսեղ. Աթնանց Սանասարից իմ անունից մի լավ կացին ես վերցնում, .... մտնում ես ծմակ, իմ անունից **կացնավորված** մոտենում Մուքելին *(Հրաչօ, էջ 3 ):*

ԿԱՑՆԱՏԱՇ, ած. **Կացնով տաշված**: .... **Կացնատաշ** տաք ու անուշ ծպեղների վրա աղեբաղքով շողում էին առնետների թաթերը *(Ֆոլք., էջ 67):*

ԿԵԳԼԻԱՆՈՑ, գ. **Կեգլի մարզախաղի խաղադահլիճ, կեգլարան**: .... Նա իր միակ դստերը «Ոսկե քարայծի» հետ ժառանգություն թողեց ևս երեք պանդոկ, .... **կեգլիանոց** .... և մասնաբաժին երկուբազկաթոռանի վերելակ գնացքներում .... *(Ջեկթ., էջ 84):*

ԿԵՂԾԱՏԵՍ, ած. **Կեղծ տեսք ունեցող**: Որոշ մարդիկ այն **կեղծատես** կհամարեին .... *(ԱՄ, էջ 246):*

ԿԵՂՏԱԴԵՏԵԿՏՈՐ, գ. **Կեղտը՝ հանցանքը հայտնաբերող սարք**: .... «Մենք ներկառուցված **կեղտադետեկտոր** ունենք» *(Պոզներ, էջ 549):*

ԿԵՂՏԱԿՈՆՔ, գ. **Կեղտի կոնք (զուգարանի)**: Վերջապես հաաա զուգարանին: **Կեղտակոնքի** միջից ինչ-որ սև, լպրծուն մարմին էր գալար-գալար բարձրանում .... *(ԳԽ1, էջ 55):*

ԿԵՆՍԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Կյանքի գիտակցում, կենսընկալում**: … էպոսի ճյուղերն ու հեղափոխությունը հայկական համայնական ոգու համատեքստում նույնանում են ու ուղղորդվում ժողովրդի **կենսագիտակցությամբ**, պարզ ասած՝ ժողովրդավարության նշանակետերով *(ԳԹ, 06.03.2020):*

ԿԵՆՍԱԳՈՅԱՑՈՒՄ, գ. **Կենսաստեղծում**: .... Որոնց [նոր օլիգարխների] **կենսագոյացման** պայմանը էլի նոր չարչիներ բուծելն է լինելու *(ԳԹ, 22.03.2019):*

ԿԵՆՍԱԼԵՑՈՒՆ, ած. **Կյանքով լեցուն, կենսաթաթավ, կենսալից, կենսալի, կենսալիր**: Որքան եմ սիրում քեզ, .... փոքր-ինչ զարմացած հայացքդ և վարդագույն շրթունքներդ՝ այնքան **կենսալեցուն,** որ ասես պայթելու են հենց հիմա .... *(ԳԽ1, էջ 117):*

ԿԵՆՍԱՀԱՄԱԿԱՐԳԻՉ, գ. **Կյանքի պայմանների ամբողջությունը ստեղծող ու կարգավորող**: Մոր իսկական կերպարը մանկության վերհուշի մեջ հառնող ապահովության այն տաք զգացողությունն է, որ մի անգամ տրվում է **կենսահամակարգչին** և մնում հավերժ *(ՖԲ, էջ 206):*

ԿԵՆՍԱՀԱՍՏԱՏՈՒՄ, գ. **Կյանքի հաստատումը**: Մտովի ամեն հանդիպում անցյալի հետ՝ **կենսահաստատումի** նշանակվկայություն է *(Մահտես., էջ 13):*

ԿԵՆՍԱՀԱՍՏԱՏՈՒՆ, ած. **Կյանքը հաստատող**: Շաբաթվա վերջում ես հիվանդին հանդիպում էի արդեն ոչ անկողնում՝ նրա **կենսահաստատուն** բնավորությանը հատուկ սրամտություններով ու կատակներով զրուցելիս *(ԹԺՀ, էջ 842):*

ԿԵՆՍԱՌԱՏ, ած. **Կյանքով առատ, կենսալի**: Նույնիսկ միջանցքներն ընդարձակ էին ու լուսավոր, թեթևակի կորություն ունեին ու **կենսառատ** էին *(Հերբերթ, էջ 245):*

ԿԵՆՏՐՈՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Կենտրոնում լինելը, կենտրոնական դիրք գրավելը**: .... Դրեց սեղանի կենտրոնում: Իսկույն նկատեց

նրա **կենտրոնությունը** և մի կողմ տարավ՝ սեղանի ծայրը *(ՆԱդ., էջ 69):*

ԿԵՆՑԱՂԱՊԱՏԿԵՐ, գ. **Կենցաղում տեղի ունեցող իրադարձություն, կենցաղային տեսարան**: .... Ազատագրված էին **կենցաղապատկերներից,** որոնք մարդկանց ստրկացնում են և դարձնում տխուր, զետնաքարշ արարածներ *(ՆԱդ., էջ 139):*

ԿԵՊԻԱՎՈՐ,ած. **Գլխին կեպի դրած՝ ունեցող**: **Կեպիավոր** մեկը հայտնվեց վաճառասեղանի մոտ .... *(ԳԽ1, էջ 135):*

ԿԻՆՈԱՄՍԱԳԻՐ, գ. **Կինոյի խնդիրները քննող ամսագիր**: Թերթերի կրպակից տիկին Վիլսոնը գնեց «Թաուն Թեթլ»-ի և **կինոամսագրի** մեկական օրինակ .... *(Ֆիգ., էջ 36):*

ԿԻՆՈԲԻԶՆԵՍ, գ. **Գործարարություն կինոարտադրության և վաճառքի ասպարեզում**: .... Հաճույք էր գտնում նոր ընտանիքում ու **կինոբիզնեսում** իր ապշեցուցիչ հաղթանակի մեջ .... *(Այզ., էջ 329):*

ԿԻՆՈԳՅՈՒՏ, գ. **Կինոյի գյուտ: Կինոգյուտի** հեղինակները ֆրանսիացի գյուտարարներ են *(Հմց, aravot.am):*

ԿԻՆՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Կինոմիության, կինոյի խնդիրներով, առավելապես արտադրությամբ զբաղվող կազմակերպություն**: .... Հայրս .... ապրում էր Ամերիկայում և Աշխատում էր MQM **կինոընկերությունում** *(Պոզներ, էջ 11):*

ԿԻՆՈԿԱՌՈՒՅՑ, գ. **Կինոնկարահանումներով զբաղվող կառույց:** Հայաստանում գոյություն ունեցող **կինոկառույցները** պետք է միավորվեն *(Հմց, aravot.am):*

ԿԻՆՈՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Համագործակցություն կինոյի բնագավառում:** «Եվա». հայ-իրանական **կինոհամագործակցություն** *(Հմց, aravot.am):*

ԿԻՆՈՀԱՆՃԱՐ, գ. **Կինոարվեստի բնագավառում ստեղծագործող հանճար: Կինոհանճարի** հետ հանդիպումը կհետաձգվի *(Հմց, aravot.am):*

ԿԻՆՈՊԱՐԲԵՐԱԿԱՆ, գ. **Կինոյին վերաբերող պարբերական հրատարակություն**: Լոնդոնյան «Flickering Myth» առցանց **կինոպարբերականը** տեղեկացնում է .... *(Ազգ, 08.02.2019):*

ԿԻՆՈՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Վավերագրություն՝ կինոյի ժանրով:** Համաշխարհային **կինովավերագրությունից** պետք է ջնջել որոշ գլուխգործոցներ *(Հմց, aravot.am):*

ԿԻՍԱԱԶԱՏ, ած. **Կիսով չափ ազատ**: Կանոնակարգվում է անազատ կամ **կիսաազատ** պայմաններում վայրի կենդանիներ պահելու գործընթացը *(ՀՀ, 13.03.2020):*

ԿԻՍԱԱԿՆԱՐԿ, գ. **Թեթևակի նայվածք**: .... Արևի շողը սահում է նրա մակերևույթի վրայով և, ասես **կիսաակնարկով,** սկսում է լուսավորել ջրի կապույտը *(Պոզներ, էջ 237):*

ԿԻՍԱԱՂՔԱՏ, ած. **Կիսով չափ աղքատ**: «Ռուսական կապիտալիզմը» արտահայտվում է, մասնավորապես բազմաթիվ «ռուբլյովկաների» երևան գալով, հեքիաթային չափերով և կողքին ապրող **կիսաաղքատ** մարդկանց խրճիթների վրա ոչ պակաս հեքիաթային այլանդակությամբ վեր խոյացող առանձնատների երևան գալով *(Պոզներ, էջ 629):*

ԿԻՍԱԱՊՇԱԾ, ած. **Կիսով չափ՝ մասամբ ապշած՝ սաստիկ զարմացած**: ....Կեսի դեմքին նույն **կիսաապշած** արտահայտությունն էր, որը կարծում եմ իմ դեմքին էլ էր *(Մոյես, էջ 17):*

ԿԻՍԱԱՊՈՒՇԱՅԻՆ, ած. **Կիսով չափ ապուշային:** .... Լենան, որը սառել էր **կիսաապուշային** համրության մեջ *(Նալբ.2, էջ 48):*

ԿԻՍԱԱՍՏՎԱԾԱՅԻՆ, ած. **Մասամբ՝ գրեթե աստվածային**: .... Որոնք ուզում էին բռնել իրենց մեկնած ձուկը, ոմանք վեր էին ցատկում փորձելով դիպչել **կիսաաստվածային** ձեռքին *(Պոզներ, էջ 248):*

ԿԻՍԱԱՐԱՀԵՏ, ած. **Ոչ այնքան բանուկ արահետ**: Երբ մենք կամրջից **կիսաարահետով** գնում էինք դեպի ծխարան. Այլասկան հանկարծ շրջվեց *(Բորզեն, էջ 109)*:

ԿԻՍԱԱՐԳԵԼՎԱԾ, ած. **Մասամբ արգելված, ոչ մասսայական օգտագործման թույլատրված**: **Կիսաարգելված** հրատարակություն *(Պոզներ, էջ 258)*:

ԿԻՍԱԱՐԳԵԼՔ, գ. **Կիսով չափ արգելք**: Աշխարհը լի էր արգելքներով, **կիսաարգելքներով** և այն ամենով, ինչ գրեթե թույլատրելի էր *(Բորգեն, էջ 68)*:

ԿԻՍԱԲԵՌՆԱՏԱՐ, ած. **Կիսով չափ բեռնատար**: Նրանց նոր օջախը՝ ընտանիքի գլխավոր ապրելավայրը, հնամենի «Հադսընն» էր՝ ռադիատորի պատյանը ճմռթված ու քերծված .... կիսամարդատար ու **կիսաբեռնատար** ավտոմեքենա .... *(Ստայնբեք, էջ 106)*:

ԿԻՍԱԲՌՈՒՆՑՔ, գ. **Կիսով չափ բռունցք արած՝ ձեռքի մատները ափին սեղմած**: Ձեռքերը **կիսաբռունցք** էր արել.... *(ՀԼ, էջ 37)*:

ԿԻՍԱԹԱԽԾԱԼԻ, ած. **Կիսով չափ թախծալի**: Նրա դեմքը ևս շիկավուն էր. պեպենոտ .... շիկավուն հոնքերի **կիսաթախծալի** արտահայտություն *(Գրին, էջ 332)*:

ԿԻՍԱԹՄՐԵԼ, չբ. **Կիսով չափ թմրել**: Չնայած Լենգդոնը **կիսաթմրած** էր, նրա խրոնիկական վախը փակ տարածքների նկատմամբ չնահանջեց *(Բրաուն, էջ 38)*:

ԿԻՍԱԺՊՏԱՎՈՒՆ, ած. **Կիսով չափ ժպտավուն**: Իսկ անցորդների **կիսաժպտավուն** հայացքներում կարծես պարային տրամադրություն էր *(ՀՀ, 26.06.2020)*:

ԿԻՍԱԺՊՏՈՒՆ, ած. **Կիսով չափ՝ մասամբ ժպիտ արտահայտող**: Ունի խոշոր, նշաձև աչքեր, կոր **կիսաժպտուն** շուրթեր, ոսկեգույն մաշկ …. *(ՆԱբ., էջ 103)*:

ԿԻՍԱԼՈՒԾՈՒՄ, գ. **Կիսով չափ լուծում**: Աշխարհի **մերձքրիստոնեական** փրկությունը նաև Սոկրատեսի և Անդերսենի դաշինքի մեջ է, որը մի **կիսալուծում** է *(Նայբ.1, էջ 70)*:

ԿԻՍԱԼՈՒՍՆԵ ած. **Կիսալուսնաձև**: **Կիսալուսնե** թավուտ *(ՆԱդ., էջ 63)*:

ԿԻՍԱԿԱՍԵՑՆԵԼ, նբ. **Կիսով չափ կասեցնել**: Նա ձեռքով **կիսակասեցնող** շարժում արեց .... *(Գրին, էջ 236)*:

ԿԻՍԱՀԱՆԴՈՒԳՆ, ած. **Կիսով չափ հանդուգն:** Հաջողության այդ քած-աստվածուհին .... թափառում էր կիսահլու ու **կիսահանդուգն** Միքայելիսի ոտքերի մոտ .... *(Հերբերթ, էջ 52):*

ԿԻՍԱՀԱՇՏՎԱԾ, ած. **Կիսով չափ հաշտված:** Տիրանն ու Տագեսս աղան **կիսահաշտված** վիճակում են մնում .... *(Ա.Ավ., էջ 158):*

ԿԻՍԱՀԵԳՆԱԼԻ, ած. **Կիսով չափ՝ մասամբ հեգնանքով լի**: .... Խնջույքին՝ 1979-ին, նա Հիսուս Քրիստոսի պես հանդերձանքով ներկայացավ՝ մեծամիտ **կիսահեգնալի** քայլ, ինչը իրեն՝ Ջոբսին, զվարճալի էր թվում .... *(Այզ., էջ 103):*

ԿԻՍԱՀԼՈՒ, ած. **Կիսով չափ հլու**: Տե՛ս ԿԻՍԱՀԱՆԴՈՒԳՆ-ի օրինակը:

ԿԻՍԱՃՏՔԱԿՈՇԻԿ, գ. **Ցածր ճիտք ունեցող ճտքակոշիկ:** Սև **կիսաճտքակոշիկները** փայլում էին մաքրությունից *(Տուոմ., էջ 95):*

ԿԻՍԱՄԱՆԿԱԿԱՆ, ած. **Համարյա՝ կիսով չափ մանկական, մանկական հիշեցնող**: .... Հիշելով այն տարին, ամաչում եմ **կիսամանկական** այն արցունքներից …. *(ՎԲ, էջ 145):*

ԿԻՍԱՄԱՐԴԱՏԱՐ, ած. **Կիսով չափ մարդատար:** Տե՛ս ԿԻՍԱԲԵՌՆԱՏԱՐ-ի օրինակը:

ԿԻՍԱՄԵԿՈՒՍԱՑՈՒՄ, գ. **Կիսով չափ մեկուսացում**: Իզաբելլան էլ որոշ ժամանակ անց դեմ չէր **կիսամեկուսացմանը** *(ԱՄ, էջ 79):*

ԿԻՍԱՄԹՆՇԱՂԱՅԻՆ, ած. **Կիսով չափ մթնշաղային:** Անզորությունից դրդված սկսեց ուշադրությամբ դիտել դրսի ու ներսի **կիսամթնշաղային** լույսը .... *(Հանդկե, էջ 241):*

ԿԻՍԱՄՈԽՐԱՆԱԼ, չբ. **Կիսով չափ՝ մասամբ մոխրանալ՝ այրվելով մոխրի վերածվել**: .... **Կիսամոխրացած** թումբանը նետեց լվացարանակոնքն ու ջուրը բացեց *(ՆԱբ., էջ 18):*

ԿԻՍԱՄՐՑԱՎԱԶՔԱՅԻՆ, ած. **Մասամբ՝ կիսով չափ մրցավազքային**: .... Միայն խելագարը կարող էր նստել **կիսամրցավազքային** հեծանիվ և սլանալ փողոցներով …. *(Պոզներ, էջ 552):*

ԿԻՍԱՇՈՂՈՔՈՐԹ, ած. **Կիսով չափ շողոքորթ**: Անտանելի էին տարօրինակ, կասկածամիտ, կեղծ սիրալիրությունը .... և կա-

նանց **կիսաշողոքորթ** քչփչոցի մեջ մշտապես լսվող զարմանալիորեն վիրավորական խայթոցները *(Հերբերթ, էջ 42):*

ԿԻՍԱՌՈՒՍ, գ. **Կիսով չափ՝ ծնողներից մեկը ռուս**: **Կիսառուսը** համբերատար էր, մաքրասեր, սիրում էր ամուսնուն *(ՖԲ, էջ 56):*

ԿԻՍԱՍՏՈՐԱՑԱԾ, ած. **Կիսով չափ ստորացած**: Եվ այդ ինքը՝ Լենան, տնից-տեղից կտրված, անկայուն աշխատանքային մանրադրամներով **կիսաստորացած**՝ պիտի խղճար նրան՝.... *(Նալբ.2, էջ 4):*

ԿԻՍԱՏԵՐԹՈՂԻԿՅԱՆ, ած. Կ**իսով չափ տերթողիկյան՝ Տեր Թողիկի մեթոդով կատարվող**: Ձիմը, որին կրթել են կիսատասնորդական և **կիսատերթողիկյան** մեթոդներով, կարծես իրեն լավ էլ արդյունավետ դրսևորում է.... *(ՀԼ, էջ 51):*

ԿԻՍԱՈՒՂՂԱԿԻՈՐԵՆ, մկբ. **Կիսով չափ ուղղակի:** .... Շարադրանքում հաճախ տեղ են գտել ուղղակիորեն կամ **կիսաուղղակիորեն** մեջբերված խոսքեր …. *(ՊԲՀ, 2020, 1, էջ 150):*

ԿԻՍԱՔԱՂՑՐ, ած. **Մասամբ՝ կիսով չափ քաղցր**: …. Ինձ ավելի դուր է գալիս սառն ու **կիսաքաղցր** սուրճը *(ՆԱդ., էջ 112):*

ԿԻՍԱՔԱՅԼԵԼ, չբ. **Կիսով չափ քայլել**: .... Կիսազրկած ու **կիսաքայլելով** դեպի խրճիթն են տարել *(ՀԼ, էջ 353):*

ԿԻՍԱՔՈՒՐԴ, գ. **Կիսով չափ՝ ծնողներից մեկը քուրդ**: .... Վերջապես մի կիսահայի, թե **կիսաքրդի** հետ ուղարկում են հյուրանոց *(ՖԲ, էջ 93):*

ԿԻՍԱՖԱՇԻՍՏԱԿԱՆ, ած. **Կիսով չափ՝ մասամբ ֆաշիստական**: Հակաամերիկանիզմը դառնում է .... ամեն տեսակ **կիսաֆաշիստական,** շովինիստական խմբերի դրոշը *(Պոզներ, էջ 68):*

ԿԼԻՄԱՅԱԳՈՅԱՑՆՈՂ, ած. **Կլիմա գոյացնող, ստեղծող**: Չմոռանանք նաև Սևանի **կլիմայագոյացնող** նշանակությունը ոչ միայն ՀՀ-ի, այլև տարածաշրջանի առումով *(ՀՀ, 17.05.2020):*

ԿԼՈՐԱԿԵԼ, նբ. **Կլոր ձև տալ**: Պոկվեց տեղից և կողքանց, շեղ կողաձիու պես, սուրաց աստիճաններով ցած, ձեռքերը **կլորակած**

այնպես, ասես բաժակներով մատուցարան էր տանում *(ՄԲ, էջ 34):*

ԿԼՈՐՍԵՂԱՆԱՅԻՆ, ած. Այստեղ՝ **կլոր սեղանի շուրջ կատարվող**: Մենք 2 ժամ ծախսեցինք իմ բնակարանում՝ **կլորսեղանային** քննարկման վրա .... *(Այզ., էջ 72):*

ԿԾԿԾԱՆ, ած. **Կծկծացող**: Տե՛ս ԱՅԳԱՅՈՒՐՏ-ի օրինակը:

ԿԾՎԱԲՈՒՅՐ, ած. **Կծու բույր ունեցող, կծվահոտ**: Նա առաջ էր շարժվում .... ամեն քայլի հետ նոր բուրմունք բացահայտելով՝ **կծվաբույր** սունկ, դառնահամ արմատներ .... *(Բրաուն, էջ 465):*

ԿՅԱՆՔԱԲԱԺԻՆ, ած. (բնստ.): **Կյանքում բաժին հասած, նախասահմանված:** Բարիք է և աղոթքի ծես-// **Կյանքաբաժին** քո ճամփան *(ԼԴ 1, էջ 160):*

ԿՅԱՆՔԱԴԱԼԱՐ, ած. (բնստ., փխբ.): **Կյանքը դալար՝ կենդանի պահող:** Եվ ալիքվեր հայությունս լուսաբացով,// Որպես կանաչ, **կյանքադալար** ցորյանի ծով *(ԼԴ 1, էջ 165):*

ԿՆԱՊԱՇՏՊԱՆՈՒՀԻ, գ. **Կնոջը, նրա շահերն ու իրավունքները պաշտպանող կին:** Մի ազատ տեղ կար նախկին **կնապաշտպանուհու** կողքին .... *(Ուելբեք, էջ 142):*

ԿՆՈՋԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. (դիպվ.): **Ուսմունք կանանց, նրանց վարք ու բարքի մասին, կնոջաբանություն**: Ո՞վ քեզ սովորեցրեց այդ **կնոջագիտությունը** *(ՆԱղ., էջ 206):*

ԿՇՌՈՒՅԹԱՎՈՐՎԵԼ, չբ. **Ներդաշնակավորվել**: Միս են բերել՝ կարմիր մարմարիոն, ճարպաշերտերով, **կշռույթավորված** *(ԳԽ2, էջ 14):*

ԿՈԿՈՐԴԻԼՈՍԱՅԻՆ, ած. (փխբ.): **Կոկորդիլոսին հատուկ, կոկորդիլոսի**: .... Երջանիկ կամ դժբախտ՝ Մատուբին միս է, **կոկորդիլոսային** մեր գոյությունը մի քիչ էլ քարշ տալու միջոց *(ԳԽ2, էջ 8):*

ԿՈՂԱՁԻ, գ. **Կողային՝ լծվածքի կողքից լծված ձի**: Տե՛ս ԿԼՈՐԱԿԵԼ-ի օրինակը:

ԿՈՂԱՃԱՂԱՏ, ած. **Կողքերը ճաղատ**: .... Մի ծանր խոհ տանջում էր նրա գիտուն և **կողաճաղատներով** ճակատը *(ՄԲ, էջ 242):*

ԿՈՂԱՃՈՃՔ, գ. **Մի կողմից մյուս կողմ ճոճվելը**: .... Եվ վագոնը ուժգին կողմից կողմ էր տարուբերվում- **կողաճոճք** էր .... *(Յիպ., էջ 25):*

ԿՈՂԱՉԱՓ, գ. (խսկց.): **Կողքի հարթությունը չափող գործիք, հարթաչափ**: .... Վազ տուր, .... մի հատ **կողաչափ** ուզի .... *(ՎԲ, էջ 166):*

ԿՈՂԱՊԱՏՈՒՀԱՆ, գ. **Կողային պատուհան:** .... Մարդկանց հետ հաղորդակցվելու քաղաքակիրթ ուղին դուռն է, ոչ թե **կողապատուհանը** *(ՀԼ, էջ 75):*

ԿՈՇԿԱԿԱՊ, գ. **Կոշկաթել, կոշկաքուղ:** Թե ինչ քնքշությամբ էր նա **կոշկակապերս** արձակում, պատմելու բան չէ *(ՎԻ, էջ 270):*

ԿՈՇՏԱՌԱՏ, ած. **Շատ կոշտեր ունեցող, կոշտաշատ:** .... Իմ ձեռքը թաղվեց նրա **կոշտառատ** ափի մեջ *(ԹԺՀ, էջ 871):*

ԿՈՇՏՈՒԿԱՑԱՎ, գ. **Կոշտուկի առաջացրած ցավը**: .... Հորս տեսքն արթնացրեց .... ու մոռացության տվեց **կոշտուկացավերը** .... *(Ռուշդի, էջ 343):*

ԿՈՊՏԱԿԱՐ, ած. **Կոպիտ ձևով՝ կոպտորեն կարված**: Մի պահ նայեցի **կոպտակար**՝ բութ քթերով կոշիկներին .... *(Սթոուն, էջ 61):*

ԿՈՊՏԱՏԵՍՔ, ած. **Կոպիտ տեսք ունեցող:** Հյուրընկալը ծանրամարմին, **կոպտատեսք** շոտլանդացի էր .... *(Հերբերթ, էջ 390):*

ԿՈՌԻԿՈՍԱՀԱՅԱՑ, ած. (դիպվ.): **Կոռիկոս ամրոցին նայող**: Երեկոյան այս քաղաքակիրթ հայրիկը իր ընտանիքով հեռանալու է «Բարբարոս» շքեղ, **կոռիկոսահայաց** բացօթյա ճաշարանից *(ԳԹ, 18.10.2019):*

ԿՈՐՈՆԱԶՐՈՒՅՑ, գ. **Թագավարակի վերաբերյալ զրույց: Կորոնազրույց**. ինչպես հաղթահարել սթրեսը պանդեմիայի պայմաններում *(Հմց, aravot.am):*

ԿՈՐՈՆԱԼՐԱՀՈՍ, գ. **Լրահոս կորոնավիրուսային վարակի մասին:** Օրվա **կորոնալրահոսը** համառոտ *(Հեռ., Արմենիա, 22.07.2020):*

ԿՈՐՈՆԱԿԵՆՏՐՈՆ, գ. **Թագավարակի բուժմամբ զբաղվող կենտրոն:** Հիվանդանոցի վերածումը **կորոնակենտրոնի** պարալիզացրել է հանրապետությունում ինֆեկցիոն հիվանդությունների արդյունավետ կառավարումը *(Հմց, aravot.am):*

ԿՈՐՈՆԱՀԵՐՈՍ, գ. **Թագավարակի թեմայով ստեղծված հերոս՝ կերպար:** Վրացահայ տիկնիկագործը, գյուղում մեկուսացած, **կորոնահերոսներ** ու կորոնահեքիաթներ է ստեղծում *(Հմց, aravot.am):*

ԿՈՐՈՆԱՀԵՔԻԱԹ, գ. **Թագավարակի թեմաներով ստեղծված հեքիաթ:** Տե'ս ԿՈՐՈՆԱՀԵՐՈՍ-ի օրինակը:

ԿՈՐՈՆԱՃԳՆԱԺԱՄ, գ. **Թագավարակի պատճառով ստեղծված ճգնաժամ:** Հայտնի են այն քաղաքները, որոնք արդյունավետորեն պայքարել են **կորոնաճգնաժամի** դեմ *(Հմց, aravot.am):*

ԿՈՐՈՆԱՆՄԱՆ, ած. **Թագավարակի հարուցիչի տեսքով:** Արտասովոր փոքր ավտոմեքենան ստեղծվել է կանաչ մանրաթելից և լրացվել վիրուսի կարմիր **կորոնանման** փշերով *(Հմց, aravot.am):*

ԿՈՐՈՆԱՇԱՐՔ, գ. Այստեղ՝ **թագավարակին վերաբերող ներկայացումների շարք:** Փառատոնի շրջանակում կցուցադրվեն մի շարք աշխարհահռչակ ներկայացումներ, որոնցից է Յո. Սթրոմգրենի «**Կորոնաշարք** #10, #25»-ը *(Հմց, aravot.am):*

ԿՈՐՈՆԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, գ. **Թագավարակի պատմություն:** Ահա թե ինչ եղավ, երբ կորոնավիրուսով հիվանդ վարչապետը վերադարձավ լիարժեք աշխատանքի՝ դառնալով **կորոնապատմության** մեջ ամենաարագ ապաքինված ընտանիքի հայր *(Հմց, aravot.am):*

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ, ած. **Թագավարակային:** Նախարարը կարևորել է մասնագիտական ասոցիացիաների ներուժի օգ-

տագործումը **կորոնավիրուսային** հիվանդության դեմ տարվող պայքարում *(Հմց, aravot.am):*

ԿՈՐՈՆԱՑՈՒՑԱԿ. գ. **Կորոնավիրուսային հիվանդության վիճակագրությունը ներկայացնող ցուցակ: Կորոնացուցակի** առաջատարները. ԱՄՆ, Բրազիլիա *(Հեռ., 5-րդ ալիք, 22.07.2020):*

ԿՈՐՈՆԱՑՈՒՑԱՆԻՇ, գ. **Կորոնավիրուսային հիվանդությամբ հիվանդացման ցուցանիշ**: Մտահոգիչ **կորոնացուցանիշներ** և զանգվածային հիվանդացում *(Հեռ., Արմնյուզ, 10.07.2020):*

ԿՈՐՈՎԱՏԵՍ, ած. **Կորովի և խրոխտ տեսքով**: **Կորովատես** տղամարդն ականջից հանեց ականջակալներից մեկը *(ՆԱ, էջ 200):*

ԿՊՉԱԹՈՒՂԹ, գ. **Կպչուն թուղթ**: Հետո ցած էին բերում ճանճերի դեղին **կպչաթղթի** գալարը …. *(ԱՍ, էջ 280):*

ԿՊՉՈՒՆՈՏ, ած. **Փոքր-ինչ կպչուն**: Դժվար էր բնութագրել. քաղցրավուն էր, կարծես **կպչունոտ** …. *(Կերտես, էջ 85):*

ԿՌՆԱՀԱՆ, մկբ. (բրբ.): **Առանց ձեռքերը ծալելու, եռանդով**: Կոլխոզի մե՜ծ գործերի մեջ արանքը ճղում ու կամավորի իր պարտքով **կռնահան** գործ է անում թաղի, գյուղի էն տներում, ուր տղամարդ մարդու պակաս կա *(Հրաչո, էջ 4):*

ԿՌՆԱՏԱԿԵԼ, նբ. (փխբ.): **Թևի տակ դնելով տանել**: …. Եղբորը հրաժեշտ տալուց առաջ չէր մոռանում **կռնատակել** մի նկար …. *(Հրաչո, էջ 196):*

ԿՏՈՐԱՊԱՏ, ած. **Կտորով պատված**: **Կտորապատ** ծալովի աթոռներից էր, բայց հարմար էր ու պինդ *(ԱՍ, էջ 217):*

ԿՐԱԿԱԳՈՏԻ, գ. **Կրակային միջոցների հարվածներին ենթակա գոտի**: Այլևս նահանջելու, **կրակագոտուց** դուրս գալու ելք չունեն …. *(ՎԻ, էջ 243):*

ԿՐԱԿԱԽԱՆՁ, ած. **Կրակից՝ հրդեհից խանձված**: Հեռվում ... **կրակախանձ** կաղամախիների բարձր ու սև բներն էին կանգնած *(ՎԲ, էջ 383):*

ԿՐԱԿԱՏԵՐԵՎ, ած. (բնստ., փխբ.)։ **Հուրհրան, բոցկլտուն:** Երբ բուքը ոռնա՝ քո երազում դու// Արև կտեսնես **կրակատերև** *(ԼԴ 1, էջ 110):*

ԿՐԵՄԱՊԱՏ, ած. **Կրեմով պատված**։ **Կրեմապատ** թուղթ *(Օրուել, էջ 100):*

ԿՐԵՄԼԱԳԵՏ, գ. **Կրեմլի՝ ռուսական քաղաքականության մասնագետ**։ Նրանք քիչ բանով էին տարբերվում ամերիկյան **կրեմ-լագետներից** …. *(Պոզներ, էջ 527):*

ԿՐԵՄԼԱՎԱՐ, գ. **Կրեմլի գործերը վարող, կրեմլի ղեկավար**։ …. չխոսենք արդեն այն **կրեմլավարների** մասին, ում հետ նա խորհրդակցել էր նախքան որոշում ընդունելը …. *(Պոզներ, էջ 494):*

ԿՐԹԱԼ, չբ. **Կրթոց հանել, ղրճղրճալ**։ Բերանում մնացած ավազահատիկները տհաճ **կրթացին** ատամների տակ *(ԳԽ1, էջ 3):*

ԿՐԹԱՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ած. **Կրթական, մարզական, մշակութային:** Մարզահովիտի **կրթամարզամշակութային** համա-լիրի Ս. Անանյանի անվան մանկապարտեզի պահեստի սնունդից տրամադրվել է …. *(ՀՀ, 26.03.2020):*

ԿՐԾՈՎԻ, ած. **Կրծելու, կրծելով ուտելու**։ Մենք արդեն **կրր-ծովի** կարտոլը խատատ-մատատ հանում ենք կրակից …. *(Հրաչօ, էջ 17):*

ԿՐԾՔԱՆԱԽՇ, գ. **Նախշ կրծքի վրա**։ Նուրբ **կրծքանախշերով** …. փետուրի պես թեթև շապիկը ծփծփում էր տաք քամուց …. *(ՆԱղ., էջ 111):*

ԿՐԿՆԱԱՄՐԱԳՐԵԼ, բ. **Կրկին ամրագրել:** Եվրոպական երկրներ մեկնողները կարող են իրենց գնած տոմսերը **կրկնաամ-րագրել** այլ չվերթների համար *(Հմց, aravot.am):*

ԿՐԿՆԱԳԾՈՒՄ, գ. **Կրկնակի գծում:** …. «Ձեռագիր գրառում-ներում առկա են շարժումների կոորդինացիայի խախտումներ, …. ջնջումներ, **կրկնագծումներ**, ավելորդ շտրիխներ *(Հմց, aravot.am):*

ԿՐԿՆԱԳՈԼ, գ. **Մեկ խաղում միևնույն մարզիկի խփած երկու գոլ:** Թիմի ավագը դարձավ **կրկնագոլի** հեղինակ *(Հմց, aravot.am):*

ԿՐԿՆԱԳՈՒԼՊԱ, գ. **Կրկնակի գուլպա: Կրկնագուլպայի** միջից հայտնաբերվել և առգրավվել է մեկ հատ մեկանգամյա օգտագործման ներարկիչ *(Հմց, aravot.am):*

ԿՐԿՆԱԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Կրկին՝ երկրորդ անգամ դատավորություն:** Նա պետք է ապահովի **կրկնադատավարության** հնարավոր առավելագույն հրապարակայնություն *(Հմց, aravot.am):*

ԿՐԿՆԱԴԻՄՈՒՄ, գ. **Կրկնակի դիմում:** Սա ՀՀԿԳՆ-ին ուղղված **կրկնադիմումի** պատասխանից հատված է *(Հմց, aravot.am):*

ԿՐԿՆԱԶՈՀՈՒԹՅՈՒՆ, գ. **Կրկին զոհ դառնալը, տուժելը:** Տուն վերադառնալու դեպքում **կրկնազոհությունից** խուսափելը գրեթե անհնար է դառնում *(Հմց, aravot.am):*

ԿՐԿՆԱԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Կրկնակի ընտրություն:** Մարդը շատ հեշտությամբ կարող է թանաքոտ ձեռքը լվանալ տարբեր նյութերով ու հայտարարել, թե դա չի կարող կանխել **կրկնաընտրությունը**, որովհետև հեշտությամբ մաքրվում է *(Հմց, aravot.am):*

ԿՐԿՆԱԹԵՍՏ, գ. **Կրկնակի թեստ:** Մեկ օրվա տարբերությամբ **կրկնաթեստի** պատասխանները եղել են բացասական *(Հմց, aravot.am):*

ԿՐԿՆԱԽԱԽՏ, ած. **Կրկնակի խախտող: Կրկնախախտ** տրնտեսվարողների հանդեպ կկիրառվեն պատասխանատվության առավել լուրջ միջոցներ *(Հմց, aravot.am):*

ԿՐԿՆԱԽԱԽՏՈՒՄ, գ. **Կրկնակի խախտելը:** …. Արձանագրվում են նաև **կրկնախախտման** դեպքեր *(Հմց, aravot.am):*

ԿՐԿՆԱՁԻԳ, ած. **Կրկնակի շարքով ձգվելը:** Փողոցների երկայնքով նկատելի կլինեն գովազդային **կրկնաձիգ** գրաժապավեններ *(Հմց, aravot.am):*

ԿՐԿՆԱՄՐՑՈՒՅԹ, գ. **Կրկնակի մրցույթ:** Հույս ուներ դրանով **կրկնամրցույթում** հաղթելու հնարավորություն ապահովել իր համար *(Հմց, aravot.am):*

ԿՐԿՆԱՅՑ, գ. **Կրկնակի այց:** Տեսչական մարմնի ներկայացուցիչները վստահեցրել են, որ ստուգայցեր ու **կրկնայցեր** են լինելու *(Հմց, aravot.am):*

ԿՐԿՆԱՊԱՏՃԵՆ, գ. **Պատճենից հանված պատճեն**: Հարկավոր էր ձեզ հետ ունենալ գոնե **կրկնապատճենը** *(Պոզներ, էջ 75):*

ԿՐԿՆԱՌԱՋԱԴՐՈՒՄ, գ. **Կրկին առաջադրում:** Կլինեն հանգամանքների էական փոփոխություններ, որոնք կարդարացնեն մեկ անգամ առաջադրված թեկնածուի **կրկնառաջադրումը** *(Հմց, aravot.am):*

ԿՐԿՆԱՎԱՐԱԿ, գ. **Կրկնակի վարակ:** Հայաստանում **կրկնավարակի** մի քանի դեպք է հայտնաբերվել *(Հմց, aravot.am):*

ԿՐԿՆԱՑԱՏԿ, գ. **Կրկնակի ցատկ:** Վերջին ցատկի ժամանակ մի փոքր կռացած **կրկնացատկ** կատարեց *(Հմց, aravot.am):*

ԿՐՈՆԱԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ, ած. **Կրոնական և բարեգործական**: .... **Կրոնաբարեգործական** «Ագապե» կազմակերպությունը 1995 թ. Բերձորում հիմնեց գիշերօթիկ հաստատությունը *(ՀՀ, 04.03.2020):*

ԿՑԱՄԱՍ, գ. **Այլ՝ հիմնական շինության կից մաս**: - Սա շենքի **կցամասն** է *(Մոյես, էջ 34):*

ԿՈՒՍԲՅՈՒՐՈԿՐԱՏ, գ. (հպվ.): **Կուսակցական բյուրոկրատ՝ ձևապաշտ պաշտոնյա**: Փոքրամասնություն, որը բաղկացած է **կուսբյուրոկրատներից,** .... շովինիստական թափթփուկներից *(Պոզներ, էջ 324-325):*

ԿՈՒՍՂԵԿԱՎԱՐ, գ. (հպվ.): **Կուսակցության ղեկավար**: Եթե արդյունքը հաջող էր լինում, **կուսղեկավարը** վայելում էր համապատասխան պտուղները՝ պարգևներ, շքանշաններ .... *(Պոզներ, էջ 500):*

ԿՈՒՍՄԱՐԶԿՈՄ, գ. (հպվ.): **Կուսակցության մարզային կոմիտե**: .... Աշխատանքային խումբը ... հետևում էր, որ ոչ ոք մոտ չգար **կուսմարզկոմի** շենքին .... *(ԶԲ, էջ 470):*

ԿՈՒՐՍԸՆԿԵՐՈՒՀԻ, գ. **Աղջիկ համակուրսեցի ընկեր**:Ականջդ կանչի, **կուրսընկերուհի** Ժենյա *(ՖԲ, էջ 143):*

## Հ

ՀԱԳՈՒՍՏԱՆԱԽՇ, գ. **Հագուստների նախշ՝ նախշազարդ**: Պսպղուն աղանդերով զարդարված սեղաններին առլեկինի **հագուստանախշեր** հիշեցնող աղցանների կարգի դիմաց շարվում էին համեմված ապուխտներ *(Ֆից., էջ 50):*

ՀԱԳՈՒՍՏԱՓՈԽՎԵԼ, կբ. և չբ. **Հագուստը փոխել**: .... Նըրանք մի րոպեով մտան տուն **հագուստափոխվելու** .... *(Յիպ., էջ 33):*

ՀԱԼԱԾԱՍՊԱՌ, ած. **Հալածանքներից սպառված**: **Հալածասպառ** գլուխս ուսերիս մեջ ներքաշելով՝ ես ծածուկ հետևում էի եկեղեցական աշտարակների տեղաշարժին .... *(Հանդկե, էջ 176):*

ՀԱԼԱՀԱՆ, ած. (խսկց.): **Հալից ընկած, ուժասպառ**: Լրիվ **հալահան** է եղել .... *(ՎԲ, էջ 268):*

ՀԱԼԸՆԿԱԾ, ած. 1. **Նիհարած**: 2. **Բնական վիճակը խախտված**: Ասի՝ էդպես **հալընկած** քեզ ինչ կոմունիզմ *(ՎԲ, էջ 341):*

ՀԱԽՃԱՊԱՏ, ած. **Խեցեպատ**: Վերադառնալով՝ ձեռքերս լվացի **հախճապատ** ժանգոտ լվացարանում .... *(Կերտես, էջ11):*

ՀԱԽՃԱՍԱԼԱՊԱՏ, ած. **Հախճասալով պատված**: .... **Հախճասալապատ** օջախում ճտճտում և մոլեգնում էր կրակը *(ՄԲ, էջ 192):*

ՀԱԿԱԱՄԵՐԻԿԱՆԻԶՄ, գ. **Հակաամերիկականություն**: Դա վերաբերում է նաև ռուսական **հակաամերիկանիզմին** *(Պոզներ, էջ 67):*

ՀԱԿԱԲԵՐԻԱԿԱՆ, ած. (պատմ.): **Բերիային հակառակ գործող, նրան ձերբակալել և ոչնչացման ձգտող**: Այդ մեղադրանքի անհեթեթությունը այնքան ակնհայտ էր, որքան ակնհայտ են պատճառները, որոնցով **հակաբերիական** խումբը ստիպված էր դիմել դրան *(Պոզներ, էջ 194):*

ՀԱԿԱԽՈՍՔ, գ. (խսկց.): **Թշնամական որակավորվող արտահայտություն**: Ով պատերազմի ժամանակ գերի է ընկել, հիմա էլ **հակախոսք** է ասում, նրա տեղը հրե՛ն, երևում է .... *(Հրաչօ, էջ 4):*

ՀԱԿԱԽՑԱՆՈՒՄԱՅԻՆ, ած. **Խցանումների դեմ գործող**: **Հակախցանումային** համակարգ՝ ՏՏ միջամտությամբ *(Հմց, aravot.am):*

ՀԱԿԱԿԱՐԿՏԱՅԻՆ, ած. **Կարկուտի դեմ գործող:** Ամփոփվել են **հակակարկտային** հրթիռային պաշտպանության համակարգի ներդրման պիլոտային ծրագրի արդյունքները *(Հմց, aravot.am):*

ՀԱԿԱԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ, ած. **Հակաթագավարակային:** Եվրոպայում կարող է գրանցվել **հակակորոնավիրուսային** երկրորդ պատվաստանյութը *(Հմց, aravot.am):*

ՀԱԿԱՀԱՄԱՎԱՐԱԿԱՅԻՆ, ած. **Համավարակի դեմ ուղղված: Հակահամավարակային** կանոնների վերահսկումն իրականացվելու է ողջ ծավալով *(Հմց, aravot.am):*

ՀԱԿԱՀԱՅԴԱՏԱԿԱՆ, ած. **Հայ դատին հակառակ**: Եվ հանկարծ Երևանի միտինգներում .... լսվեցին **հակահայդատական** կոչեր *(ՋԲ, էջ 138):*

ՀԱԿԱՀԱՓՇՏԱԿԻՉ, գ., ած. **Հափշտակման՝ գողության կանխման տեխնիկական միջոց (փակելու եղանակով)**: Սեղմում ենք երկու անգամ, հենց նրա իսկ **հակահափշտակիչ** համակարգը ամուր փակում է դուռը *(Արեն, էջ 124):*

ՀԱԿԱՄԱՍՆԱՏՈՒՄ, գ. **Մասնատմանը հակառակ՝ ընդդեմ գործելը:** Գրասենյակի պատին Աբդուլայի հարազատ **հակամասնատումը** քարոզող գովազդային պաստառ էր .... *(Ռուշդի, էջ 52):*

ՀԱԿԱՄՏԱՎՈՐԱԿԱՆ, ած. **Մտավորականին, մտավորականությանը հակառակ՝ ընդդեմ:** .... Եվ Լենան ժպտաց չշփոթվող հոռետեսի կողմը, որը միայն կտրուկ-խեթ նայեց կոշկակարի **հակամտավորական** ոգևորության ուղղությամբ *(Նալբ2, էջ 6):*

ՀԱԿԱՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Պետականությանը հակառակ գործելը**: Մեր նպատակը **հակապետականությունը** պետականությամբ փոխարինելն է *(Հմց, aravot.am):*

ՀԱԿԱՍՊԱԶՄԱՅԻՆ, ած. **Կծկման, կծկանքի դեմ օգտագործվող**: Այսօրվա համար պետք է հիշել նրա **հակասպազմային** դեղահաբերը *(Մոյես, էջ 39):*

ՀԱԿԱՍՏԱԼԻՆՅԱՆ, ած. (պատմ.): **Ընդդեմ Ստալինի և նրա ռեժիմի**: Պատմության կշեռքին դնելով Խրուշչովի ուղղագիծ **հակաստալինյան** գործունեությունը …. *(Պոզներ, էջ 473):*

ՀԱՂԱՐՋՈՒՏ, գ. **1. Հաղարջի թփուտ: 2. Որտեղ հաղարջենիներ շատ կան**: Վազել գնացել էր **հաղարջուտ** *(ՎԻ, էջ 350):*

ՀԱՂԹԱՇՈՒՆՉ, ած. **Հաղթական շունչ ունեցող**: Արարչական **հաղթաշունչ** *(ԳԹ, 31.01.2020):*

ՀԱՃԱԽՈՐԴԱԿԵՆՏՐՈՆ, ած. **Հաճախորդին կարևորող, հաճախորդի կարիքներն ու ցանկությունները կենտրոնում ունեցող:** Դառնալ առաջատար թվային բանկ՝ ընդլայնելով մեր նորարարական, **հաճախորդակենտրոն** գործունեությունը *(Հմց, idbank.am)*:

ՀԱՄԱԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ, ած. **Ամբողջ ակադեմիային վերաբերող:** ՀՀ ԳԱԱ արհմիության միացյալ կոմիտեն հրապարակեց **համաակադեմիական** ժողով *(Հմց, aravot.am):*

ՀԱՄԱԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ, ած. **Ամբողջ աշակերտությունն ընդգրկող:** Ուզում եմ առանձնացնել Բեյրութում **համաաշակերտական** հավաքին ունեցած ելույթը *(Հմց, aravot.am):*

ՀԱՄԱԱՊՀԱԿԱՆ, ած. **Ամբողջ ԱՊՀ-ին վերաբերող:** Մենք պետք է խորհրդարանական դիվանագիտության մեջ լինենք, իսկ դա նշանակում է ներգրավվել **համաԱՊՀ-ական,** համաեվրոպական, համաեվրասիական, համաՆԱՏO-ական բոլոր թեմաների մեջ և մեր խոսքն ասել այնտեղ *(Հմց, aravot.am):*

ՀԱՄԱԱՏԵՆԱՊԵՏ, գ. **Ատենապետներից մեկը:** Հանձնախմբերի գործունեության և պատրաստված փաստաթղթերի վերաբերյալ զեկույցներ ներկայացրեց Կանոնադրությունների մշակման և Թեմական ու ծխական կյանքի կազմակերպման հանձնախմբերի **համաատենապետը** *(Հմց, aravot.am):*

ՀԱՄԱԱՐԱՐՈՂ, ած. **Միասին արարող:** Երբ դու կարողացար զարմացնել, ու հանդիսատեսին դարձնել քեզ հետ **համաարարող**, ուրեմն այդ ժամանակ կայացած է քո ստեղծագործությունը *(Հմց, aravot.am):*

ՀԱՄԱԱՐԵՎԵԼՅԱՆ, ած. **Ամբողջ արևելքը ընդգրկող:** Աշուղ Ջիվանին ազգայնացրեց **համաարևելյան** աշուղական արվեստը, իր ներդրումն այս գործում արժեքավոր է *(Հմց, aravot.am):*

ՀԱՄԱԱՐՑԱԽՅԱՆ, ած. **Ամբողջ Արցախը ընդգրկող:** Վերջում նա հայտնեց, որ պլանավորվում է անցկացնել ևս մեկ **համաարցախյան** հարսանիք, որի ընթացքում կամուսնանան բազմաթիվ երիտասարդներ *(Հմց, aravot.am):*

ՀԱՄԱԱՖՐԻԿՅԱՆ, ած. **Ամբողջ Աֆրիկային վերաբերող:** Աֆրիկյան միության դիտորդ լինելով՝ կարող է անմիջականորեն հաղորդակից լինել **համաաֆրիկյան** խնդիրներին ու մասնակցել դրանց լուծմանը *(Հմց, aravot.am):*

ՀԱՄԱԴԱՍԱՐԱՆՑՈՒՀԻ, գ. **Համադասարանցի աղջիկ**: Դպրոցում սիրահարվեցի **համադասարանցուհուս** *(ԳԽ1, էջ 114):*

ՀԱՄԱԿԱՐԳՉԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Գիտաճյուղ համակարգիչների մասին**: Լինելով փիլիսոփայական մոտեցումների տեր մարդ .... Ռասկինը **համակարգչագիտություն** էր ուսանել .... *(Այգ., էջ 122):*

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅՆԱՑՆԵԼ, նբ. **Համակարգչային դարձնել, ներածել համակարգչի մեջ, մշակել համակարգչի օգնությամբ**: Նրա առաջին նախաձեռնություններից մեկը գործընթացը **համակարգչայնացնելու** եղանակների որոնումն էր .... *(Այգ., էջ 271):*

ՀԱՄԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ, չբ. **Համակված լինելը**: Նրան հիացնում էր Դիսնեյի **համակվածությունը** դետալներով ու դիզայնով .... *(Այգ., էջ 316):*

ՀԱՄԱՃԱՆԱՉՈՒՄ, գ. **Համատարած, ընդհանուր ճանաչում:** Անհատի **համաճանաչման** ու փառքի դափնիների իսկական հասցեատերը նրան ծնած ժողովուրդն է *(Մահտեսա., էջ 114):*

ՀԱՄԱՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ, ած. **Ամբողջ մայրցամաքին վերաբերող:** «Այո, բաց է»՝ այս սովորական **համամայրցամաքային** բանաձևը սուպերմարկետների դռներին պետական տոնի այդ օրը ձեռք էր բերում այլ՝ առանձնահատուկ նշանակություն .... *(Հանդկե, էջ 274):*

ՀԱՄԱՆԱՏՕԱԿԱՆ, ած. **Ամբողջ ՆԱՏՕ-ին վերաբերող:** Տե՛ս ՀԱՄԱԱՊՀԱԿԱՆ-ի օրինակը:

ՀԱՄԱՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ,ած. **Միասնաբար՝ համատեղ ներդրվող**: Դրանք կլինեն տարբեր ուղղություններով 90 փոքր դրամաշնորհներ, **համաներդրումային** դրամաշնորհներ *(ՀՀ, 06.12.2019):*

ՀԱՄԱՌԱԿԱՄՔ,ած. (բնստ.): **Համառ կամք ունեցող:** Ու յոթ հարյուր տարի// **Համառակամք** դժվար իմ հաղթությամբ// Չեմ դարձել ես օտարի ճամփաների փոշի *(ԼԴ 1, էջ 206):*

ՀԱՄԱՍԵՌԱԿԱՆ, գ. **Համասեռամոլ, համասեռահակ, համասեռամետ**: Խաղում են նախագահ, մարդու իրավունքների պաշտպան, .... դումայի բարեկամ, .... **համասեռական** …. *(ՎԻ, էջ 351):*

ՀԱՄԱՐԱԿԱԼ, գ. (իմ նորբ.): **Գծային հեռախոսի համարները հավաքելու պտտվող մասը**: «Քաղաքային» հեռախոսը երկնագույն էր … **Համարակալը** պտտվում էր քիչ անաղմուկ .... *(ՎԻ, էջ 278):*

ՀԱՄԲՈՒՐԳԵՐԱՆՈՑ, գ. **Համբուրգեր ճաշակելու ճաշարան**: Նա այս հարցով կռիվ էր տալիս երկարատև լանչերի ժամանակ Bob's Big Boy **համբուրգերանոցում** .... *(Այզ., էջ 94):*

ՀԱՄԵՄՈՒՆՔԱՄԱՆ, գ. **Համեմունքի աման**: .... Արծաթե բաժակների ու երկարավուն գավաթների մի ամբողջ ցուցադրության կողքին դրված էր նաև արծաթե շքեղ **համեմունքամանը** *(Բորզեն, էջ 30):*

ՀԱՄԵՐԳԱՎԱՐԵԼ, չբ. **Համերգ վարել**: Ես **համերգավարել** եմ տարբեր հոգեվիճակներում .... *(Մահտես., էջ 100):*

ՀԱՅԱԾՈՒԽ,ած. (փխբ.): **Հայի բնակավայր՝ օջախ ծառայող:** Ու մանկանը փրկած, մանկանն հրաշածին// Իջեցրել է շեմին նոր **հայածուխ** մի տան *(ԼԴ 1, էջ 169):*

ՀԱՅԱՍՏԱՆԱՀԱՅ, գ. **Հայաստանում ապրող հայ**: .... ՀՀ ԱԳՆ-ի աջակիցներ կարող են լինել արդեն **հայաստանահայերը** …. *(ՀՀ, 12.03.2020):*

ՀԱՅԱՑՔԱՋԵՐՄ, մկբ. (բնստ.): **Ջերմ հայացքով: Հայացքաջերմ** նայում էր նա՝ տեսքով անմեղ ու միամիտ *(ԼԴ 1, էջ 85):*

ՀԱՅԵԼԱՅԻՆ,ած. (իմ նորբ.): **1. Ինչպես հայելում, 2. (փխբ.): Բացառիկ ճշգրիտ, առանց դույզն-ինչ աղավաղման**: Դա ամերիկ-

յան արտաքին քաղաքականության **հայելային** արտացոլումն էր …. *(Պոզներ, էջ 383):*

ՀԱՅԵԼԱՊԱՏԿԵՐ, գ. **Հայելային պատկեր:** .... Իր դեմքի ճաք-ճըքված ու ամբողջական **հայելապատկերը** կազմեց *.... (Սար., էջ 34):*

ՀԱՅԿԱՎԱՌ, մկբ. (բնստ., փխբ.): **Հայեցիորեն՝ հայկակա-նորեն: Հայկավառ** կժայթքես նորից փրկազեն զորքով, Հայաստան *(ԼԴ 1, էջ 93):*

ՀԱՅՀՈՅԱՀԱՉ, գ. **Հայհոյանքներով՝ հայհոյանք արտահայտող հաչ**: .... Մի լողլող ու պռչատ բակապահ **հայհոյահաչ** տվեց …. *(ՄԲ, էջ 192):*

ՀԱՆԳՍՏԱԲԱՐՈ, ած. **Հանգիստ վարքուբարքի տեր:** .... Ի բնե **հանգստաբարո** էր .... *(ՀԼ, էջ 154):*

ՀԱՆԴԱԲԱԺԱՆ, ած. **Հանդը՝ դաշտը բաժանող՝ սահմանա-գծող**: Ողջ կտավը դեղին էր, բացի **հանդաբաժան** պատից .... *(Սթոուն, էջ 601):*

ՀԱՆՃԱՐԱԽՈՍ, ած. **Հանճարի նման խոսող, հանճարեղ մտքեր ասող, բարձրարժեք**: Ի գործ դիր արդարախոս լեզուդ, **հանճարախոս** միտքդ .... *(Դարյան, էջ 242):*

ՀԱՆՑԱԽՈՒՅԶ, ած. **Հանցագործությունները՝ հանցագործ-ներին որոնող՝ բացահայտող՝ խուզարկող**: **Հանցախույզ** ոստիկան-ները մանրակրկիտ զննումից հետո բացառելու են բռնության միջոցով մեկմեկու մահ պատճառելու վարկածը .... *(ՎԻ, էջ 402):*

ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Հաշվետու լինելը**: Այն ուղղված է հասարակական կազմակերպությունների **հաշվետվո-ղականության** և գործունեության թափանցիկության բարձրաց-մանը *(ՀՀ, 12.03.2020):*

ՀԱՉԱՁԱՅՆ, մկբ., ած. **Հաչոցի նման ձայնով**: - Ես պարոն չեմ, պարոնները Փարիզում են, - **հաչաձայն** պատասխանեց Շարիկովը *(ՄԲ, էջ 244):*

ՀԱՋՈՐԴԵԼԻՔ, ած. **Որ պիտի հաջորդի**: .... Ասկետիզմն ու մինիմալիզմը կարող են ուժգնացնել **հաջորդելիք** զգացողություն-ները *(Այգ., էջ 290):*

ՀԱՍԱԿԱԿՑՈՒՀԻ, գ. **Իգական սեռի հասակակից**: .... Նա սի-րահարվում է իր **հասակակցուհուն** *(ԹԺՀ, էջ 891):*

ՀԱՍԿԱՊԱՐԳԵՎ, ած. (բնստ.): **Հասկ պարգևող:** Եվ արևի, հողի համաձայնված ուժով// Դառնա լույսի սլաք-**հասկապարգև** ցողուն *(ԼԴ 1, էջ 334):*

ՀԱՍՏԱԿՈՏՈՇ, ած. **Հաստ կոտոշներ ունեցող**: [Ցուլը] …. քնքշությամբ նրա մեջքին դրեց **հաստակոտոշ** գլուխը *(ՎԲ, էջ 364):*

ՀԱՍՏԱՃԻՐԱՆ, ած. **Հաստ ճիրաններ ունեցող**: Դա մի հիա-սքանչ հայելի էր՝ կանգնած երկու **հաստաճիրան** թաթերի վրա .... *(Ռոուլ., էջ 213):*

ՀԱՍՑԵԱՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ, գ. **Հասցեների փոխանակու-թյուն, իր հասցեն տալով՝ ուրիշի հասցեն վերցնելը**: .... Ոչ ոք մյուսի պաշտոնը չէր հարցնում, **հասցեափոխանակությունները** հազվա-դեպ էին .... *(ՎԻ, էջ 283):*

ՀԱՎԱՄՐԳԱՊԱՏ, ած. **Հավամրգու թփերով պատված**: .... **Հա-վամրգապատ** պարապուտներում տեղ-տեղ սոճուտներ կային *(Սթոուն, էջ 24):*

ՀԱՎԵՐԺԱԾՈՒԽ, ած. (բնստ.): **Հավերժորեն ծխացող**: Բոր-բոքվել է Հայոց օջախն **հավերժածուխ** *(ԼԴ 1, էջ 169):*

ՀԱՎԵՐԺԻՄԱՍՏ, ած. **Հավերժ իմաստ ունեցող**: Ակունքներից զատ, քառյակները լիցքավորվել են բանաստեղծի սեփական կանխազգացումներով, որոնք հանգեցրել են **հավերժիմաստ** խտա-ցումների *(ԳԹ, 18.10.2019):*

ՀԱՎՔԱԵՐԳ, գ. (բնստ.): **Հավքերի երգ:** Հրճվանքն են **հավքա-երգիդ**,// Խաչերն այդ արևազոր// Օրհնանք են բարուբերքիդ *(ԼԴ 1, էջ 116):*

ՀԱՐԱՎԱԲՆԱԿՉՈՒՀԻ, գ. **Հարավի՝ հարավային երկրների կին բնակիչ՝ բնակիչ կին**: Դիմագծերն ավելի նուրբ ու քնքուշ էին,

.... բայց դրանցում զգացվում էր **հարավարևակչուհու** կրակոտ հասունությունը *(Սթոուն, էջ 530):*

ՀԱՐԱՎԱՐԵՎԵԼՑԻ, գ. **Հարավարևելյան տարածքի բնակիչ**: Վերջիններս նայեցին մեզ իրենց ողբերգական աչքերով և Եվրոպայի **հարավարևելցուն** հատուկ կարճ վերին շուրթերով .... *(Ֆից., էջ 83):*

ՀԱՐԴԱՐԱՍԵՂԱՆ, գ. **Հարդարանքի համար նախատեսված սեղան**: Բարակ, կճու վարշամակ էր փռված ամենուր՝ .... **հարդարասեղանի** .... վրա *(Ֆոլք., էջ 29):*

ՀԱՐԹԷԿՐԱՆ, ած. **Հարթ էկրանով, էկրանը հարթ**: .... Բազմոցի դիմաց մի վիթխարի **հարթէկրան** հեռուստացույց էր դրրված *(Մոյես, էջ 33):*

ՀԱՐԿԱԶՐԿՎԵԼ, գ. **Հարկերից զրկվել**: Շնորհիվ Նապոլեոնի՝ կաթոլիկ եկեղեցին ի վերջո սանձվեց, **հարկազրկվեց** *(Հմց, news.am):*

ՀԱՐԿԱԿԵՐ, ած. (դիպվ.): **Հարկեր յուրացնող**: Մի՛ վիրավորեք հասարակական հատվածի ակտիվիստներին, մի՛ անվանեք «զրանտակեր» ու մի՛ ստացեք «**հարկակեր**» պատասխանը *(Հմց, news.am):*

ՀԱՐՑԱԽՈՒԶԵԼ, նբ. **Հարցերով քննել, հարցուփորձ անելով ինչ-որ բան պարզել**: .... **Հարցախուզել** եմ սուրբ Վեդաներին .... *(Հ1, էջ 24):*

ՀԱՐՑԱԿԱՆԱՑՎԱԾ, ած. **Հարցական երանգով արտաբերված**: .... Ծուխը ներս քաշեց, խնամքով ու ափսոսանքով դուրս հանեց, բաց թողեց ծխախառը **հարցականացված** խոսքը .... *(Հրաչօ, էջ 191):*

ՀԱՐՑԱԿԱՆԵԼ, նբ. **Հարցական առոգանությամբ արտաբերել**: Բանավոր խոսքի սրբագրում եմ արել: Միերն իր բառը չի **հարցականում** *(Հրաչօ, էջ 38):*

ՀԵԶԱՆԻՐՀ, ած. (բնստ.): **Հեզ նիրհած**: Գիշերացող եղեգնուտի լռության մեջ **հեզանիրհ**-// Նորից թավիշ թրթիռ դառնա անուշ բախտը մեզ տիրող *(ԼԴ 1, էջ 142):*

ՀԵԾԱՆՎԱԶԱՆԳ, գ. **Հեծանիվին ամրացված զանգ**։ .... **Հեծանվազանգի** փայլն է ակնարկում .... *(Սար., էջ 147)։*

ՀԵՂԱՓՈԽԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Հեղափոխության մասին գիտություն։** Ձևավորվել են **հեղափոխագիտության** երկու իրարամերժ ճյուղեր *(Հմց, aravot.am)։*

ՀԵՂԵՂԱԿՈՐՈՒՅՍ, մկբ., ած. **Ինչպես կորչում է հեղեղը, հեղեղի կորչելու նման**։ .... Ինչքան խմում-դատարկում էին, սրանց պարունակությունն այնքան ավելանում էր, պռնկեպռունկ հեղվում, **հեղեղակորույս** թափվում *(ԱրմՄ., էջ 72)։*

ՀԵՆԱԴԱՇՏ, գ. **Հենվելու, որպես հենարան՝ հիմք օգտագործելու դաշտ**։ .... Մարտական սահմանագիծը **հենադաշտ** է ծառայում նորանոր հարձակումների համար .... *(ՁԲ, էջ 408)։*

ՀԵՆԱՍԱՆԴՈՒՂՔ, գ. **Սանդուղքի կողքից վեր ձգվող երկար՝ բարձրանալ-իջնելիս վրան հենվելու հենակ ունեցող սանդուղք**։ Նրանք վեր բարձրացան **հենասանդուղքով** .... *(Սթոուն, էջ 638)։*

ՀԵՌԱԶՆՆՈՒՄ, գ. **Հեռվից զննելը։** Անպատճառ պայման է լավ **հեռազննումը** *(Ելինեկ, էջ 70)։*

ՀԵՌԱԽՈՍԱԳՐՔՈՒՅԿ, գ. **Փոքր հեռախոսագիրք**։ Ես հանեցի **հեռախոսագրքույկը** *(ՆԱբ., էջ 67)։*

ՀԵՌԱԽՈՍԱԷԿՐԱՆ, գ. **Հեռախոսի էկրան**։ Լենգդոնը **հեռախոսաէկրանին** նայեց .... *(Բրաուն, էջ 62)։*

ՀԵՌԱԽՈՍԱՀԵՌԱԳՐԱՅԻՆ, ած. **Հեռախոսային և հեռագրային**։ .... Ազդանշաններ էին ուղարկում Ամերիկյան **հեռախոսահեռագրային** ընկերության ցանցում *(Այզ., էջ 30)։*

ՀԵՌԱԽՈՍԱՐՇԱՎ, գ. **Հեռախոսային արշավ, հեռախոսով սրան-նրան՝ շատերին դիմելը։** Հուլիսի վերջին ես հերթական **հեռախոսարշավ** կատարեցի այն գործիչների աշխատասենյակները, որոնք, ըստ էության, ղեկավարում էին մեր պետությունը *(ՁԲ, էջ 69)։*

ՀԵՌԱՂԵԿ, գ. **Հեռվից ղեկավարող հարմարանք։** [Նրանք] դիտում էին, թե ինչպես էր Դադլին տարբեր չափերի փաթեթների

միջից իրար ետևից հանում մարզական հեծանիվը, կինոխցիկը, **հեռաղեկով** թռչող խաղալիք ինքնաթիռը ... *(Ռոուլ., էջ 18):*

ՀԵՌՈՒՍՏԱՀՈՒՇԱՐԱՐ, գ. **Հեռուստատեսային ելույթը գրավոր ցուցադրող՝ հուշող սարք, էկրան**: Ամելիոն ծանոթ չէր ելույթի նյութերին, որ հայտնվում են **հեռուստահուշարարով** .... *(Այգ., էջ 342):*

ՀԵՌՈՒՍՏԱՆՈՎԵԼ, գ. Նովելի հեռուստաբեմականացվող տարբերակ: Նոր **հեռուստանովել** Առաջին ալիքի եթերում *(Հմց, aravot.am):*

ՀԵՌՈՒՍՏԱՇԱՐԺԱԿԱՅԱՆ, գ. **Հեռուստատեսային շարժական կայան**: Հանրային հեռուստաընկերության **հեռուստաշարժակայանն** արդեն Արցախում է *(Հմց, aravot.am):*

ՀԵՌՈՒՍՏԱՍԱՐՔԱՎՈՐՈՒՄ, գ. **Հեռուստատեսային սարքավորում**: Մենք ԲիԲիՍի-ի **հեռուստասարքավորումները** շտապ լցրինք թափքի մեջ …. *(ՁԲ, էջ 263):*

ՀԵՌՈՒՍՏԱՔՆՆԱԴԱՏ, գ. **Հեռուստահաղորդումների քննադատ**: Բայց **հեռուստաքննադատներից** ոչ ոք «չնկատեց» դրա անհետանալը *(Պոզներ, էջ 125):*

ՀԵՎԱՇՏԱՊ, ած. **Հևալու չափ շտապող:** Հիշում ես .... չափազանց **հևաշտապ** այդ դրխկոցն ու ճռճքը *(ԱՄ, էջ 30):*

ՀԵՎԱՍՊԱՌՎԵԼ, չբ. **Հևալուց շունչը կտրվել, շնչասպառվել հևալուց**: Տարազույն դարձած .... ելավ բազկաթոռից և **հևասպառվելով** սկսեց բղավել .... *(ՄԲ, էջ 140):*

ՀԵՏԱՄԱՆՈՐՅԱ, ած. **Ամանորին հաջորդող:** Ամանորին ԱՄՆ նախագահը նախաամանորյա և **հետամանորյա** օրերին էլ իրականացնում է նախագահական ընտրարշավ *(Հմց, aravot.am):*

ՀԵՏԱՆՁՐԵՎՅԱ, ած. **Անձրևին հաջորդող**: **Հետանձրևյա** թարմ օդի մեջ նա պարզ ու հստակ տեսնում էր .... *(Ռուշդի, էջ 68):*

ՀԵՏԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Արտադրությանը հաջորդող շրջան:** Պետությունը աջակցում է ֆիլմերին նախաարտադրության փուլում, արտադրության փուլում և **հետարտադրության** փուլում *(Հմց, aravot.am):*

ՀԵՏԱՑՈՒՅՑ, ած. **Հետնը ցույց տվող:** Ես հայացք գցեցի **հետացույց** հայելուն .... *(Տուռմ., էջ 67):*

ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Հետաքրքրված լինելը**: Տե՛ս ՀԱՓՇՏԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ-ի օրինակը:

ՀԵՏՀԱՄԱՅՆԱՎԱՐԱԿԱՆ, ած. **Համայնավարական կարգերին՝ համայնավարությանը հաջորդած՝ նրանից հետո տեղի ունեցած**: **Հետհամայնավարական** տեղաշարժեր *(ՋԲ, էջ 538):*

ՀԵՏՀԱՆՐԱՔՎԵԱՅԻՆ, ած. **Հանրաքվեին հաջորդած**: Հավանաբար ստեփանակերտցիները դեկտեմբերյան այդ **հետհանրաքվեային** օրերից սկսեցին աստիճանաբար տեղափոխվել նկուղները *(ՋԲ, էջ 22):*

ՀԵՏՆԱԳՈՏԻ, գ. **Հագուստի հետնամասի գոտի:** Մուգ դեղնագույն վերարկու ուներ հագին, նույն կտորի հաստ **հետնագոտիով** .... *(ԹԺՀ, էջ 22):*

ՀԵՏՍՓՅՈՒՌՔՅԱՆ, ած. **Սփյուռքի ձևավորման շրջանից հետո:** Թե՛ **նախասփյուռքյան** և թե՛ **հետսփյուռքյան** հայ իրականությունը լեցուն էր  բազում «արտառոցություններով» .... *(Ա.Ավ., էջ 58):*

ՀԵՔԻԱԹԱԹԵՐԱՊԻԱ, գ. **Բուժում հեքիաթի օգնությամբ:** Նա որոշել է իր մատուցած **հեքիաթաթերապիայի** ամենահետաքրքիր մասերում դադարեցնել ընթերցանությունը *(Հմց, Tert. am):*

ՀԵՔԻԱԹԱՀՅՈՒՍ, ած. **Հեքիաթային, հեքիաթներում հյուսված**: .... Նայում է հեռավոր, հեռուներում **հեքիաթահյուս** շամանդաղների մեջ պեծպեծվող արևելքներին .... *(Հրաչօ, էջ 22):*

ՀԸՄՀԸՄՈՑ, գ. **Կարծիքը հայտնել չկամենալու բացականչություն՝ ի պատասխան հըմ ասելը**: Լավագույն դեպքում ի պատասխան **հըմհըմոց** էի ստանում կամ շուրթերի ինչ-որ շարժում .... *(Պոզներ, էջ 237):*

ՀԻԴՐՈԱՀԱՐԲԵԿՉԱԿԱՆ, ած. **Ջրային պաշարների օգտագործման դեմ ուղղված:** Չմոռանանք, այս դարը **հիդրոահարբեկչական** դար է նաև, և քաղցրահամ ջրային պաշարները ռազմավարական նշանակություն ունեն *(Հմց, aravot.am):*

ՀԻԴՐՈՀԱՐԵԿՉՈՒԹՅՈՒՆ, գ. **Ահաբեկչություն ջրային պաշարների օգտագործման դեմ:** Դեռևս խորհրդային տարիներին թշնամին վարել է **հիդրոահաբեկչության** քաղաքականություն *(Հմց, aravot.am):*

ՀԻՇԱՊԱՀՈՑ, գ. **Ժամանակակից համակարգիչներում տեղեկատվական բազան պահելու կոշտ սկավառակ:** .... Շատ տեղեկություններ ջնջվում են որոնման գործիքների **հիշապահոցից** *(ՀՀ, 03.12.2019):*

ՀԻՄՆԱԶԱՐԿ, ած. **Հիսուն զարկի, իրար հետևից հիսուն փամփուշտ կրակելու հնարավորություն ունեցող**: Նրանք ունեին ընդամենը մեկ էլեկտրական ատրճանակ .... **հիսնազարկ** մոդել էր 27 թվականի .... *(ՄԲ, էջ 130):*

ՀԻՍՈՒՍԱՁԱՅՆՎԱԾ, ած. (բնստ.): **Հիսուսի ձայնի վերածված**: Մեր տաճարներում, քո գրախոսքով,// Հիսուսաձայնված զանգը ղողանջեց *(ԼԴ 1, էջ 276):*

ՀԻՏԼԵՐԱՆՄԱՆ, ած. Այստեղ՝ **Հիտլերի հայացքները՝ գործունեության ծրագիր ունեցող**: **Հիտլերանման** գործչին կարելի է ընտրել միանգամայն ժողովրդավար կերպով *(Պոզներ, էջ 117):*

ՀՂՎԵԼԻՔ, ած. **Այն, ինչ որ պիտի հղվի՝ ասվի**: Եվ նա թողեց, որ զինվորներին **հղվելիք** ոգեշնչման հորդորը շարունակեն անձրևը, Տաթևի վանքը և օծման արարողությունը *(ԱրմՄ., էջ 217):*

ՀՅՈՒՐԱՄՈԼ, ած. **Շատ հյուրասեր:** Այս նահապետական հյուրընկալությամբ Թումանյանը նման էր …. **հյուրամոլ** Պռոշյանին *(ԹԺՀ, էջ 200):*

ՀՆԱՀԱՄ, ած. **Հին համ ունեցող:** Հաջորդ առավոտյան նախաճաշեցին ձավարի **հնահամ** փաթիլներով .... *(Ռոուլ., էջ 34):*

ՀՆԳԱՊԱՏ, ած. **Հինգ պատ ունեցող**: .... **Հնգապատ** խըրճիթն ամուր կանգնած էր դեռ .... *(ՎԲ, էջ 131):*

ՀՆՈՏՆԱԿ, գ. **Հնամաշ ոտնակ**: Ալիստերի մեքենայի դիմաց կայանած բեռնատարը նախապատերազմյան մոդելի էր՝ **հնոտնակով** …. *(ԱՄ, էջ 69):*

ՀՆՈՒԿԱՑՆԵԼ, նբ. (խսկց.)։ **Հնուկ դարձնել, հնացնել, նորությունը՝ թարմությունը կորցնել**։ - Երևում է, շատ ես պահել։ - **Հնուկացրել** եմ։ - Բա ասելու բանը **կհնուկացնե՞ն**, ասա *(Հրաչօ, էջ 50)։*

ՀՈԳԵԶՐՈՒՅՑ, գ. **Հոգեկան մտերմիկ զրույց**։ Շատ կուզեր ունենալ այդ **հոգեզրույցը** իր ունկնդրի հետ .... *(ՀՀ, 06.12.2019)։*

ՀՈԳԵԾՆՈՂ, գ. **Որդեգրող ծնողը։** Նրա անհետանալուց հետո [ապրում էի] **հոգեծնողներիս** հետ Հերմանիում .... *(Տումս., էջ 17)։*

ՀՈԳԵԿԱՄՈՒՐՋ, գ. **Հոգեկան կամուրջ՝ կապ**։ Ամիրխանյանը կարծում է, որ մարդկության համար ամենակարևորը միմյանց միջև **հոգեկամուրջը** չկորցնելն է *(ՀՀ, 06.12.2019)։*

ՀՈԳԵՀԱՎԱՍԱՐԱԿՇԻՌ, ած. **Հոգեպես հավասարակշիռ**։ Եվ ապազան ընտրյալ ամբոխին է պարգևատրելու այն **հոգեհավասարակշիռ** երանությունը .... *(Նայբ1, էջ 92)։*

ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ, ած. **Հոգեկան ներգործություն ունեցող՝ կատարող**։ **Հոգեներգործուն** լուսավորչություն *(Այգ., էջ 38)։*

ՀՈԳՆԱՏԵՍ, ած. **Հոգնած տեսք ունեցող:** Տե՛ս ԵՐԳԻԾԱԽՌԻՎ-ի օրինակը։

ՀՈԳՍԱՏԵՐ, գ. **Հոգսերի տեր, հոգսերը՝ պետքերը քաշող՝ հոգացող**։ Արդեն մեծ տղա էր, մեռնողին ապրողից ջոկող, ընտանիքի մոտալուտ **հոգսատերը** *(ՎԻ, էջ 335)։*

ՀՈԼԱՆԴԱՀՊԱՏԱԿ, գ. **Հոլանդիայի հպատակ**։ Հաղթող դարձած **հոլանդահպատակ** Սերգեյ Տիվյակովին նա զիջել է կես միավոր *(ՀՀ, 06.12.2019)։*

ՀՈՂԱԹՈՒԽ, ած. **Հողի, թուխ գորշ գույն, գորշաթուխ**։ Տե՛ս ԴԵՂՆԱԿԻՏՐՈՆԱԳՈՒՅՆ-ի օրինակը։

ՀՈՂԱՀԱՎԱՏ, ած. (բնստ.)։ **Անձնվեր, հողին նվիրված՝ հավատացող**։ .... Սակայն շատերը քո մայր էության համար// Տվել են կյանքն իրենց,// Իրենց **հողահավատ** արյունն հեղել *(ԼԴ 1, էջ 315)։*

ՀՈՂՄԱՊՏՏՎԵԼ, կբ. և չբ. **Հողմի նման պտտվել։** .... Եվ ծանոթ կարուսելը խաղացողներից ու հետաքրքրասերներից **հողմապտտվում** էր նրա շուրջ .... *(Ցիպ., էջ 114)։*

ՀՈՂՄԱՍՅՈՒՆ, գ. **Հողմի սյուն՝ շերտ, հողմաշերտ**: Պարոնը վստահաբար ճեղքեց փողոցի **հողմասյունը ....** *(ՄԲ, էջ 157):*

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂ, գ. **Հողը օգտագործող, մշակող**: .... Արդեն կան մասնագետներ և իրենց խորհուրդներով աջակցում են **հողօգտագործողներին** *(ՀՀ, 10.03.2020):*

ՀՈՎՏԱՄԱՍ, գ. **Հովտի մաս**: .... Նայում էր գետի ողողվող **հովտամասում** քամուց տատանվող մացառուտներին .... *(Հանդկե, էջ 230):*

ՀՈՐԻՆԱՍՏԵՂԾԵԼ, նբ. **Հորինելով ստեղծել:** .... Որպեսզի սովորեմ սիրել աշխարհը այնպես, ինչպիսին այն կա, չհամեմատելով այն մի ինչ-որ իմ կողմից ցանկալիի հետ, իմ երևակայությամբ ստեղծված աշխարհի, իմ ուղեղում **հորինաստեղծված** կատարելատիպի հետ .... *(Հ1, էջ 157):*

ՀՈՐՁԱՆԱԽՌԻՎ, ած. (փխբ.): **Ալիքված, ալեկոծված, խառնըված**: Այսպես Գովինդան տեսնում էր դիմակին քարացած այդ ժպիտը, հոսանուտ ու **հորձանախռիվ** կերպարանքների գլխավերևում շողշողացող այդ ժպիտը .... *(Հ1, էջ 165):*

ՀՌԵՏՈՐԱԿԵՐՊ, մկբ. **Հռետորի նման**: Եվ դու տարուբերվում ես այդ երկու չափագրումների միջև՝ քեզ թե ուրիշի համար, **հռետորակերպ** չորացող կոկորդով .... *(Նայբ.1, էջ 60):*

ՀՐԱՃԵՐՄԱԿ, ած. **Հրի՝ կրակի գույնին տվող ճերմակ**: Տե՛ս ԲՈՐԲԱՆԱԼ-ի օրինակը:

ՀՐԱՅՐՔԱԼԵՑՈՒՆ, ած. **Հրայրքով, կրքով լեցուն**: Պոեզիայի բնազանցությունը նրան ընծայել էր ճախրելու թևեր, ու նա **հրայրքալեցուն** սիրտը հանձնել էր թռիչքի հմայքին *(ԳԹ, 17.05.2019):*

ՀՐԱՏԱՐԱԿԱՇԱՐՔ, գ. **Հրատարակությունների շարք**: .... Ջիլբերտրուդը այդ ռուսներին խոստացել էր «Նշանավոր մարդկանց կյանքը» **հրատարակաշարքում** գիրք գրել .... *(Ազգ, 08.02.2019):*

ՀՐԴԵՀԱՎԱՐՍ, ած. (բնստ.): **Հուր մազեր ունեցող:** Իմ դեմ արդեն **հրդեհավարս** պարում է կին,// պարում է հեթանոս կրոնը շոգ *(ԼԴ 1, էջ 183):*

ՀՐՈՒՇԱԿԵՂԵՆԱՅԻՆ, ած. **Հրուշակեղենին հատուկ**: Նրա մորաքույր Քրիստինան նրան կոնֆետներով է կերակրում և ոչ միայն կոնֆետներով, այլև իր ողջ **հրուշակեղենային** էությամբ .... *(Բորգեն, էջ 72):*

ՀՈՒԶԱԶՄԱՅԼ, մկբ. (բնստ.): **Հուզված և զմայլված:** Հավատացյալն է քեզ նայում **հուզազմայլ**,// Եվ դու որպես ոգենիչ,// Եվ որպես հայր մրմնջում ես .... *(ԼԴ 1, էջ 262):*

ՀՈՒԶԱՇՈՒՆՉ, ած. **Հուզառատ, հուզական շունչ ունեցող**: Իհարկե, **հուզաշունչ** է Ցոդիկի եզրահանգումը .... *(ԳԹ, 05.04.2019):*

ՀՈՒՇԱԳՐԱՍՏԵՂԾ, ած. **Հուշագրությունների ստեղծմանը նպաստող**: Հեղինակը **հուշագրաստեղծ** գործընթացում առանձնացնում է հարակից ստեղծագործությունների այդ երկու տեսակները *(ԱշԳ, էջ 33):*

ՀՈՒՇԱԳՐՈՂ, գ. **Հուշեր գրող, հուշագրության հեղինակ**: **Հուշագրողը** (մեմուարիստը) երևույթներին նայում է անձնական կյանքի պատուհանից *(ԱշԳ, էջ 56):*

ՀՈՒՇԱՆԿՅՈՒՆ, գ. **Որևէ մեկի կամ որևէ իրադարձության նվիրված հուշանյութերի, լուսանկարների ցուցադրման անկյուն:** Գագիկ Մանուկյանի անվան հուշանկյուն՝ Գյումրու «Վարդանյան» պարի թատրոնում *(Հեռ., Արմնյուզ, 17.10.2021):*

ՀՈՒՇԱՊՆԱԿ, գ. (բնստ., փխբ.): **Հուշերի ամբողջություն:** Մանկության **հուշապնակի** մյուս գույնը կինո «Մոսկվան» է *(Հեռ., Հ1, 08.10.2019):*

ՀՈՒՇԱՔԱՅԼ, գ. **Հիշատակության քայլերթ**: Էլ չասած, որ դեպքը մարտի 1-ի ցավոտ վերհուշից և **հուշաքայլից** մի քանի օր անց էր, և հենց նույն տեղում *(ԳԹ, 22.03.2019):*

ՀՈՒՍԱՀԱՍՏԱՁԱՅՆ, ած. **Հուսահատ ձայնով հնչող**: Փողոցները լիքն էին ապօրինի կայանված բեռնատարներով ու աղմկարար, **հուսահատաձայն** չինարենի կետկետումով *(ԱՄ, էջ 215):*

ՀՈՒՍԱՀԱՏԻՉ, ած. **Հուսահատեցնող, հուսահատություն պատճառող**: Երջանկությունն էլ կարող է **հուսահատիչ** լինել .... *(ՆԱդ., էջ 182):*

ՀՈՒՍԱՊԱԿԱՍ, ած. **Հույսը պակաս, քիչ։** .... [Շահնուրը] գործ ունի ոչ միայն մորմոքող հայ անցյալի ու ցավաշատ ներկայի, այլև **հուսապակաս** ներկայի հետ *(Ա.Ավ., էջ 58)։*

## Ձ

ՁԱՅՆԱԿՈՂԱՎՈՐՈՂ, **Ձայնը կողավորող։** .... Անհատական **ձայնակողավորող** հեռախոսից են զանգում *(Բրաուն, էջ 34)։*

ՁԱՅՆԱՄԵԿՈՒՍԱՑՎԵԼ, բ. **Ձայնը մեկուսացվել՝ շրջապատից առանձնացվել։** .... Ստեց, թե կինոսրահը **ձայնամեկուսացված** է *(ԱՄ, էջ 77)։*

ՁԱՎԱՐԱՇԻԼԱ, գ. **Ձավարով եփված ուտեստ։** .... Տոնական սեղանին կլիներ ինչ անհրաժեշտ է՝ բոռկ, թարմ պանիր.... Հատուկ պատրաստված **ձավարաշիլա**.... *(ՆԱ, էջ 228)։*

ՁԳՈՂԱՏԵՆՉ, ած. (բնստ.)։ **Ձգող և տենչալի։** Եվ կաթում են արդեն աստղամրգեր// **Ձգողատենչ** երկրագնդի վրա ... *(ԼԴ 1, էջ 212)։*

ՁԵՂՆԱՊԱՏՈՒՀԱՆ, գ. **Ձեղնալուսամուտ, ձեղունի մեջ բացված պատուհան**։ .... Շվեյցար Ֆյոդորը .... փայտյա ելարանով բարձրացել ու մտնում էր **ձեղնապատուհանից** ներս *(ՄԲ, էջ 229)։*

ՁԵՌՆԱՄԱՇԿ, գ. **Ձեռքի մաշկը**։ .... Եվ Կոնին նրա անկշիռ տոտիկների միջով հավասարակշռվող կենսահյուլեի մեղմ տրոփյունը զգաց իր **ձեռնամաշկի** վրա *(Հերբերթ, էջ 185)։*

ՁԵՌՆՈՑԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Ձեռնոցների արտադրություն։** .... Մենք քեզ կոչնչացնենք քո ստեղծագործական **ձեռնոցարտադրությունը** հետը միասին *(Նայր.3, էջ 3)։*

ՁԵՌՔԱՊԱՐԶ, մկբ. (բնստ.)։ **Ձեռքերը պարզած։** Ու երբ **ձեռքապարզ** նա քեզ գիրկն առավ .... *(ԼԴ 1, էջ 287)։*

ՁԻԱԳԼԽԱՔԱՆԱԿ, գ. **Ձիերի գլխաքանակ**։ Հավաքագրելով անհրաժեշտ **ձիագլխաքանակ՝** արաբական արագավազ թերեքի մաքրացեղ ձիերի արյան ներարկմամբ կարելի է ստեղծել ղարաբաղյան նժույգի խառնածինը *(ՀՀ, 12.02.2020)։*

ՁԻԱԽՈՒՄԲ, գ. **Ձիերի խումբ**: Տե՛ս ԹԱԳԱՎՈՐԱԽՈՒՄԲ-ի օրինակը:

ՁԻԱՄԻՍ, գ. **Ձիու միս**: Բույրն ինձ ջահելացրեց, .... կտրատած **ձիամսի** դրախտային բույրը *(ՄԲ, էջ 157):*

ՁԻԱՅԻՆ, ած. **Ձիերին առնչվող**: Զգացի, որ պարտվում եմ, ոչ միայն հավային, այլև **ձիային** ճակատամարտում .... *(Հրաչօ, էջ 35):*

ՁԻԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Ձին՝ ձիուն պաշտելը՝ մեծարելը**: Տե՛ս ԹԱԳԱՎՈՐԱԽՈՒՄԲ -ի օրինակը:

ՁԻԱՍԱՅԼԱԿ, գ. **Փոքր ձիասայլ՝ ձիու լծվող սայլ**: Ջոկատը .... կազմված էր .... ցեմենտով և շինարարական այլ նյութերով բեռնված **ձիասայլակներից** ու բեռնատարներից *(Ձեէթ., էջ 12):*

ՁԻԱՎԱՃԱՌԱԿԱՆ, ած. Այստեղ՝ **ձիու վաճառք կատարվող, որտեղ ձի է վաճառվում**: Գործակալական լայն հանգույց ընդգրկեց **ձիավաճառական** հրապարակները .... *(ՄԲ, էջ 336):*

ՁԻԳՍՐՈՒՆՔ, ած. **Ձիգ՝ երկար սրունքներ ունեցող՝ սրունքներով**: .... Պարարտ, ճերմակ ձին դուրս էր բերում թամբին **ձիգսրունք,** շատ գեղեցիկ մի կնոջ .... *(ՄԲ, էջ 94):*

ՁԻԹԱՊՏՂԱԿԱՆԱՉ, ած. **Ձիթապտղի գույնի նման կանաչ**: .... Անասելի նիհար էր ու չոր, գնչուի սև մազերով, դեմքը **ձիթապըտղականաչ** .... *(Բունին, էջ 252):*

ՁՄԵՌՆԱՄԵՐԿ, ած. **Ձմռանը, ձմռան պատճառով մերկացած**: **Ձմեռնամերկ** բարդիներն ու ձյունածածկ քրքումադաշտերը ծփում էին նրանց շուրջը .... *(Ռուշդի, էջ 32):*

ՁՅՈՒՆԱԽԱՎԱՐ, գ. **Ձյան պատճառով առաջացած խավար. ձյունախառն խավար**: .... Երկար նստել էի առանց հանվելու, վեցերորդ հարկի բարձրությունից նայելով պատուհանից անսահմանորեն տխուր նախաիրիկնային **ձյունախավարին** .... *(Բունին, էջ 281):*

ՁՅՈՒՆԱԿՈՏՈՐ, ած. **Ձյունից կոտրված**: Անտառային կոմիտեն «Հայանտառի» հսկողության ներքո գտնվող անտառներում թափուկից, քամատապալ, **ձյունակոտոր** և սանիտարական հատումներից զգալի չափով գոյացած փայտանյութը տրամադրում է

բնակչության վառելիքի պահանջները բավարարելուն .... *(ՀՀ, 14.02.2020):*

ՁՅՈՒՆԱԿՐԿՆԱԿՈՇԻԿ, գ. **Ձյան դեպքում հագնելու կրկնակոշիկ**: .... Նա .... ձմռանը սահմանափակվում էր մեծ մասամբ իր լայն **ձյունակրկնակոշիկներով** ավելի կարճ, բայց, իհարկե, ոչ պակաս հոգնեցուցիչ զբոսանքներով *(Ջեեթ., էջ 102):*

ՁՅՈՒՆԱՄՈՒՃԱԿ, գ. **Ձյան մուճակ**: Նա մեր մի խմբի Յոսեմիթ **ձյունամուճակ** քշելու էր տանում *(Այգ., էջ 21):*

ՁՅՈՒՆԱՏԱՐԱՓ, ած. **Ձյանառատ:** Մի ցուրտ, **ձյունատարափ** երեկո, Հովհաննես Թումանյանի անվանակոչության օրը *(ԹԺՀ, էջ 673):*

ՁՅՈՒՆԱՏՈՓԱՆ, ած. **Ձյունը տոփանող**: .... Ձմռան երեկոներին լսում էր **ձյունատոփան** մեքենաների խուլ դզզոցը, որոնք հեռվում նախապատրաստում էին վայրէջքի հրապարակը .... *(Ջեեթ., էջ 122):*

ՁՆԱՍԱՀՆԱԿ, գ. **Ձյան վրա սահելու հարմարանք**: Կերպարանափոխված արշավանք եղջերուների **ձնասահնակի** վրա *(Հմց, aravot.am):*

ՁՆԱՍՈՂԱՆՔ, գ. **Ձյան տեղաշարժվելը, սահելը**: Նորերս **ձնասողանք** էր եղել՝ պղտորելով գետի զուլալ ջրերը *(ՆԱ, էջ 246):*

ՁՆՀԱԼՈՑՔ, գ. **Ձնհալը, ձյան հալվելը**: .... Ինչու՞ է կարծել, թե առվակ է, որ կարգին ջուր է ունենում միայն գարնան **ձընհալոցքների** ժամանակ, մեկ էլ աշնան անձրևներին *(Հրաչօ, էջ 104):*

ՁՈՂԱՀԱՑ, գ. **Ձողի նման՝ բարակ ու երկար հաց**: .... Նրանք .... կեսօրվա ընդմիջմանը լուռ նստում էին մի ձյունապատ եղևնու տակ և իրենց **ձողահացն** էին պահում կրակի վրա *(Ջեեթ., էջ 44):*

ՁՈՐԱԿԱՆՋ, ած. (փխբ.): **Ականջաձև ձոր**: Տե՛ս ԵՐԿՆԱՍԱՐ-ի օրինակը:

ՁՎԱՃԵՐՄԱԿ, ած. **Ձվի ճերմակություն** ունեցող: .... Նա սկսեց պտտվել՝ աչքերը դեռ **ձվաճերմակ** դեմքի փափկության մեջ .... *(Ռուշդի, էջ 98):*

## Ղ

ՂԵԿԱՎԱՐԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. (դիպվ.)։ **Ղեկավարներին սպանելը**։ Պարզեցին, որ նրա հոգեկան աշխարհի վրա մեծ ազդեցություն է թողել Հայաստանի **ղեկավարասպանությունը** *(Հմց, news.am)։*

ՂՈՂԱՆՋԱՇԱՏ, ած. **Շատ՝ բարձր ղողանջներ ունեցող**։ .... Ծերուկի ձայնը դարձավ մարգարեական ահեղ և **ղողանջաշատ** *(ՄԲ, էջ 43)։*

## Ճ

ՃԱԳԱՐԱԿԵՐՊ, ած. **Ճագարի նմանվող**։ .... Յուրաքանչյուր հաջորդ սերունդ ավելի **ճագարակերպ** սերունդ է տալիս .... *(Հերբերթ, էջ 332)։*

ՃԱՀՃԱԲՈՒՅՍ, գ. **Ճահիճներում աճող բույս**։ Լճակից և ոչ մի ձայն չէր լսվում, և անձայն կանգնած էին **ճահճաբույսերը** *(ՄԲ, էջ 122)։*

ՃԱՄՓՈՐԴԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ, գ. **Ճամփորդամոլ, ճամփորդասեր լինելը. ճամփորդասիրություն**։ .... Մի քիչ **ճամփորդամոլություն** է .... *(Նալբ.3, էջ 102)։*

ՃԱՅԱՄԲՈՒԽ, գ. **Ճայերի խումբ**։ Հենց որ նա շարժվեց, **ճայամբոխից** ճիչ ու աղաղակ բարձրացավ *(ՌԲ, էջ 88)։*

ՃԱՅԵՐԵՆ, գ. (դիպվ.) **Ճայերի լեզուն**։ Ջանոն **ճայերեն** չգիտի *(ԳԹ, 17.05.2015)։*

ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՈՒՄ, գ. **Ճանապարհների հատման տեղը՝ խաչմերուկ**։ **Ճանապարհահատման** երկու կողմերում քարերի կույտեր էին….*(ԱՄ, էջ 66)։*

ՃԱՆԱՊԱՐՀԱՆՇԱՆ, գ. **Ճանապարհային նշան**։ Մարդն ուշանում է, **ճանապարհանշանը** չկա .... *(Հրաչօ, էջ 202)։*

ՃԱՆԿԱԵՂՈՒՆԳ, գ. **Ճանկի նմանվող եղունգ**։ Դեղին **ճանկաեղունգները** հատ-հատ սահում էին փոշու մեջ *(Ստայնբեք, էջ 21)։*

ՃԱՐՄԱՆԴԱԿԻՐ, ած. **Ճարմանդներ կրող, ճարմանդավոր**: .... **Ճարմանդակիր** դռնապանները ոտներիցս կբռնեն ու կգցեն սայլի մեջ *(ՄԲ, էջ 154):*

ՃԱՐՊԱՋՕԾ, ած. **Ճարպով օծված՝ պատված**: Պատկերացրեց իրեն թփերից դուրս նետելիս, բոբիկ, բարակ, **ճարպաօծ**, անտեսանելի ոտքերով թմբուկների միջև ցատկոտելիս *(Ֆոլք., էջ 67):*

ՃԱՐՊԱԿԵՐ, ած. և գ. **Ճարպ ուտող**: .... Բարակ լարերի վրա ամրացրեց տապակած ճարպեր և տեղադրեց տիկին **ճարպակերի** բնակավայրի չորս բոլորը *(Հոֆ., էջ 97):*

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ, ած. **Ճարտարապետական և գեղագիտական**: Յուրաքանչյուր կառույց ուրույն երանգ է հաղորդում փողոցների **ճարտարապետագեղագիտական** ձևավորման և ցուցադրանքի արտահայտչականության մեջ *(Հմց, news.am):*

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ, ած. **Ճարտարապետական հատակագծին վերաբերող**: Քաղաքապետարանից «Հետքին» տրամադրած **ճարտարապետահատակագծային** առաջադրանքի մեջ նշված է, որ ընկերությանը տրամադրվել է տարածք *(Հմց, news.am):*

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ած. **Ճարտարապետական և մշակութային**: Դիմազրկում են մայրաքաղաքն ու կենտրոնից վերացնում մի ամբողջ **ճարտարապետամշակութային** ժառանգություն *(Հմց, news.am):*

ՃԱՔԱՌԱՏ, ած. **Առատ ճաքերով**: Կավե կժի մեջ սառնությունը պահպանած ջրի սառցե համբույր, մազաղաթաչոր, կծկծած շրթունքների **ճաքառատ** կսկիծ ....*(Ռուշդի, էջ 446):*

ՃԳՆԱԿՅԱՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Ճգնակյացի կյանք վարելը**: .... **Ճգնակյացության** փորձի, զրկանքի ու պարզության միջոցով լուսավորության էր հետամուտ *(Այգ., էջ 54):*

ՃԳՆԱՋԱՆՈՐԵՆ, մկբ. **Ճիգ ու ջանք չխնայելով**: **Ճգնաջանորեն** խոնարհվում են իրենց տնային վիրահատական լամպի վրա *(Ելինեկ, էջ 152):*

ՃԵՂՔԱՆՑՆԵԼ, չբ. **Ճեղքելով անցնել:** .... Կրակներն այդու-հանդերձ **ճեղքանցնում** էին ընդմեջ ապակիների .... *(Յիպ., էջ 25):*

ՃԵՄԱՍԵԳ,ած. **Միգաձեմ, սիգալով ճեմող**: .... Հայոց **ճե-մասեգ** հյուսիսից սովորեցնողներ են, որ խուժում են երկիր *(Հրաչօ, էջ 205):*

ՃԵՊԱՍԱՀ, մկբ. ևած. **Արագ սահքով**: Օձը շրջվեց ու քարերի արանքով **ճեպասահ** խույս տվեց գերեզմանատուն *(Սար., էջ 158):*

ՃԵՐՄԱԿԱԲՈՒՆ,ած. **Ճերմակ բուն ունեցող**: .... **Ճերմակաբուն** կեչիների արանքում գերանակապ մի խրճիթ երևաց *(Քերվուղ, էջ 219)*:

ՃԵՐՄԱԿԱՇՂԱՐՇ, ած. **Ճերմակ շղարշ ունեցող: Ճերմակա-շղարշ** թիթեռները ճկվում էին տաժանակիր ձագարների կոտորակներում *(Միկ., էջ 115):*

ՃԻՉԱԹԵՐԱՊԻԱ, գ. **Բուժում ճչալու միջոցով:** Ջոբսի մոլի փնտրտուքը հանգեցրեց նաև պրիմիտիվ **ճիչաթերապիա** անց-նելուն .... *(Այզ., էջ 57):*

ՃԻՉԱՌԱՏ, ած. **Ճիչը՝ բարձր և սուր աղաղակը առատ՝ շատ**: Ավարտը շատ բուռն էր ու **ճիչառատ** *(ԳԽ1, էջ 120):*

ՃԿԱԽՈՂՈՎԱԿ, գ. **Ճկվող խողովակ**: .... **Ճկախողովակը** պայթեց .... *(ՀԼ, էջ 105)*:

ՃՂԱՀՅՈՒՍ, ած. **Ճյուղերից հյուսված**: Հետո նա հիշեց, որ ձեռնածուները ... այո ... Հնդկաստան .... **ճղահյուս** զամբյուղ .... *(ՄԲ, էջ 127):*

ՃՆՃՂԱԲՈՒՆ, գ. 1. **Ճնճղուկ(ներ)ի բույն: 2.** (փխբ.) **Շատ փոքր**: Էսպես մի բոլուկ երեխա բերին, **ճնճղաբնի** պես մի բան ծեփծեփեցին ու ապրում են ... *(ՎԲ, էջ 67):*

ՃՆՃՂԱԵՐԱՄ, գ. **Ճնճղուկների խումբ՝ երամ**: Հետևի նստա-րանի **ճնճղաերամը** զայրացած խշխշաց, մեքենագրուհու մատ-ները քարացան ստեղնաշարի վրա *(ՆԱ, էջ 144):*

ՃՆՃՂԱՁԱԳ, գ. **Ճնճղուկի ձագ**: .... Ընդունակ չի լինի զգալ տրորված **ճնճղաձագին** *(ՎԲ, էջ 16):*

ՃՇՄԱՐՏԱՀՈՒՆՉ, ած. **Ճշմարիտ հնչող, ճշմարտություն հնչեցնող**: Նա երգում է առանց պաճուճանքների, հստակ ու հաստատուն ձայնով, և այն **ճշմարտահունչ** է, քանզի չի չափազանցում ողբերգականը *(Ազգ, 08.02.20190):*

ՃՈՃԱԶԱՄԲՅՈՒՂ, գ. **Ճոճվող զամբյուղ:** Ծնողները իրենց սերունդներին լցնում են **ճոճազամբյուղների** մեջ *(Եղինեկ, էջ 155):*

ՃՈՃԱՐՎԵՍՏ, գ. **Ճոճվելու արվեստ**: Լարախաղացը ուրիշ մարդ էր, ավելի երիտասարդ, իր **ճոճարվեստի** մեջ ոչ այնքան փորձված *(ՎԻ, էջ 109):*

ՃՈՃԱՔԱՅԼ, ած., մկբ. **Քայլելիս ճոճվելով (ճոճվող քայլերով)**: **Ճոճաքայլ** էր գնում *(ՄԲ, էջ 2194):*

ՃՈՊԱՆԱՅԻՆ, ած. Այստեղ՝ **ճոպաններով**: .... Ինքը .... շրջակայքի **ճոպանային** և բազկաթոռային գնացքների կայարաններ մեկնելուց բացի ընդամենը մեկ անգամ էր հեռացել այդ վայրերից .... *(Զեեթ., էջ 131):*

ՃՏՊՏՈՒՆ, ած. **Ճտպտան, ճտպտացող**: Ի՞նչ է ուզում ավետել այս **ճտպտուն** արարածը *(ՎԻ, էջ 129):*

ՃՐԱԳԱԼԱՄՊ, գ. **Ճրագով լամպ**: .... Դեռևս սենյակ չէին բերել **ճրագալամպերը** .... *(Հոֆ., էջ 63):*

## Մ

ՄԱԳԱՂԱԹԱՉՈՐ, ած. **Մագաղաթի նման չոր**: Տե՛ս ՃԱՔԱՌԱՏԻ օրինակը:

ՄԱԶԱԲՈՒՐՄՈՒՆՔ, ած. **Մազերի բուրմունք ունեցող:** Եվ դու ժպտա **մազաբուրմունք** վերացումով երազի *(ԼԴ 1, էջ 142):*

ՄԱԶԱԿՈՒՅՏ, գ. **Մազերի կույտ**: .... Իր բաց դարչնագույն մազերը վերածվել էին տձև **մազակույտի ....** *(Մոյես, էջ 49):*

ՄԱԶԱՃԵՑՈՒՄ, գ. **Մազ աճեցնելը**: Նրա ընչացքը և զանգուրները պատիվ կբերեին **մազաճեցման** ամեն մի ռեկլամի *(Գրին, էջ 9):*

ՄԱԿԵՐԵՍԱՀԱՐԹՈՒՄ, գ. **Մակերեսի հարթեցում**: Ճանապարհի մի մասում անցկացվում է **մակերեսահարթման** գործընթացը …. *(ՀՀ, 19.03.2020):*

ՄԱՀԱՊԱՏԺԱՅԻՆ, ած. **Մահապատժի, դրա գործընթացի**: .... Վճիռը կայացրած դատավորը պարտավոր է ներկա գտնվել **մահապատժային** արարողությանը *(ՆԱդ., էջ 189):*

ՄԱՀԸՆԹԱՑ, գ. **Մահվան ընթացք, դեպի գերեզմանոց ընթացող մահվան թափորի ընթացք**: Մեկը մյուսին սյուն դառնալով՝ թափորը մի կերպ ոտքի է ելնում և շարունակում իր **մահընթացը** *(ՎԻ, էջ 171):*

ՄԱՄՌԱԿԱՆԱՉ, ած. **Մամուռի գույնի նման կանաչ**: Ամինան, վերհիշելով, թե հղի օրերին ինչպես էր դեռ չծնված մանչուկի քածը ստիպել, որպեսզի ժամանակն անշարժ, **մամռականաչ** լճակի պես կանգ առնի, սկսեց տարակուսել .... *(Ռուշդի, էջ 141):*

ՄԱՅՐԱՀՈՏ, ած. (բնստ., փխբ.): **Կյանք տվող, կյանք ստեղծող՝ արարող**: Ու իմ սիրտն էլ է ծլում հունդի պես,// Ծլում քո խղճի **մայրահոտ** ջանքով …. *(ԼԴ 1, էջ 332):*

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԱՊԵՏ, գ. (դիպվ.): **Մայրաքաղաքի ընտրված ղեկավար**: .... Մայրաքաղաք Երևանը **մայրաքաղաքապետ** ունի՝ թող ունենա .... *(Հրաչօ, էջ 74):*

ՄԱՆՐԱԹԵՐԹԻԿ, ած. **Մանրաթերթ, մանր ծաղկաթերթեր ունեցող**: **Մանրաթերթիկ** երիցուկ *(ՆԱդ., էջ 197):*

ՄԱՆՐԱԽՃԵ, ած. **Մանրախճով պատված:** Բայց Կարիբյան ծովում բուստախութերով շրջապատված, **մանրախճե** ափերով փոքր կղզու՝ Սան Լորենցոյի Հանրապետության սահմաններից դուրս բոկոնականության մասին ոչինչ հայտնի չէր *(Վոն., էջ 7):*

ՄԱՆՐԱԿԱՆՋ, ած. **Մանր ականջներ ունեցող**: .... **Մանրականջ**, ճերմակ ոչխարին կհիշե՞ս .... *(Ամիր., էջ 9):*

ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒՄ, գ. **Մանրամասնելը**: Մարդկանց առջև կարմրատակելու վախն էլ **մանրամասնման** կարիք ունի .... *(ԳԽ1, էջ 112):*

ՄԱՆՐԱՆՇԱՆ, ած. **Փոքր նշանակություն ունեցող**: Կարծում եմ հաղթանակս **մանրանշան** մի բան էր …. *(ԱՄ, էջ 157):*

ՄԱՆՈՒՇԱԿԱԳՈՒՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Ընդհանուր՝ համատարած մանուշակի գույն**: Մի տեսեք թե ի՜նչ **մանուշակագունություն** կա գետի այն՝ հեռավոր ափին .... *(Սթոուն, էջ 629):*

ՄԱՆՈՒՇԱԿԱԿԱՆԱՉ, ած. **Մանուշակագույն երանգ ունեցող կանաչ**: .... Փայլում էր լճակը, որը նման էր եղևնու ու սոճու **մանուշակականաչ** շրջանակ հագած հսկայական հայելու *(Քերվուդ, էջ 73):*

ՄԱՇՏՈՑԱՀՆԱՐ, ած. (բնստ.): **Մաշտոցի ստեղծած՝ հնարած: Մաշտոցահնար** տառերը բոլոր …. // Հույժ պատրաստ էին ստույգ դառնալու// Գրավոր ծնունդն հայ ամեն բառի…. *(ԼԴ 1, էջ 370):*

ՄԱՌԱԽՈՒՂԵ, ած. **Մառախուղից կազմված, խիտ մառախուղի առաջացրած**: Նա .... գլուխը երկարել, դուրս էր հանել կողովի եզրից ու հայացքը սևեռել **մառախուղե** պատին ու իջնող ձյանը *(Ջեթ., էջ 8):*

ՄԱՏՆԱԵՂՈՒՆԳ, գ. **Մատի եղունգը**: Նրանց **մատնաեղունգների** վրա փայլփլում էր Կուտեքսի բնականը .... *(ՀԼ, էջ 337):*

ՄԱՏՆԱԾԱՅՐ, գ. **Մատի ծայրը**: .... Սովորաբար նայում էր կնոջ սև **մատնածայրերին** .... *(Հանդկե, էջ 560)*:

ՄԱՏՆԱՍՏԵՂՆ, գ. (փխբ.): **Հարմարանք, որի վրա մատի ներսի հատվածը դնելով կատարում են նույնականացում**: .... Բթամատը դժկամորեն մոտեցրեց կենսաչափական նույնականացման **մատնաստեղնին** *(Բրաուն, էջ 68):*

ՄԱՏՆՈՍԿՐ, գ. **Մատների ոսկոր**: Ես կարող էի ժամերով զմայլվել…. ինչպես է ափի կողքով գծեր քաշում ու **մատնոսկրերով** լոշի վրա ակոսներ անում …. *(ՆԱ, էջ 20):*

ՄԱՐԴԱԷՇ, ԷՇԱՄԱՐԴ, գ. (հեգն.): **Էշի բնավորությամբ մարդ(իկ)**: Հիմա անկախություն է նաև էշերի աշխարհում: **Մարդաէշերն** ու **էշամարդերը** խառնվել են իրար .... ամեն մեկը իր նման է երևում *(Հրաչօ, էջ 115):*

ՄԱՐԴԱՀԱՄ ԳԱԼ, (բրբ.)։ **Մարդկային հատկանիշներ դրսևորել**։ Մարդու վրայից պիտի **մարդահամ** գա *(Հրաչօ, էջ 47)։*

ՄԱՐԴԱՄԵԾԱՐՈՒՄ, գ. **Մարդուն մեծարելը**։ Իմացազգայական յուրատիպ կերտվածքով, արվեստապաշտության ու **մարդամեծարման** յուրաշաղախ իր կերպարով, նա երիցս հավաստում է հայտնի այն ճշմարտությունը, որ ամեն մի ընտրյալ արվեստագետ մի աշխարհ է .... *(Մահտես., էջ 8)։*

ՄԱՐԴԱՇՈՒՆ, գ. (դիպվ., փխբ.)։ **Մարդ, որը շան նման է ապրում**։ Շունը, թե մարդը կմոտենար աղբարկղին՝ իր համար մեկ էր։ Շունը, մարդը .... **շնամարդը,** մարդաշունը .... *(Հրաչօ, էջ 148)։*

ՄԱՐԴԱՍԻՐԱԽԱՂ, գ. **Մարդկանց նկատմամբ սիրախաղ, մարդասիրության խաղ**։ .... Իմ խաղը կարելի է անվանել այսպես՝ **մարդասիրախաղ** *(ԳԽ1, էջ 123)։*

ՄԱՐԴԱՍՊԱՆԴ, գ. **Մարդկանց սպանդ, ոչնչացում**։ Բնությունն ինքը կնախաձեռնի համընդհանուր **մարդասպանդ** *(Բրաուն, էջ 121)։*

ՄԱՐԶԱՀԱՆԳՐՎԱՆ, գ. **Մարզական հանգրվան**։ Նոր կարգավիճակում անվանի մարզիկը ներկայացվելու է այսօր՝ Երևանի «Օլիմպավան» **մարզահանգրվանում** *(ՀՀ, 02.02.2020)։*

ՄԱՐԶԱՏՈՆԱՀԱՆԴԵՍ, գ. **Մարզական տոնահանդես**։ …. Տրվեց Լոռվա ձմեռ 49-րդ **մարզատոնահանդեսի** մեկնարկը …. *(ՀՀ, 25.02.2020)։*

ՄԱՐՄՆԱԲՈՒՅՐ, գ. **Մարմնի բույր, անուշահոտություն**։ Հազար ասպարեզ հեռվից կճանաչեր այդ միակ, ծանոթ ու հարազատ **մարմնաբույրը** *(ԱրմՄ., էջ 6)։*

ՄԱՐՄՆԱԿԱԶՄՎԱԾՔ, գ. **Մարմնի կազմվածք**։ .... Գրիգորը հիանալի **մարմնակազմվածք** ուներ և անչափ գրավիչ էր *(ՆԱ, էջ 91)։*

ՄԱՐՏԱՁԻ, գ. **Մարտերին՝ նաև մրցումներին մասնակցող՝ մարտական ձի**։ …. Ինչպե՞ս են քնելու նրանք, եթե մեքենաները վերցնես, կանգնա՞ծ։ **Մարտաձիերի** նմա՞ն …. *(Արեն, էջ 87)։*

ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ, ած. **Շուկայավարական, ապրանքների առքուվաճառքին առնչվող**: Նրա համար **մարքեթինգային** ծախսերը նույն արտադրական ծախսերի պես բան էին .... *(Այգ., էջ 177):*

ՄԱՔՐԱԽՈՐ, ած. (բնստ.): **Մաքուր և խոր:** ... Միայն դրախտի մեջ էր թևածում …. շուրջը միայն **մաքրախոր** եթեր *(ԼԴ 1, էջ 111):*

ՄԳԱԳՈՒՅՆ, ած. **Մուգ գույնի**: Սենյակի մեջտեղում ... սեղանն էր՝ …. վրան …. երեք **մգագույն** շիշ *(ՄԲ, էջ 181):*

ՄԳԴԱԿԱԿԱՐ, գ. **Կարի տեսակ:** …. Կտորը եզրերից ամբողջովին շուլալել էին խոշոր **մգդակակարերով** *(ՆԱ, էջ 240):*

ՄԳԵԼ, չբ. **Մուգ գույն ստանալ, մգանալ:** Մսի հարթ մակերեսը սկսել էր **մգել** ու կնճռոտվել *(Ստայնբեք, էջ 56):*

ՄԵԴԻԱԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. (դիպվ.): **Լրատվական գրագիտությունից զուրկ:** …. Առաջիկայում ժողովրդին կմեղադրեն, որ **մեդիաանգրագիտությունը** իրենց գլխի մեջ է *(ՉԻ, 14.12.2020):*

ՄԵԴՈՒԶԱՅԻՆ, ած. **Մեդուզայի նման, այն հիշեցնող**: Մի անգամ **մեդուզային,** դոնդող մարմինս այնպես ցնցվեց …. *(ՆԱդ., էջ 110):*

ՄԵԾԱՀԱՆ, մկբ. (բրբ.): **Մեծավարի (խսկց.), մեծի նման**: **Մեծահան** ասելու, նրանց խոսքին, նրանց ձեռին մտիկ անելու հետ մենք մեծանում, ֆերմայի վարիչ էինք դառնում .... *(Հրաչօ, էջ 15):*

ՄԵԾԱՊՈՒՃՈՒՐ, ած. (խսկց.): **Փոքրաթիվ, բայց տաղանդավոր**: .... Անմահներով առլեցուն Հայոց **մեծապուճուր** աշխարհում կա՞ արդյոք մեկը, որ չի ուզում անմահանալ *(Հրաչօ, էջ 92):*

ՄԵԿԾԱԼՔԱՆԻ, ած. **Մեկ ծալք ունեցող՝ ծալքով**: Տե՛ս ԱՐԻՍՏՈԿՐԱՏԱՎԱՅԵԼ-ի օրինակը:

ՄԵԿԿՈՃԱԿԱՆԻ, ած. **Մեկ կոճակ ունեցող, մեկ կոճակով աշխատող**: .... Ջոբսը .... ասաց, որ **մեկկոճականի** հասարակ մոդել է ուզում, որը կարժենա 15 դոլար .... *(Այգ., էջ 111):*

ՄԵԿՏԱԿ, ած. **Մեկ տակ՝ միայն դա հագած**: Միջանցքի լուսավորված ուղղանկյան մեջ **մեկտակ** գիշերանոցով Դարյա Պետրովնան հայտնվեց …. *(ՄԲ, էջ 254):*

ՄԵՂԵԴԻԱԿԱՌՈՒՑՈՒՄ, գ. **Մեղեդի կառուցելը, մեղեդիակերտում, մեղեդիաստեղծում**: .... **Մեղեդիակառուցման** մեջ Կոմիտասը ելնում է փոքրիկ ինտոնացիոն կորիզի զարգացման, ծավալման, ծաղկազարդման սկզբունքից *(ՊԲՀ, 3, 2019):*

ՄԵՂՄԱՀԱՅԱՑ, ած. **Մեղմ հայացք ունեցող՝ հայացքով**: .... Ռուլենի աչքերը **մեղմահայաց** ու խորաթափանց էին ... *(Սթոուն, էջ 514):*

ՄԵՂՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Մեղավոր, մեղք գործած լինելը**: Ծխելու և ալկոհոլ օգտագործելու **մեղսավորության** վերաբերյալ ջերմեռանդ աղոթքները ոչ մի կերպ արգելք չէին հանդիսանում այդ «մեղսավոր» բուռն, եթե չասեմ վնասաբեր առևտրին .... *(Պոզներ, էջ 22):*

ՄԵՂՎԱՄԹԵՐՔ, գ. **Մեղվաբուծությունից ստացվող մթերքներ**: Իսկ ակնամոմը, մեղրամոմը, մայրակաթը, բռնակաթը, ծաղկափոշին և այլ **մեղվամթերքներ,** որքան էլ ունենան օգտակար հատկություններ, լայն տարածում չունեն *(ՀՀ, 14.05.2020):*

ՄԵՂՐԱԼԱԶՈՒՐ, ած. **Մեղրի գույնին տվող լազուր՝ բաց կապույտ**: Մի պահ երեկոյան արևը Միջերկրականի **մեղրալազուրի** պես փայլատակեց պատուհանի մեջ *(Ֆից., էջ 44):*

ՄԵՂՐԱՔԱՄ, գ. **Մեղր քամելը**: .... **Մեղրաքամից** հետո 2-3 օր անց պետք է 2 անգամ կատարվի բուժում՝ 7 օրվա կտրվածքով *(ՀՀ, 06.03.2020):*

ՄԵՂՔԱՏԱՐԱԾ, ած. (բնստ.): **Մեղքերով լցված՝ տարածված:** Այս աշխարհը **մեղքատարած**// Գեհեն է անողոք *(ԼԴ 1, էջ 131):*

ՄԵՋՔԱՍԵՂՄ, ած. **Մեջքը սեղմող: Մեջքասեղմ** գոտին քո զառ՝ Լուսաստղից օղ է իջած *(ԼԴ 1, էջ 71):*

ՄԵՌԵԼԱԲԱՆ, գ. **Մեռելների՝ հանգուցյալների մասին խոսք ու զրույց**: .... Գնա քո արդեն հավերժ **մեռելաբանին** .... *(Հրաչօ, էջ 20):*

ՄԵՏԱՂԱԳՈՒՅՆ, ած. **Մետաղի գույն ունեցող**: Տե՛ս ԾԽԱԿԵՐՊ-ի օրինակը:

ՄԵՏԱՂԱՊԼԱՍՏԵ, ած. **Մետաղապլաստից պատրաստված**: Ես ապշած նայում էի սպիտակ **մետաղապլաստե** ամբարձիչին .... *(Մոյես, էջ 34):*

ՄԵՏԱՂԱՋԱՐԴՈՆ, գ. **Մետաղների ջարդոն՝ ջարդուք, մետաղաջարդուք**: Դե հա, բեժ գույնի «Օփել» է: **Մետաղաջարդոնի** այն նույն հավաքածուից, որը փտում էր կալանատեղիում *(Արեն, էջ 165):*

ՄԵՏԱՔՍԱԹԵԼԵ, ած. (փխբ.): **Մետաքսաթելի նման նուրբ ու փափուկ**: Սաթե սանրը նրա **մետաքսաթելե** վարսերը բաժանեց նարնջագույն երկարուկ մազափնջերի .... *(Վիան, էջ 22):*

ՄԵՏԱՔՍԱՃԵՐՄԱԿԱՎՈՒՆ, ած. **Մետաքսի ճերմակություն ունեցող, հիշեցնող**: .... Եվ մի էլեկտրական սարք ներքևից դեպի վերև խնամքով մերսում էր նրա կուրծքը՝ երկարուկ ու նուրբ, **մետաքսաճերմակավուն** խոզանակներով *(Վիան, էջ 67):*

ՄԵՏԱՔՍԱՇՐՇՈՒՆ, ած. **Մետաքսի շրշյուն՝ ձայն հանող, մետաքսյա և շրշուն**: .... Կատրամիդե թագուհին հասցրեց **մետաքսաշրշուն** հարսնաքող զցել ուսերին *(ԱրմՄ., էջ 19):*

ՄԵՐԿԱՊԱՐՈՒՀԻ, գ. **Կին մերկապարող**: Բայց **մերկապարուհու** թափուր աշխատատեղ կա *(Մոյես, էջ 18):*

ՄԵՐՁԵՐԿՐԱՅԻՆ, ած. **Երկրին մերձ՝ մոտ գտնվող**: Ժամանակ առ ժամանակ, նա օդ էր բարձրանում, **մերձերկրային** տարածքում, որպես ամպ, նայում էր վերևներից .... *(Նալբ1, էջ 20):*

ՄԵՐՁՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ, ած. **Քրիստոնեականին մերձ՝ մոտ:** Տե՛ս ԿԻՍԱԼՈՒԾՈՒՄ-ի օրինակը:

ՄԹԵՐԱՊԱՅՈՒՍԱԿ, գ. **Մթերքի պայուսակ**: .... **Մթերապայուսակները** գրեթե դատարկ էին *(Քերվուդ, էջ 21):*

ՄԹՆԱԿՈԽԵԼ, չբ. (բրբ.): **Մութը վրա տալ**: Գործը կհաջողի, հենց **մթնակոխի,** էլ մնան ի՞նչ անեն *(Հրաչօ, էջ 47):*

ՄԻԱԵԶՐՈՒԹՅՈՒՆ, գ. (փխբ.): **Միայն մեկ լուծում ճիշտ համարելը**: .... Իմ աշխարհայացքը տարբերվում էր .... միակողմանիությամբ, **միաեզրությամբ** *(Պոզներ, էջ 156):*

ՄԻԱՇԱՐԱՍՅՈՒՆ, ած., մկբ. **Մեկ շարասյունով**: Գնում ենք **միաշարասյուն**՝ մեկս մյուսի ետևից *(Արեն, էջ 215):*

ՄԻԱՈՍՏ, ած. **Մի ոստ ունեցող**: Ծառի վերևի **միաոստ** ճյուղն է, որի խնձորները կտցում են շտապող՝ չվող թռչունները .... *(Լ. Շահնուր, էջ 28):*

ՄԻԼԻՈՆԱՁԱՅՆ, ած. **Միլիոն՝ շատ-շատ, ձայներով**: .... Դրան հանկարծ արձագանքեց գորտերի **միլիոնաձայն** համերգը լճերի վրա .... *(ՄԲ, էջ 120):*

ՄԻԿՌՆԱՆԻ, ած. (բրբ.): **Միձեռանի, մի ձեռք ունեցող, մի ձեռքից զրկված**: Արդեն մեծ ես, ու՛թ տարեկան, հրեն խեղճ Ղարիբը՝ **միկռնանին,** գութանը լծել է, ... հոտաղ է հարկավոր .... *(Հրաչօ, էջ 10):*

ՄԻԿՐՈՇԱՐԺՈՒՄ, գ. **Շատ փոքրիկ, աննշան շարժում**: Երբեմն նրա առանձին **միկրոշարժումներից,** որոնց չի կարող հայտնաբերել ամենատես միկրոսկոպն անգամ, զգում եմ, որ .... ինձ է ձգտում *(ՆԱղ., էջ 109):*

ՄԻԿՐՈՖՈՆԱԿԻՐ, ած. **Միկրոֆոն՝ խոսափող կրող՝ ձեռքին ունեցող**: **Միկրոֆոնակիր** գեղեցկուհի *(ԳԽ1, էջ 151):*

ՄԻՆԻՀԱՄԱԿԱՐԳԻՉ, գ. **Շատ փոքր համակարգիչ**: Նա ստեղնաշարով ու մոնիտորով տերմինալ էր նախագծում հեռադիր **մինիհամակարգչի** համար *(Այզ., էջ 68):*

ՄԻՆԻՋԵՐՄԱԿԵՆՏՐՈՆ, գ. **Փոքր ջերմակենտրոն**: «Բաքսի» **մինիջերմակենտրոնները** բնակարաններում տեղադրելով՝ դու նվազագույնի ես հասցրել տաք ջրի խողովակների երկարությունը *(Արեն, էջ 54):*

ՄԻՆՉՎԱՂՈՐԴՅԱՆ, ած. **Վաղորդայնին նախորդող**: .... Զբոսանավն իր ճանապարհին էր հարթում Ադրիատիկ ծովի ջրերի նուրբ ծփանքից ծնվող **մինչվաղորդյան** մեգի միջով (*Բրաուն, էջ 28):*

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ, ած. **Դասավանդվող առարկաների միջև հաստատվող:** Կարևորվել է վերառարկայական, **միջառար-**

**կայական**, ներառարկայական կապերի հաստատումը *(Հմց, aravot.am):*

ՄԻՋԱՏԱՄԱՐՏ, գ. **Միջատների միջև տեղի ունեցող մարտ**: **Միջատամարտերն** այնքան հետաքրքիր էին .... *(Վոն., էջ 18):*

ՄԻՋԵՐԵՍՎԵԼ, չբ. **Երես առ երես հանդիպել (ճիշտ ուղղություն տալու նպատակով)**: Համակարգչի էկրանի կոչումն էլ մարդու հետ **մեջերեսվելն** է *(Այգ., էջ 318):*

ՄԻՋԻՆԱՐԵՎԵԼՅԱՆ, ած. **Միջին Արևելքին հատուկ**: Նաև մի քիչ նման էր նրան՝ կեռ հոնքերով ու թեթև **միջինարևելյան** նիհարավունությամբ *(Այգ., էջ 289):*

ՄԻՋՆԱՀԱՏՎԱԾ, գ. **Միջին հատված, միջնամաս**: Բեմի կողքից հայտնվելու փոխարեն Ջոքսը ներս մտավ սրահի վերջից ու թեթև քայլով անցավ **միջնահատվածով** *(Այգ., էջ 339):*

ՄԻՋՆՈՐԴԱԽԵՂԴ ԱՆԵԼ, բ. (խսկց.): **Շատ միջնորդություններ ներկայացնել**: Հետո գործը կմտնի դատարան, և նրա փաստաբանները **միջնորդախեղդ կանեն** դատավորին *(ՉԻ, 15.04.2021):*

ՄԻՋՆՈՐՄԱՁՈՂ, գ. **Միջնորմի՝ միջնապատի ձող**: Դատարանի կազմը հանդիսատեսից բաժանող **միջնորմաձողի** անմիջապես հետևում .... նստել էին վկաները *(ՀԼ, էջ 241)*:

ՄԻՋՈԼՈՐՏԱՅԻՆ, ած. **Ոլորտների միջև առկա՝ գործող**: Հայաստանը .... որը սահմանում է աղետների ռիսկի նվազեցման բնագավառում պետությունների կողմից անհրաժեշտ ոլորտային և **միջոլորտային** նպատակաուղղված գործողություններ .... *(ՀՀ, 04.03.2020):*

ՄԻՋՈՒՂԻ, գ. **Միջով՝ արանքով անցնող ուղի**: Գրետան մտածեց, որ նա երևի ներքև կիջնի կամ գոնե դուրս կգա շարքերի **միջուղի**՝ իր մարզանքն անելու *(ԱՄ, էջ 24):*

ՄԻՏՈՒՄՆԱՎԵՐՔ, գ. **Ռազմական գործողություններից խույս տալու նպատակով միտումնավոր կերպով ստացված թեթև վերք**: .... Այդ հանցագործները հազվագյուտ վարպետ են **միտումնավերքի** հարցում *(ՁԲ, էջ 26):*

ՄԻՖԱՍՏՎԱԾԱՅԻՆ, ած. **Առասպելական և աստվածային**: Տե՛ս ԳԱՂԱՓԱՐԱԽՐԱՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ-ի օրինակը:

ՄԻՖԱՑՎԵԼ, նբ. **Միֆական՝ առասպելական դարձվել**: .... Իր կյանքի պատմությունները բերնեբերան անցնելով՝ ավելի ու ավելի էին աղավաղվում, **միֆացվում** *(ԳԽ2, էջ 61):*

ՄԻՖՈԼՈԳԻԱՑՎԵԼ, չբ. **Միֆոլոգիայի՝ դիցաբանության բնույթ ստանալ**: Այս և այլ պատմություններ մեկտեղվել էին Ջոբսի **միֆոլոգիացված** պատմության մեջ .... *(Այզ., էջ 256):*

ՄՀԵՐԱԿԱՆ, ած. (դիպվ.): **Միհր անունով անձի՝ անձին առնչվող**: Ավարտելուց հետո **միհրական** մի պատմություն պատմեմ *(Հրաչօ, էջ 38):*

ՄՂԵՂՈՏՎԵԼ, չբ. **Վրան մղեղ քսվել**: - Լսված չի՝ կլսես, տեսնված չի՝ կտեսնես, - ասացին,- երբ ներսուղրսից հողոտվես-**մղեղոտվես** *(ԱրմՄ., էջ 245):*

ՄՅՈՒՌՈՆԱՋՈՒՐ, գ. **Մեռոնաջուր**: Երկինքն անձրևի **մյուռոնաջուր** է թափում .... *(ԱրմՄ., էջ 216):*

ՄՇԱԿՈՒԹԱԳՈՐԾԱՐԱՐԱԿԱՆ, ած. **Մշակութային և գործարարական**: «Մոսկվայի տուն» **մշակութագործարարական** կենտրոնի գլխավոր տնօրեն Վահրամ Կարապետյանն ասաց .... *(ՀՀ, 04.03.2019):*

ՄՇԱԿՈՒԹԱԹԱՓՎԵԼ, չբ. (դիպվ.): **Մշակույթից զրկվել**: .... Հայաստան երկիր էր, հայերի երկիր էր, .... դարձավ կորուստ ու Նախիջևան, արվեստի, մշակույթի երկիր դարձավ ու հայաթափվեց, **մշակութաթափվեց** *(Հրաչօ, էջ 24):*

ՄՇՏԱԳՈՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Մշտական գոյություն:** Պատմաբանի համոզմամբ, այսօր արդեն եկեղեցուց պահանջվում է հայոց պետականության **մշտագոյության** գաղափարի ջատագովություն, պետականասեր և բարոյասեր մարդու դաստիարակություն *(Հմց, aravot.am):*

ՄՇՏԱԳՈՐԾՈՒՆ, ած. **Մշտապես գործող:** Հակադրվեցինք Հայաստանի Անկախության հռչակագրին, մերժեցինք Հայաստանի ժողովրդի միասնական կամքը արտահայտող Հռչակագրի՝

սահմանադրական հոդվածների նկատմամբ գերակա և **մշտագործուն** դրույթները *(Հմց, aravot.am):*

ՄՇՏԱԴԻՏԱՐԿԵԼ, բ. **Շարունակաբար դիտարկումներ կատարել**: Էլեկտրոնային եղանակով **կմշտադիտարկվի** նաև ապրանքների և ծառայությունների՝ սահմանված ժամկետներում, նախանշված որակով և կարգով մատակարարումը *(ՀՀ, 29.11.2019):*

ՄՇՏԱԶԲԱՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Մշտազբաղ լինելը:** Նրա **մշտազբաղությունն** այդպես էլ նման հնարավորություն չստեղծեց *(Հմց, aravot.am):*

ՄՇՏԱԶԳԱ, ած. **Մշտապես զգացվող:** Հոգու մեջ ներփակ պահում էին ինչպես դիմացինին անհարկի խոցած լինելու արդարացնող ձգտումը, այնպես էլ մտերիմին անդարձորեն կորցնելու **մշտազգա** ցավը *(Հմց, aravot.am):*

ՄՇՏԱԶՆՆՈՒՄ, գ. **Մշտապես զննելը:** ԱՄՆ-ի նախագահի պարտականությունների պաշտոնական ստանձնումից հետո տարածաշրջանային անվտանգության դինամիկայի **մշտազննումը** դա է ցույց տալիս *(Հմց, aravot.am):*

ՄՇՏԱԽՈՐՀՈՒՐԴ, ած. **Մշտական խորհուրդ ունեցող:** Նրա ապրած կյանքն ու գործը **մշտախորհուրդ** բաց դաս է բոլոր ժամանակների ու սերունդների համար *(Հմց, aravot.am):*

ՄՇՏԱԾԵԾ, ած. **Մշտապես քննարկվող:** Հայրենի քաղաքական դաշտում այս օրերի **մշտածեծ** հարցերից մեկն էլ որոշակի ուրվագծեր սկսեց ստանալ *(Հմց, aravot.am):*

ՄՇՏԱԿԱՑ, ած., մկբ. **Միշտ նույն տեղում կացող՝ բնակվող (բնակվելով, մնալով)**: Եվ ահա արդեն չորս ամիս է, ուղղակի **մշտակաց** գտնվում է Ֆիզուլիում *(ԶԲ, էջ 47):*

ՄՇՏԱԿՈՐՈՎ, ած. **Մշտապես կորով ունեցող:** Ահա, իմ սիրելի Ալիզն է վերադառնում գետի ափից՝ **մշտակորով** և աշխատասեր սպասուհին *(Լըմոնյե, էջ 171):*

ՄՇՏԱՀԱՌԱՉ, ած. (փխբ.)։ **Մշտապես հառաչող:** Դուռ ու պատուհան վրա արավ, պատնեշեց կոպտատաշ անշաղախ պա-

տով, սրբատաշ կամար-դարպաս կապեց, կրնկեց կաղնեփայտյա **մշտահառաչ** դռնով *(Հմց, aravot.am):*

ՄՇՏԱՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ, ած. (դիպվ.): **Մշտապես հեղափոխական:** Ազատության երկիր Ամերիկայում, մեր մշտահյուսիսում՝ **մշտահեղափոխական** Ռուսաստանում .... *(Հմց, aravot.am):*

ՄՇՏԱՀՅՈՒՍԻՍ, գ. (դիպվ.): **Միշտ հյուսիսում գտնվող**: Տե՛ս **մշտահեղափոխական**-ի օրինակը:

ՄՇՏԱՆՈՐՈԳՎԵԼ, բ. **Մշտապես նորոգվել:** .... Մշտանորոգ ու ամենակուլ չարի կիկլոպյան աչքի առաջ **մշտանորոգվում** է նաև բարին ... ու չարը ոչինչ չի կարող անել դրա դեմ *(ԳԹ, 07.08.2018):*

ՄՇՏԱՌԱՋԱԴՐՎՈՂ, ած. (դիպվ.): **Մշտապես առաջադրվող: Մշտառաջադրվող** թեկնածուն պահանջելու է, որ բոլոր թեկնածուները հանեն թեկնածությունը *(Հմց, aravot.am):*

ՄՇՈՒՇԱՁԵՐԾ, ած. **Մշուշից զերծված՝ ազատված, անմշուշ**: .... Նստել էր քարին ու նայում էր դեռևս քնատ, բայց արդեն **մշուշազերծ** գետին **...** *(ՎԲ, էջ 336):*

ՄՇՈՒՇԱԹԱՑ, ած. **Մշուշոտ և թաց**: Նե ճանաչում, իր շարժումներով արտապատկերում էր այդ օրվա միջիս կյանքը և գարնանային **մշուշաթաց** օրը .... *(Լ. Շահնուր, էջ 16):*

ՄՇՈՒՇԱԹԽԱԿԱՊՈՒՅՏ, ած. **Մշուշոտ և թուխ կապույտ:** .... Անշարժ փռված են մուգ կապարագույն լճերը, **մշուշաթխակապույտ** լեռնաշարքերի միջև լցված *(Բունին, էջ 46):*

ՄՇՈՒՇԱՓԱՌ, ած. (փխբ.): **Աղոտ երևացող**: Դամբլդորի արծաթափայլ մազերը նույնիսկ ավելի ուժեղ էին արտացոլում մոմերի լույսը, քան **մշուշափառ** ուրվականները *(Ռոուլ., էջ 101):*

ՄՈԴԵԼԱՇԻՆԱՐԱՐ, գ. **Մոդելի՝ որևէ առարկայի օրինակելի նմուշի շինարար. մոդելներ պատրաստող:** Դարպասը .... հիշեցրեց իր վերջին հանդիպումը **մոդելաշինարար**, ապակե ամանում միջատների կեղեքիչ Ֆրենկ Հոնիքերի հետ *(Վոն., էջ 65):*

ՄՈԼԱԳԱՐՈՐԵՆ, մկբ. **Մոլագարի նման:** Ստուգապահ, անգամ **մոլագարորեն** ճշգրտասեր Բորը չէր հանդուրժում ցանկացած մոտավորություն *(Ունելբեք, էջ 14):*

ՄՈԼՈՐԱՄԻՏ, ած. (բնստ.): **Մոլորված միտք ունեցող:** Քաղցրախոսիկ գտար ճամփան սրտերի,// Մերը դարձրիր **մոլորամիտ** անտերին *(ԼԴ 1, էջ 255):*

ՄՈԽՐԱԿԱՆԱՉԱԳՈՒՅՆ, ած. **Մոխրականաչ գույնի**: .... Վուշի տաբատ ու վերնաշապիկ էր՝ թեթև **մոխրականաչագույն,** որ սիրուն էին նայվում նրա շիկակարմիր մազերի հետ *(Այգ., էջ 285):*

ՄՈԽՐԱԿԱՊՏԱՎՈՒՆ, ած. **Մոխրագույնին տվող կապույտ**: Աչքերը բաց, պայծառ **մոխրակապտավուն** էին *(ԱՄ, էջ 41):*

ՄՈԽՐԱՁՅՈՒՆ, գ. **Մոխրի գույն ստացած ձյուն**: Այդ ամառ օրով **մոխրաձյուն** էր եկել այդտեղ *(Սար., էջ 164)*:

ՄՈԽՐԱՅԱՍԱՄԱՆԱԳՈՒՅՆ, ած. **Մոխրագույնին տվող յասամանագույն**: Սիրուն, **մոխրայասամանագույն** զգեստ ու դրա հետ համադրված մոխրագույն ամառային գլխարկ *(ԱՄ, էջ 185):*

ՄՈԽՐԱՆԱՐՆՋԱԳՈՒՅՆ, ած. **Մոխրագույնին տվող նարընջագույն**: Նա նորից մի խոլորձածաղիկ քաղեց, **մոխրանարնջագույն** .... *(Վիան, էջ 43):*

ՄՈԽՐԱՍԵՎ, ած. **Մոխրագույնին տվող սև:** .... Լենգդոնի ուշադրությունը գրավեց ձողի գագաթի **մոխրասև** դիմակը .... *(Բրաուն, էջ 352):*

ՄՈՂԵՍԱՌԱՏ, ած. **Մողեսներով առատ**: .... Կոմունիզմը դուրս էր հոսել նրանց մարմիններից, և պապակ, **մողեսառատ** հողն արագորեն ներծծել էր այն .... *(Ռուշդի, էջ 514)*:

ՄՈՐԹԱԾՈ, գ. **Մորթված կենդանի**: .... Թանձր բարձրանում էր ամբողջական խորովվող **մորթածոների** ծուխը *(Ֆոլք., էջ 70):*

ՄՈՐՈՒՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, գ. (դիպվ.): **Մորուքավոր լինելը, մորուք աճեցնելը՝ պահելը**: Հայկական **մորուքավորություն** *(ՋԲ, էջ 324):*

ՄՌՉՄՌՉԱՅՆԵԼ, չբ. **Մռչմռչոց՝ մռչմռչալու ձայն հանել**: Նրա ձախ կողմում պապիկը ագահաբար ուտում էր իր ափսեի ուտե-

լիքը՝ չփչփացնելով ու **մռչմռչացնելով** իր ասած «ճաշային ձայներով» *(Մոյես, էջ 178):*

ՄՍԱՄԵՐԿ, ած. **Մսերը մերկ՝ բաց**: Տե՛ս ԲԵՄԱԽԱՂ-ի օրինակը:

ՄՏԱԴԱՐԱՆ, գ. **Մտքերի դարան, մտքերը պահելու տեղ:** .... Ուլմանը պատկանում էր այն մարդկանց թվին, որոնք այդպիսի բացթողումները հիշում են իրենց **մտադարանում**՝ հետագայում քննելու համար *(Քինգ, էջ 7):*

ՄՏԱԾԵԼԱՌՃ, գ. **Մտածելու ոճ, մտածելակերպ:** Այդպես էլ ես .... բավականություն եմ ստանում այլ դարաշրջանի **մտածելառճից** .... *(Հանդկե, էջ 148):*

ՄՏԱՀԱՄԱԿԱՐԳ, գ. **Մտածողության կերպ, համակարգ**: Հ. Ալեքսանյանի **մտահամակարգի** առանցքներից մեկը ես համարում եմ բացասումով հաստատումը *(ԳԹ, 17.05.2019):*

ՄՏԱՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ, ած. **Մտահամակարգին բնորոշ՝ վերաբերող՝ հատուկ**: Սա այն **մտահամակարգային** խարիսխն է, որ կանգուն է պահում մտածողությունը պատահական ալեբախումներից *(ԳԹ, 17.05.2019):*

ՄՏԱՏԱՌԱՊԱՆՔ, գ. **Մտատանջություն**: .... Աստծո առաջարկած խնդիրների **մտատառապանքով** էր լեցուն *(ԳԽ 1, էջ 10):*

ՄՏԱՏԻՊ, գ. **Մտքի՝ մտածողության կաղապար՝ ձև՝ տիպ**: Որևէ մեկին չնմանվող, իր **մտատիպը** հիմնականում իր մեջ կրող տոնայնությամբ է հավասարակշիռ այս պտույտը .... *(ԳԹ, 17.05.2019):*

ՄՐԱԽԵՂԴ, ած. **Մրից խեղդված:** .... Այդ ընթացքում ես մերթ **մրախեղդ** բուխարուն էի նայում, մերթ պատուհանից դուրս .... *(ՀԼ, էջ 160):*

ՄՐՄՆՋԱԽԱՌՆ, ած. **Մրմունջով՝ մրմնջալով արտաբերվող, մեղմորեն հնչող**: Նրա **մրմնջախառն** բառերը շարվում էին կողք կողքի՝ սփռելով հանդարտություն *(Ֆից., էջ 27):*

ՄՐՋՆԱՎԽՏՈՒՄ, գ. (դիպվ.): **Մրջյունների վխտալը:** Տե՛ս ԳԵՐԲՆԱԿԱՆԱՆԱԼ-ի օրինակը, *(Լըմոնյե, էջ 78):*

ՄՐՑԱՆԱԿԱՇՆՈՐՀՈՒՄ, գ. **Մրցանակ շնորհելը**: Սա արդեն 10-րդ **մրցանակաշնորհումն** է *(ՀՀ, 06.12.2019):*

ՄՈՒԺԻԿԱԿԱՆ, ած. **Մուժիկին՝ ռուս հասարակ գյուղացուն հատուկ, նրա նման**: .... Նրա վարքագիծը ամբողջովին **մուժիկա-կան** էր .... *(Պոզներ, էջ 417):*

ՄՈՒՏՔԱԴՈՒՌ, գ. **Մուտքի դուռ**: .... Բացեց բնակարանի **մուտքադուռը** .... *(ՆԱդ., էջ 87):*

## Յ

ՅՈԹԹԵՎԱՆԻ, ած. **Յոթ թև ունեցող:** Նրանք **յոթթևանի** հրեշտակներին արձակեցին՝ կրտսեր եղբորը վերադարձնելու համար *(ՆԱ, էջ 21):*

ՅՈԹԿԱՆԹԵՂ, ած. **Յոթ կանթեղ ունեցող՝ կանթեղով**: Դի-մացը սև փայտից սարքված կոմոդ կար՝ զարդարված **յոթկանթեղ** լատունե զույգ մոմակալներով *(ՆԱբ., էջ 19):*

ՅՈԹՆԱՏԵԳ, ած. (բնստ.): **Տեգի յոթնապատիկ (ուժով):** Սուրացին աստվածներից հիր և որպես շանթեղեն շառափ-// Ցրեցին դևերին իսպառ՝ **յոթնատեգ** զարկով, Հայաստան *(ԼԴ 1, էջ 93):*

ՅՈՒՂԱԶԱՏԻՉ, ած. **Յուղն առանձնացնող՝ զատող:** Վաճառ-վում է **յուղազատիչ** քամիչ *(Հմց, On Shop.Am):*

ՅՈՒՂԱԾՈՒԾ, ած. **Յուղ ծծեցրած, յուղով տոգորված**: Ծան-րոցում ծխախոտ կար ու մեկ էլ լորի պուդինգ, որը մայրը փաթաթել էր **յուղածուծ** թղթի մեջ *(Սթոուն, էջ 322):*

ՅՈՒՂԱՓԱՅԼՈՂ, ած. (փխբ.): **Արտակարգ գեր (յուղի փայլ արձակող)**: .... Տասը բանկա սև խավիար գնած **յուղափայլող** գեր պարոնը .... *(Արեն, էջ 14):*

# Ն

ՆԱԽԱԱԶԴԱԿ, գ. **Նախնական ազդակ:** Ցանկացած պահի պատրաստ եղեք քառօրյա պատերազմի կրկնությանը. մեր ուղղաթիռի խոցումը **նախաազդակ** էր *(Հմց, aravot.am):*

ՆԱԽԱԱՂԵՏ, գ. **Աղետին նախորդող վիճակ:** Աղետներով հարուստ քաներորդ դարում 1915-16-ի զանգվածային ջարդերը մոտ 1.5 միլիոն հայերի նկատմամբ իրենից ներկայացնում էր **նախաաղետ** *(Հմց, aravot.am):*

ՆԱԽԱԱՄԱՆՈՐ, գ. **Ամանորին նախորդող:** Այդ **նախաամանորի** դեֆիցիտն էլ պայմանավորված էր ներկրողների և սուպերմարկետների մեքենայություններով *(Հմց, aravot.am):*

ՆԱԽԱԱՄԱՆՈՐՅԱՆ, ած. **Ամանորին նախորդող:** Հրատարակչությունում կայացավ **նախաամանորյան** հանդիպումը *(Հմց, aravot.am):*

ՆԱԽԱԱՅՑԱՅԻՆ, ած. **Այցին նախորդող:** Պաշտոնական Մոսկվան արտգործնախարարի **նախաայցային** հարցազրույցով որոշակի ուղերձներ հղեց հարևան երկրին *(Հմց, aravot.am):*

ՆԱԽԱԱՆԴԱՄԱԿՑԱԿԱՆ, ած. **Անդամակցությանը նախորդող:** Հարևան երկրի նախագահը Եվրոպական Միության **նախաանդամակցական** ներդրումների շնորհիվ վեր է ածվել սուլթանի *(Հմց, aravot.am):*

ՆԱԽԱԱՆԴԱՄԱԿՑԱՅԻՆ, ած. **Անդամակցելուն նախորդող: Նախաանդամակցային** փուլում հայաստանյան որոշակի շրջանակներ կտրուկ դեմ էին արտահայտվում այդ գործընթացին *(Հմց, aravot.am):*

ՆԱԽԱԱՆԴԱՄԱԿՑՈՒՄ, գ. **Նախնական անդամակցում: Նախաանդամակցման** գործընթացը կբարելավի էներգետիկ ոլորտում ներդրումներ կատարելու միջավայրը *(Հմց, aravot.am):*

ՆԱԽԱԱՆԿԱԽԱԿԱՆ, ած. **Անկախությանը նախորդող:** Վերականգնվել է **նախաանկախական** շրջանի հիվանդագին ավանդույթը *(Հմց, aravot.am):*

ՆԱԽԱԱՆԿՈՒՄԱՅԻՆ, ած. **Անկմանը նախորդած:** Առ այսօր չի հասել **նախաանկումային** մակարդակին *(Հմց, aravot.am):*

ՆԱԽԱԱՊՐԻԼՔՍԱՆՉՈՐՍՅԱՆ, ած. (դիպվ.): **Ապրիլի 24-ին նախորդող:** Կարծես ընտելացել ենք **նախաապրիլքսանչորսյան**՝ մեզ համար բարի լուրերով ոգևորվելուն *(Հմց, aravot.am):*

ՆԱԽԱԱՌԱՋԱԲԱՆ, գ. **Առաջաբանին նախորդող մաս:** Գրքի խմբագիրը «Խոսք նախաբանի փոխարեն» **նախաառաջաբանում** գրում է այդ մասին *(Հմց, aravot.am):*

ՆԱԽԱԱՌԱՔՈՒՄԱՅԻՆ, ած. **Առաքմանը նախորդող:** Օրենքի նախնական նախագծում **նախաառաքումային** ստուգումների վերաբերյալ առաջարկը ԱԺ-ն առարկեց *(Հմց, aravot.am):*

ՆԱԽԱԱՎԱՐՏԱԿԱՆ, ած. **Ավարտականին նախորդող, նախավերջին:** Ավարտական կամ **նախաավարտական** դասարանի աշակերտներին ամառները բերում են Հայաստան *(Հմց, aravot.am):*

ՆԱԽԱԱՏԵՍՏԱՑԻՈՆ, ած. **Ատեստավորմանը նախորդող: Նախաատեստացիոն** վերապատրաստումներ անցած ուսուցիչները աշխատում են օրենքի խախտումով *(Հմց, aravot.am):*

ՆԱԽԱԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ, ած. **Արբիտրաժին նախորդող:** Լրացել է ընկերության կողմից **նախաարբիտրաժային** գործընթացի շրջանակում ՀՀ կառավարությանն հասցեագրված արբիտրաժային վեճի մասին ծանուցմանն արձագանքելու ժամկետը *(Հմց, aravot.am):*

ՆԱԽԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ, ած. **Արդյունաբերությանը նախորդող:** Զեկույցը ցույց է տալիս, որ միջին ջերմաստիճանը մոտավորապես 1,2 աստիճանով բարձր է եղել **նախաարդյունաբերական** ժամանակաշրջանից *(Հմց, aravot.am):*

ՆԱԽԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ, ած. **Արտադրությանը նախորդող:** Այս մեկուկես ամսվա ընթացքում դրանք իրենց մեջ ներառեցին **նախաարտադրական** պրոցեսների շտկումը, լաբորատոր փորձարկումները, փոքրածավալ քանակի արտադրությունը *(Հմց, aravot.am):*

ՆԱԽԱԱՐՏԱՀԱՆՈՒՄ, գ. **Արտահանմանը նախորդող շրջան:** Հիմնական երկու գործիքակազմերով ենք աշխատելու բանկի հետ՝ արտահանման ապահովագրություն և **նախաարտահանման** ֆինանսավորման ապահովագրություն *(Հմց, aravot.am):*

ՆԱԽԱԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Արտադրությանը նախորդող շրջան:** Պետությունը աջակցում է ֆիլմերին **նախաարտադրության** փուլում, արտադրության փուլում և հետարտադրության փուլում *(Հմց, aravot.am):*

ՆԱԽԱԱՈՒԴԻՏԱՅԻՆ, ած. **Աուդիտին՝ հաշվեքննությանը նախորդող:** Քննարկվել են **նախաաուդիտային** հետաքննության մեթոդներին առնչվող հարցեր *(Հմց, aravot.am):*

ՆԱԽԱԲԺՇԿԱԿԱՆ, ած. **Բժշկական օգնությանը նախորդող:** Առաջին **նախաբժշկական** օգնություն. ի՞նչ անել, քանի դեռ չեն հասել բժիշկները *(Հմց, aravot.am):*

ՆԱԽԱԲԱՆԱԿՑԱՅԻՆ, ած. **Բանակցությանը նախորդող:** Ընկերությունը **նախաբանակցային** փուլում ստորագրած պայմանագրերը փորձում է իր օգտին շահարկել *(Հմց, aravot.am):*

ՆԱԽԱԳԱՀԱՊԵՏ, գ. (հեգն.): **Նախագահ** .... Հանրապետությունն էլ իր հերթին ունենա հանրապետության **նախագահապետ** կամ, շատ հասարակ՝ նախագահ .... *(Հրաչօ, էջ 74):*

ՆԱԽԱԳԵՐԵԶՄԱՆԱՅԻՆ, ած. (փխբ.): **Վերջնականապես շարքից դուրս գալուն նախորդած**: Ընկերությունը դուրս եկավ իր **նախագերեզմանային** վիճակից *(Այգ., էջ 365):*

ՆԱԽԱԳՈՒԺԵԼ, նբ. **Նախապես գուժել:** .... [Գեղեցկությունը] անխուսափելիորեն **նախագուժում** է մի ողբերգական ճակատագիր *(Ուեյբեք, էջ 60)*:

ՆԱԽԱԻՐԻԿՆԱՅԻՆ, ած. **Երեկոյին նախորդող**: Տե՛ս ՁՅՈՒՆԱԽԱՎԱՐ-ի օրինակը:

ՆԱԽԱԾԵԳ, գ. **Ծեգին նախորդող պահը**: .... Ֆլորենտական տանիքների ուրվագծերն էին անպարզ նշմարվում **նախածեգի** աղջամուղջի մեջ *(Բրաուն, էջ 38):*

ՆԱԽԱԾՐԱԳՐԵԼ, նբ. **Նախապես ծրագրել**։ .... Եվ այն երեկոները պարզապես **նախածրագրում** էին ներկա դարձած այս ապագան *(Նալբ.2, էջ 9)*։

ՆԱԽԱԿԱԹՎԱԾԱՅԻՆ, ած. **Կաթվածին նախորդած:** Կինս **նախակաթվածային** վիճակում էր .... *(Արեն, էջ 159):*

ՆԱԽԱՄԱՅՐԱՄՈՒՏՅԱՅԻՆ, ած. **Մայրամուտին** նախորդող։ .... Մի քանի ակնթարթ, ամենևին ոչ երկար ժամանակով, այնտեղ ձևավորվեց **նախամայրամուտային** լուսնային երկինք .... *(Հանդկե, էջ 354):*

ՆԱԽԱՄԻՏ, ած. **Նախատրամադիր:** Ես դրանք ընդունում էի խոնարհ մի ձևով, գրեթե առանց **նախամիտ** կեցվածքի *(ԱՄ, էջ 65):*

ՆԱԽԱՇԵՐՏ, գ. **Սկզբնական, նախնական շերտ**: .... Ո՞վ կանխանշեց մարդկային գոյության սահմանը, թե սա է տառապանքի **նախաշերտը ....** *(ԱրմՄ., էջ 19):*

ՆԱԽԱՍԿԶԲՆԱՏՈՒ, գ. **Նախասկիզբ տվող, ամեն ինչի նախասկիզբ:** .... Ես կամենում եմ իմ եսը բաժան-բաժան անել .... որպեսզի նրա անծանոթ խորխորատներում գտնել կարողանայի բոլոր այդ թաղանթների սրտամիջուկը՝ Աթմանին, կյանքը, աստվածայինը, **նախասկզբնատուին** *(Հ1, էջ 48):*

ՆԱԽԱՍՓՅՈՒՌՔՅԱՆ, ած. **Սփյուռքի ձևավորման շրջանից առաջ:** Տե՛ս ՀԵՏՍՓՅՈՒՌՔՅԱՆ-ի օրինակը։

ՆԱԽԱՈՒՂԵՐԹԱՅԻՆ, ած. **Ուղերթին նախորդող**: Տրանսպորտային միջոցները ենթարկվում են խորքային ախտահանման **նախաուղերթային** հատվածում *(Հմց, Mediamax.am):*

ՆԱԽՇԱԳՈՐԾԵԼ, նբ. **Նախշերով գործել, զարդա**րել։ Դոն Ժուանը դեն է նետում թիկնոցը և ներկայանում արծաթե թելերով **նախշագործված** կարմիր թավշե շքեղ հագուստի ամբողջ փայլով *(Հոֆ., էջ 45):*

ՆԱԽՇԱԿԵՐՊ, ած. **Նախշի նմանվող**։ .... [Մազնիսը] երկաթե փոշուն ստիպում է դասավորվել **նախշակերպ** *(Գրին, էջ 142):*

ՆԱԽՇԱՀԵՏՔ, գ. **Նախշանման**։ .... Դիտել ծիծեռնակի ձևած **նախշահետքը** .... *(Գրին, էջ 127):*

ՆԱՄԱԶԱՎՈՐ, ած., գ. **Նամազ անող՝ մահմեդական**: .... Հարյուր և ավելի տարիներ երկու մետրանոց արծաթե խաչը տրորվում-անարգվում էր մոլեռանդ **նամազավորների** ոտքի տակ *(ԱրմՄ., էջ 84)*:

ՆԱՄԱԿԱԳՐԵԼ, ած. Այստեղ՝ **նամակագրական կապ ունենալ**: .... Հայաշխարհին ունեցել է Սորբոնում ուսանած, սակայն հայրենիք վերադարձած, Էմիլ Զոլայի հետ **նամակագրած**, բնագրով Նիցշե կարդացող մի մտավորական .... *(Ազգ, 06.12.2019)*:

ՆԱՆՈԹԵԼԻԿ, գ. **Գիտությանը այսօր հայտնի ամենափոքր մասնիկներից՝ նանոմասնիկներից պատրաստված թելիկներ**: …. Այժմ աշխատում են տարբեր ֆիլտրերի վրա բազալտի **նանոթելիկներ,** նանոմասնիկներ օգտագործելով *(ՀՀ, 05.06.2020)*:

ՆԱՆՈՄԱՍՆԻԿ, գ. **Գիտությանը այսօր հայտնի ամենափոքր մասնիկ**: Տե՛ս ՆԱՆՈԹԵԼԻԿ-ի օրինակը:

ՆԱՆՈՎԱՅՐԿՅԱՆ, գ. **Վայրկյանից փոքր միավոր**: .... Ակընթարթ տևեց, ակնթարթից էլ կարճ՝ **նանովայրկյաններ** .... *(Սար., էջ 169)*:

ՆԱՎԱԲԱՐՁՈՒՄ, գ. **Նավ(եր)ը բարձելը, նավ(եր)ի բարձումը**: .... Մի դանդաղեցրու **նավաբարձումը** *(ՄԲ, էջ 380)*:

ՆԱՎԹԱԴԱՇՏ, գ. **Նավթի արդյունահանման տարածք**: …. Որոնց մեջ էին նաև Ալբերտայի **նավթադաշտի** առաջատար դեմքերը …. *(Տրյուդո, էջ 212)*:

ՆԱՎԹԱԼԻՆԱՀՈՏ, 1. գ. **Նավթալինի հոտ:** 2. ած. **Նավթալինի հոտ արձակող**: .... Գորգի վրա դրված էր ապակեաչք բուն, պատըռված փորով, որից դուրս էին ցցվել ինչ-որ կարմիր **նավթալինահոտ** լաթեր *(ՄԲ, էջ 191)*:

ՆԱՎԹԱԼԻՆԵԼ, բ. (խսկց.): **Հագուստի կամ իրերի մեջ նավթալին դնել**: Գարնան հենց առաջին պայծառ օրը տանն ինչքան բրդե բան կար՝ **նավթալինում** էր …. *(Ռոթ, էջ 14)*:

ՆԵՆԳԱԾԱԾՈՒԿ, ած. **Նենգ և ծածուկ:** Եվ, իսկապես, ամոթալի է այդ արարքը՝ դեպի այն տանող **նենգածածուկ** ոլորանների պատճառով .... *(Լըմոնյե, էջ 51)*:

ՆԵՆԳԱՁԱՅՆ, մկբ., ած. 1. **Նենգ ձայնով** (փխբ.)։ 2. **Ոչ ցանկալիորեն**։ Պատի վրա **նենգաձայն** չխկչխկում էր ժամացույցը ….*(ՎԲ, էջ 168)։*

ՆԵՐԱՇՆՈՐՀՈՒՄ, գ. **Ներում շնորհելը**։ Հետո եղավ «Զրնհալը», **ներաշնորհումը** .... *(Նալբ.3, էջ 14)։*

ՆԵՐԱՖՂԱՆԱԿԱՆ, ած. **Աֆղանստանի ներսում գործող**։ .... **Ներաֆղանական** բանակցությունների առաջին փուլը վստահության մթնոլորտի ստեղծումն է …. *(ՀՀ, 03.03.2020)։*

ՆԵՐԲՆԱԶԴԱՅԻՆ, ած. **Ներքին բնազդներին հատուկ**։ .... Նա կարողացել էր գերազանցել իր իսկ **ներբնազդային** պայծառացումը .... *(Ուելբեք, էջ 182)։*

ՆԵՐԿԱՌՈՒՅՑ, ած. **Ներսում՝ մեջը կառուցված՝ դրված՝ տեղավորված**։ Էկրանի տակ **ներկառույց** սկավառակակրով միավորը շատ համակարգիչներից ավելի բարձր ու նեղ էր .... *(Այզ., էջ 146)։*

ՆԵՐԿԼԼԵԼ, նբ. **Ներկլանել, կուլ տալ**։ .... **Ներկլլած** ապուրի մի մասը բերանի անկյունով վար ծորաց *(ԳԽ2, էջ 43)։*

ՆԵՐԿՐՏԵԼ, նբ. **Շատ, տարբեր ներկեր քսել, ներկոտել**։ .... Տես-տես, ոնց է պճնվել, կուրծքը **ներկրտած,** դեմքը **ներկրտած** .... *(ԳԽ2, էջ 7)։*

ՆԵՐՃԱՄԲԱՐԱՅԻՆ, ած. **Ճամբարի ներքին կյանքին վերաբերող**։ «Langerschutz»,- կանչում է այն **ներճամբարային** պահպանության ջոկատը .... *(Կերտես, էջ 158)։*

ՆԵՐՎԱՀԱՆ ԱՆԵԼ, չբ. (խսկց.)։ **Ներվերը քայքայել, նյարդայնացնել, սաստիկ բարկացնել**։ - Էսքան ասում եմ, որ **ներվահան անե՞ս** *(Հրաչօ, էջ 3)։*

ՆԵՐՔՆԱԶԳԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Ներքին՝ իրեն հատուկ զգալու ունակությունը**։ Բայց նրա կանացի **ներքնազգացողությունը** հուշում է, որ հրաշքի պես բան է լինելու *(ՎԻ, էջ 239)։*

ՆԵՐՔՆԱԿԵՐԵՍ, գ. **Ներքնակի համար նախատեսված երես՝ ծածկոց**։ Ձեռք բերեք հանրահայտ «Ecotex» ապրանքանիշի **ներքնակերեսները՝** մատչելի գնով *(Հմց, Ecotex Armenia)։*

ՆԵՐՔՐԴԱԿԱՆ, ած. **Քրդերի ներսում՝ միջև գոյություն ունեցող**: Բայց, նախ՝ նման քրդական միասնական պետության ստեղծումը գրեթե անհնարին է հենց **ներքրդական** խնդիրների պատճառով *(ՀՀ, 15.10.2019):*

ՆԺԴԵՀՅԱՆ, ած. **Գարեգին Նժդեհի, նրա ստեղծած**: .... Ինչու՞ ես խոշտանգում, հոշոտում քո Չարենցին, ինչու՞ ես ծուլանում ու չես կլանում **նժդեհյան** փրկարար ուսմունքը *(Հրաչօ, էջ 25):*

ՆԺՈՒՅԳԱՁԱՅՆ, մկբ. (բնստ.): **Նժույգի ձայն հանելով:** Եվ այս քամու առջև՝ **նժույգաձայն** վարգող-// Անզուսպ քրքիջ եք ու խելահեղ հուք *(ԼԴ 1, էջ 183):*

ՆԻԴԵՌԼԱՆԴԱՀԱՅ, ած. **Նիդեռլանդներում բնակվող հայ**: .... Ներկա են եղել .... **նիդեռլանդահայ** համայնքային կառույցների ղեկավարներ *(ՀՀ, 11.12.2019):*

ՆԿԱՐԱԳԻԾ, գ. **Գծանկարը, գծելով նկարվածը**: Մարդակազմությունն այս ուրվանկարներում անստույգ էր, .... իսկ **նկարագիծը**՝ ծիծաղելի կերպով անհեթեթ *(Սթոուն, էջ 121):*

ՆԿԱՐԱՊԱՏ, ած. **Նկարներով պատված**: Նորից ճեմասրահում ենք, **նկարապատ** պատերով, անաղմուկ սանդուղքներով և գորգով *(ՄԲ, էջ 330):*

ՆԿԱՐԱՊԱՏՎԵԼ, բ. **Նկարները պատվել:** .... Երկաթե ծածկի հետնապատը խիտ գրոտած էր ու **նկարապատված** կավճով ու ածուխով *(ՆԱ, էջ 67):*

ՆԿԱՐԱՐԱՐ, գ. **Նկար անող, նկարիչ**: .... **Նկարարարի** բնազդը Վինսենթին թույլ չտվեց աջ ձեռքը մտցնել կրակը .... *(Սթոուն, էջ 206):*

ՆՅՈՒԹԱԱՊԱՀՈՎՈՒՄ, գ. **Նյութական (միջոցներով) ապահովում:** Նախնական քննությամբ բավարար ապացույցներ են ձեռք բերվել **նյութաապահովման** վաշտի նախկին հրամանատարի դեմ *(Հմց, news.am):*

ՆՅՈՒԹԱՍՏԵՂԾ, ած. **Նյութ ստեղծող: Նյութաստեղծ**, բայց և նյութապաշտ, ապերախտ աշխատանքի և մանրախնդիր առուծախի միջև՝ ինքը կիսով չափ անբան ու ճնշված էր *(Նալբ2, էջ 135):*

ՆՅՈՒՅՈՐՔՅԱՆ, ած. **Նյու-Յորքում գտնվող, Նյու-Յորքի**: **Նյույորքյան** մեր առաջին բնակարանը գտնվում էր Բլիքեր-սթրիթում *(Պոզներ, էջ 52):*

ՆՆՋԱԿՈԽ, ած. **Քնակոխ**: .... **Ննջակոխ** աքլորի նման նա կախել էր գլուխը *(ՎԲ, էջ 234):*

ՆՆՋԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ, ած. Այստեղ՝ **ննջասենյակի համար նախատեսված. այն, ինչ հատուկ է ննջասենյակին**: Գնացի տնտեսական խանութ, նոր ներկ գնեցի և նոր շերտավարագույր, ինչպես նաև **ննջասենյակային** լուսամփոփներ .... *(Մոյես, էջ 172):*

ՆՇԱԿԱՐԿԱՆԴԱԿԵ, ած. **Նշակարկանդակից պատրաստված**: .... Ամենուր կտեսնես փայլփլող քաղցրամրգե պուրակներ, թափանցիկ **նշակարկանդակե** ամրոցներ .... *(Հոֆ., էջ 142):*

ՆՇԱՀԱՏՈՒՄ, գ. **Նիշերը՝ գրանշանները հատելը, անջատ-անջատ արտահայտելը**: «Ես իմացա ինչ է տառատեսակը՝ **նշահատմամբ** ու առանց **նշահատման,** թե ինչպիսին պիտի լինի տարբեր տառային համադրումների միջև տառային ծավալը .... *(Այզ., էջ 46):*

ՆՇԽԱՐԱԿԻՐ, գ. (կրոն.): **Նշխար կրող**: .... Ինքը ևս Քրիստոսի **նշխարակիրն** է .... *(ԱրմՄ., էջ 27):*

ՆՈՍՐԱՍԱՂԱՐԹ, ած. **Նոսր սաղարթ ունեցող, սաղարթը նոսր**: .... Հենց այդտեղ էլ աճել էին **նոսրասաղարթ**, վտիտ, մրից թխագորշ դարձած ծառերը .... *(Սթոուն, էջ 67):*

ՆՈՐԱԶԱՐՄԱՆՔ, ած. (բնստ., փխբ.): **Նոր ու զարմանալի, հրաշքներով լի:** Քեզանով է նպատակի շունչը պետք, // Քեզանով է **նորազարմանք** կյանքը գոհ .... *(ԼԴ 1, էջ 173):*

ՆՈՐԶԵԼԱՆԴԱԿԱՆ, ած. Այստեղ՝ **նորզելանդացիներին [արտասանվածքին] հատուկ՝ բնորոշ**: - Կոշտ **նորզելանդական** առոգանությամբ լսվեց. – Նա պատրաստ է, տիկին Թ. *(Մոյես, էջ 36):*

ՆՍՏԵԼԱԽՈՑ, գ. **Երկար ժամանակ անընդմեջ նստելուց առաջացած խոց**: Երբեմն երկար ժամանակ միևնույն դիրքում նստելուց Ուիլի մոտ **նստելախոցեր** էին առաջանում *(Մոյես, էջ 97):*

ՆՎԱԳԱԾՈՒՀԻ, գ. **Կին Նվագող**: Ոչ մի կասկած, ուրեմն, որ Նազենիկը եղել է հարճի վիճակում հովանավորված մի **նվագածուհի**, քնար նվագող *(ՊԲՀ, 2020, 1, էջ 85):*

ՆՎԱԶԱԼՈՒՅՍ, ած. **Նվազ՝ քիչ լույս ունեց**ող: .... Ահա թե ինչու ինքդ քեզ պատկերանում ես **նվազալույս** ճրագի հանգույն .... *(Դարյան, էջ 313):*

ՆՐԲԱԹԻԹԵՂԵ, ած. **Նրբաթիթեղից պատրաստված: Նըրբաթիթեղե** փաթաթանը պսպղում է արևի տակ *(Եղինեկ, էջ 73):*

ՆՐԲԱԽՐԹԻՆ, ած. **Նուրբ և խրթին**: .... Լենային, որի երեսին կնճիռներ առաջացան Արթուրի հետ կայանալիք **նրբախըրթին** խոսակցության կապակցությամբ *(Նալբ2, էջ 36):*

ՆՐԲԱՀՆՉՅՈՒՆ, ած. **Նրբաձայն, նուրբ հնչող**: Նա սարսափում էր Վեստ Էզգից ...., սոսկում՝ նրա դարն ապրած **նրբահնչյուն** դարձվածքների տակ խլրտացող կոշտ ու կոպիտ գռեհիկ խոսքերից .... *(Ֆիգ., էջ 127):*

ՆՐԲԱՀՈՏ, ած. **Նուրբ հոտ ունեցող**: Այդպիսին էլ պահպանվել էր հոր մասին հիշողությունը. **նրբահոտ** ծխաքուլա, վաղանցուկ և ոչինչ չպարտավորեցնող *(Յ. Բորզեն, էջ 58):*

ՆՐԲԱՍԱՀՈՒԹՅՈՒՆ, գ. **Նուրբ հոսելը**: Ով խմել է այդ գինին, նա գիտի դրա **նրբասահության** արժեքը *(ՆԱ, էջ 331):*

ՆՐԲԱՍՔՈՂԱԲԱՐ, մկբ. **Նրբորեն սքողված կերպով**: Վովլիկոն պատկանում էր կպչուն մարդկանց այն առանձնահատուկ տեսակին, որոնք կարողանում էին **նրբասքողաբար** միահյուսվել քո կյանքին .... *(Պոլ., էջ 114):*

ՆՐԲԱՏԱԽՏԱԿԵ, ած. **Նրբատախտակից պատրաստված: Նրբատախտակե** խցերը պատրաստված են ճիշտ նրանց չափերով *(Եղինեկ, էջ 64)*:

ՆՐԲԱՏԵՍ, 1. ած. **Նուրբ տեսք ունեցող**: Բավականին բարձրահասակ էր, կառուցիկ, երկարուկ ու **նրբատես** ոտքերով *(Վիան, էջ 23):*

ՆՐԲԱՏԵՍ 2, ած. **Նրբությունները տեսնող**: Շուտով, ճարտարապետի **նրբատես** աչքով, որն ընկալում է յուրաքանչյուր գիծ ու ստվեր, իր դեմքին աճեցրեց հոր բեղ-միրուքը *(ՆԱղ., էջ 5):*

ՆՐԲԵՆԻ, ած. **Նուրբ:** Տե՛ս ԹԵԹԵՎԱՇՈՂ-ի օրինակը:

ՆՐԲՈՒՏԵՍՏ, գ. **Նրբաճաշակ պատրաստված ուտեստ**: Մի քանի անգամ տաք-տաք, համեմված հավ ենք գնել **նրբուտեստների** խանութից .... *(Այզ., էջ 289):*

## Շ

ՇԱԳԱՆԱԿԱԳՈՒՆԵԼ, չբ. **Շագանակագույն դառնալ** .... **Շագանակագունեցին** կանաչ ցողունների եզրերը *(Ստայնբեք, էջ 7):*

ՇԱԳԱՆԱԿԱՈՍԿԵԳՈՒՅՆ, ած. **Շագանակագույնին տվող ոսկեգույն:** .... Վիլֆրեդը սեղանի վրայով մեկնեց ձեռքն ու շոյեց մոր **շագանակաոսկեգույն** մազերը *(Յ. Բորգեն, էջ 150):*

ՇԱՂԳԱՄԱԲՈՒՅՐ, ած. **Շաղգամի բույր ունեց**ող: Լրագրի էջերից (**շաղգամաբույր***)* մեկում կարդացի, որ Հնդկաստանի վարչապետը ոտքը ոտքի առաջ չի գցում, առանց անձնական աստղագուշակի *(Ռուշդի, էջ 493):*

ՇԱՂԳԱՄԱՀՈՏ, գ. **Շաղգամի հոտը:** Սակայն **շաղգամահոտից** ավելին զգացի լրագրի այդ կտորից .... *(Ռուշդի, էջ 493):*

ՇԱՄՈՒՏ, գ. **Շամի՝ սոճու պուրակ՝ անտառամաս**: .... Հասա չոր, խորդուբորդ **շամուտ** *(ՎԲ, էջ 8):*

ՇԱՄՓՐՈՑ, գ. **Շամփուրով տրված հարված**: .... Շունը ճաշակեց մեկուսացրած մետաղալարի **շամփրոցը** .... *(ՄԲ, էջ 162):*

ՇԱՈՒՐՄԱՅԱՆՈՑ, գ. **Խորտկարան, որի հիմնական կամ միակ ճաշատեսակը շաուրման է**: Քաղաքական գործչի իմ կարիերան սկսվեց .... **շաուրմայանոցի** և վարսավիրանոցի դիմաց *(Տրյուդո, էջ 233):*

ՇԱՌԱԳՈՒՆԵՂ, ած. (բնստ.): **Կարմիր:** Ես խմեցի գինի, **շառագունեղ** արև … *(ԼԴ 1, էջ 209):*

ՇԱՐԺԱՍԱՅԼԱԿ, գ. **Շարժվող սայլակ**: Քեռի Վերնոնը Հարրիի ճամպրուկը դրեց մի **շարժասայլակի** վրա .... *(Ռոուլ., էջ 75):*

ՇԱՔԱՐԱԲԵԿՈՐ, գ. 1. **Շաքարի բեկոր:** 2. (փխբ.): **Երկար ու սպիտակ շաքարաբեկորի նմանություն ունեցող շենք**: .... Գետից այն կողմ սպիտակ **շաքարաբեկորներով** վեր է խոյանում ինչ-որ մեկի ցանկությամբ կառուցված քաղաքը .... *(Ֆից., էջ 73):*

ՇԱՔԱՐԱՍՊԻՏԱԿ, ած. **Շաքարի սպիտակություն ունեցող**: .... Արևն իր ոսկեգույն շողերով ողողել էր ժայռերն ու բարձր գագաթների **շաքարասպիտակ** ձյունը *(Քինգ, էջ 105):*

ՇԵՐՏԱՄԻՍ, գ. **Մսի շերտ՝ բարակ կտոր:** Ոմանք էլ սառած հավի կտորներ ու խոզի տապակած **շերտամիս** էին կրծոտում *(ՀԼ, էջ 235):*

ՇԵՐՏՈՒՂԻ, գ. **Շերտանման՝ շերտի նման ձգվող ուղի (օդանավակայաններում ևն)**: Թռիչքավայրէջքային **շերտուղի** *(ՁԲ, էջ 481):*

ՇԻԱԲՆԱԿ, ած. **Շիաներով բնակեցված:** .... Առավել մասշտաբային էին 2018 թ. երկրի հարավի **շիաբնակ** նահանգներում տեղի ունեցածները …. *(ՀՀ, 05.10.2019):*

ՇԻԿԱԲԵՂ, ած. **Շեկ բեղեր ունեցող՝ բեղերով, բեղերը շեկ**: .... Զուգադիպության հետևանքով այդտեղ էր հայտնվել նաև սովխոզի կիսավերակ բեռնատարի **շիկաբեղ** վարորդը .... *(ՄԲ, էջ 118):*

ՇԻԿԱԿԱՐՄՐԱՀԵՐ, ած. **Շիկակարմիր մազերով՝ մազեր ունեցող**: Կողքիս նստած **շիկակարմրահերը** մի տուփիկ հանեց գրպանից .... *(ԳԽ 1, էջ 135):*

ՇԻԿԱՎԱՐԴԱԳՈՒՅՆ, ած. **Շեկ երանգ ունեցող վարդագույն:** Գույնով՝ **շիկավարդագույն**, տրամադրությունը՝ զվարթ, մի փոքր մտածկոտ .... *(Լ. Շահնուր, էջ 10):*

ՇԻՆԱՇԽՈՒԺՈՒԹՅՈՒՆ, գ. (հպվ.): **Շինարարական՝ շինարարության ասպարեզի աշխատանքների աշխուժություն**: .... Խճածածկ շինհրապարակը ... լքվել էր թերևս **շինաշխուժության** սաղմնային փուլից անմիջապես հետո *(ԳԽ2, էջ 43):*

ՇԻՐՄԱՏԵՂԻ, գ. **Շիրիմների տեղ՝ վայր, որտեղ շիրիմներ կան**: Նրանցից պահանջվում է .... ապահովել հուղարկավորների որոշակի քանակ .... հոգեհացի անպակաս սեղան և վայելուչ **շիրմատեղի** *(ՎԻ, էջ 76):*

ՇՂԱՐՇԱԹԱՓԱՆՑ, ած. (բնստ.): **Շղարշի նման թափանցիկ:** Եվ հայտնվում էր նա՝ սերն իմ, ցավն իմ, // Եվ հայտնվում էր **շղարշաթափանց,**// Իր աննյութեղեն շուքով մտերիմ *(ԼԴ 1, էջ 111):*

ՇՂԱՐՇԱԾԱԼ, ած. **Շղարշաձև ծալք ունեցող:** Կարմիր շրջազգեստ՝ տակից վառ դեղին **շղարշածալ,** թռթռան սպիտակ գոգնոց *(ԱՄ, էջ 62):*

ՇՂԹԱՅԱԿԱՊՈՒԹՅՈՒՆ, գ. **Շղթայակապ վիճակ**: -Ոմանք դա անում են այնպիսի հմայչությամբ, որ քո **շղթայակապությունը** քեզ երջանկություն է դառնում *(ՆԱղ., էջ 197):*

ՇՆԱՄԱՐԴ, գ. (դիպվ., փխբ.): **Շան կյանք վարող մարդ**: ՄԱՐԴԱՇՈՒՆ-ի օրինակը:

ՇՆԱՉԱՓ, ած. **Շան չափ**: .... Գետինը մի **շնաչափ** տարածքով խոնավ է .... *(ԳԽ2, էջ 23):*

ՇՆԱՎԱՃԱՌ, գ. **Շուն վաճառող**: Անցա **շնավաճառների** մոտով *(ԳԽ1, էջ 142):*

ՇՆԱՎԻՃԱԿ, գ. **Շանը հատուկ վիճակ**: .... Ինքը շուն է, բայց շուն շան որդի չէ, հպարտ է իր **շնավիճակով** .... *(Հրաչօ, էջ 139):*

ՇՆՉԱՐԿՈՒ, ած. **Շունչ արձակող, արտաշնչող**: Ավետիքին թվա՞ց, թե այդպես էր .... ճոճք էր, հնք էր, **շնչարկու** .... *(ԱրմՄ., էջ 123):*

ՇՇԱԼՑՈՂ, գ. **Շշալցում կատարող**: .... Կանգ առավ Հավայներում կայացած Pepsi-ի **շշալցողների** հանդիպումից վերադառնալու ճանապարհին *(Այգ., էջ 171):*

ՇՇՈՒԿԱԹԱՎ, ած. **Շշուկով և թավ ձայնով**: «Մաեստրո, ինչու՞ ես իմ անունը փոխել ....»,- հարցրեց նեղսրտված, **շշուկաթավ** մի ձայն *(Ամիր., էջ 88):*

ՇՇՈՒԿԱՇԱՐԺ, ած. (բնստ.)։ **Շշուկով՝ անձայն շարժվող**։ Այնպես անմեղ էիր դու ինձ գերում,// Այնպե՛ս **շշուկաշարժ**, շուքով շամբի *(ԼԴ 1, էջ 141)։*

ՇՈԳԵՋՐԱՂԱՑ, գ. **Շոգիով աշխատող ջրաղաց**։ Հետևյալ օրը .... բանկետ տրվեց քաղաքամերձ **շոգեջրաղացի** երկրորդ հարկի դահլիճում *(ԹԺՀ, էջ 403)։*

ՇՈԳԻԱՐՁԱԿ, ած. **Շոգի արձակող, վրայից շոգի բարձրացող**։ .... Նկար, որն ամբողջովին ձևով .... ցույց տար գյուղացուն, արտահայտեր գյուղացու խրճիթի և **շոգիածածկ** կարտոֆիլի բուն ոգին .... *(Սթոուն, էջ 377)։*

ՇՈԿՈԼԱԴԱՊԱՏ, ած. **Շոկոլադով պատված**։ Ուրբաթ օրը Ռենդի Ուինգթոնը մի մեծ պայուսակ էսպրեսոյի **շոկոլադապատ** հատիկներ բերեց վերջին 3 անքուն գիշերների համար *(Այզ., էջ 181-182)։*

ՇՈՂԱՃԱՌԱԳ, ած. (բնստ.)։ **Շողեր ճառագող**։ Հազար բուռ ցորեն եմ քո մեջ շաղում//.... Որ քեզանից ծնվող հասկ-խոսքերը նրանց// Դառնան **շողաճառագ** ու անհամար *(ԼԴ 1, էջ 316)։*

ՇՈՂԱՑՆՑՈՒՂ, ած. (բնստ.)։ **Շողեր տարածող**։ .... Առավոտի **շողացնցուղ** պահի մեջ *(ԼԴ 1, էջ 324)։*

ՇՈՂԱՓԱՅԼԵԼ, չբ. **1. Շողալ և փայլել։ 2. (փխբ.) Ճանաչում ստանալ**։ .... Նա ակնարկում էր այդ **շողափայլող** Տուրգենևին .... *(Ցիպ., էջ 79)։*

ՇՈՂՈՄՔՈՐԵԼ, նբ. (բրբ.)։ **Շողոքորթել**։ Աշխարհն .... ընկել էր եղած-չեղած-լսած-չլսած օրենքի ետևից, որպեսզի **շողոմքորելով** ու քորելով բռնի օրենքի կատարողներից, ասի, որ դու օրենք ես, պիտի օրենքություն անես, .... *(Հրաչօ, էջ 73 )։*

ՇՈՐԱՏԵՐ, գ. **Շորի տեր, շոր ունեցող**։ Շոր չունենք, բայց շորի ու **շորատիրոջ** հարգը լավ գիտենք *(Հրաչօ, էջ 153)։*

ՇՉԱԿԵԼ, չբ. **Շչակ հնչեցնել**։ .... Մի մեքենա ճռռալով արգելակեց և սկսեց **շչակել** վրա-վրա *(ԳԽ 1, էջ 167)։*

ՇՐԹՀԱՐՄՈՆԱՀԱՐ, գ. **Շրթհարմոն նվագող**: Իսկ **շրթհարմոնահար** Թութս Թելեմանսի հետ ձայնագրությունները տեղ-տեղ հասնում են սենտիմենտալության *(ԳԽ2, էջ 70):*

ՇՐԹՆԵՐԿԵԼ, նբ. **Շրթներկ քսել:** Ուրախ ծլվլում է **շրթներկած** փոքրիկ բերանը *(Ելինեկ, էջ 23):*

ՇՐՋԱՀՈՍՈՒՆ,ած. **Շրջապտույտով հոսող:** Սովորեց բարձր արագության **շրջահոսուն** խոյաթռիչքից ջուրը սուզվելով ձկներ որսալ *(ՌԲ, էջ 25):*

ՇՐՋԲԱԺԻՆ, գ. (հպվ.): **Շրջանային բաժին**: .... Ես ոստիկանության Սպանդարյանի **շրջբաժնում** եմ *(Արեն,էջ 30):*

ՇՐՋԿՈՄԱԿԱՆ,ած. (հպվ.): **Շրջանային կոմիտեի աշխատողներին հատուկ**: Նրանց կես ժամ անհրաժեշտ եղավ, որպեսզի գնեին երկու գլխարկ՝ աղվամորթե գդակ **շրջկոմական** ոճով .... *(Արեն, էջ 96):*

ՇՈՒՇԱՆԱՍՊԻՏԱԿԱԳՈՒՅՆ, ած. **Շուշանի գույնի նման սպիտակ:** .... Իսկ նրա փոխարեն հայտնվեց հրեշտակի պես հրաշագեղ մի աղջիկ՝ դեմքը կարծես թե հյուսված **շուշանասպիտակագույն** և վարդագույն մետաքսից *(Հոֆ., էջ 109)*:

ՇՓՎՈՂՈՒՆԱԿ, ած. **Հաղորդակցվելու, հարաբերություն ունենալու ունակ**: .... Քանի դեռ խմած չես, **շփվողունակ** չես *(ԳԽ1, էջ 150):*

ՇՔԱՆՇԱՆԱԿՐԱՅԻՆ, ած. (փխբ.): **Բարձր (ինչպես շքանշաններ հանձնելիս)**: .... Նախագահը չի բացակայում, տրամադրությունը **շքանշանակրային** է *(Հրաչօ, էջ 137):*

## Ո

ՈԳԵԿԱՆԱՑՆԵԼ, նբ. **Հոգեկան, հոգևոր բնույթ հաղորդել**: Խորհրդանիշների հրաշալի մի պարտեզ էր զարդարում քարը և **ոգեկանացնում** այն կենդանի աղոթքի պես .... *(Լըմոնյե, էջ 75):*

ՈԼՈՐԱԾԱԼ, ած. **Ոլորելով ծալված**: .... Կողք կողքի նստած էին **ոլորածալ** թաց գորգի վրա*(ՄԲ, էջ 174):*

ՈԼՈՐԱՓՈԻՆՋ, **ած. Ոլորված փնջերով:** Նա գիտեր .... տղաներից մեկն ու մեկն իրեն աղջիկ է անվանում, հագուստն ու մազերի **ոլորափնջերն** է նկատի ունենում *(Բորզեն, էջ 26):*

ՈԼՈՐԱՔՈԻՂ, գ. **Ոլորած քուղ**: .... **Ոլորաքուղերով** գեներալները ոտքերը չռած փռվել էին ոսկեզօծ բազկաթոռներին .... *(Ռուշդի, էջ 374):*

ՈՂՆԱՇԱՐՎԵԼ, չբ. (փխբ.): **Ստեղծվել, ձևավորվել:** .... Շարունակ ուղեկցում է իմ մտածելակերպը իմ **ողնաշարված** տողերի մեջ, այստեղ և այլուր *(Նայբ.3, էջ 102):*

ՈՃԱՐՎԵՍՏ, գ. **Ստեղծագործությանը՝ ստեղծագործական արվեստին հատուկ ոճ**: .... Չխորանալով նրա **ոճարվեստի** մեջ [նկատենք, որ] այն նորարարություն չէ թեմատիկայով *(ՀՀ, 24.01.2020):*

ՈՍԿԵԶՕԾԱԿԱՐ, ած. **Ոսկեզօծ կարերով:** .... Իսկ ձեռքից բռնել էր, ճիշտ է, փոքրիկ, բայց շատ վայելչագեղ մի երիտասարդ մարդու՝ սպիտակակարմրավուն .... հոյակապ **ոսկեզօծակար** կարմիր բաճկոնակով .... *(Հոֆ., էջ 140):*

ՈՍԿԵԹԻԹԵՂ, ած. **Ոսկեգույն թիթեղից պատրաստված:** ... Իսկ կալվածատեր Գիանին կանգնել է որսորդուհի Դիանայի յուղաներկ, **ոսկեթիթեղ** շրջանակով իսկայական կտավի առաջ *(Ռուշդի, էջ 18):*

ՈՍԿԵԹՈԻԽ, ած. **Ոսկեգույնի թխություն ուն**եցող: .... Հաջորդ պահին փոքրիկ, սրածայր գլուխը դուրս ցցվեց մայրիկի **ոսկեթուխ** փետուրների տակից .... *(Հերբերթ, էջ 184):*

ՈՍԿԵՀՈՏ, ած. **Ոսկու հոտ ունեցող**: Նրանք զբոսնում էին Մոսկվա գետի աշնանային **ոսկեհոտ** ափերով .... *(Պոլ., էջ 61):*

ՈՍԿԵՏՐԵԶ, ած. **Ոսկեգույն տրեզ՝ շերտ**: Ճիշտ է, աչքերը պղտոր են, բայց ընդհանրապես անտարբեր է՝ **ոսկետրեզ** բոլորքի տակ *(ՄԲ, էջ 160):*

ՈՍԿՐԱԶՈԻՐԿ, ած. **Ոսկորներից զուրկ**: Թաթերը **ոսկրազուրկ** դարձան ու ծալվեցին *(ՄԲ, էջ 198):*

ՈՏՆԱԿՈՃ, գ. **Ոտքի կոճը:** Իսկ **ոտնակոճի** խոցն անտանելի տնքում է *(Օրուել, էջ 10):*

ՈՏՔԱՄԱՇ, ած. (բնստ.): **Ոտքերը մաշելով: Ոտքամաշ՝** երկըրներ անցա, ես ծառա եղա օտարին *(ԼԴ 1, էջ 82):*

ՈՐԴԵԳՐԱՏՈՒՆ, գ. **Որդեգրումը իրականացնող հաստատություն:** Այդպիսիներից [կարիքավորներից] ընտրովիների համար դպրոցը պահում էր **որդեգրատուն** *(ԹԺՀ, էջ 292):*

ՈՐՄՆԱԿՈՃ, գ. **Պատի գերան**: .... **Որմնակոճերի** արանքները ճիլոպ էր խցկած *(Սթոուն, էջ 70):*

## Չ

ՉԱՌՆՈՎԻ, ած. (խսկց.): **Չգնված, բնականորեն իրեն պատկանող**: Իսկ եթե առնովի բանը պետքս չի՞: Եթե ուզածս էն է, որ **չառնովի** լինի *(ՎԲ, էջ 338):*

ՉԱՍՖԱԼՏԱՊԱՏ, ած. (դիպվ.): **Ոչ ասֆալտապատ**: .... Ամրոցի մյուս կողմում էր՝ միջնադարյան պատերին մոտ՝ երկար **չասֆալտապատ** ճամփի վրա ....*(Մոյես, էջ 24):*

ՉԱՐԱԴՅՈՒԹԱՆՔ, գ. **Չարությամբ դյութելը**: Եվ դարձյալ ես տապալված էի հրաշագործ **չարադյութանքի** առջև .... *(Լըմոնյե, էջ 140):*

ՉԱՐԱԵՌԱՆԴ, մկբ. (բնստ.): **Չար եռանդով:** Անշուշտ՝ գազազած և առավել// Կտանջեք մարդուն՝ **չարաեռանդ** *(ԼԴ 1, էջ 127):*

ՉԱՐԱՀՄԱ, ած. **Չարությամբ հմայող:** Ամեն անգամ, երբ նա արթնանում էր այդ նողկալի, **չարահմա** դյութանքներից .... նա նորից փախուստի էր դիմում .... *(Հ1, էջ 90):*

ՉԱՐԱՓԱՅԼ, ած. **Չարությամբ փայլող**: Հաջողվեց անգամ մեջքերի վտանգավոր նախշերը և **չարափայլ** աչքահատիկները նկատել *(Պոլ., էջ 6):*

ՉԱՐԵՆՑԱՊԱՏՈՒՄ, գ. **Չարենցի կյանքին և ստեղծագործության նվիրված ուսումնասիրություն**: Շարքը Չարենցին իր դարա-

շրջանում բնականորեն ներկայացնելու առումով եզակիներից մեկն է գրական **չարենցապատումի** մեջ *(ԳԹ, 21.06.2019):*

ՉԻԿԱԳՈՅԱԿԱՆ, ած. **Չիկագոյին, Չիկագո քաղաքին հատուկ**: .... Բորոդինը անցավ անգլերենի և ապշեցրեց ինձ իր **չիկագոյական** արտասանությամբ .... *(Պոզներ, էջ 319):*

ՉՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. (դիպվ.): **Նման չլինելը**: Կարծում եմ, որ բոլոր **չնմանություններով** հանդերձ, այս երեքի ժողովրդականությունը բացատրվում է .... *(Պոզներ, էջ 295):*

ՉՈՐԱՄԻՐԳ, գ. **Չորացրած միրգ**: .... Տնտեսուհիները **չորամրգերը** լցնում էին տապակած ընկույզների տարբեր տեսակներով .... *(ՆԱբ., էջ 289):*

ՉՈՐՔՈՏԱՆԻՈՒԹՅՈՒՆ, գ. **Չորքոտանիներին հատուկ արարք**: Ձիու առաջ ի՜նչ **չորքոտանիություն,** ի՜նչ էշություն ասես, որ չէր անում մարզիչը .... *(Հրաչօ, էջ 107):*

ՉՔՎԱՑՆԵԼ, նբ. (դիպվ.): **Այնպես անել, որ չքվի՝ անհայտանա**: Որպես ապօրինի կառույց՝ **չքվացրու** *(Հրաչօ, էջ 192):*

## Պ

ՊԱԳՇՈՏԱՇՈՒՐԹ, ած. (բնստ., փխբ.): **Կրքոտ շուրթերով:** Ես ինչ անեմ,// Երբ նուռն անգամ չի դիմանում,// Ճեղքվում ու դառնում է **պագշոտաշուրթ** *(ԼԴ 1, էջ 188):*

ՊԱՀՊԱՆԱՎԱՅՐ, գ. **Հատուկ պահպանվող տարածք, վայր**: Շրջակա միջավայրի նախարարությունը դիմել է նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ին՝ Սևանա լճին և հարակից տարածքին կենսոլորտային **պահպանավայրի** կարգավիճակ տալու նպատակով *(ՀՀ, 10.07.2019):*

ՊԱՀՈՒՍՏԱՎՈՐՈՒՄ, գ. **Պահուստավորելը, կուտակելը, (փխբ.) ամբարելը**: .... Հնարավո՞ր է սկավառակ ավելացնել՝ հիշողության **պահուստավորման** համար *(Այգ., էջ 69):*

ՊԱՆԱՄԱԿԱՆ, ած. Այստեղ՝ **ամառային լայնեզր**: Նա այն տղամարդկանցից էր, որոնց կարելի էր տեսնել **պանամական** գլխարկով կրիկետ դիտելիս *(Մոյեu, էջ 49):*

ՊԱՆՐԱԳԼՈՒԽ, գ. **Գլուխ պանիր (պանրագունդ)**: .... Երեք անբան եղբայրներ, որոնք մի օր որոշում են բարձր սանդուղքով հասնել երկինք, որ մեծ **պանրագլուխ** հիշեցնող լուսինն իջեցնեն *(ՆԱբ., էջ 44):*

ՊԱՇՏՈՆԱԽԱՂ, գ. (փխբ.): **Պաշտոնական դիրքի չարաշահում**: Չէ, պաշտոնը հիվանդացրել է էս չտեսին: Ինչու՞ եկավ: Զզվելի է, երբ օրվա տգետը **պաշտոնախաղ** է սկսում *(Հրաչօ, էջ 190):*

ՊԱՇՏՈՆԱԾԻՆ, ած. (փխբ.): **Պաշտոնյա լինելու հետևանքով առկայացած. որպես պաշտոնյա ճանաչելի դարձած**: Ապրելը դժվար, երեսի զոռով, ամեն ինչ դժվար: Քեզ համար, քեզպեսների համար՝ դժվար ու զոռով, զոռով ու դժվար, ուրիշների համար, որ օտարածին **պաշտոնածին** են՝ հե՜շտ, թեթև՜ .... *(Հրաչօ, էջ 184):*

ՊԱՇՏՈՆԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ, գ. **Պաշտոնի կարգելը՝ նշանակելը**: .... Խորհրդային ժամանակներում **պաշտոնակարգությունը** կատարվում էր ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին կից եկեղեցու և կրոնի հարցերով խորհրդում, որը իրականում հանդիսանում էր այդ նույն ՊԱԿ-ի բազմաթիվ մասնաճյուղերից մեկը *(Պոզներ, էջ 23):*

ՊԱՌԱԿՏՉԱԿԱՆ, ած. **Պառակտման բնույթ ունեցող՝ պառակտիչներին հատուկ**: Սկսվել է ծանր **պառակտչական** պատերազմ, ինչը երկար տարիներ կաթվածահար է արել երկիրը .... *(ՆԱբ., էջ 8):*

ՊԱՍՏԱՌԱԾԱԾԿ, ած. **Պաստառով ծածկված՝ պատված**: .... Թակն էր սուրում՝ հարվածելով մետաքսանման **պաստառածածկ** պատերին և դուրս թափելով գաջի փոշու քուլաներ *(Քինգ, էջ 159):*

ՊԱՏԱՌԱՉԱՓ, ած. **Պատառի չափ, նրա մեծությամբ**: Ժիբայրի կինը՝ Նանորը, փոքրիկ բաժակների մեջ կաթիլ-կաթիլ կոնյակ է լցնում ...., **պատառաչափ** խմորեղենով հյուրասիրում մեզ *(Հրաչօ, էջ 229):*

ՊԱՏԺԱՆԻՎ, գ. **Պատժի անիվ:** Ծուլորեն պտտում էի պարանոցս գրկած Մեյքոմի գավառային կրթական համակարգի **պատժանիվը**.... *(ՀԼ, էջ 52):*

ՊԱՏԿԵՐԱՑԱՆՑԱՅԻՆ,ած. **Ռաստրի (օպտիկական սարք) օգտագործմամբ աշխատող**: Իսկ **պատկերացանցային** (ռաստրային) համակարգի դեպքում համակարգչի էկրանի յուրաքանչյուր պիքսել վերահսկվում էր համակարգչի հիշողության բիթերով *(Այգ., էջ 107-108):*

ՊԱՏՆԵՇԱՏԻՊ, ած. **Պատնեշի նմանվող**: .... Աիռելի քարերը .... որպես նրբագեղ **պատնեշատիպ** կույտ, հանգրվանել էին ցածում *(Բրաուն, էջ 136):*

ՊԱՏՇԳԱՄԲԱՇԱՐ, գ. **Պատշգամբների շարք**: Աննամարիայի մեծ քույրիկը մեր հարկի դիմացի **պատշգամբաշարով** իրենց բնակարան էր շտապում *(Կերտես, էջ 21)*:

ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔ, գ. **Պատրաստված բան**: Ապա՝ մանկական **պատրաստվածքներ.** վալենկաներ, ձեռնոցներ .... *(ՄԲ, էջ 327):*

ՊԱՐԶԱՀՈՒՆՉ, ած. **Ոչ բարդ, արտակարգ հասարակ**: Ասել, որ սիրում եմ նրան, կլիներ **պարզահունչ** *(Պոզներ, էջ 170):*

ՊԱՐԿԱԼԱԹ, գ. **Լաթ, որից պարկ են պատրաստում, պարկի լաթ՝ շոր՝ կտոր**: Նա փաթաթվել էր կոշտ **պարկալաթի** մեջ .... *(Սթոուն, էջ 109):*

ՊԱՐՈՆԱՊԱՏԿԱՆ, ած. **Պարոն(ներ)ին պատկանող**: Ես **պարոնապատկան** շուն եմ, ... լավ կյանք եմ ճաշակել *(ՄԲ, էջ 197):*

ՊԱՐՍՊԱՇԱՐՔ, գ. **Պարիսպների շարք**: Երկրորդ և երրորդ **պարսպաշարքերն** ավելի վերևում են *(ՀՀ, 05.10.2019):*

ՊԱՐՈՒՍՈՒՑՈՒՄ, գ. **Պար ուսուցանելը**: Սուրեն Գյանջումյանը ազգային պարարվեստի անխոնջ պահապաններից էր, հայկական ժողովրդական պարարվեստի **պարուսուցման** զարգացման և տարածման նվիրյալ *(ՀՀ, 15.05.2019):*

ՊԵԾՊԵԾՈՏ, մկբ. **Պեծին-պեծին տալով**: Ոտքերը **պեծպեծոտ** համբուրում էին իրար ու բաժանվում *(Հրաչօ, էջ 110):*

ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ, ած. **Պետական և իրավական:** Այս մասին ասաց հանձնաժողովի ղեկավարը **պետաիրավական** հարցերի մշտական խորհրդարանական հանձնաժողովի կողմից կազմակերպված Հայաստանի դատական օրենսգրքի բարեփոխումների և հարակից օրենքների քննարկման ժամանակ *(Հմց, news.am):*

ՊԵՏԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱ, գ. (հպվ.): **Պետական ադմինիստրացիա:** Նիստին մասնակցում էր նաև Օդեսայի շրջանի **պետադմինիստրացիայի** նախկին ղեկավարը *(Հմց, news.am):*

ՊԵՏԱԿԱՆԱԿՈՐԾԱՆ, ած. **Պետականությունը կործանող՝ կործանող**: ….. Ստիպեցին մեզ վերհիշել …. Հայոց ցեղասպանությունը և դրան հետևած **պետականակործան** իրադարձությունները *(ՀՀ, 03.12.2019):*

ՊԵՏԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, գ. (հպվ.): **Պետական անվտանգություն:** Լրագրողները հայտարարել են, որ իրենց հետևել են Չինաստանի **պետանվտանգության** գործակալները *(Հմց, news.am):*

ՊԵՏԱՇԽԱՏՈՂ, գ. (հպվ.): **Պետական աշխատող:** Տեսանելի է, թե **պետաշխատողները** ինչ վերաբերմունք ունեն նրանց նկատմամբ *(Հմց, news.am):*

ՊԵՏԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ, գ. (հպվ.): **Պետական աջակցություն**: Էկոնոմիկայի նախարարությունում քննարկվել է լիզինգի **պետաջակցության** ծրագրերի բարելավման հնարավորությունը *(Հմց, news.am):*

ՊԵՏԱՈՒԴԻՏ, գ. (հպվ.): **Պետական աուդիտ: Պետաուդիտի** ծառայությունը գլխավորել է Ռևազ Շավիշվիլին *(Հմց, news.am):*

ՊԵՏԳՈՒՅՔ, գ. (հպվ.): **Պետական գույք**: Ներկայացվել է **պետգույքի** կառավարման կոմիտեի նոր նախագահը *(Հմց, news.am):*

ՊԵՏԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ, գ. (հպվ.): **Պետական էներգահամակարգ:** Նոր էլեկտրահաղորդման գծի կառուցումն իրականացնում է Վրաստանի **պետէներգահամակարգը** *(Հմց, news.am):*

ՊԵՏԽՈՐՀՈՒՐԴ, գ. (հպվ.): **Պետական խորհուրդ:** ՉԺՀ **պետխորհրդի** անդամը շուտով կայցելի Սաուդյան Արաբիա *(Հմց, news.am):*

ՊԵՏԾԱՌԱՅՈՂ, գ. (hպվ.)։ **Պետական ծառայող**։ **Պետծառայողն** իրավունք չուներ աշխատանքի ժամին կրոնական հագուստ կամ խորհրդանիշ կրելու *(Տրյուդո, էջ 255)։*

ՊԵՏԿԱՌՈՒՅՑ, գ. (hպվ.)։ **Պետական կառույց։** Մենք ինտեգրում էինք ամեն ինչ. Ղարաբաղն ուներ իր խորհրդարանն ու **պետկառույցները** *(Հմց, news.am)։*

ՊԵՏԿՈՄԻՏԵ, գ. (hպվ.)։ **Պետական կոմիտե։** Տաջիկստանի ազգային անվտանգության **պետկոմիտեի** սահմանապահ զորքերի մամուլի կենտրոնը տեղեկացրել էր երկրի տարածք սահմանամերձ տեղամասերով Աֆղանստանի կառավարական զորքերի զինծառայողի անցման մասին *(Հմց, news.am)։*

ՊԵՏՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ, գ. (hպվ.)։ **Պետական ձեռնարկություն**։ Հայց է ներկայացվել արբիտրաժային դատարան՝ տեղական **պետձեռնարկությունների**՝ գազի դիմաց չվճարելու հետ կապված *(Հմց, news.am)։*

ՊԵՏՂԵԿԱՎԱՐ, գ. (hպվ.)։ **Պետական ղեկավար**։ Սպասվում է, որ ԻԿՀ-ից Սիրիայի պաշտոնական հեռացումը տեղի կունենա Մեքքայում տեղի ունեցող **պետղեկավարների** գագաթնաժողովի ժամանակ *(Հմց, news.am)։*

ՊԵՏՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ, գ. (hպվ.)։ **Պետական մատակարարում, մատակարարում պետությանը**։ .... Կարողանում էր ժամանակին .... հանձնել **պետմատակարարումները** *(ՎԲ, էջ 111)։*

ՊԵՏՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, գ. (hպվ.)։ **Պետական շինարարություն։** Այդ մասին հայտարարել է Ռուսաստանի Պետդումայի սահմանադրական օրենսդրության և **պետշինարարության** կոմիտեի նախագահը *(Հմց, news.am)։*

ՊԵՏՇԻՆՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. (hպվ.)։ **Պետական շինարարական վերահսկողություն։** Դատարանը կալանավորել է Կեմերովոյի մարզի **պետշինվերահսկողության** նախկին պետին *(Հմց, news.am)։*

ՊԵՏՋՐԿՈՄ, գ. (hպվ.)։ **Պետական ջրային կոմիտե**։ Մենք բանակցություններ ենք վարել **պետջրկոմի** հետ ոռոգման համար

վարձի վճարման ռեժիմը մեղմելու և տեղական համայնքային իշխանությունների հետ հողի հարկի վճարման աջակցության շուրջ *(Հմց, news.am):*

ՊԵՏՌԵԳԻՍՏՐ, գ. (հպվ.): **Պետական ռեգիստր**: Ինչ մենք ունենք, գրանցված է ՀՀ **պետռեգիստրում** *(Հմց, news.am):*

ՊԵՏՕԳՆՈՒԹՅՈՒՆ, գ. (հպվ.): **Պետական օգնություն**: Փախստականները բողոքում են, որ մինչ օրս չեն կարողանում **պետօգնության** ծրագրով գումար ստանալ *(Հմց, news.am):*

ՊԵՏՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ, գ. (հպվ.): **Պետական օժանդակություն:** Անդրադարձել ենք նաև գործող և նոր մշակվող **պետօժանդակության** ծրագրերին և դրանց ավելի սահուն իրագործման հարցերին *(Հմց, news.am):*

ՊԵՏՖԻԼՀԱՐՄՈՆԻԱ, գ. (հպվ.): **Պետական ֆիլհարմոնիա:** Կյանքից հեռացել է **պետֆիլհարմոնիայի** փոխտնօրենը *(Հմց, news.am):*

ՊԵՏՖԻԼՄԱԴԱՐԱՆ, գ. (հպվ.): **Պետական ֆիլմադարան:** Նոր նկարահանումների փոխարեն ամբողջապես օգտագործված են **պետֆիլմադարանի** արխիվները *(Հմց, aravot.am):*

ՊԵՏՖԻԼՄՖՈՆԴ, գ. (հպվ.): **Ֆիլմերի պետական ֆոնդ**: **Պետֆիլմֆոնդն** այլընտրանք է փնտրում ֆիլմերի թվայնացման պետական ֆինանսավորման համար*(Հմց, news.am):*

ՊԵՏՖԻՆԱՆՍ, գ. (հպվ.): **Պետական ֆինանս**: Անհայտ անձինք Ֆրանսիայի կառավարության երկու նախարարի՝ էկոնոմիկայի և **պետֆինանսների** նախարարներին սպառնալիք պարունակող նամակներ են ուղարկել *(Հմց, news.am):*

ՊԼԱԿԱՏԱԿԻՐ, գ. **Պլակատը տանող**: [Նա] անցել էր երթի գլուխ. երթը, **պլակատակիր** Լուսոյին .... առաջնորդել էր միակ ուղիղ, գետափնյա փողոցով *(ԳԹ, 21.02.2020):*

ՊԼԱՏԻՆԱԳՈՒՅՆ, ած. **Պլատինի գույնի**: .... Էս գեղջկուհիները՝ մեր մայրերը, վաթսուն տարեկանում մազերը **պլատինագույն** են ներկում .... *(Ռոթ, էջ 95):*

ՊՂՆՁԱՈՍԿԵԳՈՒՅՆ, ած. **Պղնձի գույնին տվող ոսկեգույն**: Մենք տեսանք ընտիր **պղնձաոսկեգույն,** թափանցիկ վաղորդյան ցողով շղարշված ծիրանների կույտը *(ՆԱք., էջ 72):*

ՊՃՆԱՊԱՃՈՒՃԵԼ, նբ. **Պճնանքով պաճուճել՝ զարդարել**: .... Ցանկալի է մնալ սառնասիրտ և գլուխ չխոնարհել **պճնապաճուճված** դեմքի առջև .... *(Եղինեկ, էջ 35):*

ՊՈՂՊԱՏԱԳՈՐՇ, ած. **Պողպատի գույնի նման գորշ գույն**: .... Թավարծի **պողպատագորշ** հոնքերը թեթևակի ցնցվում էին խճագույն աչքերից վեր .... *(Ֆոլք., էջ 11):*

ՊՈՂՊԱՏԱՍԱՌՆ, ած. **Պողպատի սառնություն ունեցող**: Հիլդան մոխրագույն, **պողպատասառն**, ծակող աչքերը քրոջ վրա էր սևեռել *(Հերբերթ, էջ 363):*

ՊՈՉԵԼ, նբ. **Պոչ զցել, կոթ հազցնել**: Կացինը **պոչեմ** .... *(ՎԲ, էջ 145):*

ՊՏԱՆԱԽՇ, ած. **Պտերով նախշված՝ նախշազարդված**: Սպիտակ **պտանախշ** շորն արդեն դեզի մոտ էր երևում *(ՎԲ, էջ 40):*

ՊՏՏԱԹՈՌ, գ. **Պտտվող աթոռ**: Նա նստած էր եռոտանի **պտտաթոռին** .... *(ՄԲ, էջ 62):*

ՊՐՈԹԵԶԱՎՈՐՎԱԾ, ած. **Պրոթեզ՝ մարմնի արհեստական անդամ դրած**: Մի քանի ամիս անց **պրոթեզավորված** վերադարձավ Ստեփանակերտ *(ԶԲ, էջ 47):*

ՊՈՒՃՈՒՐԱԲԱԺԻՆ, ած. (խսկց.): **Պուճուր՝ փոքր մաս, բաժին կազմող**: .... Դասերս սովորելու հետ պետք է մեր դուռ-դռան, հենց մեր կոլխոզի **պուճուրաբաժին,** բայց հաղթանակին նպաստ բերող գործ անեմ .... *(Հրաչօ, էջ 69):*

## Ջ

ՋԱՀԵԼՆԱԿ, ած. (խսկց.): **Ինչպես ջահելինը, ջահելավարի**: .... Դպրոցի դիրեկտորը .... **ջահելնակ** հագուկապիս պատճառով թերահավատորեն էր տրամադրված իմ հանդեմ *(ՎԻ, էջ 307):*

ՋԱՅԼԱՄԱՁՈՒ, գ. **Ջայլամի ձու**: Հայտնվում էր, որ .... փայլուն հաղթանակ էր տարել ջայլամների երամների դեմ մարտում՝ .... ոչնչացնելով **ջայլամաձվերի** վիթխարի քանակություն *(ՄԲ, էջ 145):*

ՋԱՆԱԽՆԴՐՈՐԵՆ, մկբ., Ջանախնդիր կերպով: .... Ամբողջ շաբաթ ջանախնդրորեն աշխատել եմ *(ԳԽ1, էջ 190):*

ՋԱՐԴՎԵԼԻՔ, գ. **Այն, ինչ որ ենթակա էր ջարդվելու**: **Ջարդվելիքը** ջարդվում էր, մնացյալը թափվում գետնին *(ԳԽ 1, էջ 83):*

ՋԵՐՄԱՉԱՓԵԼ, բ. **Ջերմությունը չափել**: Ջվարձանքների կենտրոնը .... նախքան այգի մտնելը այցելուներին **կջերմաչափի** …. *(ՀՀ, 07.05.2020):*

ՋԵՐՄԻՋԵՑՆՈՂ,ած. **Ջերմությունը իջեցնող, ջերմիջույց**: .... Գերիզոր **ջերմիջեցնող** դեղամիջոցը իր գործը կաներ *(Մոյես, էջ 81):*

ՋՂԱՑՆՑՎԵԼ, չբ. **Ջղագրգռվել, ջղազարվել**: Շան վնգստոց լսեցի. մարմնի պոչ կրող կեսը թռավ մի կողմ, **ջղացնցվեց**, գալարվեց արնաշաղախ …. *(ԳԽ1, էջ 55):*

ՋՂԱՑՆՑՈՒՄ, գ. **Ջղերի ցնցվելը**: Ատելությունն ավարտվեց **ջղացնցումներով** *(Օրուել, էջ 17):*

ՋՐԱԱՂԱՅԻՆ,ած. **Ջրի(ն) և աղի(ն) վերաբերող**: Սովորական խմելու ջուրը ոչ միայն պահպանում է **ջրաաղային** բալանսը, այլև օգնում է սահմանափակել ավելորդ կալորիաների օգտագործումը *(Հմց, news.am):*

ՋՐԱԱՆԹԱՓԱՆՑ, ած. (դիպվ.): **Ջուր չթափանցող, ջուր չանցկացնող, անջրանցիկ**: Հստակեցվում էր, որ գործարանը մասնագիտացած է **ջրաանթափանց** նյութերի և ջերմամեկուսացման միջոցների պատրաստման ոլորտում *(Հմց, news.am):*

ՋՐԱԹԻՌ, գ. **Ջրի վրա վայրէջք և ջրային մակերևույթից թռիչք կատարող սարք**: Տնից հետո մենք անցանք պարտեզը, ավազանը, **ջրաթիռը** և միջամառային ծաղիկները դիտելուն…. *(Ֆից., էջ 110):*

ՋՐԱԼՃԱԿ, գ. **Ջրի լճակ**: .... Կանգնած էր **ջրալճակի** մեջ *(ՄԲ, էջ 230):*

ՋՐԱԾՓԱՆՔ, գ. **Ջրի ծփանք**: Անեղծուն հուշապատկերներիս լուսացոլք երամը չիջավ որևէ հողակտորի վրա, այն .... ծննդավայրս համառորեն փնտրում է Ախուրյանի ջրամբարի **ջրածփանքի** տակ *(ԳԹ, 21.02.2020):*

ՋՐԱՂԱՑՊԱՆՈՒՀԻ, գ. **Կին ջրաղացպան**: .... Պետք է հաղորդեին Շուբերտի երգերը «Գեղեցկուհի **ջրաղացպանուհին**» երգաշարից *(ՎԲ, էջ 217):*

ՋՐԱՄԱՐԶԱՆՔ, գ. **Ջրի մեջ կատարվող մարզանք**: .... **Ջրամարզանքի** իր հմտություններն էր գործի դնում *(Մոյես, էջ 315):*

ՋՐԱՊԱՀԱՆՋ, գ. **Ջրօգտագործման պահանջ**: Այսպիսով, ոռոգման հաշվարկված **ջրապահանջի** (շուրջ 463 մլն. խմ) և հնարավոր ջրառաջարկի տարբերությունը կազմում է շուրջ 50 մլն. մ³ .... *(ՀՀ, 05.06.2020):*

ՋՐԱՌԱՋԱՐԿ, գ. **Ջրօգտագործման առաջարկ**: Տե՛ս ՋՐԱՊԱՀԱՆՋ-ի օրինակը:

ՋՐԱՏՈՆ, գ. **Ջրի տոն, վարդավառ**: Ամառային շոգերին է նշվում Վարդավառի բնապաշտական **ջրատոնը** .... *(ՊԲՀ, 2020, 1, էջ 179):*

ՋՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Ջրի արտադրություն**: Միաժամանակ նախատեսվում է Մխչյանի և Ռանչպար-Արևշատ պոմպակայանների առավելագույն հզորությամբ գործարկմամբ ապահովել շուրջ 55 մլն. մ³ **ջրարտադրություն** *(ՀՀ, 05.06.2020):*

ՋՐԱՑԱՆՑ, գ. **Ջրամատակարարման ցանց**: Այս տարվա հուլիսից լայն թափով առաջ են տարվում **ջրացանցի** կառուցման աշխատանքները *(ՀՀ, 07.12.2019):*

ՋՐԵՌՈՑ, գ. **Ջուր եռացնելու հարմարանք**: .... **Ջրեռոցի** տակ կարմրին էին տալիս ածուխները *(ՎԲ, էջ 272):*

ՋՈՒՆԳԼԻԱԲՆԱԿ, ած. **Ջունգլիում բնակվող, ջունգլու բնակիչ**: Եվ ուրախ է ոնց, երջանիկ, .... ինչպես կարող է լինել միայն **ջունգլիաբնակ** խափշիկը *(ԳԽ2, էջ 7):*

ՋՈՒՆԳԼԻԱՆԱԽՇ, ած. **Ջունգլին պատկերող նախշերով**: .... Մի ժանտատեսիլ ծանոթ կերպար հետապնդում էր նրան երկար

**ջունգլիանախշ** գորգերով պատված միջանցքների միջով *(Քինգ, էջ 73)։*

**Ռ**

ՌԱԴԻՈԳԻՐՔ, գ. **Ձայնագրված գիրք, որը ոչ թե կարդում են, այլ լսում**։ Գրքերի կեսին փոխարինելու էին եկել խտասկավառակներն ու տեսասկավառակները, ամենուր **ռադիոգրքերով** լի դարակներ էին .... *(Մոյես, էջ 137)։*

ՌԱԴԻՈԴԻՋԵՅ, գ. **Ռադիոյի դիջեյ՝ երաժշտական հաղորդավար**։ –Ես Չիպ Մարտինն եմ,- **ռադիոդիջեյներին** հատուկ կրծքային ձայնով հայտարարեց նա *(Գրին, էջ 16)։*

ՌԱԶՄԱԳՈՐԾԱՐԱՆ, գ. **Ռազմական գործարան**։ Տալվորիկը **ռազմագործարան** էր հիշեցնում *(ՎԻ, էջ 194)։*

ՌԱԶՄԱԿԱՆԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Ռազմականացված լինելը**։ Կոնվերսիայի միջազգային կենտրոնն ամեն տարի հրապարակում է աշխարհի **ռազմականացվածության** համաթիվը՝ համեմատելով երկրի ռազմական ապարատի կշիռն ու կարևորությունը հանրային կյանքի մյուս ոլորտների նկատմամբ *(ՀՀ, 21.02.2020)։*

ՌԱԶՄԱՕԴՈՒԺԱՅԻՆ, ած. **Ռազմական օդուժին վերաբերող**։ Իրաքում զինյալները ռմբակոծել են **ռազմաօդուժային** խոշոր բազան *(Հմց, news.am)։*

ՌԱՍՏՐԱՅԻՆ, ած. **Ռաստրի օգտագործմամբ աշխատող**։ Տե՛ս ՊԱՏԿԵՐԱՑԱՆՑԱՅԻՆ-ի օրինակը։

ՌԵՍՈՒՐՍԱԽՆԱՅՈՂ, ած. **Ռեսուրսները խնայող**։ Պետության զարգացման **ռեսուրսախնայող** լուծումների ներդրման հրամայականը *(ՀՀ, 10.03.2020)։*

ՌԵՏԻՆԱԿՏՈՐ, գ. **Կտորեղենի տեսակ:** Ժորիկը մեկնեց քաղաք, .... գնեց կոմբինիզոն՝ պաշտոնական դիմակով, կայծակշղթայով, ու գոտկատեղին, կոճերին ու թևքերին՝ **ռետինակտորով** *(ՆԱ, էջ 161)։*

ՌՄԲԱՆՇԱՆԱՌՈՒ,ած. (ռազմ.)։ **Ռումբերի նշանառությունը կատարող. ռմբանշանառու սարք - ռմբանշանոց**։ Երկու շաբաթ չանցած՝ Դևիսը հայթայթեց ու Հովակիմյանին հանձնեց **ռմբանշանառու** և ձայնաորս սարքերի գծագրերն ու բաղադրամասերի կազմությունը *(Աղաբ., էջ 96)։*

ՌՈԲՈՏԱԿԱՌՈՒՑՈՒՄ, գ. **Ռոբոտ կառուցելը**։ .... Սա ստուգապես այն միակ կետն է, որը գրեթե անօգուտ է դառնում **ռոբոտակառուցման** և մեքենայացման ընթացքում *(Ուելբեք, էջ 175)։*

ՌՈՒՍԱՀՈՒՆՉ,ած. **Ռուսերենի նման հնչող**։ Ընդունում էին նրա հեղինակությունը, անձը, ավելի քան իրենց լպրծուն գեներալներին, որոնց **ռուսահունչ** ադրբեջաներենից զզվում էին նույնչափ, որչափ քաղաքական ճարտասաններից *(ՎԻ, էջ 359)։*

## Ս

ՍԱԴԱՓԱՄՈԽՐԱԳՈՒՅՆ, ած. Սադափի գույնի նման մոխրագույն։ Տե՛ս ԱՆԱՆՈՒԽԱԿԱՆԱՉԱՎՈՒՆ-ի օրինակը։

ՍԱԿԱՐԿԵԼԻ, ած. **Սակարկման ենթակա. որը կարելի է սակարկել**։ Անկախությունը **սակարկելի** չէ *(ՎԻ, էջ 8)։*

ՍԱՀԱՍԱՅԼ, գ. **Սահելով ընթացող՝ շարժվող սայլ**։ .... Ձին լծեց ուրիշի **սահասայլին** *(ՎԲ, էջ 23)։*

ՍԱՀԵՍԱՀ, ած., մկբ. **Սահելով**։ .... Մի կին … **սահեսահ** իջնում է թեք հարթությամբ …. *(ՄԲ, էջ 305)։*

ՍԱՀՄԱՆԱՇԵՐՏ, գ. **Սահմանի երկարությամբ ձգվող նեղ հատված՝ շերտ**։ .... Սահմանապահները իրենց **սահմանաշերտն** ունեն, որտեղ տեղակայված են ուղեկալները *(ՁԲ, էջ 489)։*

ՍԱՅԹԱՔԱԼԻՑ, գ. (փխբ.)։ **Սայթաքումներով՝ սխալներով, վրիպումներով լի**։ .... Ինչը դրա՝ դեպի սեփական «գերեզման» տանող, մեկ տարի տևած **սայթաքալից** ընթացքի սկիզբն էր *(Այզ., էջ 344)։*

ՍԱՅԼԱՆՎԱՉԱՓ, ած. **Սայլի անիվի չափ՝ մեծ**: .... Սիրում էր կրկնել՝ խոշոր ձեռքերով հունցելով հսկայական, **սայլանվաչափ** գունդը *(ՆԱ, էջ 5)*:

ՍԱՆԴԱԹԱԿ, գ. **Սանդի թակիչ, սանդակոթ, սանդակոռ(ն)**: .... Նրա դեղերն էի պատրաստում՝ երբեմն դրանք փոքրիկ **սանդակոթով** և հավանգով մանրացնելով *(Մոյես, էջ 48)*:

ՍԱՌՆԱՄԱՆԻՔԱՇՈՒՆՉ, ած. **Սառնամանիքի շունչ ունեցող, ցրտաշունչ**: .... Միանգամից սենյակում ամեն ինչ լցվեց նրա ուրախ **սառնամանիքաշունչ** երիտասարդ թարմությամբ .... *(Բունին, էջ 232)*:

ՍԱՌՆԱՇԱՔԱՐԵ, ած. **Սառնաշաքարից պատրաստված**: **Սառնաշաքարե** մարզագետնում ենք .... *(Հոֆ., էջ 124)*:

ՍԱՌՑԱՔԻՍՏ, ած. (բնստ., փխբ.): **Սառցե փշեր՝ քիստեր ունեցող (հասկի)**: Ցուրտն արարում է **սառցաքիստ** հասկեր *(ԼԴ 1, էջ 181)*:

ՍԱՍՈՒՆՑԻԱՎԱՐԻ, մկբ. **Սասունցու նման, ինչպես սասունցիները, սասունցի լինելով**: Ծեր մարդը **սասունցիավարի** ժպտալով ասում է .... *(ՎԻ, էջ 180)*:

ՍԱՎԱՌՆԱՔԱՅԼ, մկբ. (փխբ.): **Կարծես օդի միջով ընթանալով, թռչելով, թևածելով**: .... Լույսի միջից ելավ ու **սավառնաքայլ** դեպի ինձ եկավ մի աղջիկ .... *(ԳԽ1, էջ 151)*:

ՍԱՐԱՀԱՄ, գ. (խսկց.): **Սարերին բնորոշ համ**: Տե՛ս ԾՄԱԿԱՀԱՄ-ի օրինակը:

ՍԱՐԴՈՍՏԱՅՆԱՊԱՏ, ած. **Սարդոստայնով պատված**: .... Առանձնատան կիսախավար, **սարդոստայնապատ** միջանցքներում .... *(Ռուշդի, էջ 21)*:

ՍԱՐՔԱՅԻՆ, ած. **Սարքերի**: Նա հպարտանում էր, որ **սարքային** ապահովման ինժեներ է .... *(Այզ., էջ 26)*:

ՍԱՔՍՈՖՈՆԱՀԱՐ, գ. **Սաքսոֆոն նվագող**: ... Ինչին հավանորեն քիչ չեն նպաստում տենոր-**սաքսոֆոնահար** Վեյն Շոտերի .... նորարարական ջանքերը *(ԳԽ2, էջ 66)*:

ՍԳԱՍԵՎ, ած. **Սգի ժամանակվա սև, սև, ինչպես սուգ պահելու՝ սգի ժամանակվա շորերի գույնը**: **Սգասև** ամպ *(Սթռուն, էջ 645):*

ՍԵԶՈՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, գ. **Տարվա եղանակների իրար հաջորդելը**: Շատ վայրերում **սեզոնափոխությունը** նշանավորվում է չվող թռչունների վերադարձով .... *(Մոյես, էջ 139):*

ՍԵՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Ինչ սեռի պատկանելը** .... Նա մի մութ ներքնազգացողությամբ, իր կրծքերի կինարմատ **սեռականությունը** ավելի է զգում, քան շատ կանայք .... *((ՆԱդ., էջ 112):*

ՍԵՎԱԽՈՒՃՈՒՃ, ած. **Սև խուճուճներով**: Հիմա արդեն .... կարող է նրան գնահատել որպես մանկավարժականի սովորական ուսանողուհու՝ կիսաձևավորված կրծքերով և **սևախուճուճ** փորատակով *(Պոլ., էջ 115):*

ՍԵՎԱԿԱՆԱՉ, ած. **Սևին տվող՝ մուգ կանաչ**: Ստվերածածկ ծառաբները թանձր **սևականաչ** փայլ էին արձակում .... *(Սթռուն, էջ 298):*

ՍԵՎԱԿԱՊՏԱՎՈՒՆ, ած. **Սևին տվող կապույտ**: Ձեռքը շրջվեց դռնից և ջունգլիի նախշերով **սևակապտավուն** գորգի վրայով քտրքտացնելով՝ գնաց դեպի հիմնական միջանցքը *(Քինգ, էջ 277):*

ՍԵՎԱՆՅԱՆ ած. **Սևանի, Սևանում անցկացրած**: .... Ակամա փակեց մերկ կրծքերը, որոնք **սևանյան** երկշաբաթյա հանգստից թխացած նրա մարմնին գծագրվել էին թրթռուն-հմայիչ ճերմակությամբ *(ՆԱդ., էջ 161):*

ՍԵՎԱՌԱՏ, ած. **Մուգ սև**: .... Շենքի տանիքին ... **սևառատ** մակագրություն կար .... *(ՄԲ, էջ 84):*

ՍԵՎԱՍՊԻՏԱԿ, ած. **Սև և սպիտակ**: Եվ չկար մի անկյուն, որտեղ կարողանար պահվել **սևասպիտակ** շորեր հագած .... *(Սթռուն, էջ 611):*

ՍԵՎԱՏԱՄ, ած. **Սև ատամներ ունեցող՝ ատամներով**: .... Տան ետևներում մայեցին-վերջացրին **սևատամ** ոչխարները .... *(ՎԲ, էջ 287):*

ՍԵՎԱՏԱՆԻՔ, ած. **Սև տանիք ունեցող**: Հանքի հարևանությամբ փռված ոչ խոր դաշտերին նայեցին և դրանից այն կողմ՝ Թիվերշողի **սևատանիք** տներին .... *(Հերբերթ, էջ 279):*

ՍԵՐՆԴԱՇԱՏ, ած. (բնստ.): **Շատ սերունդ ունեցող:** Այդ տան մեջ խոսում են սովորույթի խորքից,// Այդ տան մեջ դարերն են **սերնդաշատ** շնչում *(ԼԴ 1, էջ 126):*

ՍԵՐՆԴԱՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ, գ. **Սերունդը շարունակելը**: .... Մարդու և կենդանու օրգանիզմները նրանց պետք են բազմացման, **սերնդաշարունակության** համար *(ԳԹ, 21.02.2020):*

ՍԵՓԱԿԱՆԱՏԵՆՉ, ած. **Սեփականություն ձեռք բերելու տենչ՝ արտակարգ ցանկություն ունեցող**: Առհասարակ Վասիդիսն անդադրում **սեփականատենչ** դուրս եկավ .... *(ՆԱբ., էջ 194):*

ՍԵՔՍԻՍՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Սեքսիստական հակում**: Քանի որ Ռասկինը **սեքսիստություն** էր համարում համակարգիչները կանանց անունով կոչելը, նախագիծը վերանվանեց .... *(Այզ., էջ 123):*

ՍԻԳԱՐԱՁԵՎ, ած. **Սիգարի ձև ունեցող**: Աղամը ներս ընկավ՝ **սիգարաձև** փաթաթած աղոթագորգը թևի տակ .... *(Ռուշդի, էջ 18):*

ՍԻԳԱՐԵՏԱՎԱՃԱՌ, գ. Սիգարետ վաճառող: Տե'ս ԲՈՒՏԵՐԲՐՈԴԱՎԱՃԱՌ-ի օրինակը:

ՍԻՋԱԲԱԿ, գ. **Սիզամարգերով բակ:** Այդ օրը նա չի կարողանալու Քորրիի **սիզաբակը** հնձել *(ԱՄ, էջ 182):*

ՍԻՍԵՌԱՊԱՏԻՃ, գ. **Սիսեռի պատիճը՝ պատյանը:** .... Նմանվել էր **սիսեռապատիճի**, որը ուր որ է կպայթի *(Քերվուդ, էջ 8):*

ՍԻՐԱԶՐԿԵԼ, նբ. **Սիրուց զրկել, անսեր թողնել**: Մարդ են, իբր մարդ են, ասում են, խոսում են, քայլում են, զավակներ են ունենում, բայց սիրազուրկ են. սիրազուրկ են, հերիք չի, աշխարհին են **սիրազրկում** *(Հրաչօ, էջ 70):*

ՍԼԱՎՈՆԱԹՈՒՐՔԱԿԱՆ, ած. **Սլավոններին և թուրքերին վերաբերող**: .... **Սլավոնաթուրքական** դաշինքի հիմքի վրա .... ստեղծվի եվրասիական պետություն *(ԶԲ, էջ 509):*

ՍԽԱԼՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Սխալված լինելը**: Երբ .... Փալիկն ընտրեց գիշերային զվարճավայրը, հանկարծ համակվեց **սխալվածության**, շփոթի ու խեղճության զգացումով .... *(ԱրմՍ., էջ 195):*

ՍԿԱՎԱՌԱԿԱԿԻՐ, գ. (տեխ.): **Սկավառակը կրող մաս**: Տե՛ս ՆԵՐԿԱՌՈՒՅՑ-ի օրինակը:

ՍԿՈՒՏԵՐԱՎԱՐՈՒՀԻ, գ. **Սկուտեր՝ կախովի շարժիչով միտեղանի մարզական նավակ վարող կին՝ աղջիկ**: **Սկուտերավարուհին** գրել էր .... *(Մոյես, էջ 280):*

ՍՆԱՆԿԱՑՈՒՑԻՉ, ած. **Սնանկացնող, սնանկություն պատճառ դարձող**: Նրան թվում էր, թե տարբեր առարկաներ նկարելու մոլուցքը պարզապես Վինսենթի **սնանկացուցիչ** քմահաճույքն է *(Սթոուն, էջ 306):*

ՍՆԴԻԿԱԳՈՒՅՆ, ած. **Սնդիկի գույնի**: .... [Ապակիները], որ շարունակ գույնզգույն գոհարներով լուսավորվում էին լապտերների լույսից ու սև բարձրանում մերթ արնակարմիր, մերթ **սնդիկագույն** երփներանգող ռեկլամներից .... *(Բունին, էջ 395):*

ՍՆԿՈՏ, ած. (խսկց.): **Սնկով առատ**: .... Վեր ընկած **սնկոտ** հաճարենիները լավ եմ ճանաչում .... *(Հրաչօ, էջ 5):*

ՍՆՆԴԱՆԵՐԿ, գ. **Սննդի մեջ գործածվող ներկ**: Ոչ բալի, ոչ էլ կեռասի համ ուներ, միայն շաքար ու կարմիր **սննդաներկ** *(ԱՄ, էջ 64):*

ՍՈՂԱՅԱԲՈՒՅԺ, ած. **Սողայով բուժող:** Եթե չեմ սխալվում Իտալիայում էր, որ քաղցկեղի **սողայաբույժ** «բժշկին» զրկեցին բժշկական գործունեության իրավունքից *(Հմց):*

ՍՈԽԱՄԻՍ, գ. **Սոխը և միսը իրար խառնած**: .... **Սոխամսով** պահածոյի մի քանի տուփ և մի զույգ տաք կոշիկ էր պահում *(Ջեեթ., էջ 109):*

ՍՈՃԵԲՈՒՅՐ, գ. **Սոճու բույր ունեցող**: Սա աշխարհի ամենալավ օդն է՝ **սոճեբույր** ձմռան օդ *(Ռոթ, էջ 30):*

ՍՈՎԱՉՔ, ած. (բրբ.): **Արտակարգ՝ սուղ կարիքավոր, սով քաշող**: Ամեն օր իր խրատն էր բերում, խրատով, լավ ու վատ լածներով հասունանում էին մեր **սովաչք** տներում .... *(Հրաչօ, էջ 10):*

ՍՈՎԵՏԱԳԵՐՄԱՆԱԿԱՆ, ած. **Սովետական Միության և Գերմանիայի միջև կնքված**: Բերեժկովն արդյո՞ք ներկա է եղել **սովետագերմանական** դաշնագրի ստորագրմանը *(Պոզներ, էջ 108):*

ՍՈՎՈՐՈՒԹԱԿԱՐԳ, գ. **Որևէ ոլորտում ընդունված սովորույթների համակարգը:** Այսպիսով, ազգային-եկեղեցական տոների մեծ մասը .... Ակունքվում է հնուց, միջին դարերում միաձուլվում քրիստոնեական գաղափարախոսությանն ու **սովորութակարգին** .... *(ՊԲՀ, 2020, 1, էջ 181):*

ՍՈՑԱԿՏԻՎԻՍՏԱԿԱՆ, ած. (հպվ.): **Հանրային ակտիվությամբ աչքի ընկնող: Սոցակտիվիստական** խմբերի հետ հիմնեցինք մեր կուսակցությունը *(Հմց, news.am):*

ՍՈՑԱՆԱՊԱՀՈՎ, ած. (հպվ.): **Սոցիալապես անապահով**: Տե՛ս ԿՐԹԱՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ-ի օրինակը:

ՍՈՑԱՇԽԱՏԱԿԻՑ, գ. (հպվ.): **Սոցիալական աշխատակից:** Քանի որ մեր տարեց քաղաքացիներին այցելում են **սոցաշխատակիցները**, վերջիններիս այցելությունները պոլիկլինիկաներ ևս սահմանափակվել են *(Հմց, news.am):*

ՍՈՑԱՇԽԱՏՈՂ, գ. (հպվ.): **Սոցիալական աշխատող:** Այդ մասնագետների թվում են բժիշկները, մանկավարժները, **սոցաշխատողները** *(Հմց, news.am):*

ՍՈՑԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ, գ. (հպվ.): **Սոցիալական ապահովություն:** Նրանք գումար հանելու խնդիրներ են ունենում, քանի որ բնակչության **սոցապահովության** հիմնադրամը շատ ուշ է փոխանցել գումարը *(Հմց, news.am):*

ՍՈՑԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ, գ. (հպվ.): **Սոցիալական աջակցություն:** Այն կգնահատի նաև մասնագետների պրոֆեսիոնալ վերապատրաստումը և խնամակալության ու **սոցաջակցության** մարմիններում աշխատելու իրավունքը *(Հմց, news.am):*

ՍՈՑԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, գ. (հպվ.): **Սոցիալական առողջապահություն**: Արդիական են **սոցառողջապահության** բարեփոխումները *(Հմց, news.am):*

ՍՈՑԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ, գ. (հպվ.)։ **Սոցիալական արտոնություն։** Բրիտանիայի աշխատանքի նախարարը հրաժարական է տվել **սոցարտոնությունների** կրճատմանը չհամաձայնելու պատճառով *(Հմց, news.am):*

ՍՈՑԲԱԺԻՆ, գ. (հպվ.)։ **Սոցիալական բաժին։** Նամակը հասել է փոխքաղաքապետին, այնուհետև իջել է **սոցբաժին** *(Հմց, news.am):*

ՍՈՑԲԼՈԿ, գ. (հպվ.)։ **Սոցիալիստական բլոկ։** Կանանց և տղամարդկանց միջև տարբերությունը կրճատվել է **սոցբլոկի** նախկին երկրներում և Եվրոպայի հարավի պահպանողական երկրներում *(Հմց, news.am):*

ՍՈՑԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ, ած. (հպվ.)։ **Սոցիալական բնակարանային։** Թոփ ութնյակում են նաև **սոցբնակարանային** հիմնադրամի ստեղծումը և «Մատչելի բնակարան» ծրագրի մեկնարկը *(Հմց, news.am):*

ՍՈՑԳՈՎԱԶԴ, գ. (հպվ.)։ **Սոցիալական գովազդ։** Դերասանը չի ցանկանում բացահայտել **սոցգովազդի** բովանդակությունը. խնդրում է սպասել *(Հմց, news.am):*

ՍՈՑԳՈՐԾԸՆԿԵՐ, գ. (հպվ.)։ **Սոցիալական գործընկեր։** Կարևոր է **սոցգործընկերների** հետ համագործակցությունը *(Հմց, news.am):*

ՍՈՑԵՐԱՇԽԻՔ, գ. (հպվ.)։ **Սոցիալական երաշխիք։** Նոր **սոցերաշխիքներ** պատերազմի մասնակիցների և նրանց ընտանիքի անդամների համար *(Հմց, news.am):*

ՍՈՑԶԱՐԳԱՑՈՒՄ, գ. (հպվ.)։ **Սոցիալական զարգացում։** Մեխիկոյի բնակիչը իր ծննդյան վկայականը ստացել է քաղաքի **սոցզարգացման** նախարարից *(Հմց, news.am):*

ՍՈՑԷՋ, գ. (հպվ.)։ **Սոցիալական էջ։** Զբոսանքից լուսանկարը երգիչը տեղադրել էր իր **սոցէջում** *(Հմց, news.am):*

ՍՈՑԽՈՒՄԲ, գ. (հպվ.)։ **Սոցիալական խումբ։** Ճառագայթային թերապիա ստանալու համար 25 **սոցխմբերի** և հատուկ խմբերի հիվանդները պետպատվերով են բուժվում *(Հմց, news.am):*

ՍՈՑԾՐԱԳԻՐ, գ. (հպվ.)։ **Սոցիալական ծրագիր։** Առանձին թիրախային խմբերում **սոցծրագրեր** են նախատեսվելու *(Հմց, news.am)։*

ՍՈՑՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ, գ. (հպվ.)։ **Սոցիալական ձեռնարկություն։ Սոցձեռնարկություններում** մեծ թվով հաշմանդամներ ընդունվել են աշխատանքի *(Հմց, news.am)։*

ՍՈՑՃԱՄԲԱՐ, գ. (հպվ.)։ **Սոցիալիստական ճամբար։** Հետազոտությունն իրականացվել է հետխորհրդային և նախկին **սոցճամբարի** երկրներում *(Հմց, news.am)։*

ՍՈՑՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, գ. (հպվ.)։ **Սոցիալական-մշակութային։** Քաղաքային զարգացման ոլորտի փորձագետները նաև **սոցմշակութային** ծրագրի համահեղինակներ են *(Հմց, news.am)։*

ՍՊԱՍԱՍԵՂԱՆ, գ. Այստեղ՝ **սպասարկման՝ սպասարկողների սեղան**։ - Բարև Ձեզ, - մոտենալով ռեստորանի **սպասասեղանին՝** ասացի ես, - երկու հոգու համար սեղան, խնդրեմ *(Մոյես, էջ 146)։*

ՍՊԱՍՔԱՄԱՆ, գ. **Սպասքի աման**։ Նշանավոր «Հալման կաթսան», ուր ընկնում էին ներգաղթյալները, .... սկզբում վերածվել էր աղցանամանի, .... իսկ հետո՝ բաժանված մասերով **սպասքամանի** *(Պոզներ, էջ 636)։*

ՍՊԻՏԱԿԱԿԱՐՄՐԱՎՈՒՆ, ած. **Սպիտակին տվող կարմիր։** Տե՛ս ՈՍԿԵՋՕԾԱԿԱՐ-ի օրինակը։

ՍՊԻՏԱԿԱՆԱՐՆՋԱԳՈՒՅՆ, ած. **Սպիտակին տվող նարնջագույն։ Սպիտականարնջագույն** պայթյուն տեղի ունեցավ .... *(Քինգ, էջ 357)։*

ՍՊԻՏԱԿԱՇՈՒՇԱՆԱԳԵՂ, ած. **Սպիտակ շուշանի նման գեղեցիկ։** Նրա փոքրիկ դեմքը կարծես հյուսված էր **սպիտակաշուշանագեղ** և մեղմ վարդագույն մետաքսից .... *(Հոֆ., էջ 93)։*

ՍՊԻՏԱԿԱՓՈՐ, ած. **Սպիտակ գույնի փոր ունեցող**։ .... Որ ատամներդ սուր են, ուրեմն քեզնից վախեցա՞։ **Սպիտակափոր,** ծուռբերան *(ՎԲ, էջ 139)։*

ՏՏԱԼԻՆԱԿԱՆ, գ. (պատմ.)։ **Ստալինի՝ նրա վարվելակերպի կողմնակից՝ պաշտպան**։ **Ստալինականները** գտնում են, որ ամեն ինչ ճիշտ է արվել, նրանք չեն ուզում ոչինչ խոստովանել *(Պոզներ, էջ 527)։*

ՏՏԱՀԱՎԱՏ, ած. (դիպվ.)։ **Ստին հավատացող**։ .... Բոլոր մարդիկ **ստահավատ** են ....։ *(Վոն., էջ 26)։*

ՏՏԵՂԾԱՐԱՐԱԿԱՆ, ած. **Ստեղծելու, ստեղծագործելու, նոր բան հայտնագործելու**։ Մենք կարող ենք լավագույն արտադրանքն ունենալ, .... բայց եթե անփութորեն ներկայացնենք, անփութորեն էլ կընկալվի, եթե ներկայացնենք **ստեղծարարական,** պրոֆեսիոնալ ձևով, ապա դրանց կվերագրենք ցանկալի հատկանիշներ *(Այզ., էջ 89)։*

ՏՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Ստեղծարար հատկանիշը՝ նորարարությունը**։ Նա NEXT-ի արտադրանքի **ստեղծարարությունը** գովաբանող հոդված էր գրել *(Այզ., էջ 328)։*

ՏՏՎԵՐԱՅՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Օրինական դաշտից դուրս՝ ստվերում գործելը**։ Խաչատրյանը հույս հայտնեց, որ վաղ թե ուշ կառավարությունը կգնա այդ քայլին, և կապահովի բացարձակ թափանցիկություն, ինչն էլ կնպաստի **ստվերայնության** պակասեցմանը՝ ունենալով հակակոռուպցիոն նշանակություն *(ՀՀ, 06.09.2019)։*

ՏՏՈՒԳԱՊԱՀ, ած. **Ստույգությունը պահող. ճշտապահ**։ Տե՛ս ՄՈԼԱԳԱՐՈՐԵՆ-ի օրինակը *(Ուելբեք, էջ 13)։*

ՍՐԱՊՏՈՒԿ, ած. **Սուր պտուկներ ունեցող՝ պտուկներով**։ .... **Սրապտուկ** ստինքները կախված են նիհար կոնքերին .... *(Սթոուն, էջ 253)։*

ՍՐԲԱԳՐԱՍԵՆՅԱԿ, գ. **Սրբագրությունների՝ սրբագրիչների աշխատասենյակ**։ Նա .... քրքջաց, շուրջը հավաքելով սըրբագրիչների՝ **սրբագրասենյակից,** էջկապին *(ՄԲ, էջ 134)։*

ՍՐԲԱԶՈՐՔ, գ. (բնստ., փխբ.)։ **Սրբազան զորք։** Որ ինքն անթիվ **սրբազորքով** հաստատված// Պիտի երկրում դարձնի դրախտն անհուն բերք *(ԼԴ 1, էջ 123)։*

ՍՐԲԱԾԱՂԻԿ, գ. (բնստ.)։ **Սրբացրած ծաղիկ:** Մեր կյանքությամբ// Խոնարհվում ենք// Լուսապսակ **սրբածաղկին** արժանացած// Ձեր մայրերի շուքի առջև … *(ԼԴ 1, էջ 103):*

ՍՐՃԱՐԱՆԱԽԵՂԴ ԱՆԵԼ, բ. (դիպվ.)։ **Տարածքը սրճարաններով չափից ավելի ծանրաբեռնել**։ Այն այդպես **սրճարանախեղդ անելը** բացարձակապես անհարիր էր քաղաքի գլխավոր հատակագծի թամանյանական նախագծին *(ԳԹ, 22.03.2019):*

ՍՐՃԵՓՈՒԹՅՈՒՆ, գ. **Սուրճ եփելու գործընթաց, սուրճ եփելը**։ Մայրս **սրճեփությանը** չմասնակցող ձեռքով ցույց տվեց, որ սուս մնամ *(ԳԽ1, էջ 1170):*

ՍՐՏԱՀԱՎԱՏ, ած. (բնստ., փխբ.)։ **Հարազատ, սրտակից:** .... Դարձանք մենք նորից՝// Մեզ **սրտահավատ** ազգերի ավազ *(ԼԴ 1, էջ 276):*

ՍՈՒՆԻԱԲՆԱԿ, ած. **Սուննիներով բնակեցված**։ .... Քուրդիստանի ինքնավարությունում ու երկրի **սուննիաբնակ** արևմուտքում իրավիճակը խաղաղ է *(ՀՀ, 05.10.2019):*

ՍՈՒՊԵՐԼՐՏԵՍ, գ. **Արտակարգ հաջողությունների հասնող լրտես, գերլրտես:** Կասեն **սուպերլրտես** են բռնել *(Աղաբ., էջ 206):*

ՍՈՒՊԵՐՀԵՏԱԽՈՒՅԶ, գ. **Արտակարգ հաջողակ, մեծ արդյունքների հասնող հետախույզ**։ - Եվ ի՞նչ է ասում այս **սուպերետախույզը** *(Աղաբ., էջ 282):*

ՍՈՒՎՈՐՈՎԱԿԱՆ, գ. **Սուվորովի ռազմական ուսումնարանի սան՝ ունկնդիր:** Չէ որ նա **սուվորովական** է։ Մանկուց ուսադիրներ է կրել *(Արեն,էջ 141):*

ՍՈՒՖԼԵԱՆՈՑ, գ. **Ճաշարան, որտեղ սուֆլե են մատուցում**։ .... Զոքսը նրանց տարավ .... այն **սուֆլեանոցը,** որն ինքը սիրում էր .... *(Այզ., էջ 303):*

ՍՓՅՈՒՌՔՎԱԾ, ած. գ. **Հայրենիքից դուրս՝ այլ երկրներ՝ սփյուռք գաղթած**։ Միլիոնավոր զոհերը, եղեռնվածները քի՞չ են, աշխարհացրվածները, **սփյուռքվածները** քի՞չ են .... *(Հրաչօ, էջ 24):*

ՍՓՈՓԱՁԱՅՆ, մկբ. **Սփոփող ձայնով**։ Նիլը խոսում էր նրա հետ.... քնքշությամբ, **սփոփաձայն** …. *(ԱՄ, էջ 114):*

## Վ

ՎԱԳՐԱՁԱԳ, գ. **Վագրի ձագ:** .... Նրանք ասես ցատկող **վագրաձագեր** լինեին .... *(Օրուել, էջ 25):*

ՎԱԽԱԹՐԹԻՌ, ած. **Վախից թրթռացող:** Այդուհանդերձ, նա համակվեց **վախաթրթիռ** շտապողականությամբ .... *(Պոլ., էջ 5):*

ՎԱՂԱՄԱՌԱՅԻՆ, ած. **Վաղ ամռանը հատուկ:** .... Մի ակնթարթ մոլեգին ուրվագիծը երևաց աստղերի, **վաղամառային** գիշերվա անդորրավետ երկնքի դիմաց .... *(Ֆոլք., էջ 19):*

ՎԱՆԻԼԱԲՈՒՅՐ, ած. **Վանիլի բույր ունեցող**: Փոքրիկ բնակարան էր, և, դատելով դրա հոտից, վաղեմի մարտադաշտ էր **վանիլաբույր** մոմերի ու հնացած կարպետների համար *(Բրաուն, էջ 39):*

ՎԱՌԱՐԱՆԱԳՈԳ, գ. **Վառարանի գոգը՝ դռան առջևի հարթահատակ մասը**: Սկսեցի **վառարանագոգից** մոխիրը մաքրել *(Մոյես, էջ 52):*

ՎԱՌՈՂԵՂԵՆ, ած., գ. (փխբ.): **Վառոդից կազմված, այրվող վառոդի ջերմություն ունեցող**: .... Մի շաբաթվա չափ կրակվում էին շոգ, ասես **վառոդեղեն** օրեր .... *(ՎԲ, էջ 351):*

ՎԱՐԱԿԱԿՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Վարակակիր լինելը:** Մինչև հիմա հստակ տեղեկություն չկա՝ մենք ունե՞նք **վարակակրություն** *(Հմց, Lragir.am):*

ՎԱՐԱԿԱՊԱՏԵՐԱԶՄ, գ. **Վարակի դեմ պատերազմ՝ պայքար**: **Վարակապատերազմը** թափ է հավաքում ամբողջ աշխարհում *(Հմց, Tert. am):*

ՎԱՐԴԱԽԻՏ, ած. **Վարդերով խիտ**: Նրա չարաղետ գեղեցկությունը **վարդախիտ** մի գերեզմանոց էր .... *(Լըմոնյե, էջ 153):*

ՎԱՐԴԱԽՈՍ, ած. (բնստ., փխբ.): **Միրո խոսք ասող, կյանք ու ջերմություն սփռող:** Դու գորգի վրա փռվեցիր թավիշ,// Շուրթերդ դարձան **վարդախոս** ավիշ *(ԼԴ 1, էջ 143):*

ՎԱՐԴԱԾԱՄ, գ. (բնստ.): **Վարդի նման ծամ՝ հյուս:** Աղջիկներ են արդեն գալիս **վարդածամով**,// Ու տղաներ՝ շարժումներում հուրը պարի *(ԼԴ 1, էջ 284):*

ՎԱՐԴԱՀՐԱՅՐՔ, գ. (բնստ., փխբ.): **Հմայող, վարդի հրայրք ունեցող**: Նա հերարձակ,// Հագել է ոչ թե շոր,// Այլ՝ լուսայգի **վարդահրայրքը** թափանցիկ *(ԼԴ 1, էջ 147):*

ՎԱՐԴԱՆԱՎԱՐԻ, մկբ. **Ինչպես Վարդանը, Վարդանի նման**: .... Որքան լավ կլիներ, որ նա ինձ մի քիչ նրբորեն սիրեր անկողնում՝ **վարդանավարի** *(ՆԱղ., էջ 93):*

ՎԱՐՇԱՎՅԱՆ, ած. Այստեղ՝ **Գերմանացիների կողմից Վարշավա քաղաքում սարքված**: .... Ինձ հայտնի չէ, թե արդյոք գոյություն ունի՞ հուշարձանի տեսքով **վարշավյան** գետոն *(Պոզներ, էջ 134):*

ՎԱՐՉԱՊԵՏԱՇՈՒՆՉ, ած. (դիպվ.): **Վարչապետին մոտ կանգնած, հարող**: Ըստ օդում կախված լուրերի՝ բոլոր կոռուպցիոն սկանդալները պտտվում են **վարչապետաշունչ** շրջանակների շուրջը *(Հմց, news.am):*

ՎԱՐՍԱԿԱԳՈՒՅՆ, ած. **Վարսակի գույն ունեցող**: Ամեն ինքնաթիռի դիմաց կանգնած **վարսակագույն** օդաչուները նույնպես լուռ էին *(Վոն., էջ 125):*

ՎԱՐՍԱՀՅՈՒՍ, ած. **Վարսերը հյուսած**: .... Մի դեռատի, **վարսահյուս** հայուհի .... գնելու է Լևոն Բլբուլյանի միհատորյակը .... *(ԳԹ, 21.06.2019):*

ՎԱՖԼԱՆԱԽՇ, ած. **Վաֆլու նման՝ քառակուսաձև նախշերով պատված**: Նա դեմքներս կատաղորեն, գիտակցություններս կորցնելու աստիճան, պրտեց լավ օսլայած **վաֆլանախշ** սրբիչով *(ՆԱբ., էջ 29):*

ՎԵՐԱԱԶԱՏԱԳՐԵԼ, բ. **Կրկին ազատագրել**: Իսկ մեզ մոտ օրերս շրջանառվեց տեսանյութ, որտեղ մերոնք Ջրականն էին **վերաազատագրել** *(Հմց, aravot.am):*

ՎԵՐԱԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ, գ. **Վերստին ազգայնացում**: Քարոզարշավի ընթացքում քաղաքական ուժերը ի ցույց դրեցին իրենց նախընտրական խոստումների ողջ զինանոցը ներառյալ թոշակների կրկնապատկումն ու խորհրդային տարիների պետական ունեցվածքի **վերաազգայնացումը** *(Հմց, aravot.am):*

ՎԵՐԱԱԿՏԻՎԱՑՆԵԼ, բ. **Վերստին՝ կրկին ակտիվացնել:** Գերարագ ինտերնետի ծավալը հնարավոր է **վերաակտիվացնել** *(Հմց, aravot.am):*

ՎԵՐԱԱԿՏԻՎԱՑՈՒՄ, գ. **Վերստին՝ կրկին ակտիվացում:** Դա արտահայտվեց երախտագիտության **վերաակտիվացման** տեսքով *(Հմց, aravot.am):*

ՎԵՐԱԱՄԲՈՂՋԱՑՈՒՄ, գ. **Վերստին ամբողջացում:** Նրա գործը **վերաամբողջացումը** կամ վերակազմավորումն է, որի ընթացքում տվյալները վերածվում են պատմական փաստի*(Հմց, aravot.am):*

ՎԵՐԱԱՆԴԱՄԱԳՐՎԵԼ, բ. **Վերստին՝ կրկին անդամագրվել:** Նա ասաց, որ **կվերաանդամագրվեն** նոր կուսակցությանը *(Հմց, aravot.am):*

ՎԵՐԱԱՆՁՆԱԿԱՆԱՑՈՒՄ, գ. **Վերստին անձնականացում:** Ռիսկերի կառավարման ռազմավարությունը (այդ թվում՝ անոնիմիզացված տվյալների **վերաանձնականացման** ռիսկը) այն առանցքային դրույթներից է .... *(Հմց, aravot.am):*

ՎԵՐԱԱՆՈԹԱՎՈՐՈՒՄ, գ. **Վերստին անոթավորում:** Հիվանդն ունի ստորին վերջույթների տրոմբոֆլեբիտ սինդրոմ՝ մասնակի **վերաանոթավորմամբ** .... *(Հմց, aravot.am):*

ՎԵՐԱԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅՈՒՆ, գ. **Կրկին անվանակոչելը:** Այդ մի տեսակ .... քաղաքական մկրտություն էր և **վերաանվանակոչություն** *(ԹԺՀ, էջ 859):*

ՎԵՐԱԱՍՖԱԼՏԱՊԱՏԵԼ, բ. **Վերստին ասֆալտապատել:** Քաղաքապետարանը որոշել է հսկայական ռեսուրս տրամադրել դրանք **վերաասֆալտապատելու** համար *(Հմց, aravot.am):*

ՎԵՐԱԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ, գ. **Վերստին ասֆալտապատում:** Այս օրերին ընթանում են կենտրոնական փողոցների **վերաասֆալտապատման** աշխատանքներ *(Հմց, aravot.am):*

ՎԵՐԱԱՐԴԻԱԿԱՆԱՆԱԼ, գ. **Վերստին արդիականանալ:** Հոդվածում առաջին անգամ ձևակերպված հարցերն առանձնապես կարևոր են մեր օրերում **վերաարդիականացած** ազգային

ինքնության խնդիրների, ինչպես նաև հայ-արևելյան երաժշտական փոխառնչությունների ուսումնասիրման առումով *(ՊԲՀ, 3, 2019):*

ՎԵՐԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆԱՑՈՒՄ, գ. **Վերստին՝ կրկին արդյունաբերականացում:** Աշխարհը մտնում է մի նոր՝ չորրորդ արդյունաբերական հեղափոխության մեջ. **վերաարդյունաբերականացումն** անխուսափելի է*(Հմգ, aravot.am):*

ՎԵՐԱԱՐՁԱՆԱԳՐԵԼ, բ. **Վերստին՝ կրկին արձանագրել:** Պետք է **վերաարձանագրել** մի քանի մինչ այդ աքսիոմատիկ թվացող ճշմարտությունները *(Հմգ, aravot.am):*

ՎԵՐԱԱՐՄԱՏԱՎՈՐԵԼ, բ. **Վերստին՝ կրկին արմատավորել:** Նա ուսանողական վիզա ստացավ, եկավ ԱՄՆ՝ օտար երկրում **վերաարմատավորելով** իր ողջ կյանքը *(Հմգ, aravot.am):*

ՎԵՐԱԱՐՄԱՏԱՎՈՐՈՒՄ, գ. **Վերստին՝ կրկին արմատավորելը:** Ամենօրյա հաղորդակցումն այդ արժեքներին կնպաստի իրոք հայեցի կրթության **վերաարմատավորմանը** և հային բնորոշ տիպարի վերականգնմանը *(Հմգ, aravot.am):*

ՎԵՐԱԱՐՏԱԳՐԵԼ, բ. **Վերստին՝ կրկին արտագրել: Վերաարտագրեցի**, լրացրի, խմբագրեցի, ու դարձավ այս գիրքը*(Հմգ, aravot.am):*

ՎԵՐԱԱՐՏՈՆԱԳՐՈՒՄ, գ. **Վերստին՝ կրկին արտոնագրում: Վերաարտոնագրումը** սկսված է *(Հմգ, aravot.am):*

ՎԵՐԱԲԱՆԱԿՑՎԵԼ, բ. **Վերստին՝ կրկին բանակցել: Վերաբանակցվում** են ՀՀ ստանձնած մաքսատուրքերի սահմանային դրույքաչափերի պարտավորությունները *(Հմգ, aravot.am):*

ՎԵՐԱԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Վերստին՝ կրկին բանակցություն:** Վաշինգտոնյան նախաբան՝ կարգավորման **վերաբանակցություններին**վերաբերյալ *(Հմգ, aravot.am):*

ՎԵՐԱԳԱԶԱՖԻԿԱՑՈՒՄ, գ. (ճիշտ է՝ վերագազիֆիկացում): **Վերստին՝ կրկին գազիֆիկացում:** Մի նյութ էի գրել **վերագազաֆիկացման** մասին *(Հմգ, aravot.am):*

ՎԵՐԱԳԱՂՈՒԹԱՑՆԵԼ, բ. **Վերստին՝ կրկին գաղութացնել:** Կարճ ժամանակ անց ի հայտ եկավ նախկին հանրապետությունները **վերագաղութացնելու** ծրագիրը *(Հմց, aravot.am):*

ՎԵՐԱԳԱՂՈՒԹԱՑՈՒՄ, գ. **Վերստին՝ կրկին գաղութացում:** Անվտանգային միջավայրը հանգեցրեց Հայաստանի **վերագաղութացմանը** *(Հմց, aravot.am):*

ՎԵՐԱԳԱՆՁՈՒՄ, գ. **Վերստին՝ կրկին գանձելը:** Պետք է կատարել **վերագանձում** *(Հմց, aravot.am):*

ՎԵՐԱԳԾՈՒՄ, գ. **Վերստին՝ կրկին գծում:** Ազրեսիան կբերի նոր տարածքների ազատագրման, հետևաբար նոր շփման տարածքների **վերագծման** փաստին *(Հմց, aravot.am):*

ՎԵՐԱԳՈՐԾԱՐԿՎԵԼ, չբ. **Կրկին գործարկվել:** Սպառվում էր երկարատև պարապուրդից հետո **վերագործարկված** .... Ատոմակայանի պաշարը *(Արեն,էջ 52):*

ՎԵՐԱԴԻՄԵԼ, բ. **Վերստին՝ կրկին դիմել:** Մերժում ստանալուց հետո հանցագործը չի **վերադիմել** *(Հմց, aravot.am):*

ՎԵՐԱԴԻՏԱՐԿԵԼ, բ. **Վերստին՝ կրկին դիտարկել:** Կուզենայի արծարծված մի քանի խնդիրներ **վերադիտարկել** *(Հմց, aravot.am):*

ՎԵՐԱԴԻՏԱՐԿՈՒՄ, գ. **Վերստին՝ կրկին դիտարկում:** Այս **վերադիտարկումը** բազում հիմքեր է տալիս եզրակացնելու, որ նախկին նախագահները փոխադարձաբար ընդունելի լուծումների շուրջ համաձայնության են եկել *(Հմց,aravot.am):*

ՎԵՐԱԵՆԹԱԿԱՅԱՑՆԵԼ, բ. **Վերստին՝ կրկին ենթակայացնել:** Հանրակրթական ամբողջ համակարգը չհասցրին **վերաենթակայացնել** կրթության նախարարությանը *(Հմց, aravot.am):*

ՎԵՐԱԵՆԹԱՐԿԵՑՆԵԼ, բ. **Վերստին՝ կրկին ենթարկեցնել:** Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի ժողովրդին առաջարկվող այլընտրանքը՝ **վերաենթարկեցնելը,** հնարավոր է իրականացնել միայն Խորհրդային Միության վերականգնման դեպքում*(Հմց, aravot.am):*

ՎԵՐԱԵՐԿԱՐԱՑՆԵԼ, բ. **Վերստին՝ կրկին երկարացնել:** Քննիչը դիմել էր մարզի դատարան՝ կալանքի ժամկետը **վերաերկարացնելու** միջնորդությամբ *(Հմց, aravot.am):*

ՎԵՐԱՀԱՅՏՆԱԳՈՐԾԵԼ, նբ. **Կրկին, մեկ անգամ ևս կամ նոր ձևով հայտնագործել**: .... Որոնց թվում էր, թե իրենք կարող են դա **վերահայտնագործել** *(Այգ., էջ 119):*

ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿԵԼ, նբ. **Նորից հեռարձակել**: Նախքան նավ հասնելն այդ զանգը **վերահեռարձակվել** էր չորս գաղտնի չվերահսկվող կապուղիներով *(Բրաուն, էջ 34):*

ՎԵՐԱՄԱՍՆԱԳԻՏԱՆԱԼ, բ. **Վերստին մասնագիտանալ, այլ մասնագիտություն ձեռք բերել:** Դպրոցը հնարավորություն կտա բոլորին **վերամասնագիտանալ** բարձր տեխնոլոգիաների ասպարեզում *(Հմց, aravot.am):*

ՎԵՐԱՄՈԴԵԼԱՎՈՐԵԼ, նբ. **Կրկին կամ նոր ձևով մոդելավորել**: .... Իգանը գնացքով գալիս էր, .... պարբերաբար գնում San Remo-ի բնակարանը, որ ծրագրում էր **վերամոդելավորել** .... *(Այգ., էջ 292):*

ՎԵՐԱՆԵՐՄՈՒԾՈՒՄ, գ. **Կրկին ներմուծում:** Նիստում սահմանվել է ՀՀ մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից «ժամանակավոր ներմուծում», «Ժամանակավոր արտահանում», «**Վերաներմուծում**», .... իրականացնող տրանսպորտային միջոցների տեղափոխման և մաքսային ձևակերպման պարզեցված կարգը *(Հմց, aravot.am):*

ՎԵՐԱՆՈՐԱՆԱԼ, չբ. **Վերստին, կրկին նորանալ**: .... Բայց այդ նույն Սիդհարթան ամեն դեպքում փոխակերպվել էր, **վերանորացվել** .... *(Հ1, էջ 101):*

ՎԵՐԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ, ած. **Կոնկրետ դասընթացի վերաբերող, ընդհանուր**: Չափորոշչի նախագծի ամենակարևոր առանձնահատկությունն այն է, որ առաջարկվում է դպրոցից պահանջները ձևակերպել ոչ թե գիտելիքային իմացության, այլ **վերառարկայական** կարողունակությունների՝ կոմպետենցիաների տեսքով *(Հմց, aravot.am):*

ՎԵՐԱՍԱԼԻԿԱՊԱՏԵԼ, նբ. **Կրկին կամ նոր ձևով սալիկներով պատել՝ սալարկել, վերասալարկել**: .... Հայրս **վերասալիկապատել** է ներքնի հարկի զուգարանը *(Մոյես, էջ 222)*:

ՎԵՐԱՍԱԾԻԼԱՎՈՐՈՒՄ, գ. **Վերստին՝ կրկին սածիլավորում**: Այս տարի մի քանի անգամ **վերասածիլավորում** կատարվեց՝ անընդհատ տեղացող հորդառատ անձրևների ու կարկուտի պատճառով *(Հմց, aravot.am)*:

ՎԵՐԱՍԱՌԵՑՈՒՄ, գ. (փխբ.): **Վերստին՝ կրկին սառեցում**: Ռուսական պլանը նախատեսում է հակամարտության ոչ թե լուծում, այլ **վերասառեցում**՝ տարածքային նոր իրողությունների շըրջանակում *(Հմց, aravot.am)*:

ՎԵՐԱՍԵՐՏԱՑՈՒՄ, գ. **Վերստին՝ կրկին սերտացում**: Փոխադարձ այցելությունները նպաստում են հարաբերությունների **վերասերտացմանը** *(Հմց, aravot.am)*:

ՎԵՐԱՍՎԱՂՎԵԼ, բ. **Վերստին՝ կրկին սվաղվել**: Հիմնականում կարգաբերվում են երթևեկելի գոտիները, **վերասվաղվում** են պատերի ու առաստաղի հատվածաբար թափված ծեփոնները, փոխվում են եզրաքարերը և այլն *(Հմց, aravot.am)*:

ՎԵՐԱՍՏԱՆՁՆԵԼ, բ. **Վերստին ստանձնել**: Այս կոնտեքստից բխում է նաև այսօր մեր .... առաքելությունը՝ .... նորովի **վերաստանձնելու** քաղաքակրթությունները կամրջողի Հայաստանի պատմական և բնական դերակատարությունը *(Հմց, aravot.am)*:

ՎԵՐԱՍՏԱՆՁՆՈՒՄ, գ. **Վերստին՝ կրկին ստանձնում**: .... Մեկնարկելու է հայրենիքի վերատիրացումն ու ազգային առաքելության **վերաստանձնումը** *(Հմց, aravot.am)*:

ՎԵՐԱՍՏՈՐԱԳՐՎԵԼ, բ. **Վերստին ստորագրվել**: Հանդիպման շրջանակում **վերաստորագրվել** է .... աշխատանքային պայմանագիրը *(Հմց, aravot.am)*:

ՎԵՐԱՍՏՈՐԱԳՐՈՒՄ, գ. **Վերստին ստորագրելը**: Կոալիցիոն հուշագրի **վերաստորագրումը** որևէ իմաստ չունի *(Հմց, aravot.am)*:

ՎԵՐԱՍՐԲԱԳՐԵԼ, բ. **Վերստին՝ կրկին սրբագրել:** Նախորդների անխոհեմ որոշումը **վերասրբագրելու** կամք չունենք *(Հմց, aravot.am):*

ՎԵՐԱՍՐԲԱԳՐՈՒՄ, գ. **Վերստին՝ կրկին սրբագրում:** .... Նա մտահոգվելու և հանպատրաստից իր թիմի գործողություններում **վերասրբագրումներ** կատարելու անհրաժեշտություն ունի *(Հմց, aravot.am):*

ՎԵՐԱՏԵՂԱԴՐԵԼ, բ. **Վերստին՝ կրկին տեղադրել:** Այստեղ արդեն դադարեցրել են ստուգումները մեծ հանրախանութներ մտնելիս, ուսանողական ճաշարաններում **վերատեղադրել** են սեղանները և աթոռները *(Հմց, aravot.am):*

ՎԵՐԱՏԵՂԱԴՐՈՒՄ, գ. **Վերստին՝ կրկին տեղադրում:** Ջրատարների **վերատեղադրման** աշխատանքներով պայմանավորված՝ ջուր չի լինի *(Հմց, aravot.am):*

ՎԵՐԱՏԵՂԱԿԱՅՈՒՄ, գ. **Վերստին՝ կրկին տեղակայում:** Ստորագրվել է հայկական խաղաղապահ ստորաբաժանման **վերատեղակայման** խնդիրները կարգավորող համաձայնագիրը *(Հմց, aravot.am):*

ՎԵՐԱՏԵՂԱՅՆԱՑՈՒՄ, գ. **Վերստին՝ կրկին տեղայնացում:** Կատարվել ֆրանսիական դպրոցի **վերատեղայնացում** դպրոցի կարողությունները մեծացնելու նպատակով *(Հմց, aravot.am):*

ՎԵՐԱՏԻՐՈՒՄ, գ. **Վերստին տիրելը:** Դրանք հաղթանակի նոր ճանապարհ կբացեն մեր հայրենիքի **վերատիրման** սրբազնագույն գործի համար *(Հմց, aravot.am):*

ՎԵՐԱՐՁԱԳԱՆՔԵԼ, նբ. **Նորից արձագանքել**: Կոնիի հոգու խորքում այս զգացումն էր անվերջ արձագանքվում ու **վերարձագանքվում** *(Հերբերթ, էջ 94):*

ՎԵՐԱՑԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Վերացած՝ իրականությունից մտովի կտրված՝ հեռացած վիճակ**: Նույն ձևով էլ հոր **վերացածությունն** ու սառնությունը նրա ջերմության հազվադեպ պահերը շատ ավելի հաճելի էին դարձնում.. *(Այզ., էջ 290):*

ՎԵՐԱՈՒԺԵՂԱՑՆԵԼ, բ. **Վերստին՝ կրկին ուժեղացնել:** Միևնույն ժամանակ YEI-ն ամրապնդում էր կապերը մշակույթների միջև՝ **վերաուժեղացնելով** թուրքերենի դասավանդումը, ներկայացնում էր Թուրքիան արտերկրում և զարգացնում էր այլ երկրների հետ հարաբերությունները *(Հմց, aravot.am):*

ՎԵՐԱՈՒՂԵԳՐՈՒՄ, գ. **Վերստին՝ կրկին ուղեգրում:** Կազմակերպիչների մյուս մասը բուժաշխատողների վրա հիվանդների արտաքին և ներքին **վերաուղեգրումների** պարտականություններ են դնում *(Հմց, aravot.am):*

ՎԵՐԱՈՒՂՂՈՐԴՈՒՄ, գ. **Վերստին՝ կրկին ուղղորդում:** Քննարկվում է այդ նպատակով հատկացվող միջոցների **վերաուղղորդման** և օժանդակության առավել արդյունավետ ուղին գտնելու հարցը *(Հմց, aravot.am):*

ՎԵՐԱՈՒՂՂԵԼ, բ. **Վերստին՝ կրկին ուղղել:** Բոլոր միջոցները պետք է **վերաուղղել** ռազմարդյունաբերական ոլորտի զարգացմանը *(Հմց, aravot.am):*

ՎԵՐԱՓՌԵԼ, բ. **Կրկին փռել:** .... Նա ձեռքի հետ էլ **վերափռեց** խոհանոցի հատակը .... *(ՆԱ, էջ 73):*

ՎԵՐԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ, ած. **Կուսակցական սահմանափակումներից վեր գտնվող, կուսակցական կանոններին ոչ ենթակա**: Մի՛ մոռացեք, որ ավազանու անդամը **վերկուսակցական** անձ է *(Հրաչօ, էջ 225):*

ՎԵՐՆԱՆԵՐՔԵՎ, ած. (խսկց.): **Վերևից սկսած մինչև ներքև**: .... Երախտագետ սերունդները դիմում-բողոքներով ողողեցին **վերնաներքև** ատյանները առ այն մասին, որ ընտրություններն ընթացել են սրընթաց սխալներով .... *(Հրաչօ, էջ 78):*

ՎԵՐՋՆԱԿԱՐԾԻՔ, գ. **Վերջնական կարծիք**: Ելույթ ունեցան .... Տիգրան Մանսուրյանը, ...., Կարինե Ռաֆայելյանը՝ **վերջնակարծիք** ընդունելով, որ .... *(ԳԹ, 18.10.2019):*

ՎԵՐՋՆԱՊԱՅՄԱՆ, գ. **Վերջնական պայման**: Բայց նրանց տղան **վերջնապայմանով** պատասխանեց .... *(Այգ., էջ 37):*

ՎԵՐՋՆԱՐՏԱԴՐԱՆՔ, գ. **Վերջնական արտադրանք**: .... Հայաստանը հումք արտահանող երկրից կվերածվի արժեքավոր **վերջնարտադրանք** արտահանող երկրի *(ՀՀ, 19.03.2020):*

ՎՁԱՇԵՐՏ, գ. **Վզի շերտ**: .... Նման պստիկ, ճերմակ կոկորդիլոսների, շարժում են կարմրավուն բրդոտ **վզաշերտերը** տազի մեջ *(ՄԲ, էջ 327):*

ՎԻԶՈՒԱԼԱՑՆԵԼ, նբ. **Տեսողական՝ ցուցադրման համար պիտանի դարձնել**: .... Հետախուզական թռիչքներից ու արբանյակներից ստացվող տվյալները **վիզուալացնելու** համար *(Այգ., էջ 269):*

ՎԻԶՈՒԱԼԱՑՈՒՄ, գ. **Վիզուալացնելը**: .... Շատ էին ցանկանում մուլտֆիլմերի գունավոր պատկերներ ստանալ անիմատորների նկարածի **վիզուալացումով** *(Այգ., էջ 271):*

ՎԻԹԽԱՐԱԿԵՐՊ, ած. **Վիթխարի կերպարանք ունեցող**: .... Ցցվել էին .... պատշգամբասրահները, **վիթխարակերպ**, ահռելի չափերի՝ մինչ այդ անհայտ մարդուն *(Հերբերթ, էջ 241):*

ՎԻՇԱՊԱՏԵՍՔ, գ. (փխբ.): **Արտակարգ մեծ**: Ոչ միայն էսօրվա **վիշապատեսք** քաղաքները, այլ հենց աշխարհն է գյուղ եղել *(Հրաչօ, էջ 73):*

ՎՀԱՏԱԴԵՄ, ած. **Վհատ դեմքով, վհատ դեմք ունեցող**: **Վհատադեմ** տղամարդկանցով լեփ-լեցուն երկու ավտոմեքենա մտան ճամբարի տարածքը *(Ստայնբեք, էջ 274):*

ՎՇԱԾՂՈՏ, գ. **Վուշի ծղոտ**: .... Կարգադրել էր **վշածղոտը** տանել հանձնել պետությանը *(ՎԲ, էջ 25):*

ՎՇՏԱՊԱՏՈՒՄ, գ. **Վշտի՝ տառապանքի պատմություն**: Նա իր ժողովրդի լեգենդներից էր ուժ ստանում, որպեսզի նրա ծանր ներկան պատկերի այնպես, որ **վշտապատումի** միջից հնչի հույսի երաժշտությունը *(ԹԺՀ, էջ 891):*

ՎՈՒՇԱՏԵՂ, գ. **Վայր, որտեղ վուշ է աճում**: .... Կնանիք **վուշատեղը** խոսում են .... *(ՎԲ, էջ 44):*

## Տ

ՏԱԲՈՒԱԶԵՐԾԵԼ, բ. **Գործածության արգելքը հանել, վերացնել:** Ո՞ր լեզվատարրերն են ուզում **տաբուազերծել** .... *(ԳԹ, 20.09.2020):*

ՏԱԲՈՒԱՑՎԵԼ, բ. **Արգելվել, արգելքի տակ դրվել:** **Տաբուացված** որևէ բառ անհասկանալի է պոետին ....*(ԳԹ, 20.09.2020):*

ՏԱՆՋԱՐԱՐ, գ. **Տանջող, տանջանք պատճառող անձ:** .... Հենց առաջին ընդմիջմանը ծնողները դուրս էին գալիս դահլիճից՝ իրենց **տանջարարի** հետ թև թևի տված *(ՀԼ, էջ 252):*

ՏԱՇԵՂԱՑՈՒ, ած. **Տաշեղ պատրաստելու համար նախատեսված:** **Տաշեղացու** երեք փայտ չորանում էին ծխանցքի վրա *(ՎԲ, էջ 115):*

ՏԱՊԱԽԵՂԴ, ած. **Տապից խեղդված՝ խեղդվող:** Նա նստել էր ուռենու տակ .... **տապախեղդ** բլրի վրա .... *(ՎԲ, էջ 63):*

ՏԱՊԱԿԱՀԱՑ, գ. **Տապակած հաց:** Նրա համար մի քիչ կաթ բերեցի և եգիպտացորենի կես **տապակահաց** .... *(ՀԼ, էջ 205):*

ՏԱՌԱՊԱԿՑԵԼ, չբ. **Տառապանքին կարեկից լինել, կարեկցանքով վերաբերվել մեկի տառապանքին:** .... Դեմքդ էլ այնպես **տառապակցող** էր, այնպես ցավակցող .... *(ԳԽ2, էջ 3):*

ՏԱՍՆՔԱՆԻԵՐՈՐԴ, ած. (դիպվ.): **Տասը՝ հաջորդ թիվը անհայտ:** .... Խաչիկը, հերթական **տասնքանիերորդ** անգամ հերթական **տասնքանիերորդ** ունկնդրին զեկուցելով ճակատում իրավիճակի մասին, ճանապարհեց նրան.... *(Արեն,էջ 11):*

ՏԱՐԱԿՇԻՌ, ած. **Անհավասար կշիռ՝ կողմեր ունեցող:** .... Երկու **տարակշիռ** սուրերի գումարը կազմում էր ուղղանկյան ամբողջությունը .... *(ՆԱղ., էջ 181):*

ՏԱՐԱՀՅՈՒՍՎԵԼ, չբ. **Հյուսվածը տարանջատել:** Գուցե նրա կյանքի թելը իսկապես պիտի միահյուսվեր և **տարահյուսվեր** **Apple**-ինին *(Այզ., էջ 415):*

ՏԱՐԸՀ, (հպվ.): **Տարածքային ընտրական հանձնաժողով:** Դասընթացներն անցկացնում են Քաշաթաղի տարածքային ընտրական հանձնաժողովի (**ՏարԸՀ**) նախագահ Արթուր Մնացական-

յանը, **ՏարՇՀ** անդամներ Լևոն Հարոյանը և Արթուր Առաքելյանը *(ՀՀ, 25.02.2020):*

ՏԱՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Տարողական լինելը**: .... Որը նրա պոեզիայի բազմազանության ու **տարողականության** վկայությունն է *(ԳԹ, 21.06.2019):*

ՏԱՓԱԿԱԲԼԻԹ, գ. **Տափակ տեսք ունեցող բլիթ**: Սոուսով **տափակաբլիթներ**, դդմի կարկանդակ՝ որպես աղանդեր .... *(Բորզեն, էջ 119):*

ՏԱՓԱՀԱՏԱԿ, ած. **Հարթ՝ տափակ հատակով**: Դրանք ջրից սևացած, **տափահատակ,** երկար, սուր քթով .... նավակներ էին *(Սթոուն, էջ 42):*

ՏԵԽԱՍՅԱՆ, ած. **Տեխասին հատուկ**: .... Նա Ջոբսի կենսագրությունից **տեխասյան** ոգով պատում էր հյուսել մի երիտասարդի մասին .... *(Այզ., էջ 256):*

ՏԵԽՆՈԵՐԱԶԱՆՔ, գ. **Տեխնոլոգիայի ասպարեզում հաջողության հասնելու երազանք**: .... Անդրադարձ հրապարակեց .... թերի ղեկավարման ու բաց թողնված **տեխնոերազանքների** փայլուն օրինակ, վերադառնում է ճգնաժամային վիճակում .... *(Այզ., էջ 346):*

ՏԵԽՆՈՄԻՋԱՎԱՅՐ, գ. **Տեխնոլոգիական միջավայր**: 2019թ. հեղափոխական զարգացման տարի էր նաև մեր երկրի **տեխնոմիջավայրի** համար *(ՀՀ, 06.12.2019):*

ՏԵԽՆՈՆՈՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Նորություն տեխնիկայի ասպարեզում**: **Տեխնոնորությունների** մասին գրող հեղինակ .... հարցազրույցի եկավ Ջոբսի մոտ .... *(Այզ., էջ 187):*

ՏԵԽՍՊԱՍԱՐԿՈՒՄ, գ. (հպվ.): **Տեխնիկական սպասարկում**: **Տեխսպասարկման** կայան *(Արեն, էջ 108):*

ՏԵՂԱԴՈՓԵԼ, չբ. **Տեղում դոփել**: Այդ տարիքում զրույցն անպայման փոքր-ինչ **տեղադոփում** է *(Ուելբեք, էջ 77):*

ՏԵՆԴԱՀՆՉՅՈՒՆ, ած. **Հուզմունք՝ զգռվածություն արտահայտող**: .... Լսվեցին ճիչ ու աղաղակ, որ ընդմիջվում էին անկապ, **տենդահնչյուն** խոսքով *(Սթոուն, էջ 587):*

ՏԵՍԱԱԶԴԱՆՇԱՆ, գ. **Ազդանշան տեսակապով:** Անձամբ եմ տեխնիկական **տեսաազդանշանից** առաջ ասել *(Հմց, aravot.am):*

ՏԵՍԱԱԶԴԱՐԱՐՈՒՄ, գ. **Ազդարարում տեսակապով:** Նախատեսվում է հաջորդ տարի ավտոբուսներում տեղադրել նաև **տեսաազդարարման** համակարգեր՝ լսողության խնդիրներ ունեցող անձանց համար*(Հմց, aravot.am):*

ՏԵՍԱԱՂԲ, գ. (փխբ.): **Ցածրորակ, անորակ հաղորդում:** Հայկական կինոյի բացը լրացվում է ամեն տեսակ **տեսաաղբով***(Հմց, aravot.am):*

ՏԵՍԱԱՋԱԿԻՑ, ած., գ. **Աջակից ցուցադրող և ընկալող տեխնիկական միջոցների ասպարեզում**: Ես զարգացող մարդկության .... բարձրացած երկրի ապագայի «միջնորդն» ու **տեսաաջակիցն** եմ*(Այզ., էջ 312):*

ՏԵՍԱԱՌԱՆՁՆԱԶՐՈՒՅՑ, գ. **Առանձնազրույց տեսակապի միջոցով:** Այդ հայտարարությունը նա արել է Իրաքի վարչապետ հետ ունեցած **տեսաառանձնազրույցից** հետո *(Հմց, aravot.am):*

ՏԵՍԱԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ, գ. **Արձանագրում տեսակապի միջոցով:** Տարածքային կառավարման փոխնախարարի խոսքից տեղեկանում ենք, որ, ըստ արբանյակային **տեսաարձանագրումների**, մեր ափաչափ երկրում աղբավայրերի թիվը հասնում է հազարների *(Հմց, aravot.am):*

ՏԵՍԱԱՐՏԱԴՐԱՆՔ, գ. **Տեսամիջոցներով ստեղծված արտադրանք:** Նա Ֆեյսբուքին, Թվիթերին, Ինստագրամին ավելացրեց նաև զանգվածային լսարանին հասցեագրված **տեսաարտադրանքը**՝ քաղաքական երգիծանքի բովանդակությամբ *(Հմց, aravot.am):*

ՏԵՍԱԱՐՏԱՑՈԼՈՂ, ած. **Տեսազրող և ցուցադրող:** Լսարանը հագեցած է համակարգիչներով, **տեսաարտացոլող** սարքերով և այլ անհրաժեշտ պարագաներով *(Հմց, aravot.am):*

ՏԵՍԱԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ, գ. **Տեսանյութի բովանդակությունը:** Կարևորվում է որակյալ **տեսաբովանդակությունը** *(Հմց, aravot.am):*

ՏԵՍԱԷԿՐԱՆ, գ. **Էկրան, որով ինչ-որ բան են նայում, տեսնում**: .... Լույսի միակ աղբյուրը հսկա **տեսաէկրանն** էր .... *(Բրաուն, էջ 115):*

ՏԵՍԱԻՐԱՎՈՒՆՔ, գ. **Տեսանյութերի տնօրինման, գործածության իրավունքի գործառության իրավունք**: Ֆիլմի ու նրա հերոսների մասնակի սեփականատերը՝ թե՛ **տեսաիրավունքների,** թե՛ ֆիլմի հաջորդ մասերի իրավունքը կիսելով *(Այգ., էջ 317):*

ՏԵՍԱՀՈՍԹԻՆԳ, գ. **Ինտերնետային կայքերում վեբ-ծառայություն, որը թույլատրում է օգտագործողին ներբեռնել դիտատեսահոլովակներ**: Համապատասխան կադրերը հայտնվել են «Pear» **տեսահոսթինգում** *(ՀՀ, 30.11.2019):*

ՏԵՍԱՇՆՈՐՀԱՆԴԵՍ, գ. **Տեսամիջոցների շնորհանդես**: .... Հանկարծակի ընդհատեց ինժեներներին իրենց **տեսաշնորհանդեսի** կեսին՝ անտակտ «շնորհակալություն ձեզ» ասելով *(Այգ., էջ 105):*

ՏԵՍԱՍԿԱՎԱՌԱԿ, գ. **Տեսագրված սկավառակ**: Տե՛ս ՌԱԴԻՈԳԻՐՔ-ի օրինակը:

ՏԵՍԱՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Տեսանկարահանված վկայություն**: Ինստիտուտի նախագծերից էր Հայոց ցեղասպանությունը վերապրողների **տեսավկայությունների** համացանցային բազայի ստեղծումը *(ՀՀ, 24.04.2020):*

ՏԵՍԱՓԱՍՏԱՐԿ, գ. **Տեսանյութով ներկայացվող փաստարկ**: Համացանցում հայտնված **տեսափաստարկներ** և լուսանկարներ երբեմն հնարավոր չի լինում մինչև վերջ նայել *(ՀՀ, 17.10.2019):*

ՏԵՍԱՔՆՆԱՐԿՈՒՄ, գ. **Քննարկում տեսակապով**: Կարելի է կազմակերպել տեսակոնֆերանսներ կամ **տեսաքննարկումներ** *(ՀՀ, 05.05.2020):*

ՏԵՍԼԱԽԱԲԵՈՒԹՅՈՒՆ, գ. **Տեսիլքային, անրջական, ցնորական խաբեություն**: .... Երբ նա իր միջից պլոկի համաշխարհային հեղափոխությունը .... ու զբաղվի մարազները մաքրելով՝ իր ուղղակի գործով, քայքայումն ինքնըստինքյան կչքանա *(ՄԲ, էջ 186-187):*

ՏԵՍԼԱԽԱԲԿԱՆՔ, գ. **Տեսիլք, ցնորական պատրանք**: .... Մեկ րոպե անց արդեն կասկածում էր, եղե՞լ է նա այնտեղ, թե **տեսլախաբկանք** էր *(ՄԲ, էջ 87):*

ՏԵՐԵՎԱԲՈՂԲՈՋ, գ. **Տերևի բողբոջը**: .... Կաղնիների վրա **տերևաբողբոջներն** էին բացվում ասես կանաչ անձրևացող *(Հերբերթ, էջ 183)*:

ՏԵՔՍՏԱԿԱՌՈՒՑՈՒՄ, գ. **Տեքստ կառուցելը**: Բավականին հետաքրքիր են **տեքստակառուցման** խեչոյանական սկզբունքները *(ԳԹ, 25.10.2019):*

ՏԻՂՄԱՓՈՇԻ, գ. **Տիղմի փոշի, փոշու վերածված տիղմ**: Նայես՝ հարսնաքողը մնացե՞լ է, թե մաշվել, պատառոտվել, դեն է նետել **տիղմափոշու** հետ՝ փողոց մաքրողի ցախավելով *(ԱրմՄ., էջ 19):*

ՏԻՖԱՄԱՀ, գ. **Մահ՝ տիֆ հիվանդությունից**: Եվ նա իր այդ անունը, դիրքը, համբավը օգտագործեց ու քանի-քանիսին ազատեց բանտից.... ու **տիֆամահից** *(ԹԺՀ, էջ 120):*

ՏԽՐԱՇՇՈՒԿ, ած. **Տխուր և շշուկով:** Ասես անվերջ ահազնացող գետ էր, որ հորդուն հոսում էր .... մեկ-մեկ **տխրաշշուկ** հառաչում .... *(Ամիր., էջ 95):*

ՏՂՄԱԿԱՆԱՉԱՎՈՒՆ, ած. **Տիղմի գույնի նման կանաչ**: .... Հազավ տնային պերճաշուք հանդերձանքը՝ թավշե **տղմականաչավուն** տաբատը և պիստակագույն կերպասե բաճկոնը *(Վիան, էջ 23):*

ՏՆՏԵՍԱԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ, ած. **Տնտեսական և ահաբեկչական:** Խոսում են **տնտեսաահաբեկչական** պետական միավորի մութ, սակայն հետզհետե լույսին եկող գործունեության մասին*(Հմց, aravot.am):*

ՏՆՏԵՍԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ, ած. **Տնտեսական և աշխարհագրական**: Այստեղ հանգամանորեն լուսաբանված են **տնտեսաաշխարհագրական** բոլոր առանձնահատկությունները .... *(ՋԲ, էջ 436):*

ՏՆՏԵՍԱԱՌԵՎՏՐԱՅԻՆ, ած. **Տնտեսական և առևտրային:** Թուրքիայի նախագահը նպատակ ուներ **տնտեսաառևտրային**, քաղաքական հարաբերությունները Ռուսաստանի հետ հասցնել նախկին մակարդակի *(Հմց, aravot.am):*

ՏՆՏԵՍԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ, ած. **Տնտեսական և արդյունաբերական**: .... Պատվիրակություն է այցելել Իրանի «Արաս» **տնտեսաարդյունաբերական** ազատ գոտի .... *(ՀՀ, 23.11.2019):*

ՏՈՀՄԱՁԻ, գ. **Ընտիր տոհմի՝ ցեղի պատկանող, ազնվացեղ ձի**: Նա ավելի շատ մարդկային **տոհմաձիու** էր նման *(Մոյես, էջ 51):*

ՏՈՀՄՈՒՐԱՑ, ած. **Տոհմը ուրացող**: Ուշագրավ է Դավթի անեծքը Միհրին, երբ այն մեկնաբանվում է ժամանակակից մտածողությամբ, որը փաստորեն աշխարհի քաղաքացուն չընդունող Դավթի բողոք-ուղերձն է **տոհմուրաց** ժառանգին *(ԳԹ, 06.03.2020):*

ՏՈՂԱԳՐԵԼ, նբ. **Տողերով գրել**: Գրիչը հեշտասիրությամբ սահել էր հարթ թղթի վրայով՝ խոշոր տպատառերով **տողագրելով** .... *(Օրուել, էջ 20):*

ՏՈՆԱՃԱՇ, գ. **Տոնական ճաշ:** .... Բավական մեծ հասարակություն հավաքվեց իր տուն **տոնաճաշի** *(Բունին, էջ 218):*

ՏՈՆԱՇՐՋԱՆ, գ. **Տոնի տևողության շրջան**: Այսպիսով՝ Միջինքի տոնական շաբաթն իր հանգուցալուծմանն է հասել **տոնաշրջանին** բնորոշ կարգով՝ ննջեցյալների հիշատակին հարգանք մատուցելու եկեղեցական և ժողովրդական ծեսերով *(ՊԲՀ, 3, 2019):*

ՏՈՆԱՎԱՐ, գ. **Տոնի խորհրդանիշը, տոնապետը, տոն վարող**: Այնուհետ Ձմեռ պապն ու Ձյունանուշը դարձան Նոր տարվա **տոնավարները** .... *(ՊԲՀ, 2020, 1, էջ 173):*

ՏՈՆԱՎՈՐԵԼ, նբ. (իմ. նորբ.): **Անթափանցիկ գույներով երեսապատել**: Դիտորդներն այդպես էլ կանգնում են՝ **տոնավորված** ապակիներով մեքենաներով *(Արեն, էջ 96):*

ՏՐԻԼԻՈՆԱՏԵՐ, գ. **Տրիլիոն (հազար միլիարդ) ունեցող՝ տեր**: **Տրիլիոնատերը** *(ՄԲ, էջ 299,վերնագիր):*

## Ց

ՑԱԾՐԱԴՈՒՌ, ած. **Ցածր դռնով, դուռը ցածր**: Նրանք մոտեցան ջուլհակի **ցածրադուռ** խրճիթին *(Սթոուն, էջ 345):*

ՑԱԾՐԱՄԱԾ, ած. **Ցածր դիրքով**: .... Ծխնելույզը **ցածրամած** էր .... *(Կերտես, էջ 86):*

ՑԱՄԱՔԱՀԱՅԱՑ, ած. **Ցամաքին նայող**: Մենք՝ մարդ արարածներս, անկազմակերպ, գլխապատառ ներքև վազեցինք փըլված աշտարակիս **ցամաքահայաց** կողմի աստիճաններով *(Վոն., էջ 231):*

ՑԱՆԿԱՎԱՀԱՆ, գ. **Որպես վահան ծառայող ցանկապատ**: Բացատների և **ցանկավահանների** լույսն ու կանաչը, շատրվանների մովն անդրադառնում էին դիմացի պատի հնամենի հայելիների մեջ *(ԱՏ, էջ 10):*

ՑԱՆՑԱԿՏՈՐ, գ. **Ցանցի կտոր**: .... Վերքերից, որոնց մեջ հետո **ցանցակտոր** էր խցկում .... *(Կերտես, էջ 170):*

ՑԱՎԱԿԱՆՉ, գ. (բնստ.): **Ցավից ծնված կանչ**: Եվ Աստծո նոր տանջանքի **ցավականչին**// Սառցե խաչի արարիչը մահախոսեց *(ԼԴ 1, էջ 135):*

ՑԱՎԱՁԱՅՆ, գ. (փխբ.): **Ցավի ձայնը**: .... Լսեցի քամու **ցավաձայնը** *(Լ. Շահնուր, էջ 14):*

ՑԱՔՈՒՑՐՎԵԼ, չբ. **Ցաքուցրիվ՝ ցիրուցան լինել**: Լոռու ձորը խեղճացավ, ավելի խեղճացան Չ. քաղաքի բնակիչները: **Ցաքուցրվեցին** *(Հրաչօ, էջ 140):*

ՑԵԼՈՖԱՆԱՊԱՏԵԼ, նբ. **Ցելոֆանե թաղանթով պատել**: Պառկած ցույց տվեց **ցելոֆանապատված** պատուհանի վրայի անցքերը *(ՁԲ, էջ 239):*

ՑԵԽԱԿԵՐՏ, ած. **Ցեխից կերտված՝ պատրաստված**: Թրիք .... վաճառում են գյուղացի շինարարներին, որպեսզի **ցեխակերտ** հյուղակների պատերն ամրացնեն .... *(Ռուշդի, էջ 33):*

ՑԵՐԵԿԱԼՈՒՅՍ, գ. **Ցերեկվա, ցերեկային լույս**: Մեր մղձավանջը չքացավ **ցերեկալույսի** հետ .... *(ՀԼ, էջ 249):*

ՑԻՏՐՈՒՍԱԳՈՒՅՆ, ած. **Ցիտրուսի գույն ունեցող**: Ջեքսոնի տունդարձի առիթով իր համար ամառային նոր զգեստ էր կարում **ցիտրուսագույն** փայլուն ատլասից …. *(ԱՄ, էջ 229):*

ՑՈԼՔԱՃԱՌԱԳ, ած. (բնստ.): **Ցոլքերով ճառագող:** Նրանց գլխին կար լուսաստղ,// **Ցոլքաճառագ** ադամանդ*(ԼԴ 1, էջ 171):*

ՑՈԼՔԱՎԱՌՎԵԼ, բ. (բնստ., փխբ.): **Ցոլարձակվել, բոցավառվել: Ցոլքավառվում էր** երգը գութիս մեջ,// Կյանքը լուսնանում, փրկվում էր մութից *(ԼԴ 1, էջ 111):*

ՑՈՂԱՀՅՈՒՍ, ած. (բնստ.): **Ցողից հյուսված:** Արևազալին փռվում էր վրադ// **Ցողահյուս** քողը ցոլքերի վառքով *(ԼԴ 1, էջ 120):*

ՑՈՂՈՒՆԱԿԱԼԵԼ, բ. **Ցողուն արձակել՝ ցցել, ցողունավորվել**: Ըստ նրա՝ ծլարձակումից հետո, մինչև **ցողունակալելը,** արևի ճառագայթները երկար են ազդելու …. *(ՀՀ, 27.05.2020):*

ՑՈՐՆԱԴԵՂԻՆ, ած. **Ցորենի դեղին գույնի նման գույն ունեցող**: Նրա մազերը ոչ **ցորնադեղին** էին, ոչ էլ կարմրաշեկ .... *(Սթոուն, էջ 44):*

ՑՈՐՆԱՑՈՂՈՒՆ, գ. **Ցորենի ցողուն**: Հակինթների հուռթի զմրուխտի մեջ բողբոջները ցցել էին գլուխներն անգույն **ցորնացողունների** պես .... *(Հերբերթ, էջ 257):*

ՑՐՏԱՄՈՐՄՈՔ, ած. (բնստ.): **Ցրտից մորմոքող:** Եղեգները հազան փետուր սառցաբյուրեղ// Ու արագիլ դարձան նրանք **ցըրտամորմոք** *(ԼԴ 1, էջ 135):*

ՑՑԱՏԱԽՏԱԿ, գ. **Տախտակե ցից, որպես ցից դրված տախտակ**: .... Ի վերջո գլուխը մտցրեց երկու **ցցատախտակների** արանքը …. *(ՎԲ, էջ 78):*

ՑՈՒԼԱՎԱՐԻ, մկբ. **Ցուլի նման, ինչպես ցուլը**: .... Անշուշտ եղել է նաև նրան **ցուլավարի** սանձահարելու հետզհետե խորացող երջանիկ տենչանք …. *(ՆԱդ., էջ 58):*

ՑՈՒՊԱՆՄԱՆ, ած. **Ցուպի նմանվող**: .... **Ցուպանման** ոտքերի միջև ինձ էլ խցկեցին .... *(Կերտես, էջ 153):*

ՑՈՒՑԱԴՐԱՀԱՐԹԱԿ, գ. **Ցուցանմուշները վրան ամրացնելով ցուցադրելու հարթակ**: Նա քայլում էր ինչպես նորաձևության **ցուցադրահարթակով**, կատարյալ գեղեցկուհի էր .... *(ԳԽ1, էջ 210):*

ՑՈՒՑԱԿԱՎՈՐԵԼ, նբ. **Ցուցակի մեջ մտցնել, ցուցակ կազմել**: .... Նա պնդել էր, որ ամեն ինչ հավուր պատշաճի **ցուցակավորեի** *(Մոյես, էջ 302):*

ՑՈՒՑԱՁՈՂ, գ. (իմ. նորբ.): **Ճանապարհային երթևեկությունը կարգավորող ձեռքի ձող, ցուցափայտ**: Մեքենա նկատելուն պես ձգվում էր, **ցուցաձողը** պարզում էր վեր ու ճկուն, գեղեցիկ շարժումով այն մեկնում ցանկացած ուղղությամբ *(ՎԻ, էջ 251):*

## ՈՒ

ՈՒԹԽՈՐՇԱՆԻ, ած. **Ութ խորշ ունեցող**: Ձեքը մոտեցավ դրանց՝ ստիպված լինելով ցատկել հին, **ութխորշանի** ուժակուտակիչի .... վրայով *(Քինգ, էջ 298):*

ՈՒԼՈՒՆՔԱՊԱՏ, ած. **Ուլունքներով պատված, վրան շատ ուլունքներ ամրացված**: Մեր երազանքների շորն է: Սպիտակ, թեթև, **ուլունքապատ** ասեղնագործ սեղմիրանով. թափանցիկ թիթեռնիկ թևքերով ու պճնազեղ փրփրատեսք կիսազրջազգեստով *(ՆԱբ., էջ 327-328):*

ՈՒՂԵԹԻԿՆՈՑ, գ. **Ուղևորվելու՝ որևէ տեղ մեկնելու ժամանակ հագնելու թիկնոց, ճանապարհային թիկնոց**: Սենյակի բնակիչները միշտ գլխարկներով էին, .... **ուղեթիկնոցները** հագած. ասես թե պատրաստվում էին որևէ տեղ մեկնելու *(Սթոուն, էջ 583):*

ՈՒՂՂԱՇԱՐ, ած. **Ուղիղ շարքով, ուղղաձիգ, (փխբ.) իրար հաջորդող**: .... Իմ բովանդակ ապրածը, սկսած առաջին հիշողություններից, որ մինչև այդ **ուղղաշար** էին, կորցրեց հաջորդականությունը *(ՎԲ, էջ 16):*

ՈՒՇԳԱՐՆԱՆԱՅԻՆ, ած. **Ուշ գարնանը հատուկ**: .... Չէին դադարում թռչունների ծորուն, արծաթահունչ ձայները՝ **ուշգար-**

**նանային** գիշերվա կենսաhույզ ու խմբերգող տրոփյունը *(Ֆոլք., էջ 20)։*

ՈՒՇԿԵՍՕՐՅԱ,ած. **Ուշ կեսօրին hատուկ**։ .... **Ուշկեսօրյա** արևի երկարուկ ստվերները Սուրբ Մարկոսի սալիկապատ hրապարակի վրա ընկան *(Բրաուն, էջ 349)։*

ՈՒՍԱՄԿԱՆ, գ. **Ուսի մկան**։ .... Ամբողջ ժամանակ **ուսամկաններիս** ուժն էի զգում .... *(ՎԲ, էջ 154)։*

ՈՒՍԸՆԴՈՒՍ, ած. 1. **Ուս ուսի տված**։ 2. (փխբ.) **Իրար անմիջականորեն hաջորդող**։ Փոքրիկ սենյակ էր, մեկ պատուhանով, որից երևում էր քարքարոտ ձորը, .... իսկ ավելի hեռու՝ մթնդած **ուսընդուս** սարերը *(ՎԻ, էջ 307)։*

ՈՒՍՃԱՄԲԱՐ, գ. (hպվ.)։ **Ուսումնական ճամբար**։ .... Դասասենյակը ավտոտնակի նման շինությունում էր՝ **ուսճամբարի** ծայրին՝ կայանատեղի hարևանությամբ *(Այգ., էջ 22)։*

ՈՒՍՆԱԿ, գ. (բրբ.)։ **Բեռը ուսին կրելով**։ .... Հանդերից քոլի տանձի ու խնձոր եմ բերում, **ուսնակով** ու լուծեգով քաղան եմ բերում, չափարն եմ պնդացնում .... *(Հրաչօ, էջ 5)։*

ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ, ած. **Ուսումնական, գիտական և արտադրական**։ Կարևորվել է գյուղատնտեսական քոլեջների բազայի hիման վրա **ուսումնագիտաարտադրական** կենտրոն hիմնելու խնդիրը *(Հմց, aravot.am)։*

ՈՒՍՈՒՄՆԱԹՈՂ, ած., գ. **Ուսումը թողնելը՝ թողած անձը**։ **Ուսումնաթողը** (վերնագիր) *(Այգ., էջ 35)։*

ՈՒՐՑԱՀՈՏ, ած. **Ուրցի hոտ ունեցող**։ .... Հովիտներ են **ուրցաhոտ** *(ԳԹ, 13.03.2020)։*

## Փ

ՓԱԹԹԱԹՈՒՂԹ, գ. **Փաթաթման թուղթ, թուղթ, որով փաթաթում են**։ .... Նկարի վրայից պատռեց **փաթթաթուղթը** .... *(ՎԲ, էջ 244)։*

ՓԱԽՑՆՈՑԻ, գ. (խսկց.)։ **Մանկական խաղատեսակ**։ Հավերը վրա տված վազում են, ասես **փախցնոցի** են խաղում, ուժեղը կըտցում է ու վազում *(Հրաչօ, էջ 33):*

ՓԱԿՕՁԻՔ, ած. **Փակ օձիքով՝ օձիք ունեցող**։ .... Դիազանալե **փակօձիք** զիմնաստյորկա .... *(ՎԲ, էջ 116):*

ՓԱՅԼԱԶԱՐԴ, ած. **Փայլերով զարդարված:** Ամբողջ ձմեռվա ընթացքում շաբաթը մի նոր զգեստ էր լինում ուշադրության կենտրոնում՝ **փայլազարդ** ու շղարշ .... *(Մանրո, էջ 9)*։

ՓԱՅԼԱՃԱՌԱԳ, ած. (բնստ.)։ **Փայլուն և ճառագող:** Շողքով **փայլաճառագ՝** մով երկնքի մեջ, // Մասսի վերապարզև գազաթն հուրհրաց *(ԼԴ 1, էջ 162):*

ՓԱՅԼԱՐՁԱԿՈՒՄ, գ. **Փայլ արձակելը**։ Կարողանում էի անհստակ մշուշի մեջ տեսնել միայն ձիգ ծաղիկներն ու լաքած փայտի **փայլարձակումը** *(ԱՄ, էջ 288):*

ՓԱՅՏԱՃԱՂ, գ. **Փայտյա ճաղ:** .... Մագլցում էին **փայտաճաղերի** վրա .... *(ԱՄ, էջ 240):*

ՓԱՐԹԱՄԱՀԵՐ, ած. **Փարթամ մազերով:** Թանկարժեք մանրուքներով ծածկված սեղանի մոտ նստած էին բալի գույնի շուրթերով **փարթամահեր** մի տիկին և երիտասարդ .... *(ԱՏ, էջ 32):*

ՓԱՓԿԱՄԵՂՄ, ած. Փափուկ և մեղմ։ Իր աչքերի առաջ նա տեսնում էր Քլռեին .... ձվաձև դեմքով՝ կլորիկ ու **փափկամեղմ** .... *(Վիան, էջ 242):*

ՓԱՓԿԱՆԵՐԲԱՆ, ած. **Թեթևաքայլ**։ Լսեց բուժքրոջ **փափկաներբան** ոտնաձայները միջանցքում .... *(ԱՄ, էջ 214):*

ՓԵՂԿԱԴՌՆԱԿ, գ. **Փեղկեր ունեցող, փեղկերով դռնակ:** Մուտքի դուռը դեպի ներս էր բացված, դրա դիմացի ցածր, ամուր **փեղկադռնակը** .... դեպի դուրս էր բացված *(Ստայնբեք, էջ 46):*

ՓԵՇԱՎՈՐ, ած. **Փեշ հագած**։ –Լավ էր հանդիպեցինք,- ասաց աղջկան ու **փեշավոր** տղամարդուն գլխով արեց *(ԱՄ, էջ 91):*

ՓԵՇԱՏՈՒՏ, գ. **Փեշի տուտ. զգեստի ծայր, քղանցք**։ .... հրեշտականման երկու փոքրիկ տաննում են էդ երկար, շողշողուն **փեշատուտը** .... *(ՆԱբ., էջ 320):*

ՓԵՏՐԱԹՈՂ, ած. **Փետուրները թողած, առանց փետուրների:** .... Աղքատիկ սաղարթը **փետրաթող** հավի պես բզկտված էր ու ամքած *(Ստայներք, էջ 23):*

ՓԵՏՐԱՉԱՓ, ած. **Փետուրի չափ ունեցող:** Չնայած բոլոր այս ջանքերին՝ մի **փետրաչափ** իսկ առաջ չէր շարժվում տեղից *(ՌԲ, էջ 57):*

ՓԵՏՐԱՍԱՀ, ած. (բնստ.): **Թեթևասահ:** Եվ իր հպարտության սլացքով ձիգ-// Քայլում է **փետրասահ** թեթևությամբ*(ԼԴ 1, էջ 147):*

ՓԽՐԱԲԼԻԹ, գ. **Փխրուն բլիթ:** Դրսի տաղտկալի մռայլությունը ջերմացնում էին թխվածքաբլիթները, շեղանկյուն ու կիսալուսնաձև **փխրաբլիթները,** շոկոլադապատ վաֆլին .... *(ԱՄ, էջ 132):*

ՓՈԽԹԱՂԱՊԵՏ, գ. **Թաղապետի տեղակալ: Փոխթաղապետը** նրա ծպտյալ երկրպագուն է *(Հմց, aravot.am):*

ՓՈԽԼԻԱԶՈՐ, գ. **Լիազորի տեղակալ**: .... Նյու Յորքի քաղաքապետը վերջերս ինձ, հենց ինձ է նշանակել Մարդու իրավունքների և հնարավորությունների քաղաքային հանձնախմբի **փոխլիազոր** *(Ռոթ, էջ 103 ):*

ՓՈԽՀՐԹԻՌԱԿՈԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Փոխադարձ հրթիռակոծություն**: Իսրայելի հետ պարբերաբար տեղի ունեցող **փոխհրթիռակոծություններն** ի՞նչ փուլում են *(ՀՀ, 03.03.2020):*

ՓՈԽՃԱՆԱՉՈՒՄ, գ. **Փոխադարձ ճանաչելը:** Աշխատաժողովը .... միտված է բարձրագույն կրթության երրորդ մակարդակում .... ուսուցման կազմակերպման և շնորհվող գիտական աստիճանների **փոխճանաչման** ոլորտում փորձի փոխանակությանը *(ՀՀ, 17.10.2020):*

ՓՈԽՍՓՈՓԱՆՔ, գ. **Փոխադարձաբար իրար սփոփելը**: .... Զրուցակիցները լի են վստահությամբ, բարությամբ ու բերկրալի **փոխսփոփանքով** *(ՎԲ, էջ 35):*

ՓՈԽՕԺԱՆԴԱԿՈՒՄ, գ. **Փոխադարձ օժանդակում**: .... Հավասարության նշան չեմ դնում .... և կյանքի արտաքին ունայնությանը

**փոխօժանդակման** ոգով և ներքին կրոնականությամբ մեղմացնող … ամերիկյան ժողովրդավարության միջև *(ՀՀ, 19.12.2019):*

ՓՈՂԱՔԱՄ ԼԻՆԵԼ, (խսկց)։ **Դրամական միջոցները լրիվ ծախսել**։ Pixar-ը 5 տարի **փողաքամ էր եղել** *(Այզ., էջ 322):*

ՓՈՂՈՏ, ած. (հեգն.)։ **Շատ փող ունեցող**։ - Դու խոսում ես ոչ թե ձեր նախագահի հետ, ձեր օլիգարխների հետ, ձեր **փողոտ** նախարարների հետ, այլ իմացիր, սատանայի հետ *(Հրաչօ, էջ 122):*

ՓՈՇԵՄՇՈՒՇ, գ. **Փոշուց առաջացած, փոշու մշուշ**։ ... Աստղերն անկարող էին ճեղքել **փոշեմշուշն** ու հայտնվել երկնակամարում .... *(Ստայնբեք, էջ 9):*

ՓՈՌԱԶԱՐԴ, ած. **Փոռերով զարդարված**։ Հայացք է նետում զգեստին՝ կտրվածքի մասում ու թևքերի վրա փոռազարդերով *(Ելինեկ, էջ 154)*։

ՓՈՌԻԿԱԶԱՐԴ, ած. **Փոռիկներով՝ դրանց նման ծոպերով զարդարված:** .... Մի բոպեից դուրս լողաց մայրիկը պչրական վարդագույն **փոռիկազարդ** գոգնոցը կապած *(ՆԱբ., էջ 250):*

ՓՈՐՁԱԳԻՏԱԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ, ած. **Փորձագիտական և խորհրդատվական: Փորձագիտախորհրդատվական** աջակցություն էր տրամադրվում *(Հմց, aravot.am):*

ՓՈՔՐԱԳԱՎԱԿ, ած. **Փոքր գավակ ունեցող**։ **Փոքրագավակ** Ջերսի կովը, օրվա մեջ երկու անգամ …. կանգնում էր անասնագոմի դռանը, որ կթեն *(ԱՄ, էջ 192):*

ՓՈՔՐԱՄԱՍՇՏԱԲ, ած. **Փոքր չափսերով**։ .... Դա դարձավ Lisa-ի **փոքրամասշտաբ** տարբերակը .... *(Այզ., էջ 153):*

ՓՈՔՐԱՏԱՐԱԾՔ, ած. **Փոքր տարածք ունեցող, փոքրատարած**։ …. Այսօր էլ Չինաստանը, վերականգնելով հին «Մետաքսի ճանապարհը», հիշյալ խաչմերուկում ներառել է այսօր դեռ **փոքրատարածք** Հայաստանը …. *(ՀՀ, 19.12.2019):*

ՓՈՔՐՈԳԱԲԱՐ, մկբ. **Փոքրոգիորեն, ոչ վեհանձնորեն վարվելով**։ Մենք քույրերով **փոքրոգաբար** նահանջեցինք ննջարան ու փակվեցինք էնտեղ՝ մայրիկին հանձնելով հայրիկին՝ հոշոտման *(ՆԱբ., էջ 198):*

ՓՉԱԿԱԳՈՒՅՆ, ած. **Փչակի գույն ունեցող**: Նա **փչակագույն** այտերը շարժեց .... *(Լ. Շահնուր, էջ 25)*:

ՓՐԿԱԶԵՆ, ած. (բնստ., փխբ.): **Փրկիչ զենքով զինված**: Տե՛ս ՀԱՅԿԱՎԱՌ-ի օրինակը:

ՓՐԿԱԽՈՍ, ած. (բնստ.): **Փրկության խոսք բերող**: Օ՜, կին արարիչ, օ՜ բյուրատարած ....// Որպես **փրկախոս** կյանք լուսաբացի *(ԼԴ 1, էջ 155)*:

ՓՈՒԹԱԲԱՐԲԱՌ, ած., մկբ. **Բառերը իրար հետևից արագ-արագ արտասանելով, արագ-արագ խոսելով**: .... Իրար հետ խոսում էին **փութաբարբառ,** կոպիտ լեզվով *(Սթոուն, էջ 67)*:

ՓՐՓՐԱՏԵՍՔ, ած. **Փրփուրի տեսք՝ արտաքին նմանություն ունեցող**: Տե՛ս ՈՒԼՈՒՆՔԱՊԱՏ-ի օրինակը:

ՓՐՓՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. (փխբ.): **Մոլեգնածություն**: Ժամանակ առ ժամանակ Ջոբսը դրսևորում էր **փրփրվածության** ու ուրիշների հավանությանն արժանանալու տարօրինակ համադրում *(Այզ., էջ 353)*:

ՓՔՍԱՁԵՎ, ած. **Փուքսի ձև ունեցող**: Մոխրագույն **փքսաձև** խողովակները ջերմացնում էին *(ՄԲ, էջ 269)*:

ՓՔՎԱԾԱՎՈՒՆ, ած. **Փքր-ինչ փքված**: Հետո Օվերլուքի նման հյուրանոցի խոհարար-հրաշագործը .... պետք է լինի փոքրիկ, գնդլիկ և **փքվածավուն** դեմքով .... *(Քինգ, էջ 81)*:

## Ք

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՊԱՏԿԱՆ, ած. (դիպվ.): Այստեղ՝ **քաղաքապետի վատ աշխատանքի պատճառով ստեղծված**: .... Քո ապրած քաղաքը տապակվում էր ինքն իր ու իր **քաղաքապետապատկան** կեղտի, փոշու, կեղծիքների շոգեխաշի մեջ .... *(Հրաչօ, էջ 184)*:

ՔԱՂՑՐԱԲԼԻԹԵ, ած. **Քաղցրաբլիթից պատրաստված**: .... Իսկ չորս կողմը ցիրուցան թափված էին .... **քաղցրաբլիթե** մարդուկներ *(Հոֆ., էջ 89)*:

ՔԱՂՑՐԱԴԱՌՆԱՎՈՒՆ, ած. **Փոքր-ինչ քաղցրավուն դառն**: .... Երեխաները ուտում էին խոշոր, **քաղցրադառնավուն** կեռաս և թթու կոմպոտ խմում *(ՆԱբ., էջ 380):*

ՔԱՂՑՐԱՄՐԳԵ, ած. **Քաղցր մրգից պատրաստված**: Տե՛ս ՆՇԱԿԱՐԿԱՆԴԱԿԵ-ի օրինակը:

ՔԱՂՑՐԱՍԵՐՈՒՑՔԱՅԻՆ, ած. **Կարագի տվյալ տեսակի հատկությունները բնորոշող**: Ուկրաինայից հիմնականում Հայաստան է ներմուծվել **քաղցրասերուցքային** կարագ՝ 82 և 82.5 տոկոս յուղայնությամբ *(ՀՀ, 17.03.2020):*

ՔԱՂՑՐԱՓՈՇԻ, գ. **Քաղցր համ ունեցող սննդափոշի**: .... **Քաղցրափոշով** եղյամապատված չամչով բուլկի էին հիշեցնում *(ՀԼ, էջ 11):*

ՔԱՂՑՐԱՓՐՓՈՒՐ, ած. **Քաղցր փրփուր ունեցող**: Հիմա գինին այրող է, **քաղցրափրփուր,** այնինչ դեկտեմբերի կեսին կհամակվի համուհոտով, կհասունանա .... *(ՆԱ, էջ 331):*

ՔԱՄԱՇԱՏ, ած. **Քամիներով առատ**: .... Չորս կողմը վայրում էր **քամաշատ** ցուրտը *(ՎԲ, էջ 101):*

ՔԱՅԼԱԹԵԹԵՎ, մկբ. **Թեթև քայլերով**: Դու **քայլաթեթև** եկար ընդառաջ *(ԼԴ 1, էջ 143):*

ՔԱՆԴԱԿԱԿԵՐՏԵԼ, նբ. **Որպես քանդակ կերտել**: Հիրավի, Սողոմոնյան ոգիով հյուսված, շարահարված, **քանդակակերտված**, ընդելուզված «Երգ երգոցը» .... իր խորքում մեծագին գաղտնիքներ ունի թաքցրած .... *(Դարյան, էջ 364):*

ՔԱՋԱՊԱՏՈՒՄ, գ. **Հերոսապատում**: .... Եվ նրա գործի **քաջապատումը** ներկայացներ «Թակարդ» վերնագրած վեպով .... *(ԳԹ, 17.05.2019):*

ՔԱՌԱԹԱԹ, ած. **Չորս թաթերի շարժումից առաջացած**: Օտարոտի, **քառաթաթ** խշշոց լսվեց հետևից .... *(ՄԲ, էջ 132):*

ՔԱՌԵԿԱՆԱԽՇ, ած. **Քառակուսաձև նախշ, վանդականախշ**: Նրա խոշոր **քառեկանախշ** հետույքը երևաց ու անհետացավ անգքի մեջ *(ՄԲ, էջ 229):*

ՔԱՐԱԶՐԿՎԵԼ, բ. **Քարերից զրկվել**: .... Պատերն ընդհանրապես **քարազրկվել** են *(Իր. 20.12.2019)*:

ՔԱՐԱԾԽԱՀՈՏ, գ. **Քարածխի հոտ**: Անձրևից թաց փայտահոտ, **քարածխահոտ** փչեց *(Բունին, էջ 40)*:

ՔԱՐԵՐԵՍ, ած. **Քարե՝ քարապատ երեսով**: Պատերի երկայնքով նստարաններ էին դրված ու **քարերես** սեղանիկներ *(Սթոուն, էջ 218)*:

ՔԱՐՇԱԿՑՈՒՄ, գ. **Քարշակների կցում**: Այնտեղից անցնելիս .... քայլում ես վագոնների **քարշակցման** հանգույցի վրայով *(ԱՄ, էջ 30)*:

ՔԱՐՈԶԱՐՇԱՎՈՐԴ, գ. **Քարոզարշավ անցկացնող**: Ռենեն Քվեբեկից էր և փորձառու քաղաքական **քարոզարշավորդ** *(Տրյուդո, էջ 210)*:

ՔԱՐՏԵԶԱՎԵՐԱԳԾՈՒՄ, գ. **Քարտեզը վերագծելը:** Տարածաշրջանում աշխարհագրական առաջին **քարտեզավերագծման** մեկնարկի նախադրյալներն են ուրվագծվում *(Հմց, aravot.am)*:

ՔԱՑԱԽԱԲՈՒՅՐ, ած. **Քացախի բույր ունեցող**: .... Ռունգերս բռնել է շփոթմունքի ու ամոթի կծու զարշահոտը, որ նրա մոր պզուկների պատճառն է դարձել, նաև Ադամ Ազիզի վճռականության **քացախաբույր** ուժը *(Ռուշդի, էջ 18)*:

ՔԵՂԱԿԱՊ, գ. **Քեղիի՝ քեղու՝ սայլի երկար ձողի կապ**: .... Ձիերը կուշտ լինեն, .... **քեղակապերը** նոր լինեն *(ՎԲ, էջ 259)*:

ՔԵՐԾՎԱԾՔԱՊԱՏ, ած. **Քերծվածքներով պատված, վրան շատ քերծվածքներ եղող**: Տարեց տղամարդկանցից մեկը՝ բարձրահասակ, ճերմակ մազափնջով և **քերծվածքապատ** դեմքով, մոտեցավ տղային .... *(Զեեթ., էջ 82)*:

ՔՂԻ-ՔՇՈՑ, գ. (խսկց.): **Քղի-քշելը (փխբ.) Միբիր աքսորելը**: .... Էս վախի ու **քղի-քշոցների** տարիներին ե՞րբ ենք իրար կողքի նստել, դեմ-դիմաց նստել, որ հիմա նստենք *(Հրաչօ, էջ 54)*:

ՔՄՔԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Քմքապաշտ՝ քիմքը պաշտող լինելը**: .... Սովորել էին փարիզյան համադամասերների բոլոր տեսակի **քմքապաշտությունները** *(Հոֆ., էջ 26)*:

ՔՆԱՍԵՆՅԱԿ, գ. **Քնելու սենյակ, ննջասենյակ**: .... Ձրի քնասենյակ չի *(ԳԽ 1, էջ 200):*

ՔՆՔՇԱԹԱՎԻՇ, ած. (բնստ.): **Թավիշի նման քնքուշ:** Հատակից ծավի// Բարձրանում էին գույներ հեզապար// Ու **քնքշաթավիշ** *(ԼԴ 1, էջ 121):*

ՔՆՔՇԱԼԵԶՈՒ, ած. **Քնքշաբան, քնքշախոս**: .... Մեկ օրով ազատություն տանք մեր .... **քնքշալեզու** կանանց և ամուսիններին *(ՎԻ, էջ 99):*

ՔՈԹՈՒԿԱՆՈՑ, գ. **Որտեղ քոթուկներ կան**: - Չլինի՞ իմ **քոթուկանոցն** է գնացել *(ՎԲ, էջ 84):*

ՔՈՂԱԹՐԹԻՌ, ած. (բնստ., փխբ.): **Քողի տակ թրթռացող:** Եվ ուզում եմ, որ իմ շնչից// Ցնդի հիմա քո վրայի թեթև, թեթև// **Քողաթրթիռ** մոխրափոշին ... *(ԼԴ 1, էջ 144):*

ՔՈՂԱՐԿԱԲԱՃԿՈՆ, գ. **Քողարկող բաճկոն**: Ասես նեղ, վառ լուսավորված թունել ձգվեց «Մակարովի» նշանացույցից մինչև .... **քողարկաբաճկոնով** ու դեմքին քաշած սաղավարտ-դիմակով մարդը *(Արեն,էջ 161):*

ՔՈՂԱՐԿԱՆԵՐԿ, ած. **Քողարկման համար ներկված**: .... **Քողարկաներկ** բեռնատարների ու ջիփերի անվերջանալի օձաշարերը չէին խցանում լեռնային նեղ ճանապարհները .... *(Ռուշդի, էջ 8):*

ՔՐԵԱՎԵՊ, գ. **Քրեական գործերի մասին պատմող, այդպիսի բնույթ ունեցող վեպ:** *21*-րդ դարի **քրեավեպ** *(«Գիտանք» հրատարակչության մատենաշար):*

ՔՐԻՍՏՈՆԵԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ, գ. **Աթեիստից քրիստոնյա դառնալը**: .... Ջերմեռանդորեն ապացուցում էր ինձ, որ ոչ մի **քրիստոնեադարձություն** ընտանիքում չի եղել: Լյոլյան ամենակատարյալ աթեիստուհի էր .... *(Պոզներ, էջ 19):*

ՔՐՏՆԱՊԱՏ, ած. 1. **Քրտինքով պատված:** 2. (փխբ.) **Ջրային գոլորշիներով պատված**: .... Կրպակի դարակներին ցոլցլում էին գարեջրի **քրտնապատ** շշերն ու տուփերը *(ԳԽ1, էջ 176):*

ՔՐՔՈՒՄԱԴԱՇՏ, գ. **Քրքումի դաշտ:** Տե՛ս ՁՄԵՌՆԱՄԵՐԿ-ի օրինակը:

ՔՐՔՋԱԽԱՌՆ, մկբ. **Քրքիջի հետ խառնված**: Մյուսները գիտեին, որ վերջինս ապրում է իր կնոջ կրունկի տակ, և նույնպես չխնայեցին նրան՝ անչար, **քրքջախառն** դփդփացնելով նրա ուսերին ու թիկունքին *(Նայր.2, էջ 31):*

ՔՈՒՂԿԱՊ, ած. **Քուղ(եր)ով կապած**: Հագին ... անգլիական ճտքավոր կոշիկներ՝ մինչև ծնկները **քուղկապ** *(ՄԲ, էջ 257):*

## Օ

ՕԲՍԻԴԻԱՆԵ, ած. **Օբսիդիանից՝ սատանի եղունգից պատրաստված**: Կարպետին **օբսիդիանե** մոխրաման կա .... *(ԳԽ2, էջ 28):*

ՕԴԱԲՈՒՅՐ, ած. **Օդի բույր ունեցող:** Երկինքն **օդաբույր** է *(ՆԱ, էջ 318):*

ՕԴԱԶՏՈՒՄ, գ. **Օդի մաքրում՝ զտում:** Այն ունի **օդազտման** համակարգ, ինչի շնորհիվ քաղաքի կենտրոնում անգամ կարելի է այդ գործարանն աշխատեցնել *(Հմց, news.am):*

ՕԴԱԹԱՐՄԱՑՈՒՑԻՉ, ած. **Օդը թարմացնող սարք:** Առկա են ներկառուցված **օդաթարմացուցիչ** և վնասակար բակտերիաների ոչնչացման համար նախատեսված ուլտրամանուշակագույն լամպեր *(Հմց, news.am):*

ՕԴԱԾԽԱՏԱՐ, ած. **Օդափոխիչ և ծխատար:** Բնակարանում վերափոխված է **օդածխատար** համակարգը *(Հմց, news.am):*

ՕԴԱԾՈՎԱՅԻՆ, ած. **Օդային և ծովային**: Պանամայի Ազգային **օդածովային** ծառայությունը (Senan) հայտնել է ինքնաշեն սուզանավի ձերբակալության մասին *(Հմց, news.am):*

ՕԴԱԾՈՐԱԿ, գ. **Օդի ծորակ:** Ավելի արդյունավետ է դարձել կարգավորվող հետին հակաթևը, փոխվել է **օդածորակների** կոնֆիգուրացիան *(Հմց, news.am):*

ՕԴԱԿԱՐԳԱՎՈՐԻՉ, գ., ած. **Օդը կարգավորող սարք**: Բժըշկուհի Բրուքսը պտտեց **օդակարգավորիչ** պտուտակը .... *(Բրաուն, էջ 39):*

ՕԴԱՀԵՌԱՑՈՒՄ, գ. **Օդի հեռացմանը ծառայող**: Ինֆեկցիոն սրահը հագեցած է բարձր ուղղորդված ճնշման տակ գործող օդամղիչ և **օդահեռացման** համակարգով, հատուկ ինֆեկցիոն դիսաեդանով *(Հմց, news.am):*

ՕԴԱՀՐԹԻՌԱՅԻՆ, ած. **Օդային և հրթիռային**: Տիեզերական հետազոտությունների հնդկական կազմակերպությունը հաջողությամբ հիպերձայնային **օդահրթիռային** շարժիչներ է փորձարկել *(Հմց, news.am):*

ՕԴԱՂԵՏ, գ. **Օդային աղետ:** Տեղի է ունեցել թեթև շարժիչով մարդատար ինքնաթիռի **օդաղետ** *(Հմց, news.am):*

ՕԴԱՊԱՐԻԿԱՑԱՏԿ, գ. **Օդապարիկով ցատկ կատարելը**: Միակ տղամարդը, որին սիրտը կպավ, …. նա **օդապարիկացատկի** 197 գծով հրահանգիչ էր *(ՆԱ, էջ 205):*

ՕԴԱՊՂՊՋԱԿ, գ. **Օդով լցված պղպջակ**: .... Խաղաղավետ **օդապղպջակներ** էին լողում ջրի հայելում .... *(Հ1, էջ 112):*

ՕԴԱՎԱՅՐԷՋՔԱՅԻՆ, ած. **Օդային սարքերի վայրէջքի համար նախատեսված**: Այսօր մենք տեսնում ենք **օդավայրէջքային** ուղիներ, զինամթերքի պահեստներ, հակահրթիռային պաշտպանության միջոցներ և այլն *(Հմց, news.am):*

ՕԴԱՑԱՄԱՔԱՅԻՆ, ած. **Օդային և ցամաքային**: Մենք համոզիչ ապացույցներ ունենք, որ Չինաստանը տեղակայել է **օդացամաքային** դասի հրթիռային համակարգեր *(Հմց, news.am):*

ՕԴԱՓՈԽԱԴՐՈՒՄ, գ. **Օդային փոխադրում, փոխադրում օդով՝ օդային փոխադրամիջոցով**: Մի քանի օր անց մասը ժամանեց **օդափոխադրումով** *(Այգ., էջ 22):*

ՕԴՈՐԱԿՈՒՄ, գ. **Օդի խոնավության կարգավորում**: Ծանոթացել է մի քանի օր առաջ շահագործման հանձնված **օդորակման** համակարգին, որը մշտական կայուն ջերմաստիճան կապահովի արխիվի պահոցներում *(Հմց, news.am):*

ՕԾՈՒՆԱՓԱՅԼ, ած. (բնստ.): **Օծուն և փայլող, փայլով օծված**: Դու ձգված բոց ես բուրյան, դու՝ եղեգ **օծունափայլ** *(ԼԴ 1, էջ 81):*

ՕՁԻՔԱԳՈՏԻ, գ. **Օձիքին ամրացվող գոտի**: .... **Օձիքագոտին** շատ նորաձև է .... *(Հոֆ., էջ 17):*

ՕՂԵԽԱՌՆ, ած. **Օդու հետ խառնված:** Եվ նա այդ ամենը կուլ էր տալիս **օդեխառն** գարեջրի հետ *(Նալբ.3, էջ 52):*

ՕՄՈՆԱԿԱՆ, գ. **Օմոնի զինծառայող**: Ընկերացա մոսկովյան **օմոնականների** հետ .... *(Արեն, էջ 90):*

ՕՎԿԻԱՆՈՍԱՄԵՐՁ, ած. **Օվկիանոսին մոտ**: Կինը գնաց **օվկիանոսամերձ** իր խրճիթը .... *(ԳԹ, 06.03.2020):*

ՕՐԵՆՔՈՒԹՅՈՒՆ ԱՆԵԼ, բ. (խսկց.): **Որպես օրենք գործառվել**: Տե՛ս ԾՈՂՈՄՔՈՐԵԼ-ի օրինակը:

## Ֆ

ՖԻԼԻՊԻՆՈՒՀԻ, գ. **Ֆիլիպինների բնակիչ կամ ծագումով այնտեղացի կին՝ աղջիկ**: Տե՛ս ԹԱՅՈՒՀԻ-ի օրինակը:

ՖԻԼՄԱԳԵՏ, գ. **Ֆիլմերի մասնագետ:** Կինեմատոգրաֆիստների միության փոքր կինոսրահում **ֆիլմագետները** քննարկում էին ֆիլմը *(Հմց, aravot.am):*

ՖԻԼՄԱԳՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Ուրիշի նկարահանածը սեփականացնել**: «**Ֆիլմագողություն**», «Առավոտ», 19.04.03թ. *(Հմց, aravot.am):*

ՖԻԼՄԱՑԱՆԿ, գ. **Ֆիլմերի ցանկ՝ ցուցակ**: Եթե նկատի ունենանք, որ կինոթատրոնի **ֆիլմացանկի** մասին նորությունը մոտակա գյուղերին էր հասնում լույսի ալիքի արագությամբ .... *(ՆԱբ., էջ 212):*

ՖԻՆԱՆՍԱԱՌԵՎՏՐԱՅԻՆ, ած. **Ֆինանսական և առևտրային**: Նրան առաջարկել էին գրանցվել **ֆինանսաառևտրային** հարթակում *(Հմց, news.am):*

ՖԻՆԱՆՍԱՔԱՂԱՔԱԿԱՆ, ած. **Ֆինանսական և քաղաքական:** Այս մասին թղթակցի հետ զրույցում ասել է միջազգային **ֆի-**

**նանսաքաղաքական** քրեական գործերով ֆրանսիացի փաստաբանը *(Հմց, news.am):*

ՖԻՆԱՆՍԱՕԼԻԳԱՐԽԻԿ, ած. **Ֆինանսական և օլիգարխիկ**: Կանխիկ գործառնությունների սահմանափակման օրինագիծը մի նպատակ է հետապնդում. Հայաստանում ձևավորել **ֆինանսաօլիգարխիկ** կապիտալիզմ *(Հմց, news.am):*

ՖՈՍՖՈՐԱՎՈՒՆ, ած. (բնստ., փիխբ.): Այստեղ՝ **Սարսռազդու, ազդեցիկ**: Ողբ են արտաշնչում, Դեր Զորի ձայն,// Արտաշնչում մահերգ **ֆոսֆորավուն** *(ԼԴ 1, էջ 139):*

ՖՈՏՈԱԿՈՒՄԲ. գ. **Լուսանկարչական ակումբ:** Մեր քաղաքն ունի ամենամեծ **ֆոտոակումբը** *(Հմց, aravot.am):*

ՖՈՏՈԱՂՅՈՒՍԱԿ, գ. **Լուսանկարային աղյուսակ:** Ստացվել է տեսաձայնագրային փորձաքննության եզրակացությունը, այդ թվում՝ **ֆոտոաղյուսակը**.... *(Հմց, aravot.am):*

ՖՈՏՈԱՇԽԱՏԱՆՔ, գ. **Լուսանկարչական աշխատանք:** Նախագահը մասնակցել է ծրագրում ընդգրկված երիտասարդների **ֆոտոաշխատանքների** ցուցադրությանը *(Հմց, aravot.am):*

ՖՈՏՈԱՐՇԱՎ, գ. **Լուսանկարչական արշավ:** Այս **ֆոտոարշավը** ծայրաստիճան փնթի ու անտաղանդ է արվում *(Հմց, aravot.am):*

ՖՈՏՈԲԼՈԳ, գ. **Լուսանկարների բլոգ:** Ներկայացնում ենք կատարվածի որոշ լուսանկարներ նրա **ֆոտոբլոգից** *(Հմց, aravot.am):*

ՖՈՏՈԳԻՐՔ, գ. **Լուսանկարների գիրք:** Կայացավ հայ լուսանկարչի առաջին **ֆոտոգրքի** շնորհանդեսը *(Հմց, aravot.am):*

ՖՈՏՈԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, գ. **Լուսանկարչական գործակալություն:** Շատ հաճախ որոշ լրատվամիջոցներ ու **ֆոտոգործակալություններ** խտրական վերաբերմունքի պատճառով չեն կարողանում լուսաբանել տարբեր գերատեսչությունների կազմակերպած միջոցառումները *(Հմց, aravot.am):*

ՖՈՏՈԷՍՍԵ, գ. **Էսսե լուսանկարների միջոցով:** Հիմնականում զբաղված էր ՀԿ-ի աշխատանքներով, որի մասին հաճախ **ֆոտոէսսեներ** էր հրապարակում *(Հմց, aravot.am):*

ՖՈՏՈԿԱԴՐ, գ. **Լուսանկարչական կադր:** Նյութերում կան **ֆոտոկադրեր**, որտեղ մենք տեսնում ենք սաղավարտավոր զինծառայողների *(Հմց, aravot.am):*

ՖՈՏՈԿԻՆՈԲԱԺԻՆ, գ. **Լուսանկարչության և կինոյի բաժին:** ԵՊՀ հասարակայնության հետ կապերի վարչության **ֆոտոկինոբաժնի** լուսանկարիչը նշեց, որ դերասաններին ուսանողները կարող են հարց տալ և պատասխան ստանալ *(Հմց, aravot.am):*

ՖՈՏՈԿԻՆՈԿԵՆՏՐՈՆ, գ. **Լուսանկարչության և կինոյի կենտրոն:** Նախորդ տարի նա դարձավ ԵՊՀ **ֆոտոկինոկենտրոնի** վարիչ *(Հմց, aravot.am):*

ՖՈՏՈՀԱՎԱՔԱԾՈՒ, գ. **Լուսանկարների հավաքածու:** Արվեստագետը ներկայացել է իր **ֆոտոհավաքածուով** և սեփական դաշնամուրային մանրանվագներով *(Հմց, aravot.am):*

ՖՈՏՈՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ, գ. **Լուսանկարչական հարցազրույց:** Հեղինակավոր գործիչներից արված **ֆոտոհարցազրույցները** ամբողջացվել են մեկ գրքում *(Հմց, aravot.am):*

ՖՈՏՈՀՈՒՇ, գ. **Լուսանկարչական հուշ:** Ցուրահատուկ ցուցահանդեսին նա կներկայացնի բացառիկ **ֆոտոհուշեր** *(Հմց, aravot.am):*

ՖՈՏՈՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ, գ. **Լուսանկարչական ճանապարհորդություն:** Այդպես է կարծում եվրոպական տարբեր քաղաքներում **ֆոտոճանապարհորդություններ** անցկացրած բլոգերը *(Հմց, aravot.am):*

ՖՈՏՈՆԿԱՐԻՉ, գ. **Ճամփորդ-լուսանկարիչ:** Նա ճամփորդ-**ֆոտոնկարիչ** է, որը երբեք չի մտածել այդ ոլորտում պրոֆեսիոնալ դառնալու մասին *(Հմց, aravot.am):*

ՖՈՏՈՆՈՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Լուսանկարչական նորություն:** Նկարին նայելով անհրաժեշտ է ամբողջ պատմությունը հասկանալ, կարևոր է պատկերը փոխանցել ու օպերատիվ լինել. հին

**ֆոտոնորությունը** և լուրը ոչ մեկին անհրաժեշտ չեն *(Հմց, aravot.am):*

ՖՈՏՈՊԱՍՏԱՌ, գ. **Լուսանկարչական պաստառ:** .... Ցուցահանդեսի մեծածավալ **ֆոտոպաստառները** պատառոտվել են *(Հմց, aravot.am):*

ՖՈՏՈՊԱՏՄԱԲԱՆ, գ. **Լուսանկարներով պատմություն ներկայացնող:** Հազարավոր լուսանկարների հեղինակ, անգերազանցելի **ֆոտոպատմաբանի** տիտղոսակիրը ծնվել է Ստամբուլում *(Հմց, aravot.am):*

ՖՈՏՈՊԱՏՈՒՄ, գ. **Լուսանկարչական պատում:** Մասնակիցները ներկայացնում էին իրենց **ֆոտոպատումները**՝ տարաբնույթ թեմաներով *(Հմց, aravot.am):*

ՖՈՏՈՌԵԱԼԻՍՏԱԿԱՆ, ած. **Լուսանկարչության միջոցով իրականությունը պատկերող**: .... Հասարակ մարդիկ ինչպես կարող են դա օգտագործել .... **ֆոտոռեալիստական** պատկերներ ստանալու համար *(Այգ., էջ 270):*

ՖՈՏՈՏԱՂԱՎԱՐ, գ. **Լուսանկարչական տաղավար:** Նախաձեռնել ենք .... գրքախաղեր, **ֆոտոտաղավարներ**, թեյախմություն և տարբեր անակնկալներ *(Հմց, aravot.am):*

ՖՈՏՈՏԵՍԱՐԱՆ, գ. **Լուսանկարչական տեսարան:** Գլուխների խոնարհումներով շքերթի աննախադեպ **ֆոտոտեսարաններով** փորձում էր ապացուցել .... *(Հմց, aravot.am):*

ՖՈՏՈՏԱՐԵԳԻՐ, գ. **Լուսանկարիչ-տարեգիր:** Կարծես երեկ լիներ, երբ բացվեցին նրա ցուցահանդեսները, և ուխտեց հայոց բանակի **ֆոտոտարեգիրը**, որ դրանք շարունակություն են ունենալու *(Հմց, aravot.am):*

ՖՈՏՈՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ, ած. **Լուսանկարներով տեղեկատվությանը վերաբերող:** Մեկնարկեց «**Ֆոտոտեղեկատվական** աջակցություն» նախագիծը *(Հմց, aravot.am):*

ՖՈՏՈՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, գ. **Լուսանկարչական տեղեկատվություն:** ՏԱՍՍ տեղեկատվական գործակալության ֆոտոք-

րոնիկան միակն էր, որը մամուլին համակարգված **ֆոտոտեղեկատվությունով** էր ապահովում *(Հմց, aravot.am):*

ՖՈՏՈՏԵՍԱԽՑԻԿ, գ. **Լուսանկարչական տեսախցիկ:** Մրցանակային գումարով **ֆոտոտեսախցիկ** գնեցի *(Հմց, aravot.am):*

ՖՈՏՈՏԵՍԱՇԱՐ, գ. **Լուսանկարչական տեսաշար:** Հայաստանի ֆլորան և ֆաունան՝ մեկ **ֆոտոտեսաշարում** *(Հմց, aravot.am):*

ՖՈՏՈՓԱՍՏ, գ. **Լուսանկարչական փաստ:** Որպես **ֆոտոփաստ**՝ կայքը հրապարակել էր ամուսնության վկայականի ֆոտոպատճենը *(Հմց, aravot.am):*

ՖՈՏՈՓՈՐՁ, գ. **Լուսանկարչական փորձ:** Լուսանկարչական ստուդիան կանցկացնի **ֆոտոփորձեր** մրցույթների համար, պատվոգրեր և վկայականներ կշնորհի մասնակիցներին *(Հմց, aravot.am):*

ՖՐԱԿԱԿԻՐ, գ. **Ֆրակ կրող՝ հագնող**: Ֆրակից շատ ավելի հետաքրքիր էր **ֆրակակրի** դեմքը *(ՄԲ, էջ 303):*

ՖՐԱՆՍԱԼԵԶՈՒ, ած. **Ֆրանսերեն հաղորդումներ տվող**: Մեկ տարի ես իմ շաբաթական ժամանակն ունեի CKAC **ֆրանսալեզու** ռադիոյում .... *(Տրյուղո, էջ 212):*

ՖՐԵՆՉԱՎՈՐ, ած., գ. **Զինվորական քառագրպան կարճ բաճկոն հագած**: Ծայրաստիճան ուրախացած **ֆրենչավորը** ելավ տեղից .... *(ՄԲ, էջ 90):*

## ՀԱՎԵԼՎԱԾ
## Տառային հապավումներ

ԱԱԻ – **Առողջապահության ազգային ինստիտուտ: Առողջապահության ազգային ինստիտուտի** աշխատակից 62-ամյա Ջավեն Հովակիմյանը մեկն է այն անձանցից, որը հաղթահարել է կորոնավիրուսային հիվանդությունը: Այս օրերին, ինչպես **ԱԱԻ**-ի շատ աշխատակիցներ, Ջավենը նույնպես համավարակի առաջնագծում էր *(Հմց,aravot.am):*

ԱԱՄ – **Արցախի ազատամարտիկների միություն**: Արցախի ազատամարտիկների միությունը (**ԱԱՄ**) մարտի 8-ի …. առթիվ ձեռնարկել է գեղեցիկ միջոցառում …. *(ՀՀ, 03.03.2020):*

ԱԲՍՓ – **Անասնաբուժասանիտարական փորձաքննություն**: …. Միս գնելու դեպքում ստուգել վաճառողի մոտ անասնաբուժասանիտարական փորձաքննությունը (**ԱԲՍՓ**) հավաստող փաստաթղթի առկայությունը *(ՀՀ, 23.11.2019):*

ԱԹՍ – **Անօդաչու թռչող սարք**: Մի կողմից էլ ռուսական զինուժն ապահովում է անվտանգություն երկնքում, այդ պատճառով էլ գործում են միայն թուրքական **ԱԹՍ**-ներ *(ՀՀ, 03.03.2020):*

ԱՄՍԳ – **Ազգային մակարդակով սահմանված գործողություններ: Ազգային մակարդակով սահմանված գործողությունների** (**ԱՄՍԳ**) իրականացման ընթացքն էր *(ՀՀ, 31.01.2020)*:

ԱՆԻՖ – **Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ** (Armenian National Interests Fund): Աբու Դաբիում կայացել է «Մասդար» ընկերության և **Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդի** (**Անիֆ**) միջև համատեղ զարգացման մասին համաձայնագրի ստորագրման պաշտոնական արարողությունը …. *(ՀՀ, 03.12.2019):*

ԱՇԱՀՄԿ – **Անցումային շրջանի արդարադատության հարցերով միջազգային կենտրոն**: 2001 թ. հայ-թուրքական հաշտեցման համատեղ հանձնաժողովը դիմեց **«Անցումային շրջանի արդարա-**

**դատության հարցերով միջազգային կենտրոնին»** (**ԱՇԱՀՄԿ**) անկախ եզրակացության համար .... *(ՀՀ, 29.04.2020)։*

ԱՎՕ – **Արտադրական վտանգավոր օբյեկտ**: **ԱՎՕ**-ի զննման, վերահսկման և սպասարկող անձնակազմի հրահանգավորման գծով պատասխանատու անձի որակավորում: **Արտադրական վտանգավոր օբյեկտներ** շահագործող ինժեներատեխնիկական անձնակազմի որակավորում *(ՀՀ, 04.02.2020)։*

**ԱՐԻավան** – **Artsakh Roosts Invenstment**. 2013-ից Լիբանանում գործող "**ԱՐԻ-ARI» Artsakh Roosts Invenstment**" ներդրումային բաժնետիրական ընկերության ծրագրով սկսեց կառուցվել նոր թաղամաս *(ՀՀ, 04.02.2020)։*

ԱՔԿ - **Ազգային քրիստոնեական կուսակցություն**։ Միասնական պահանջ. «Զարթոնք» **ԱՔԿ** ԳՄ *(Հմց., livenews.am)։* Հայաստանի քաղաքական դաշտում հայտ է ներկայացրել «Զարթոնք» **Ազգային քրիստոնեական կուսակցությունը** .... *(Հմց, armtimes.com)։*

ԲՊՄՄ – **Բնության պահպանության միջազգային միություն**։ **ԲՊՄՄ** Կարմիր գրքի չափորոշիչներով բեզուարյան այծը գնահատվում է որպես «Խոցելի»: Դեռ 1949 թ. Բնության պահպանության միջազգային միությունը ստեղծեց մի հանձնաժողով .... *(ՀՀ, 30.05.2020)։*

ԲՎՆԳ – **Բիոլոգիական վտանգի նվազման գործակալություն**: .... Բիոլոգիական վտանգի նվազման գործակալությունը (**ԲՎՆԳ**) իրականացնում է բիոլոգիական զենքի օգտագործման և մշակման գաղտնի հետազոտություններ .... *(ԳԹ, 21.02.2020)։*

ԲՏԱ – **Բարձր տեխնոլոգիական արդյունաբերություն**: Հաշվետվությամբ հանդես է եկել բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Հակոբ Արշակյանը: **ԲՏԱ** նախարարությունը հանդես է եկել օրենսդրական փոփոխությունների նախաձեռնություններով .... *(ՀՀ, 30.05.2020)։*

ԳԱՏՕ – **Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահ-**

**պանություն:** ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) հայաստանյան առաքելության **«Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցության հանուն ռեսուրսների համալիր պահպանության» (ԳԱSO)** ծրագիրը հրավիրում է հետաքրքրված ընկերություններին ներկայացնել հայտեր Արարատի մարզի Խաչփար գյուղի ոռոգման համակարգի բարելավման ծրագրի շրջանակում ինժեներական նախագծի, ծավալաթերթի և ծախսերի նախահաշվի պատրաստման համար *(ՀՀ,14.02.2019):*

ԵԱՍՄ – **Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում:** «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» հիմնարկը ձմռան ամիսների համար ստացել է «Կամազ»-ներ, որոնք այս պահին իրականացնում են ձնամաքրման ֆունկցիան: **ԵԱՍՄ** հիմնարկի տնօրենի հետ պայմանավորվածության .... *(ՀՀ, 25.02.2020):*

ԵԶԲ – **Եվրասիական զարգացման բանկ**: Փոխվարչապետը մասնակցել է **ԵԶԲ**-ի խորհրդի նիստին: Միհր Գրիգորյանը .... մասնակցել է Եվրասիական զարգացման բանկի խորհրդի նիստին *(ՀՀ, 19.12.2019):*

ԵՀԿ - **Երիտասարդական հասարակական կազմակերպություն:** «Հայ կամավորների բանկ» **երիտասարդական հասարական կազմակերպությունը (ՀԿԲ ԵՀԿ)** գործունեությունը սկսել է 2013 թվականին երկարաժամկետ ծրագրի տեսքով, որի կայացման արդյունքում դարձավ հասարակական կազմակերպություն *(Հմց, volunteers.am):*

ԵՆԿ - **«Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն»**: Մայիսի *30*-ին տեղի ունեցավ Գյումրու **«Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն»** ՀԿ-ի կազմակերպած հերթական ճանաչողական արշավը: **ԵՆԿ** արշավականները իրենց ճանաչողական այցը սկսեցին Կուրթան համայնքի Գնեվանք խոնարհված եկեղեցուց *(Հմց, yic.am):*

ԶՊՄԿ - **Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ**։ Մեկնարկային հաջորդ հետաքրքիր դրվագը Քաջարանում վարչապետի ելույթն էր՝ կապված **Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի** .... հետ։ «Ես ուզում եմ պատմել Ձեզ **ԶՊՄԿ**-ի գերմանացի սեփականատեր ընտանիքի հետ իմ հանդիպման մասին» *(ՀՀ, 12.03.2020):*

ԷԿԵՆԳ - **Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ**։ Նախագծով հարթակի ստեղծող և օպերատոր է ճանաչվում **«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ**-ն։ Համակարգի տարեկան ծախսերը կկազմեն 45 մլն դրամ, որը կապահովվի **ԷԿԵՆԳ**-ի և համայնքների միջև կնքվելիք պայմանագրերից ստացվող գումարներից *(ՀՀ, 30.05.2020):*

ԸՄԱ - **Ըմբշամարտի միացյալ աշխարհ**։ **Ըմբշամարտի միացյալ աշխարհ** անվանումով ներկայացող մարզաձևի միջազգային ֆեդերացիան հերքել է հունահռոմեական ոճի ըմբըշամարտը 2024 թ. օլիմպիական խաղերի ծրագրից հանելու մասին տեղեկությունները։ **ԸՄԱ**-ն հաստատել է .... *(ՀՀ, 23.06.2020):*

ԺԳՀ - **Ժողովրդավարական գործընկերության հանձնախումբ**։ Վարչապետ Նիկոլ Փաշինյանը երեկ ընդունել է ԱՄՆ կոնգրեսականների պատվիրակությանը, որի կազմում էին Ներկայացուցիչների պալատի **Ժողովրդավարական գործընկերության հանձնախմբի ("House Democracy Partnership", ԺԳՀ)** համանախագահ կոնգրեսական Վերն Բուքանանը .... *(ՀՀ, 19.04.2019):*

ԽԿԿ – **Խոշտանգումների կանխարգելման կոմիտե**։ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 47 անդամ պետություն 2019 թ. հունիսի 12-ի նիստում Արման Թաթոյանն ընտրվել է **խոշտանգումների կանխարգելման կոմիտեի (ԽԿԿ)** անդամ ներկայացուցիչ Հայաստանից *(ՀՀ, 14.06.2019):*

ԾՄՖ – **Ծանրամարտի միջազգային ֆեդերացիա**։ **ԾՄՖ** գըլխավոր քարտուղար Թամաշ Այանը չուշացրեց գրավոր կարծիքը *(ՀՀ, 31.03.2020):*

ԾՖ – **Ծանրամարտի ֆեդերացիա**։ Հեղինակը հայ է՝ Եվրոպայի **ծանրամարտի ֆեդերացիայի** կոմիտեի անդամ .... *ՀՀ* **ԾՖ**-ի անփոփոխ փոխնախագահ .... Վանդոս Ղարագյոզյանը *(ՀՀ, 31.03.2020):*

ԿՄԲԽ – **Կրթության միջազգային բյուրոյի խորհուրդ**։ Հայաստանը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի **ԿՄԲԽ** ղեկավար կոմիտեի նախագահ։ Ժնևում հունվարի 21-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի **կրթության միջազգային բյուրոյի խորհրդի** որոշմամբ Հայաստանն ընտրվել է խորհրդի ղեկավար կոմիտեի նախագահ 2020-2021 թթ. համար *(ՀՀ, 23.01.2020):*

ՀԱԳ – **Հայաստանի ազգային գրադարան։ Հայաստանի ազգային գրադարանի** էլեկտրոնային շտեմարանները .... վերականգնվել են։ **ՀԱԳ** էլեկտրոնային շտեմարանները կրկին հասանելի են *(ՀՀ, 04.06.2020):*

ՀԱԽ – **Հավաքական անվտանգության խորհուրդ**։ Միաժամանակ որոշում ընդունվեց ընթացիկ տարվա նոյեմբերին կայանալիք **Հավաքական անվտանգության խորհրդի** նստաշրջանին ընդառաջ մշակել և **ՀԱԽ** դիտարկմանը ներկայացնել .... *(ՀՀ, 24.05.2019):*

ՀԱԿ – «**Հայ ազգային կոնգրես**»։ Փաշինյանի ու **ՀԱԿ**-ի և նրա առաջնորդի հետ հարաբերությունները հեղափոխությունից հետո գործնական բնույթ ունեն *(Իր., 28.06.2019):*

ՀԱՊ - **«Համահայկական ազգային պետականություն»**։ Մայիսի 13-ին տեղի է ունեցել **«Համահայկական Ազգային պետականություն»** կուսակցության հիմնադիր համագումարը (**ՀԱՊ**) *(Հմց, infocom.am):*

ՀԳԱ – **Հայկական գրադարանային ասոցիացիա**։ **Հայկական գրադարանային ասոցիացիան** ապրիլի 15-22-ը Հայաստանում կանցկացնի ավանդաբար նշվող Ազգային գրադարանային շաբաթ .... **ՀԳԱ**-ի կողմից իրականացվող մասնագիտական-մշակութային ամենամյա շաբաթն առաջին անգամ իրականացվել է 2002 թ., *(ՀՀ, 12.04.2019):*

ՀԼԱ - **Հանրային լրագրության ակումբ**։ **ՀԼԱ** առաքելությունն է՝ խթանել խոսքի ազատությունը, բազմազանությունը եւ բազմա-

կարծությունը ....: **Հանրային լրագրության ակումբի** տեսլականը ժողովրդավար, խաղաղ, բարեկեցիկ եւ քաղաքացիական ակտիվ դիրքորոշում ունեցող, կրթված եւ մրցունակ հասարակությամբ Հայաստանն է *(Հմմ, pjc.am):*

ՀԿԲ - **Հայ կամավորների բանկ:** Տե՛ս ԵՀԿ-ի օրինակը:

ՀԿԵ - **Հարավկովկասյան երկաթուղի:** Մայիսի 24-ին «**Հարավկովկասյան երկաթուղի**» ընկերության գլխավոր տնօրեն Ալեքսեյ Մելնիկովը հանդիպեց Իրանի Իսլամական Հանրապետության ճանապարհների և քաղաքաշինության նախարարի տեղակալ, Իրանի երկաթուղիների խորհրդի նախագահ Սայիդ Ռասուլիի հետ: **ՀԿԵ** գլխավոր տնօրենը և Իրանի ճանապարհների փոխնախարարը քննարկել են երկաթուղային փոխադրումների հարցում համագործակցության հեռանկարները *(Հմմ, railway.am):*

ՀԿՏԿ – **Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն**: Վարչապետի աշխատակազմի **ՀԿՏԿ** ՊՈԱԿ-ը գործարկել է Ադրբեջանի ռազմական հանցագործությունների վերաբերյալ եռալեզու կայք: ՀՀ վարչապետի աշխատակազմի «**Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն**» ՊՈԱԿ-ը գործարկել է «Ադրբեջանի ռազմական հանցագործությունները» անվամբ նոր կայք *(Հմմ, freenews.am):*

ՀՀՄՀ – **Հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամ**: .... Արայիկ Խզմալյանը .... մասնակցել է **Հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի ՀՀՄՀ** և Հումանիտար համագործակցության խորհրդի միացյալ նիստին .... *(ՀՀ, 11.12.2019):*

ՀՄԿ - **Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն**: «**Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն**» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (**ՀՄԿ** ՊՈԱԿ) ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունվարի 30-ի N 81-Ն որոշմամբ …. *(Հմմ, armmonitoring.am):*

ՀՊՀ - **Համերկրային պահուստային համակարգ:** ԱՄՆ-ի **Համերկրային պահուստային համակարգը** (**ՀՊՀ**) չորեքշաբթի օրը

ներկայացրել է այն բանկերն ու կազմակերպությունները, որոնք ֆինանսական օգնություն են ստացել 2008 – 2009 թվականների համաշխարհային ճգնաժամի ժամանակ *(Հմց., armenpress.am):*

ՀՊՀՖ – **Հայաստանի պետական հետաքրքրությունների** ֆոնդ: Վարչապետ Նիկոլ Փաշինյանի մոտ տեղի է ունեցել խորհրդակցություն, որի ընթացքում ներկայացվել է **Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդի (ՀՊՀՖ) (ANIF)** գործունեության հաշվետվությունը *(ՀՀ, 03.12.2019):*

ՀՎՖ – **Հայաստանի վոլեյբոլի ֆեդերացիա**: .... Հարցազրույցում նշեց **ՀՎՖ** գլխավոր քարտուղար Կարեն Ասմարյանը *(ՀՀ, 23.11.2019):*

ՀՔԾ – **Հատուկ քննչական ծառայություն**: .... Երեկ **հատուկ քննչական ծառայության** աշխատակցի օրվան նվիրված միջոցառման ժամանակ այս մասին ասել է **ՀՔԾ** պետ Սասուն Խաչատրյանը *(ՀՀ, 30.11.2019):*

ՁԻՀ - **Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ**: Ինչպես «*ՀՀ*»-ի հետ զրույցում նկատեց «**Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի» (ՁԻՀ)** տնօրեն Բագրատ Ենգիբարյանը .... *(ՀՀ, 06.12.2019):*

ՄԵ – Մուսուլման եղբայրներ: **«Մուսուլման եղբայրներ»,** երբեմն նաև՝ «Մուսուլմանական եղբայրություն» կազմակերպությունը իսլամական հնագույն շարժումներից է .... *(ՀՀ, 03.05.2019):* 2011թ. Մուբարաքի վարչակարգի տապալումից հետո **ՄԵ** ազդեցությունը հասարակության շրջանակում կտրուկ մեծացավ *(ՀՀ, 03.05.2019):*

ՄՄՀ – **Մեսրոպ Մաշտոց համալսարան: Մեսրոպ Մաշտոց համալսարանը (ՄՄՀ)** ԼՂՀ առաջին ոչ պետական բուհերից մեկն է *(Հմց, mmu.am):*

ՇՄՄՏԿ – **Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն**: Երեկ տեղի է ունեցել շրջակա միջավայրի նախարարության և Եվրոպական Միության համաֆինանսավորմամբ վերանորոգված և վերազինված **«Շրջակա միջավայրի**

**մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն»** ՊՈԱԿ-ի (**ՇՄՄՏԿ**) լաբորատորիայի բացման արարողությունը *(ՀՀ, 01.02.2020):*

ՇՄՆ – **Շրջակա միջավայրի նախարարություն**: ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը հրապարակել է .... *(ՀՀ, 12.09.2019):* **ՇՄՆ**-ը հրապարակել է եզրակացությունը *(ՀՀ, 12.09.2019):*

ՊՀԱԹ – **Պատմահնագիտական արգելոց-թանգարան**: Այսօր՝ հունիսի 19-ին, «Էրեբունի» **ՊՀԱԹ**-ում տեղի ունեցավ հայ .... ճարտարապետ Արա Հարությունյանին նվիրված տեղեկատվական ցուցանակի բացման արարողությունը ....: «Էրեբունի» **պատմահնագիտական արգելոց-թանգարանը** ստեղծվել է որպես Երևանի հիմնադրման պատմության «Էրեբունի» թանգարան .... (*Հմմ, facebook.com, "Erebuni" Historical & Archaeological Museum-Reserve):*

ՊՆՎ - **Պլանային նախազգուշական վերանորոգում**: ՀԱԷԿ-ի շահագործման ժամկետի երկարացման ծրագրի շրջանակներում մեծածավալ աշխատանքներ ընդգրկող **պլանային նախազգուշական վերանորոգման (ՊՆՎ)**-2020 նպատակով ՀԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի կանգը 2020 թ. հուլիսի 1-ին էր *(ՀՀ, 01.08.2020):*

ՊՇՌ - **Պոլիմերազային շղթայական ռեակցիա:** Ուկրաինայի կառավարությունն այսօր որոշում է կայացրել, ըստ որի՝ երկիր մուտք գործելիս COVID-19-ի բացասական **ՊՇՌ** թեստ ունենալը պարտադիր պայման կլինի *(Հմմ,freenews.am):*

ՊՈԱԿ - **Պետական ոչ առևտրային կազմակերպություն**: Այսօր շրջակա միջավայրի նախարարի պաշտոնակատար Ռոմանոս Պետրոսյանի մոտ տեղի է ունեցել արդեն ավանդույթ դարձած հանդիպում նախարարության ենթակա **ՊՈԱԿ**-ների ղեկավարների հետ *(Հմմ,. freenews.am):*

ՊՊՖ – **Պետական պահուստային ֆոնդ**: 4000 հեկտարից ավելի վարելահող կա **պետական պահուստային ֆոնդում (ՊՊՖ)** *(ՀՀ, 05.05.2020):*

ՊՏԱԾ-Հ – **Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր-Հայաստան**: **«Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր-Հա-**

**յաստան» (ՊՏԱԾ-Հ)** ծրագրի իրականացման գրասենյակը Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության անունից տեղեկացնում է .... *(ՀՀ, 24.04.2020):*

ՊՖԿ – **Պետական ֆինանսների կառավարում**: **Պետական ֆինանսների կառավարման (ՊՖԿ)** համակարգի բարեփոխումների 2019-2023թթ. գործողությունների ծրագիրը հաստատված է *(ՀՀ, 29.11.2019):*

ՋԿՏ – **Ջրավազանային կառավարման տարածք**: Սևանի **ՋԿՏ**-ի մակերեսը 4721 քառ. կմ է, լճի մակերեսը՝ 1279 քառ. կմ: .... Ի՞նչ վիճակ է Սևանի **ջրավազանային կառավարման տարածքում (ՋԿՏ)** *(ՀՀ, 27.06.2020):*

ՍԱԲ – **Սիրիայի ազատ բանակ:** .... **«Սիրիայի ազատ բանակը» (ՍԱԲ)** կստիպի Ասադի ընտանիքին, որ թողնի իշխանությունը *(Ազգ, 06.12.2019):*

ՍԺՈՒ – **Սիրիայի ժողովրդավարական ուժեր:** Նույն խաղը մենք խաղում ենք նաև «Ամերիկյան պաշտպանությունը վայելող» **«Սիրիայի ժողովրդավարական ուժեր» (ՍԺՈՒ)** անվան հետ *(Ազգ, 06.12.2019):*

ՍԾՏՀԿ – **Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպություն**: Երեկ Սոֆիայում կայացավ **Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության (ՍԾՏՀԿ)** անդամ պետությունների ԱԳ նախարարների խորհրդի ԱԳՆԽ 40-րդ հանդիպումը *(ՀՀ, 29.06.2019):*

ՏԶՆՆ – **Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն**: **ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար** Տիգրան Խաչատրյանը **ՏԶՆՆ** զբոսաշրջության կոմիտեի նախագահ Ս. Սաֆարյանի հետ այցելել է .... *(ՀՀ, 11.05.2019):*

ՏԽ – **Տնտեսական խորհուրդ**: Աշխատանքային այցով Մոսկվայում գտնվող փոխվարչապետ Միհեր Գրիգորյանը մասնակցել է Անկախ պետությունների համագործակցության **տնտեսական խորհրդի** 84-րդ նիստին *ՀՀ, 07.12.2019:* Փոխվարչապետը մասնակցել է ԱՊՀ **ՏԽ** նիստին *(ՀՀ, 07.12.2019):*

ՈՒՀՄ – **Ուկրաինայի հայերի միություն**: Տաճարի շինարարության նախաձեռնությամբ դեռ 2012թ. հանդես է եկել «**Ուկրաինայի հայերի միություն**» (**ՈՒՀՄ**) համաուկրաինական հասարակական կազմակերպության բազմամյա ղեկավար Վիլեն Շատվորյանը *(ՀՀ, 28.02.2020):*

ՓՀԷԿ – **Փոքր հիդրոէլեկտրակայան**: **Փոքր հիդրոէլեկտրակայանների (ՓՀԷԿ)** խնդիրը հաճախ է հայտնվում մեր հասարակության ակտիվ քննարկումների տիրույթում *(ՀՀ, 05.02.2020):*

ՔԱՍԿ – **Քաշաթաղի անասնաբուժական սպասարկման կայան**: Ըստ **«Քաշաթաղի անասնաբուժական սպասարկման կայան» (*ՔԱՍԿ*)** ՊՈԱԿ-ի տնօրեն Արմեն Էլբակյանի տեղեկության՝ շրջանում կա 6000 և ավելի մեղվաընտանիք *(ՀՀ, 06.03.2020):*

ՔԲԱԿ – **Քրդական բանվորական աշխատավորական կուսակցություն**: Եթե Թուրքիայի և Սիրիայի քրդերը գործում են միասնաբար, առավելապես ենթարկվելով **Քրդական բանվորական աշխատավորական կուսակցության** (**ՔԲԱԿ)** ներքո .... *(ՀՀ, 15.10.2019):*

ՕՈՒՆ – **Օտարերկրյա ուղղակի ներդրումներ**: Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության մասնագետները ՏՀԶԿ ներկայացրել են **օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ)** կարգավորումների սահմանափակման ինդեքսը .... *(ՀՀ, 09.10.2019):*

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

## Ա Գրքեր


Ա.Ավ. Արծրուն Ավագյան, Պատկերազարդ պատմություն Շահան Շահնուրի, Եր., Երևանի պետ. համալս. հրատ., 2004:

Աղաբ. Աշոտ Աղաբաբյան, Ռեզիդենտը, երկրորդ հրատ., Եր., Լուսակն, 2014:

ԱՄ Ալիս Մանրո, Կյանքի սիրույն, անգլ. թարգմ. Աննա Դավթյան, Եր., Զանգակ, 2016:

Ամիր. Միքայել Ամիրբեկյան, Չանհետացող ստվերներ, Եր., Նաիրի, 1990:

Այզ. Ուոլթեր Այզեքսոն, Սթիվ Ջոբս, գլ.գլ.-I-XXIV, թարգմ.՝ Դավիթ պ. Վարդազարյան, Եր., Անտարես, 2014:

ԱշԳ. Աշոտ Գալստյան, Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն (19-րդ դ. 60-ական-21-րդ դ. 10-ական թթ.), գիրք Ա, Եր., Էդիթ Պրինտ, 2020:

ԱՏ Ալեքսեյ Տոլստոյ, Վտարանդիներ, թարգմ. Շողիկ Սաֆյան, Եր., Սովետ. գրող, 1986:

Արեն Մարկ Արեն, Քառյակը, ռուս. թարգմ.՝ Հովհ. Խաչ. Այվազյան, Եր., Բուկինիստ, 2019:

ԱրմՄ Արմեն Մարտիրոսյան, Մազե կամուրջ, II, Եր., Զանգակ, 2002:

Բորգեն Բորգեն Յոհան, Փոքրիկ լորդը, թարգմ. Շուշանիկ Ոսկանյան, Եր., Տոներ, 2007:

Բունին Իվան Բունին, Վիպակներ և պատմվածքներ, թարգմ. Դորա Եսայան, Եր., Սովետ. գրող, 1988:

Բրաուն Դեն Բրաուն, Ինֆեռնո, թարգմ. Վահե Արսեն, Եր., Զանգակ, 2015:

ԳԽ1 Գուրգեն Խանջյան, Սպանել Փրկչին, Եր., ՀԳՄ հրատ., Նոր դար, 2001:

ԳԽ2 Գուրգեն Խանջյան, Մարդկանց տուն ուղարկիր, Եր., ՀԳՄ հրատ., 2004։
Գրին Ալեքսանդր Գրին, Շողշողուն աշխարհ։ Ալիքների վրայով վազողը, թարգմ. Վլադիմիր Դանիելյան, Եր., Սովետ. գրող, 1985։
Դարյան Զարզանդ Դարյան, Արևազալ, Եր., «Նաիրի» հրատ., 1990։
Ելինեկ Ելֆրիդե Ելինեկ, Դաշնակահարուհին, թարգմ. Կարլեն Մատինյան, Եր., Անտարես, 2014։
ԶԲ Զորի Բալայան, Դժոխք և դրախտ., Եր., «Ազգ» թերթի հրատ., 1995։
Զեեթ. Զեեթալեր Ռոբերտ, Մի ամբողջ կյանք, գերմ. թարգմ.՝ Գայանե Գինոյան, Եր., Զանգակ։
Էկո Ումբերտո Էկո, Վարդի անունը, թարգմ. Զավեն Բոյաջյան, Եր. Անտարես, 2014։
ԹԺՀ Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Եր., Էդիթ Պրինտ, 2009։
Լ.Շահնուր Լեոն Շահնուր, Ճանապարհորդություն. սիրուց առաջ, Եր., Անտարես, 2016։
ԼԴ1 Լյուդվիգ Դուրյան, Կյանք Իմացյալ, Եր., Ոսկան Երևանցի, 2008։
Լըմոնյե Կամիլ Լըմոնյե, Տղամարդու սերը, թարգմ. Ա. Թոփչյան, Եր., Անտարես, 2013։
Կերտես Իմրե Կերտես, Անբախտություն, թարգմ. Վահրամ Մարտիրոսյան, Եր., Անտարես, 2016։
Հ Հերման Հեսսե, Սիդհարթա, թարգմ. Աշոտ Ալեքսանյան, Եր., «Քյուրքչյան» ՍՊԸ, 2017։
Հանդկե Պետեր Հանդկե, Դանդաղ վերադարձ տուն, թարգմ. Կարլեն Մատինյան, Եր., Անտարես, 2015։
Հերբերթ Լորենս Դեյվիդ Հերբերթ, Լեդի Չաթըրլիի սիրեկանը, թարգմ. Արամ Արսենյան, Եր., Լուսակն, 2014։
ՀԼ Հարփըր Լի, Ծաղրասարյակ սպանելը, թարգմ. Արամ Արսենյան, Եր., Զանգակ, 2015։

Հոֆ. Հոֆման Է. Թ. Ա., Հինգ վիպակ, թարգմ. Տաթևիկ Սիմոնյան, Եր., Անտարես, 2014:
Հրաչօ Հրաչօ, Հայրենանկար (պատմվածքներ), Եր., ՀԳՄ հրատ., 2007:
Մահտես. Ռուզան Մահտեսյան, Խոսող ձեռքեր, Եր., Երևանի համալս. հրատ., 1999:
Մանրո Ալիս Մանրո, Պատրանքով տարված, թարգմ. Մարո Մադոյան, Եր., Անտարես, 2017:
ՄԲ Միխայիլ Բուլգակով, Վիպակներ և պատմվածքներ, թարգմ.՝ Արմեն Հովհաննիսյան, Եր., Անտարես, 2012:
Միկ. Արթուր Միկոյան, Օտար լույս, Եր., Անտարես, 2001:
Մոյես Ջոջո Մոյես, Ես մինչ քեզ, անգլ. թարգմ.՝ Մերի Դալլաքյան, Եր., Զանգակ, 2018:
ՆԱ Նարինե Աբգարյան, Զուլալի, ռուս թարգմ. Նարինե Գիժլարյան, Եր., «Վերնատուն Մեդիա», 2020:
ՆԱբ. Նարինե Աբգարյան, Մանյունյա, թարգմ.՝ Ն. Գիժլարյան, Եր., «Դար» հիմնադրամ, 2017:
ՆԱդ. Նորայր Ադալյան, Փոխակերպություններ, Եր., ՀԳՄ հրատ., 2006:
Նալբ.1 Վարուժան Նալբանդյան, Սիրելի գայթակղության գոլորշիները: Ժողովածու, Եր., Վան Արյան, 2010:
Նալբ.2 Վարուժան Նալբանդյան, Դոն Խոզեի վերադարձը, Եր., Վան Արյան, 2009:
Նալբ.3 Վարուժան Նալբանդյան, Հրաժարյալները, Եր., Զանգակ, 2002:
Պոզներ Վլ. Պոզներ, Հրաժեշտ պատրանքներին, թարգմ.՝ Ֆելիքս Բախչինյան, Եր., Օրակուլ, 2019:
Պոլ. Յուրի Պոլյակով, Մնկերի արքան, թարգմ. Լիա Իվանյան, Եր., Զանգակ, 2012:
ՌԲ Ռիչարդ Բախ, Ջոնաթան Լիվինգստոն անունով ճայը, թարգմ.՝ Ն. Հարությունյան, Եր., Անտարես, 2017:
Ռոթ Ֆիլիպ Ռոթ, Պորտնոյի ցավը, Եր., Անտարես, 2018:

Ռոուլ. Ջոան Ռոուլինգ, Հարի Փոթերը և փիլիսոփայական քարը, grqamol.am, https://grqamolam/article/joan-rowling-harry-pottery-ev-piilisopayakan-qary-bernel/:

Ռուշդի Սալման Ռուշդի, Կեսգիշերի զավակները, թարգմ. Արամ Արսենյան, Եր., Զանգակ, 2018:

Սար. Հրաչյա Սարիբեկյան, Երկվորյակների արևը, Եր., Անտարես, 2012:

Սթոուն Իրվինգ Սթոուն, Կյանքի ծարավը, թարգմ.՝ Վազգեն Տալյան, Եր., «Հայաստան» հրատ, 1970:

Ստայնբեք Ջոն Ստայնբեք, Ցասման Ողկույզներ, թարգմ. Արամ Արսենյան, Եր., Զանգակ, 2017:

ՎԲ Վասիլի Բելով,Պատմվածքներ և վիպակներ, թարգմ.՝ Արմեն Հովհաննիսյան, Եր., Սովետական գրող, 1983:

ՎԻ Վրեժ Իսրայելյան, Վաղ թե ուշ, Եր., Լուսակն, 2014:

Վիան Բորիս Վիան, Օրերի փրփուրը, թարգմ. Աշոտ Ալեքսանյան, Եր., Նաիրի, 1992:

Վոն. Կուրթ Վոնեգութ, Կատվի ճոճք, թարգմ. Լեոնիդ Զիլֆուղարյան, Եր., Անտարես, 2017:

Տում. Անտի Տումայնեն, Սև սիրտ, թարգմ. Կարինե Աղաբեկյան, Ալեքսանդր Աղաբեկյան: Եր., Գիտանք, 2016:

Տրյուդո Ջաստին Տրյուդո, Ընդհանուր հայտարար, Եր., Նյու Մեզ, 2018:

Ցիպ. Լեոնիդ Ցիպկին, Ամառը Բադենում, թարգմ. Վարդան Ֆերեշեթյան, Եր., Ակտուալ արվեստ, 2015:

Ուելբեք Միշել Ուելբեք, Տարրական մասնիկները, թարգմ. Սերգեյ Մկրտչյան, Եր., Անտարես, 2013:

Քերվուդ Ջեյմս Օլիվեր Քերվուդ, Հյուսիսի շրջմոլիկները: Հյուսիսային թավուտներում, թարգմ. Շավարշ Գրիգորյան, Եր., Արևիկ, 1991:

Քինգ Սթիվեն Քինգ, Փայլատակում, թարգմ. Լուսինե Ղալումյան, Եր., Զանգակ հրատ., 2019:

Օրուել Ջորջ Օրուել, 1984, թարգմ. Աստղիկ Աթաբեկյան, Եր., Անտարես, 2012:

ՖԲ Ֆելիքս Բախչինյան, Թափառաշրջիկը, Եր., ՀԳՄ հրատ., 2016:

Ֆից. Ֆիցջերալդ Ֆրենսիս Սքոթ, Մեծն Գեթսբի, անգլ. թարգմ.՝ Սոնա Սեֆերյան, Եր., Զանգակ, 2014:

Ֆոլք. Ուիլյամ Ֆոլքներ, Չոր սեպտեմբեր: Պատմվածքներ, թարգմ. Շուշանիկ Ավագյան, Եր., Ապոլոն, 1991:

## Բ. Ամսագրեր և հանդեսներ

ՀԲ - Հայկական բանակ

ՊԲՀ – Պատմաբանասիրական հանդես

## Գ. Լրագրեր

ԳԹ – Գրական թերթ

Իր. – Իրատես

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն

ՉԻ - Չորրորդ Իշխանություն

## Դ. Այլ աղբյուրներ

Գովազդ, Հեռ. (հեռուստատեսություն), Հմց (համացանց):

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ


1. Աղայան Էդ. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., Հայաստան, 1976:
2. Բարսեղյան Հ. Խ., Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարան, Եր.,Լույս, 1973:
3. Էլոյան Ս. Ա., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Եր., Նաիրի, 2002:
4. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. 1-4, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969-1980:
5. Իսպիրյան Մ. Ս., Մարզանունների բացատրական բառարան, Եր, Հայաստան, 1984:
6. Խլղաթյան Ֆ.Խ., Բառարան-տեղեկատու: Նոր բառեր և իմաստներ, Եր., Հայաստան,1982:
7. Ղարիբյան Ա. Ս., Ռուս-հայերեն բառարան, «Հայաստան» հրատ., Եր., 1982:
8. Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, Եր., ՀՍՍՌ պետ.հրատ.,հհ. 1-3, 1944, h.4, 1945:
9. Մեյթիխանյան Փ. Գ., Նոր բառերի բացատրական բառարան, Եր., Փյունիկ, 1996:
10. Մեսրոպեան Հ., Գարեգին Ա Ամենայն հայոց կաթողիկոսի երկերի բառարան, Մոնրէալ, 2000:
11. Նոր բառեր. Ա պրակ (Գալստյան Ա. Ս., Հովսեփյան Գ. Կ., Սահակյան Ա. Գ., Սահինյան Լ. Ե.), Եր., 2015:
12. Նոր բառեր. Բ պրակ (Գալստյան Ա. Ս., Գալստյան Ս. Ա., Հովսեփյան Գ. Կ., Սահակյան Ա. Գ., Սահինյան Լ. Ե.), Եր., 2016:
13. Նոր բառեր. Գ պրակ (Գալստյան Ա. Ս., Գալստյան Ս. Ա., Հովսեփյան Գ. Կ., Սահակյան Ա. Գ.),Եր., 2017:
14. Նոր բառեր. Դ պրակ (Գալստյան Ա.Ս., Գալստյան Ս. Ա., Հակոբյան Ֆ. Ա., Հովսեփյան Գ. Կ., Սահակյան Ա. Գ., Սահինյան Լ. Ե.), Եր., 2018:

15. Նոր բառեր. Ե պրակ (Գալստյան Ա. Ս., Գալստյան Ս. Ա., Հակոբյան Ֆ. Ա., Հովսեփյան Գ. Կ., Մուշեղյան Ա. Հ., Սահակյան Ա. Գ.), Եր., 2020:
16. Չիլինգարյան Դ. Ս., Երզնկյան Լ. Ե., Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան, Եր., 2015:
17. Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան (Հացագործյան Զ. Ա., Դարբինյան Ա. Հ., Հովումյան Հ. Գ., Սրվանձտյան Գ. Հ.), Եր., ՀՍՀ գլխ. խմբ., 1988:
18. Սաքապետոյան Ռ. Կ., Արևմտահայերեն-արևելահայերեն ուղղախոսական-բացատրական բառարան, Եր., ԵՊՀ հրատ., 2000:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ....................................................................................... 5

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ........................................................... 6

ԲԱՌԱՑԱՆԿ........................................................................................ 8

ՀԱՎԵԼՎԱԾ ....................................................................................... 203

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ...................................................... 213

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ.................................................218